ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ՄԱՐԳԱՐԻՏ
ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐՈՒՄ



2010

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ
Դրամավարկային քաղաքականության վարչություն

Մարգարիտ Մամիկոնյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐՈՒՄ

(31.12.2009 թ. դրությամբ)

ԵՐԵՎԱՆ
2010

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4

Գլուխ 1. Հայաստանի տնտեսական ազատության ինդեքսները 10

1. «Հերիթիջ» հիմնադրամի «Տնտեսական ազատության 2010 թ. ինդեքս» 10

2 . «Ֆրեյզեր» և «Կատո» ինստիտուտների «Տնտեսական ազատությունը աշխարհում 2009 թ. ինդեքս» 16

3. Համաշխարհային բանկի «Գործարարությամբ զբաղվելու դյուրինության 2010 թ. ինդեքս» 19

4. Համաշխարհային տնտեսական համաժողովի «Համաշխարհային առևտրի խթանման 2009 թ. ինդեքս» 24

5. «Թրանսփերենսի ինտերնեյշնլ» կազմակերպության «Կոռուպցիայի ընկալման 2009 թ. ինդեքս» 28

6. «Բերտելսման» հիմնադրամի «Տրանսֆորմացիայի (վերափոխման, անցման) 2010 թ. ինդեքսներ» 30

7. «Ֆրիդոմհաուզի» «Ազատությունը աշխարհում 2010 թ. ինդեքս» 36

8. «Ֆրիդոմհաուզի» «Ժողովրդավարության առաջընթացի 2009 թ. ինդեքս» 37

Գլուխ 2. Հայաստանի «երկրի ռիսկի» և «Սուվերեն ռիսկի» վարկանիշերը 40

9. «Ֆիթչ» միջազգային վարկանշային կազմակերպության կողմից Հայաստանին տրված սուվերեն ռիսկի վարկանիշերը 41

10. «Մուդիզ» միջազգային վարկանշային կազմակերպության կողմից Հայաստանին տրված սուվերեն ռիսկի վարկանիշերը 51

11. Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության «Երկրի ռիսկի դասակարգման 2009 թ. գնահատական» 59

12. «Եվրոմանի» ամսագրի «Երկրի ռիսկայնության 2009 թ. վարկանիշը» 62

13. «Գլոբալ Ինսայթ» հետազոտական կազմակերպության՝ 2009 թ. Հայաստանի սուվերեն ռիսկի վարկանիշը 67

Գլուխ 3. Միջազգային ֆինանսական կառույցների միջոցներից օգտվելու վարկանիշեր 72

14. Համաշխարհային բանկի Միջազգային զարգացման ընկերակցության «Երկրի քաղաքականությունների և ինստիտուցիոնալ կարողությունների գնահատման 2008 թ. վարկանիշը» 72

15. Ասիական զարգացման բանկի «Երկրի կատարողականի գնահատման 2008 թ. վարկանիշը» 76

16. Զարգացման և վերակառուցման եվրոպական բանկի «Կառուցվածքային և ինստիտուցիոնալ բարեփոխումների 2009 թ. ինդեքս» 79

Գլուխ 4. Մարդկային ներուժի զարգացման ինդեքս 82

17. Միացյալ ազգերի կազմակերպության «Մարդկային ներուժի զարգացման 2009 թ. ինդեքս» 82

Գլուխ 5. Համաշխարհային մրցունակության ինդեքս 87

18. Համաշխարհային տնտեսական համաժողովի «Համաշխարհային մրցունակության 2009 - 2010թթ. ինդեքս» 87

ԱՄՓՈՓՈՒՄ 91

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՑԱՆԿԸ 95

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ ԵՎ ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ 99

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ*

Արտաքին տնտեսական կապերի գլոբալացման և համաշխարհային տնտեսությունում տեղի ունեցող ինտեգրման գործընթացների պայմաններում կտրուկ աճել է ազգային տնտեսությունների զարգացման մակարդակի ու միտումների, կառուցվածքի և համամասնությունների, ինչպես նաև տարբեր երկրներում բնակչության կենսամակարդակի վերաբերյալ համադրելի տնտեսական տեղեկատվության պահանջը: Բոլոր երկրների կառավարությունները ցանկանում են իմանալ՝ ինչ տեղ է գրավում իրենց երկիրը համաշխարհային և տարածաշրջանային համապատկերում, ինչ դիրք ունի իրենց տնտեսությունը այն երկրների տնտեսությունների համեմատ, որոնց հետ համագործակցում կամ մրցակցում է միջազգային շուկաներում: Այդ նպատակով նրանք աջակցում են սոցիալ-տնտեսական և հասարակության կյանքի այլ ոլորտներին վերաբերող տեղեկատվության միջազգային տարբեր համեմատությունների կազմակերպմանը կամ պատրաստակամություն են ցուցաբերում՝ ընդգրկվելու այլ միջազգային կառույցների կողմից իրականացվող այդպիսի համադրություններում:

Այս աշխատանքը փորձ է՝ ներկայացնելու Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացումների ընթացքում տեղի ունեցած ինստիտուցիոնալ փոփոխությունների արդյունքները միջազգային կառույցների գնահատմամբ, բնութագրելու Հայաստանում տնտեսական ազատության, երկրի ռիսկի, իրականացվող քաղաքականությունների, գործող պետական կառույցների, մարդկային ներուժի զարգացման և ազգային տնտեսության մրցունակության առանձնահատկությունները, վեր հանելու տնտեսության ոլորտները, որոնք այդ առումով առաջընթաց են ապահովել և այն ոլորտները, որոնք դեռևս բարելավման կարիք ունեն, ներկայացնելու այդ տեսանկյունից Հայաստանի դիրքը միջազգային համադրության մեջ:

Այս խնդրի իրականացման համար՝

- Ուսումնասիրվել են 15 միջազգային կառույցների և օտարերկրյա կազմակերպությունների (Համաշխարհային բանկի, Եվրոբանկի, Ասիական զարգացման բանկի, Միացյալ ազգերի կազմակերպության, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության, Համաշխարհային տնտեսական համաժողովի, «Ֆիթչ»

---

* *Հեղինակի տեսակետները կարող են չհամընկնել ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական դիրքորոշմանը:*

և «Մուդիզ» վարկանշային կազմակերպությունների, «Հերիթիջ» հիմնադրամի, «Ֆրեյզեր» և «Կատո» ինստիտուտների, «Ֆրիդոմհաուզի», «Թրանսփերենսի ինտերնեյշնլի», «Բերտելսման» հիմնադրամի, «Գլոբալ Ինսայթ» հետազոտական կազմակերպության և «Եվրոմանի» ամսագրի)՝ այդ խնդիրներին վերաբերող 18 հետազոտություններ: Ընտրությունը կանգ է առել այն միջազգային կառույցների և օտարերկրյա կազմակերպությունների վրա, որոնք, ի թիվս աշխարհի բազմաթիվ այլ երկրների, իրենց հետազոտություններում ներառել են նաև Հայաստանը:

- Միջազգային կառույցների և օտարերկրյա կազմակերպությունների հետազոտությունները համակարգվել են ըստ ուղղությունների, մասնավորապես՝ տնտեսական ազատության, երկրի ռիսկայնության, տնտեսական քաղաքականությունների կատարողականի և կառույցների որակի, մարդկային կապիտալի զարգացման և երկրի միջազգային մրցունակության գնահատականների (ինդեքսների, վարկանիշերի):
- Առանձնացվել են այդ գնահատականների (ինդեքսների, վարկանիշերի) հաշվարկման հիմքում ընկած գործոններն ու չափանիշները և, հրապարակայնության շրջանակներում, մանրակրկիտ ուսումնասիրվել են դրանց հաշվարկման և վերջնական գնահատման մեթոդաբանությունները:
- Վերլուծվել են միջազգային կառույցների և օտարերկրյա կազմակերպությունների 18 հետազոտություններում Հայաստանի դիրքը և այդ դիրքը պայմանավորող գործոններն ու ցուցանիշները:
- Օտարերկրյա ներդրումների տեսանկյունից Հայաստանի տնտեսության գրավչությունը (առավելություններն ու թույլ կողմերը) հասկանալու նպատակով Հայաստանի գնահատականները (ինդեքսները, վարկանիշերը) դիտարկվել են նախկին ԽՍՀՄ, հատկապես հարավկովկասյան տարածաշրջանի, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների համապատկերում: Նշված երկրները որպես առանձին տարածաշրջան դիտարկելը և Հայաստանի զարգացումները այդ տարածաշրջանի համապատկերում ուսումնասիրելը պայմանավորված են այն հանգամանքով, որ այդ երկրներն անցել են պլանային տնտեսությունից շուկայավարման մեխանիզմների, հետևաբար ունեցել են տնտեսության փոփոխությունների նույնանման խնդիրներ:
- Հայաստանի, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի, նախկին ԽՍՀՄ երկրների գնահատականները (ինդեքսները, վարկանիշերը) դիտարկվել են ինչպես 2009 թ. դրությամբ, այնպես էլ ժամանակա-

գրական տեսանկյունից, այսինքն՝ ուշադրությունը դարձվել է նաև Հայաստանի և մյուս երկրների գնահատականների տեղաշարժերին ու զարգացման դինամիկային:

Իսկ ինչո՞ւ են որպես ուսումնասիրման օբյեկտ ընտրվել տնտեսական ազատության մակարդակի, երկրի ռիսկայնության, մակրոտնտեսական և կառուցվածքային քաղաքականությունների հետևողական իրականացման, ազգային տնտեսության մրցունակության հարցերը: Բանն այն է, որ այս բոլոր գործոնները ընկած են երկրի երկարաժամկետ տնտեսական աճի հիմքում, որի ապահովումը յուրաքանչյուր պետության տնտեսական քաղաքականության գերխնդիրն է: Այդ խնդիրը հատուկ կարևորություն ունի նաև Հայաստանի ազգային տնտեսության համար, որը սոցիալ-տնտեսական հարաբերությունների վերափոխման փուլում է:

Տնտեսական ազատությունը սույն աշխատանքում ընդհանրացվում է «ազատ շուկա» հասկացության հետ և դիտարկվում է որպես ապրանքների ու ծառայությունների ազատ արտադրություն, բաշխում կամ սպառում, որի դեպքում բացառվում է անհրաժեշտ նվազագույն չափից ավելի հարկադրանքի կամ ճնշումների կիրառումը կառավարության կողմից: Այլ խոսքով, մարդիկ ազատ են աշխատելու, արտադրելու, սպառելու և ներդնելու իրենց տեսանկյունից ամենաարդյունավետ ձևով: Կառավարության ցանկացած գործողություն ներառում է հարկադրանք, որի որոշակի չափն անհրաժեշտ է քաղաքացիներին կամ ազգին պաշտպանելու, քաղաքացիական հասարակության զարգացումը խթանելու համար: Երբ կառավարության կողմից կիրառվող հարկադրանքը գերազանցում է անհրաժեշտ նվազագույն չափը, հանգեցնում է ազատության ոտնահարման ռիսկի: Երբ պետության միջամտությունը շեղվում է անձանց և սեփականության պաշտպանության նպատակից, առաջանում է տնտեսական ազատության խաթարման ռիսկ, որից էլ տուժում է տնտեսական աճը: Ո՞րն է այն սահմանագիծը, որից հետո առաջանում է այդ ռիսկը: Այս հարցը դեռևս բանավեճերի տեղիք է տալիս: Տնտեսական ազատության գնահատման նպատակն է ոչ թե որոշել այդ սահմանագիծը, այլ նկարագրել աշխարհի տնտեսությունները այնպես, ինչպես դրանք կան:

Տնտեսական ազատությանը և տնտեսական աճին վերաբերող բազմաթիվ հետազոտություններ ցույց են տալիս, որ այն ազգերը, որոնք քիչ սահմանափակումներ են կիրառում մասնավոր սուբյեկտների և գործարքների նկատմամբ, դրսևորում են տնտեսական բարձր աճի միտում: Ինչպես նշում է «Հերիթիջ» հիմնադրամի նախագահ Էդվին Ֆոլները. «Կառավարության խթանիչ, ծախսումային քաղաքականու-

թյունները չեն կարող ապահովել բարգավաճում, սակայն ազատ, շղթաներից ձերբազատված և իրենց երազանքների հետևից գնացող մարդիկ՝ կարող են»[1]:

Երկրի ռիսկայնությունը սույն աշխատանքում դիտարկվում է որպես տվյալ երկրում գործարարությամբ զբաղվելուն առնչվող բոլոր ռիսկերի համալիր ցուցանիշ: Այն կարող է ներառել երկրում սեփականության իրավունքների թույլ պաշտպանվածությունը, անկանխատեսելի հարկերի սահմանումը և օրենսդրական կարգավորումների կիրառումը, ոչ կայուն գործառնական միջավայրի առկայությունը, ինչպես նաև երկրների միջև արտարժույթով վարկավորման և ներդրումային գործարքների ժամանակ առաջացող բոլոր հնարավոր ռիսկերը:

Սուվերեն ռիսկը սուվերեն երկրի կառավարության կողմից իր պարտքային պարտավորությունները չկատարելու (դեֆոլտի) ռիսկն է:

Երկրի մրցունակությունը սահմանվում է որպես տնտեսության արտադրողականության, հետևաբար նաև բարեկեցության մակարդակը որոշող ինստիտուտների, քաղաքականությունների և գործոնների բազմություն: Սակայն, նկատի ունենալով, որ արտադրողականության մակարդակով է մեծապես պայմանավորված նաև տնտեսության համախառն աճի տեմպը որոշող ներդրումներից ապահովվող հատույցի աճը, առավել մրցունակ է համարվում այն երկիրը, որի միջին և երկարաժամկետ տնտեսական աճի մակարդակները ավելի բարձր են:

Հետազոտության համար որպես մեթոդաբանական հիմք են ծառայել Համաշխարհային բանկի (World Bank), Եվրոբանկի (European Bank for Reconstruction and Development (EBRD)), Ասիական զարգացման բանկի (Asian Development Bank (ADB)), Միացյալ ազգերի կազմակերպության (United Nations), Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (Organization for Economic Cooperation and Development (OECD)), Համաշխարհային տնտեսական համաժողովի (World Economic Forum), «Ֆիթչ» (Fitch) և «Մուդիզ» (Moody's) վարկանշային կազմակերպությունների, «Հերիթիջ» հիմնադրամի (Heritage Foundation), «Ֆրեյզեր» (Fraser) և «Կատո» (Cato) ինստիտուտների, «Ֆրիդոմհաուզի» (Freedomhouse), «Թրանսփերենսի Ինտերնեյշնլի» (Transparency International), «Բերտելսման» հիմնադրամի (Bertelsmann Foundation), «Գլոբալ Ինսայթ» (Global Insight) հետա-

[1] *Our Economic Answer is Freedom by Adwin Feulner, Heritage Foundation, January 15, 2009: http://www.heritage.org/Research/Commentary/2009/01/our-economic-answer-is-freedom.*

զոտական կազմակերպության և «Եվրոմանի» (Euromoney) ամսագրի մամուլի հաղորդագրությունները, հրապարակումները, մեթոդաբանությունները և վերլուծությունները:

Նմանատիպ հետազոտություն իրականացվել է առաջին անգամ և ամփոփ, համակարգված ներկայացնում է անկախացումից մինչև օրս Հայաստանի տնտեսական զարգացումներին և իրականացվող բարեփոխումներին միջազգային 15 կառույցների կողմից տրված գնահատականները: Բացի այդ, վեր են հանվում արդի փուլում Հայաստանի տնտեսության զարգացման առաջնահերթությունները՝ ըստ միջազգային կառույցների և օտարերկրյա անկախ գնահատող կազմակերպությունների գնահատականների: Այն միաժամանակ ներկայացնում է Հայաստանի և մյուս անցումային տնտեսությունների, մասնավորապես՝ նախկին ԽՍՀՄ, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների զարգացումների համակարգված համեմատական վերլուծությունը:

Աշխատանքը պարունակում է հարուստ տեղեկատվական և վերլուծական հենք, որը կարող են օգտագործել պետական կառավարման մարմինները, հասարակական կազմակերպությունները, տնտեսության տարբեր ոլորտի հետազոտողները, տնտեսությունը լուսաբանող լրագրողները, համալսարանների դասախոսները, ուսանողները՝ վերլուծական և գործնական աշխատանքներ կատարելու ժամանակ: Մասնավորապես, պետական կառավարման մարմինների համար այն կարող է դառնալ օգտակար գործիք՝ արդի փուլում Հայաստանի տնտեսության զարգացման առաջնահերթությունները հստակեցնելու և առկա հնարավորությունները օգտագործելու համար:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, հինգ գլուխներից, ամփոփումից, օգտագործված գրականության և աղբյուրների ցանկից, ինչպես նաև աղյուսակներից և մեթոդաբանական հավելվածներից: Առաջին գլխում ներկայացվում են Հայաստանի տնտեսական ազատության գնահատականները, երկրորդ գլխում՝ ներդրողների համար խիստ կարևորվող՝ երկրի ռիսկայնության մակարդակը և դրա առանձին մաս կազմող սուվերենի (կառավարության) վճարունակության խնդիրները: Երրորդ գլխում ներկայացվում են Հայաստանում տնտեսական քաղաքականությունների հետևողական իրականացման և գործող կառույցների որակի, ինչպես նաև դրանց բարեփոխումների ընթացքի վերաբերյալ միջազգային ֆինանսական կառույցների գնահատականները, որոնք հաշվի են առնվում նրանց կողմից Հայաստանին ֆինանսական միջոցներ տրամադրելիս: Չորրորդ գլխում դիտարկվում են Հայաստանում մարդկային ներուժի զարգացման, այդ թվում՝ կրթության

մակարդակի ինդեքսները: Հինգերորդ գլխում քննարկվում են Հայաստանի միջազգային մրցունակությանը վերաբերող հարցերը, որոնք ամփոփում են թե՛ տնտեսական ազատության, թե՛ երկրի ռիսկի, թե՛ երկրում իրականացվող միկրո- և մակրո տնտեսական քաղաքականությունների արդյունավետության և թե՛ մարդկային ներուժի զարգացման հետ կապված հիմնախնդիրների ամբողջությունը: Վերջում շարադրվում են հետազոտության արդյունքներից բխող ամփոփիչ դրույթներ:

Գլուխ 1. Հայաստանի տնտեսական ազատության ինդեքսները

1. «Հերիթիջ» հիմնադրամի «Տնտեսական ազատության 2010 թ. ինդեքս»

Ընդհանուր տեղեկատվություն. **«Հերիթիջ» հիմնադրամը (Heritage Foundation)** անկախ ամերիկյան հետազոտական և կրթական ինստիտուտ է, որը հիմնադրվել է 1973 թվականին[2]: Նպատակն է ձևավորել և խթանել ազատ ձեռներեցության սկզբունքների վրա հիմնված պահպանողական պետական քաղաքականությունները: «Հերիթիջը», իր նպատակի շրջանակներում, իրականացնում է պարբերական հետազոտություններ, որոնք առնչվում են քաղաքական տարբեր հիմնախնդիրների: Այդ հետազոտությունների արդյունքները տրամադրվում են ԱՄՆ Կոնգրեսի անդամներին, Կոնգրեսի անձնակազմի անդամներին, գործադիր մարմիններում քաղաքականություն իրականացնողներին, ազգային լուրերի ծառայությանը և ակադեմիական աշխարհին: «Հերիթիջն» իր հետազոտությունների արդյունքները հրատարակում է տարբեր թողարկումներում և հոդվածներում, կազմակերպում է դասախոսություններ, կոնֆերանսներ և հանդիպում-հավաքներ:

«Հերիթիջը» կառավարվում է անկախ Կառավարիչների խորհրդի կողմից: Հիմնադրամը հարկերից ազատված հաստատություն է, որը հենվում է անհատների, կազմակերպությունների և միավորումների մասնավոր ֆինանսական աջակցության վրա, չի ընդունում կառավարական ոչ մի օժանդակություն և կառավարության հետ չի իրականացնում որևէ պայմանագրային աշխատանք: «Հերիթիջը» Ամերիկայի Միացյալ Նահանգների պետական քաղաքականության վերաբերյալ հետազոտություն իրականացնող ամենամեծ կազմակերպություններից մեկն է. ունի ավելի քան 200,000 բաժանորդներ և համարվում է ամենալայն աջակցությունն ունեցող գիտահետազոտական մտքի կենտրոնը Ամերիկայում:

Իր հետազոտությունների շարքում «Հերիթիջ» հիմնադրամը, «Ուոլ Սթրիթ» օրաթերթի հետ համատեղ, տարբեր պաշտոնական աղբյուր-

[2] *Տե՛ս http://www.heritage.org:*

ների տվյալների հիման վրա ներկայումս գնահատում և հրապարակում է 183 երկրների տնտեսական ազատության ինդեքսները:

Գնահատման մեթոդաբանությունը[3]: Այդ ինդեքսի գնահատման հիմնական սկզբունքները հետևյալն են՝ նախ, տնտեսական ազատության ինդեքսը գնահատելիս օգտագործվում են 50 անկախ տնտեսական գործոններ, որոնք ներառվում և գնահատվում են 10 խոշոր գործոնների մեջ: Այդ խոշոր գործոններն են՝ ***գործարարության ազատությունը, առևտրի ազատությունը, հարկաբյուջետային ազատությունը, կառավարության չափը, դրամավարկային ազատությունը, ներդրումների ազատությունը, ֆինանսական ազատությունը, սեփականության իրավունքը, կոռուպցիայից ազատությունը և աշխատանքի ազատությունը:*** Երկրի «Տնտեսական ազատություն» ինդեքսի որոշման ժամանակ 10 խոշոր գործոններին տրվում են հավասար կշիռներ: Երկրորդ, կիրառվում է 0-ից մինչև 100 գնահատման համակարգ, ընդ որում՝ բարձր գնահատականը վկայում է տնտեսական ազատության ավելի մեծ աստիճանի մասին:

Մինչև 2007 թ. «Հերիթիջ» հիմնադրամը կիրառում էր 1 - 5 գնահատման համակարգ, որտեղ 1-ը համապատասխանում էր ամենաազատ, իսկ 5-ը՝ ամենասահմանափակ երկրին, 2007 թ-ից սկսած, էական փոփոխություններ են կատարվել գնահատման մեթոդաբանության մեջ, որի արդյունքում վերահաշվարկվել են երկրների տնտեսական ազատության գործոնների՝ նախորդ տարիների հաշվարկված գնահատականները, ինդեքսի ընդհանուր գնահատականը, հետևաբար և երկրի դիրքը աշխարհի բազմաթիվ երկրների շարքում:

Բացի այդ, սկսած 2007 թ-ից՝ «Հերիթիջ» հիմնադրամը դիտարկվող երկրների տնտեսական ազատության աստիճանը գնահատում և այդ երկրների դիրքը սահմանում է նաև աշխարհի հինգ ***տարածաշրջանների կտրվածքով***, այսինքն՝ երկրի տնտեսական ազատության մակարդակը ցույց է տրվում ոչ միայն աշխարհի 183 երկրների շարքում, այլ նաև իր տարածաշրջանում:

«Հերիթիջ» հիմնադրամը դիտարկվող երկրները, տնտեսական ազատության ինդեքսներին համապատասխան, դասակարգում է ըստ ***հինգ խոշոր կատեգորիաների***: Այսպես, 80% և ավելի ինդեքս ունեցող երկրները համարվում են տնտեսապես «ազատ», 70.0-79.9%՝ «հիմնա-

---

[3] *«Հերիթիջ» հիմնադրամի **«Տնտեսական ազատության 2010թ. ինդեքսի»** առաջին գործոնների գնահատման մեթոդաբանության մանրամասները տե՛ս Հավելված 1-ում:*

կանում ազատ», 60.0-69.9%՝ «չափավոր ազատ», 50.0-59.9%՝ «հիմնականում ոչ ազատ», 49.9%-ից ցածր՝ «ճնշված» երկրներ:

2010 թ. տնտեսական ազատության ինդեքսի գնահատման համար «Հերիթիջ» հիմնադրամի փորձագետները հիմք են ընդունել 2008թ. հուլիսի 1-ից մինչև 2009թ. հունիսի 30-ը ընկած ժամանակաշրջանի տնտեսական ցուցանիշները: Սակայն հարկ է նկատի ունենալ, որ որոշ գործոններ գնահատվել են պատմական տեղեկատվության հիման վրա: Այսպես, օրինակ, 2010թ. ***դրամավարկային ազատություն*** գործոնի գնահատման համար հիմք է ընդունվել 2006-2008թթ. միջին կշռված տարեկան գնաճը, մինչդեռ, որպես հարկավորման ցուցանիշ վերցվել են 2009 թ. հարկային տարվա հարկային դրույքները:

Հայաստանի գնահատականները. «Հերիթիջ» հիմնադրամը 2010 թվականին Հայաստանը գնահատել է որպես ազատականացված գործարար միջավայր ունեցող երկիր (տե՛ս աղյուսակ 1.1): «Տնտեսական ազատության 2010 թ. ինդեքս» հետազոտությունում դիտարկված աշխարհի 183 երկրների շարքում Հայաստանը 38-րդ տեղում է՝ նախորդ տարվա 31-րդ տեղի փոխարեն, որը պայմանավորված է մի քանի հանգամանքներով: Նախ, նկատենք, որ տեղաշարժ է կատարվել աշխարհի երկրների տնտեսական ազատության ինդեքսների մակարդակներում, և 2010 թ-ին ինը երկրներ՝ Սենտ Լյուսիան, Վրաստանը, Թայվանը, Բոտսվանան, Հարավային Կորեան, Սալվադորը, Ուրուգվայը, Չեխիան և Սլովակիան առաջ են անցել, իսկ երկու երկրներ՝ Բարբադոսն ու Բահամյան Կղզիները հետ են ընկել Հայաստանից իրենց տնտեսական ազատության գնահատականով: Բացի այդ, Հայաստանի 2010 թ. տնտեսական ազատության ընդհանրական գնահատականը նախորդ տարվա համեմատ նվազել է 0.7 միավորով, քանի որ փոփոխություններ են կատարվել դրա հիմքը հանդիսացող առանձին գործոններում (տե՛ս աղյուսակ 1.3): Այսպես, 2009թ. համեմատ բարելավվել են ***ներդրումների ազատության, աշխատանքի ազատության*** և ***կառավարության չափի*** գնահատականները, անփոփոխ է մնացել ***ֆինանսական ազատության*** գնահատականը և վատացել են ***առևտրի ազատության, սեփականության իրավունքի պաշտպանության, դրամավարկային ազատության, կոռուպցիայից ազատության, հարկաբյուջետային ազատության, գործարարության ազատության*** գնահատականները: Մասնավորապես,

- «Առևտրի ազատություն» գործոնի գնահատականը նախորդ տարվա համեմատ իջել է 5.9 միավորով և կազմել է 80.5 միավոր: «Հերիթիջի» փորձագետները Հայաստանի համար այս գործոնի

գնահատականը պակասեցրել են 15 միավորով, այսինքն՝ այն կարող էր լինել 95.5 միավոր: Հայաստանի «Առևտրի ազատության» գնահատականի իջեցումը, ըստ «Հերիթիջի» փորձագետների, պայմանավորված է այն հանգամանքով, որ «ակցիզային հարկերն ու վճարները, ոչ համապատասխան ենթակառուցվածքը, մաքսային արժեքների որոշման անկանխատեսելիությունը, մաքսային վարչարարության անբավարար մակարդակը, սեփականության իրավունքների թույլ պաշտպանվածությունը, ներմուծման մենիշխանությունները և կոռուպցիան ավելացնում են առևտրի ծախքերը»[4]:

- «Սեփականության իրավունքի պաշտպանություն» գործոնի գնահատականը նախորդ տարվա համեմատ վատացել է 5.0 միավորով և կազմել 30.0 միավոր: «Հերիթիջի» փորձագետները այս գործոնի բավականին ցածր գնահատականը բացատրում են այն հանգամանքով, որ, Միջազգային սեփականության իրավունքի 2009 թ. ինդեքսի (International Property Rights Index (IPRI)) ցուցանիշով Հայաստանը աշխարհի 118 երկրների թվում զբաղեցնում է 98-րդ տեղը: «Հերիթիջի» փորձագետները ավելացնում են, որ դատական համակարգը դեռևս փորձում է հաղթահարել խորհրդային ժամանակներից ժառանգած թերզարգացածությունը և կոռուպցիան, որոնք զգալիորեն խոչընդոտում են պայմանագրերի կիրարկմանը:
- Նախորդ տարվա համեմատ Հայաստանի «Դրամավարկային ազատություն» գործոնի գնահատականի՝ 4.9 միավորով վատացման պատճառը նախ, 2005 – 2007 թթ. համեմատ (3.7%) 2006 - 2008թթ. միջին կշռված գնաճի բարձր մակարդակն էր (7.3%), որը պայմանավորված էր 2007թ-ին Հայաստանում միջին տարեկան գնաճի 4.4% և 2008թ-ին՝ 9% մակարդակներով: 2007-2008 թթ., նախորդ տարիների համեմատ, Հայաստանում բարձր գնաճը հիմնականում պայմանավորված էր պարենային ապրանքների, այդ թվում՝ հացամթերքի, մսամթերքի, կենդանական և բուսական յուղի գների աճով, ինչպես նաև ծառայությունների, այդ թվում՝ բուժսպասարկման, կրթության համակարգի և տրանսպորտի ծառայությունների սակագների աճով: Նկատենք, որ «Հերիթիջ» հիմնադրամի կողմից դիտարկված 183 երկրների «Դրամավարկային ազատություն» գործոնի 2010 թ. միջին գնա-

[4] *Աղբյուրը՝* ***The link between Economic Opportunity & Prosperity: The 2010 Index of Economic Freedom****/Heritage Foundation & The Wall Street Journal, էջ 94:*

հատականը նույնպես նվազել է նախորդ տարվա համեմատ (3.4%-ով)՝ պայմանավորված 2007 թ. հունիսից մինչև 2008 թ. կեսերը հանքահումքային և պարենային մթերքների համաշխարհային գների աճով: Ինչ վերաբերում է երկրորդ ենթագործոնին, նշենք, որ 2007 թ-ից «Հերիթիջ» հիմնադրամը փոխել է «Դրամավարկային ազատություն» գործոնի գնահատման մեթոդաբանությունը և, ի լրումն վերջին երեք տարիների միջին կշռված գնաճի ցուցանիշի, այդ գործոնի ընդհանուր գնահատականից հանում է 0-ից մինչև 20 միավոր՝ կախված տվյալ երկրում կառավարության լրահատկացումների և գների կարգավորումների չափից: «Դրամավարկային ազատություն» գործոնի երկրորդ ենթագործոնի, այսինքն՝ Հայաստանում վարչական կարգավորման ենթակա գների պատճառով, որի կշիռը ՀՀ սպառողական զամբյուղում կազմում է 11.9%, Հայաստանի «Դրամավարկային ազատության» 2009-2010 թթ. գործոնների գնահատականները նվազեցվել են՝ յուրաքանչյուր տարի 10-ական միավորով, որով էլ նպաստել են այդ գործոնի ընդհանուր գնահատականի վատացմանը:

- «Կոռուպցիայից ազատություն» գործոնի գնահատականի հիմքում դրվել է «Թրանսփերենսի ինտերնեյշնլի» «Կոռուպցիայի ընկալման» 2008թ. ինդեքսը, որով Հայաստանը աշխարհի 179 երկրների թվում գրավում էր 109-րդ տեղը: Այս առումով նկատենք, որ «Կոռուպցիայի ընկալման» 2009 թ. ինդեքսը ՀՀ-ում զգալի վատացել է, և աշխարհի 180 երկրների թվում Հայաստանը գրավել է 120-րդ տեղը: Հետևաբար, սպասվում է, որ «Հերիթիջ» հիմնադրամի «Տնտեսական ազատության» 2011թ. ինդեքսում «Կոռուպցիայից ազատություն» գործոնի գծով Հայաստանի գնահատականը ավելի կվատանա: Բացի այդ, ըստ «Հերիթիջի» փորձագետների, Հայաստանում «կոռուպցիան լայն տարածում ունի բոլոր մակարդակներում և բոլոր հատվածներում: Պետական պաշտոնյաների կողմից կաշառք պահանջելը դիտարկվում է որպես լայնորեն ընդունված պրակտիկա: Կառավարության հետ կապված ձեռնարկչատիրությունը մենիշխանություն ունի բազմաթիվ կենսական նշանակություն ունեցող ապրանքների ներմուծման ոլորտներում»[5]:
- «Հարկաբյուջետային ազատություն» և «Գործարարության ազատություն» գործոնների գնահատականները նախորդ տարվա հա-

[5] *Աղբյուրը՝* ***The link between Economic Opportunity & Prosperity: The 2010 Index of Economic Freedom****/Heritage Foundation & The Wall Street Journal, էջ 94:*

մեմատ վատացել են աննշան չափով՝ պայմանավորված դրանց հետ կապված հաշվարկների ճշգրտմամբ:

«Հերիթիջի» փորձագետները բարձր են գնահատել անցած տասնամյակում Հայաստանում իրականացված տնտեսական բարեփոխումները, որոնք նպաստել են եկամուտների աճին և աղքատության կրճատմանը՝ մակրոտնտեսական կայունության պայմաններում: Հարկային ցածր դրույքաչափը և Կառավարության ծախսերի չափավոր մակարդակը պայմանավորել են «Հարկաբյուջետային ազատություն» գործոնի բարձր գնահատականը: «Հերիթիջի» փորձագետների կարծիքով, Հայաստանի տնտեսական ազատության գնահատականի հետագա բարձրացման համար դեռևս զգալի անելիքներ կան երկրում, որոնցից առավել կարևորվում են լայն տարածում ունեցող կոռուպցիայի հաղթահարումը և սեփականության իրավունքի պաշտպանվածության մակարդակի բարձրացումը: Հայաստանում կոռուպցիայի մասին նշվել է, որ «առանձին պետական պաշտոնյաների բյուրոկրատական գործողությունները և կայացվող հայեցողական որոշումները խրախուսում են մանր կոռուպցիան, իսկ դանդաղ ընթացող կառուցվածքային բարեփոխումները դեռևս չեն ապահովում Հայաստանի արտադրողական բազայի բազմազանեցումը»[6]:

Հայաստանի տնտեսական ազատության մակարդակը, 2000թ-ից սկսած, հիմնականում եղել է 60.0-69.9% միջակայքում (բացառությամբ 2004 և 2006թթ., երբ գնահատականները բարձր են եղել 70%-ից), այսինքն, ըստ «Հերիթիջի» դասակարգման, Հայաստանը վերջին 10 տարիների ընթացքում համարվել է տնտեսապես «չափավոր ազատ» երկիր, թեև հարկ է նշել, որ այդ տարիների ընթացքում Հայաստանի գնահատականը գրեթե միշտ մոտ է եղել միջակայքի առավելագույն սահմանին (տե՛ս աղյուսակ 1.3):

Հայաստանը տարածաշրջանային համապատկերում. Հայաստանը տնտեսական ազատության մակարդակով Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի ու նախկին ԽՍՀՄ երկրներից զիջում է Էստոնիային, Լիտվային, Վրաստանին, Չեխիային և Սլովակիային (տե՛ս աղյուսակ 1.1):

«Տնտեսական ազատության 2010 թ. ինդեքսի» հիմքում ընկած 10 գործոններից 8-ով Հայաստանը գերազանցում է աշխարհի 183 երկրների միջին ցուցանիշը: Հայաստանը զիջում է աշխարհի 2010թ. միջին ցուցանիշին միայն «Սեփականության իրավունքի պաշտպանության» և «Կոռուպցիայից ազատության» գնահատականներով:

---

[6] *Աղբյուրը՝ **The link between Economic Opportunity & Prosperity: The 2010 Index of Economic Freedom**/Heritage Foundation & The Wall Street Journal, էջ 93:*

Տնտեսական ազատության ինդեքսով Հայաստանից զգալիորեն հետ է մնում Մերձբալթյան երկրներից Լատվիան, որը զբաղեցնում է 50-րդ տեղը: ԱՊՀ երկրներից հաջորդը Ղրղզստանն է, որը ներկայումս զբաղեցնում է 80-րդ տեղը (տե՛ս աղյուսակ 1.1):

Եվրոպական տարածաշրջանի 43 երկրների շարքում Հայաստանը 2010թ. գրավել է 21-րդ տեղը՝ նախորդ տարվա 18-րդ տեղի փոխարեն, իսկ Վրաստանը զբաղեցնում է 14-րդ տեղը (տե՛ս աղյուսակ 1.2): Հայաստանի տնտեսական ազատության գնահատականը (69.2 միավոր) բարձր է եվրոպական տարածաշրջանի միջինից (66.8 միավոր):

Հայաստանի հետ մեկտեղ, տնտեսապես «չափավոր ազատ» երկրների շարքն են դասվում նաև Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրները, բացառությամբ Խորվաթիայի, Սերբիայի, Բոսնիա և Հերցեգովինայի, որոնք ներկայումս դասվում են «հիմնականում ոչ ազատ» երկրների թվին: Տնտեսապես «չափավոր ազատ» երկրների թվին են դասվում նաև նախկին ԽՍՀՄ երկրներից՝ Լատվիան, Ղրղզստանը և Ղազախստանը (տե՛ս աղյուսակ 1.1): 2010 թ. տնտեսական ազատության ինդեքսով Վրաստանը դասվում է «հիմնականում ազատ» երկրների շարքը:

Նախկին ԽՍՀՄ, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի, եվրոպական տարածաշրջանի երկրների 2010 թ. տնտեսական ազատության ինդեքսների համեմատական գնահատականները, ինչպես նաև Հայաստանի 1996-2010թթ. և հարավկովկասյան երկրների 2007 – 2010 թթ. ինդեքսները, ըստ «Հերիթիջ» հիմնադրամի գնահատման, ներկայացված են աղյուսակներ 1.1-1.4-ում:

2 . «Ֆրեյզեր» և «Կատո» ինստիտուտների «Տնտեսական ազատությունը աշխարհում. 2009 թ. ինդեքս»

Ընդհանուր տեղեկատվություն. «Ֆրեյզեր» (Fraser) ինստիտուտը կանադական անկախ հետազոտական և կրթական հաստատություն է, որը 1988 թվականից ուսումնասիրում է մրցունակ շուկաների դերը տնտեսական և սոցիալական առաջընթացի գործում: Այս ինստիտուտը գնահատում է աշխարհի երկրների տնտեսական ազատության ինդեքսները և դրանց դինամիկայի հիման վրա ցույց տալիս, թե նախորդ 30 տարիների ընթացքում տնտեսական ազատությունն աշխարհում նվազել է, թե՝ աճել, արդյո՞ք աղքատները շահում են երկրի տնտեսական ազատականացումից, ինչպե՞ս է տնտեսական ազա-

տությունն ազդում բարեկեցության, ներդրումների, արտադրողականության և եկամտի բաշխվածության վրա[7]:

«Կատո» (Cato) ամերիկյան ինստիտուտը շահույթի նպատակ չհետապնդող, պետական քաղաքականության վերաբերյալ հետազոտություն իրականացնող անկախ, ոչ կառավարական հիմնադրամ է, որը գործում է 1977 թվականից: «Կատո» ինստիտուտն իր հրապարակումների ընդարձակ ցանցի միջոցով փորձում է ընդլայնել տնտեսական և անհատի ազատության, խաղաղության սկզբունքների վրա հիմնված պետական քաղաքականության հիմնախնդիրների լուսաբանումը և քննարկումները: Ինստիտուտը հրապարակում է գրքեր, մենագրություններ, տարաբնույթ հետազոտություններ, որոնցում ներկայացնում է պետական քաղաքականությանը վերաբերող տարբեր բանավեճեր[8]:

Այս ինստիտուտների կողմից համատեղ հրապարակվող **«Տնտեսական ազատությունը աշխարհում. 2009 թ. ինդեքսը»** գնահատում է երկրի քաղաքականությունների ու հաստատությունների աջակցության աստիճանը տնտեսական ազատությանը: Որպես տնտեսական ազատության անկյունաքարեր՝ դիտարկվում են անձնական ընտրությունը (անհատների որոշումների կայացման անկախությունը), մրցակցելու ազատությունը և մասնավոր սեփականության պաշտպանվածությունը:

2009 թ. սեպտեմբերի 14-ին «Ֆրեյզեր» և «Կատո» ինստիտուտները համատեղ հրապարակել են **«Տնտեսական ազատությունը աշխարհում. 2009 թ.»** տարեկան հաշվետվությունը, որում արդեն չորրորդ տարին է (սկսած 2006 թ.) աշխարհի բազմաթիվ երկրների թվում հրապարակվում են Հայաստանի ու Ադրբեջանի տնտեսական ազատության ինդեքսները: Վրաստանի գնահատականը հրապարակվում է 2005 թ.:

Գնահատման մեթոդաբանությունը[9]. «Ֆրեյզեր» և «Կատո» ինստիտուտների հրապարակած **«Տնտեսական ազատությունը աշխարհում. 2009»** հաշվետվության մեջ տնտեսական ազատության ինդեքսը գնահատվել է աշխարհի 141 երկրների համար: Գնահատման ժամանակ կիրառվել է 0-ից մինչև 10 գնահատման համակարգ, ընդ

---

[7] *Աղբյուրը՝ http://www.fraserinstitute.org/aboutus/whoweare/:*

[8] *Աղբյուրը՝ http://www.cato.org/about.php; http://www.cato.org/pubs/efw/:*

[9] *«Ֆրեյզեր» և «Կատո» ինստիտուտների հրապարակած **«Տնտեսական ազատությունը աշխարհում 2009 թ. ինդեքսի**» առանձին ենթագործոնների գնահատման մեթոդաբանության մանրամասները տե՛ս Հավելված 2-ում:*

որում՝ 10-ը՝ ամենաազատ երկրի գնահատականն է, իսկ 0-ին մոտը՝ ամենասահմանափակ երկրինը: Օգտագործվել են 42 անկախ տնտեսական ենթագործոններ, որոնք խմբավորվել են 5 խոշոր գործոնների մեջ: Այդ խոշոր գործոններն են՝ ա) կառավարության չափը, այսինքն՝ պետական ապարատի չափերը և դրա գործառույթների ընդգրկունությունը, բ) իրավական կառուցվածքը և սեփականության իրավունքի պաշտպանվածությունը, գ) «առողջ» փողի մատչելիությունը, դ) միջազգային առևտրի ազատությունը, ե) վարկային շուկայի, աշխատուժի շուկայի և գործարարության կարգավորումը: Այս հինգ խոշոր գործոններից յուրաքանչյուրը ստացել է առանձին գնահատական, իսկ ինդեքսի համախառն գնահատականը ստանալու համար վերցվել է դրանց թվաբանական միջինը:

2009թ. հաշվետվությունում տնտեսական ազատության ինդեքսը հաշվարկելիս հեղինակները օգտվել են 2007թ. տնտեսական զարգացման վերաբերյալ միջազգային ֆինանսական կառույցների (Համաշխարհային բանկ, Արժույթի միջազգային հիմնադրամ և այլն) հրապարակած վիճակագրական տվյալներից, քանի որ դրանք համարվել են առավել ամբողջական[10]:

<u>Հայաստանի գնահատականները</u>. Ըստ «Ֆրեյզեր» և «Կատո» ինստիտուտների գնահատման՝ Հայաստանը նախկին ԽՍՀՄ և Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայի երկրների թվում տնտեսապես առավել ազատ երկրներից մեկն է և աշխարհի 141 երկրների շարքում գրավում է 48-րդ տեղը:

Նկատենք, որ 2008 թ. համեմատ Հայաստանի տնտեսական ազատության ինդեքսի ընդհանուր գնահատականը, հետևաբար նաև դիրքը աշխարհի 141 երկրների շարքում վատացել է. 2009 թ. հաշվետվությունում Հայաստանի գնահատականը կազմել է «7.17»՝ նախորդ տարվա «7.25»-ի փոխարեն: Հայաստանի գնահատականի վատացումը պայմանավորված է դիտարկված ժամանակահատվածում դատական համակարգի անկախության վատացմամբ, միջազգային առևտրի բարձր հարկմամբ, միջազգային առևտրի ոչ մաքսային արգելքների առկայությամբ, միջազգային առևտրի հատվածի կանխատեսելի չափի համեմատ փաստացի չափի ցածր մակարդակով, օտարերկրյա բաժնեմասերի/ներդրումների ցածր մատչելիությամբ, գործարարության կարգավորման բեռի ծանրությամբ և ոչ պաշտոնական (ոչ օրինական) վճարների առկայությամբ:

---

[10] *http://www.freetheworld.com/2009/reports/world/EFW2009_app.pdf:*

Հայաստանը տարածաշրջանային համապատկերում. Նախկին ԽՍՀՄ երկրներից գնահատվել են 11, իսկ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներից՝ 13 երկրների ինդեքսները (տե՛ս աղյուսակ 2.2): Նշված երկրների ինդեքսների վերլուծությունից հետևում է, որ նախկին ԽՍՀՄ երկրների թվում Հայաստանը տնտեսական ազատության ամփոփ ինդեքսի վարկանիշով զիջում է Մերձբալթյան երկրներին և Վրաստանին, իսկ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների թվում՝ Սլովակիային և Հունգարիային: Վրաստանը զբաղեցնում է 42-րդ, իսկ Ադրբեջանը՝ 85-րդ տեղը: Հարավային Կովկասի երկրների 2005-2007 թթ. տվյալներով հաշվարկված 42 ենթագործոնների 2007-2009 թթ. հաշվետվություններում տրված գնահատականների համեմատական վերլուծությունը մանրամասն ներկայացված է աղյուսակ 2.1-ում:

Տնտեսության առանձին ոլորտների գծով հաշվարկված ենթաինդեքսներով Հայաստանը զիջում է ավելի շատ երկրների: Բացառություն են կազմում միայն ***կառավարության չափը*** և ***առողջ փողի մատչելիությունը*** ենթաինդեքսները, որոնցով Հայաստանը գրավում է համապատասխանաբար 14-րդ և 22-րդ տեղերը աշխարհի 141 երկրների շարքում (տե՛ս աղյուսակներ 2.3, 2.4):

3. Համաշխարհային բանկի «Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը 2010» ինդեքս

Ընդհանուր տեղեկատվություն. 2009թ. սեպտեմբերի 8-ին Համաշխարհային բանկը հրապարակել է իր ամենամյա «Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը 2010 - Բարեփոխումների իրականացումը դժվարին ժամանակներում» («Doing Business 2010 - Reforming through Difficult Times») հետազոտությունը, որում ուսումնասիրվել և գնահատվել է աշխարհի 183 երկրներում[11] գործարար միջավայրը և գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը համաշխարհային ճգնաժամի պայմաններում: Այս հետազոտության նպատակն է վերլուծել տնտեսական գործունեության կենսապարբերաշրջանին (life cycles) վերաբերող կանոնակարգերը և բացահայտել աշխարհի տարբեր երկրներում գործարար միջավայրը կարգավորող այն ոլորտները,

[11] *Տե՛ս www.doingbusiness.org:*

որտեղ առկա են գործարարության իրականացման լուրջ խոչընդոտներ, և անհրաժեշտ են լուրջ բարեփոխումներ:

Նշենք, որ գործարարությամբ զբաղվելու դյուրինությամբ աշխարհի 183 տնտեսությունների[12] առաջին տասնյակում են Սինգապուրը, Նոր Զելանդիան, Հոնկոնգը, ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան, Դանիան, Իռլանդիան, Կանադան, Ավստրալիան և Նորվեգիան, իսկ վերջին տասնյակում են՝ Նիգերիան, Էրիթրեան, Բուրունդին, Վենեսուելան, Չադը, Կոնգոն, Սան Տոմեի և Պրինսիպիի Հանրապետությունը, Գվինեա-Բիսաուն, Կոնգոյի Ժողովրդական Հանրապետությունը և Կենտրոնաֆրիկյան Հանրապետությունը:

Գնահատման մեթոդաբանությունը[13]. ***«Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը 2010»*** հետազոտության մեջ ուսումնասիրվել են գործարար միջավայրի կարգավորման տասը ոլորտներ՝ ***գործարարություն սկսելը (գրանցելը), շինարարական թույլտվություններ ստանալը, աշխատողների վարձումը, սեփականության գրանցումը, վարկի ստացումը, ներդրողների պաշտպանությունը, հարկերի վճարումը, սահմանային առևտրի դյուրինությունը, պայմանագրերի կիրարկումը, գործարարության փակումը (լուծարումը)***: Նշված ոլորտների համար հաշվարկվել են առանձին ենթաինդեքսներ, որոնց պարզ թվաբանական միջինը կազմում է ***«Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը»*** ամփոփ ինդեքսը տվյալ երկրի համար: Ընդ որում, հարկ է նկատի ունենալ, որ «Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը 2010» հետազոտության մեջ օգտագործվել են 2008 թ. հունիս - 2009 թ. հունիս ժամանակահատվածի տվյալները:

Ենթաինդեքսների հաշվարկման համար հիմք է հանդիսանում հարցումների միջոցով ստացված տեղեկատվությունը, որը, անհրաժեշտության դեպքում, ճշգրտվում է համապատասխան ոլորտը կարգավորող օրենքների կամ օրենսդրական ակտերի դրույթների հիման վրա: Ընդ որում՝ հարցումների համար անհրաժեշտ հարցաթերթիկները կազմվում են Համաշխարհային բանկի փորձագետների կողմից՝ երկրների գործարար միջավայրը կարգավորող օրենսդրական դաշտը ուսումնասիրելուց հետո:

---

[12] Նախորդ տարվա համեմատ ավելացել են երկու երկիր՝ Կիպրոսն ու Կոսովոն:

*[13] Համաշխարհային բանկի հրապարակած **«Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը 2010թ. հնդեքսում»** ներառվող գործարար միջավայրի 10 ոլորտների գնահատման մեթոդաբանության մանրամասները տե՛ս Հավելված 3-ում:*

Հայաստանի գնահատականները. Հայաստանի ինդեքսը Համաշխարհային բանկի կողմից գնահատվում է 2004 թվականից, և այս ողջ ընթացքում գործարար միջավայրի կարգավորման ոլորտում գրանցվել են 17 բարեփոխումներ: Մասնավորապես՝ գործարարություն սկսելու ոլորտում՝ 2 բարեփոխում (2007թ. և 2010թ. հետազոտություններում), ***շինարարական թույլտվություններ ստանալու ոլորտում*** 2 բարեփոխում (2007թ. և 2009թ.), ***աշխատողներ վարձելու ոլորտում*** 1 բարեփոխում (2006թ.), ***սեփականության գրանցման ոլորտում*** 1 բարեփոխում (2007թ.), ***վարկեր ստանալու ոլորտում*** 5 բարեփոխում (2005թ., 2006թ., 2007թ., 2008թ., 2010թ.), ***սահմանային առևտրի ոլորտում*** 2 բարեփոխում (2008թ. և 2010թ.), ***պայմանագրերի կիրարկման ոլորտում*** 2 բարեփոխում (2005թ. և 2009թ.), ***գործարարությունը փակելու ոլորտում*** 2 բարեփոխում (2005թ. և 2008թ.): 2004-2010թթ. հետազոտություններում ոչ մի բարեփոխում չի գրանցվել ներդրողների պաշտպանության և հարկերի վճարման ոլորտներում:

«Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը 2010» ինդեքսով Հայաստանը աշխարհի 183 երկրների թվում 43-րդն է, որը բարելավում է նախորդ տարվա 50-րդի համեմատ՝ շնորհիվ գործարարություն սկսելու, շինարարական թույլտվություններ ստանալու, սեփականության գրանցման և սահմանային առևտրի ոլորտներում բարեփոխումների իրականացման:

Մասնավորապես, 2010 թ. ***գործարարություն սկսելը*** ենթաինդեքսի գծով Հայաստանում գրանցել է խոշոր առաջընթաց՝ նախորդ տարվա 65-րդ տեղի փոխարեն (181 երկրների թվում) ներկայումս գրավում է 21-րդ տեղը (183 երկրների թվում): Այս բարելավումը պայմանավորված է այն հանգամանքով, որ 2009թ-ից Հայաստանում վերացվել է ձեռնարկությունների նկատմամբ նվազագույն (կանոնադրական) կապիտալի պահանջը, կրճատվել են ընթացակարգերի քանակը և այդ ընթացակարգերի վրա ծախսվող օրերի թիվը՝ 3-ականով, բարելավվել են գործարարության գրանցման ինտերնետային ծառայությունները, ընկերությունների գրանցման ձևի էլեկտրոնային տարբերակը դարձել է մատչելի: Նշենք նաև, որ, ըստ «Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը 2010» հետազոտության, 2008/2009թթ. Հայաստանում գործարարություն սկսելու համար ծախսված ժամանակի 60%-ը (9 օր) հատկացվում է Պետական ռեգիստրում գրանցվելուն և հարկային մարմիններից նույնականացման ցուցիչ ստանալուն, իսկ ծախսերի 48%-ը կազմում են կնիքի պատվիրման ծախսերը:

Շինարարական թույլտվություններ ստանալու ենթաինդեքսի բարելավումը պայմանավորված է այն հանգամանքով, որ Հայաստանում 12 օրով կրճատվել է շինարարական թույլտվություններ ստանալու համար անհրաժեշտ ժամանակի տևողությունը: ***«Սեփականության գրանցում»*** ինդեքսի հիմքը կազմող ցուցանիշները նախորդ տարվա համեմատ Հայաստանում չեն փոխվել, սակայն քանի որ մյուս երկրներում վատացել են, հետևաբար Հայաստանի դիրքը բարելավվել է: ***«Սահմանային առևտուր»*** ենթաինդեքսում ներառվող բոլոր ցուցանիշները 2008-2009 թթ. ընթացքում բարելավվել են[*]: Այդ բարեփոխումների թվում «Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը 2010»-ի փորձագետները նշում են՝ բանկային և տրանսպորտային հատվածների մրցունակության խրախուսումը, մաքսային բրոքերների ծառայության ներդրումը, մաքսային զննման ենթարկվող ապրանքների քանակի կրճատումը և մաքսազերծման համար անհրաժեշտ փաստաթղթերի քանակի պարզեցումը: Իրականացման փուլում են նաև մաքսազերծման և վճարումների ամբողջ գործընթացի համակարգչայնացումը և ռիսկի վրա հիմնված հսկողության գործընթացների բարելավումը:

«Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը 2010» ինդեքսով Հայաստանի դիրքը աշխարհի 183 երկրների շարքում վատացել է ***աշխատողների վարձում, վարկի ստացում, ներդրողների պաշտպանություն, հարկերի վճարում*** և ***պայմանագրերի կիրարկում*** ենթաինդեքսների գծով: Նկատենք, որ ***աշխատողների վարձում, ներդրողների պաշտպանություն և հարկերի վճարում*** ենթաինդեքսներում ներառվող ցուցանիշները նախորդ տարվա համեմատ չեն փոփոխվել, սակայն քանի որ մյուս երկրներում այդ ցուցանիշները բարելավվել են, հետևաբար Հայաստանի դիրքը համաշխարհային համապատկերում վատացել է: ***Վարկի ստացում*** ենթաինդեքսի գծով Հայաստանի դիրքը նախորդ՝ 2009 թ. ինդեքսի համեմատ վատացել է 2 միավորով, թեև այդ ինդեքսում ներառվող երկու ցուցանիշները՝ պետական ռեգիստրի և մասնավոր վարկային բյուրոյի ընդգրկունությունը զգալիորեն աճել են: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ աշխարհի մյուս երկրներում ***վարկի ստացում*** ենթաինդեքսի զգալի բարելավում է արձանա-

---

[*] *«Ֆրեյզեր» և «Կատո» ինստիտուտների հրապարակած «Տնտեսական ազատությունը աշխարհում 2009» ինդեքսում Հայաստանի՝ միջազգային առևտրին վերաբերող գնահատականները վատացել են, մինչդեռ Համաշխարհային բանկի «Գործարարությամբ զբաղվելու դյուրինություն 2010» ինդեքսում դրանք զգալիորեն բարելավվել են: Բանն այն է, որ «Ֆրեյզեր» և «Կատո» ինստիտուտների նշված ինդեքսը կառուցվել է 2007 թ. տվյալների, իսկ Համաշխարհային բանկի ինդեքսը՝ 2008թ. հունիս-2009թ. հունիս ժամանակահատվածի տվյալների հիման վրա:*

գրվել: Հայաստանում 1-ով պակասեցվել է պայմանագրի կիրարկման համար պահանջվող ընթացակարգերի քանակը, սակայն ***պայմանագրերի կիրարկում*** ենթաինդեքսի գծով Հայաստանի դիրքը 1 միավորով վատացել է:

Միայն մեկ՝ ***գործարարության փակումը (լուծարումը)*** ենթաինդեքսի գծով Հայաստանի տեղը անփոփոխ է մնացել:

Այսպիսով, գործարար միջավայրի կարգավորման տասը ոլորտների համար գնահատված ենթաինդեքսները ամփոփվել են մեկ՝ ***«Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը»*** ինդեքսում:

<u>Հայաստանը տարածաշրջանային համապատկերում</u>. Համաշխարհային բանկի կողմից հրապարակված «Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը-2010» հետազոտության մեջ ենթաինդեքսների գնահատման մեթոդաբանության ուսումնասիրման, ինչպես նաև Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի 2010թ. ինդեքսների համեմատական վերլուծության արդյունքում նկատում ենք, որ Հայաստանը.

- գերազանցում է իր հարևան երկրներին «Գործարարության փակում (լուծարում)» ոլորտում,
- զիջում է իր հարևան երկու երկրներին «Գործարարություն սկսելը (գրանցելը)», «Աշխատողների վարձում», «Վարկի ստացում», «Ներդրողների պաշտպանություն», «Հարկերի վճարում» և «Պայմանագրերի կիրարկում» ոլորտներում,
- զիջում է միայն Վրաստանին «Շինարարական թույլտվություններ ստանալը», «Սեփականության գրանցում» և «Սահմանային առևտրի դյուրինություն» ոլորտներում:

Տարածաշրջանային համապատկերի տեսակետից հարկ ենք համարում քննարկել ***հարկերի վճարում*** և ***սահմանային առևտուր*** ենթաինդեքսները:

Հարկերի վճարում ենթաինդեքսի ցուցանիշով Հայաստանը զբաղեցնում է 153-րդ տեղը՝ աշխարհի 183 երկրների թվում և զգալիորեն զիջում է թե՛ Վրաստանին և թե՛ Ադրբեջանին: Այս ենթաինդեքսի գծով Հայաստանի և Ադրբեջանի ցուցանիշները նախորդ տարվա համեմատ փոփոխություն չեն կրել, սակայն Վրաստանը գրանցել է լուրջ առաջընթաց՝ նախորդ տարվա 112-րդ տեղից (աշխարհի 181 երկրների շարքում) հասնելով 64-րդ տեղը (աշխարհի 183 երկրների շարքում): Վրաստանում հարկային վարչարարության բարեփոխումների արդյունքում 12-ով կրճատվել է հարկային վճարումների տարեկան թիվը և 23.3%-ով նվազել է ընդհանուր հարկերի դրույքաչափը (տե՛ս աղյուսակ 3.2):

Այսպիսով, ներկայումս Հայաստանում ձեռներեցները կատարում են հարկերի տարեկան 50 վճարում (Վրաստանում՝ 18, Ադրբեջանում՝ 22)՝ ծախսելով 958 ժամ (Վրաստանում՝ 387, Ադրբեջանում՝ 376) և վճարում են իրենց համախառն շահույթի 36.2%-ը (Վրաստանում՝ 15.3%, Ադրբեջանում՝ 40.9%):

Ուշագրավ է այն փաստը, որ Հայաստանում հարկերի վճարմանը հատկացվող ժամանակի 37%-ը ծախսվում է սոցապահովագրական (Վրաստանում՝ 17%, Ադրբեջանում՝ 36%), 47%-ը՝ ավելացված արժեքի հարկի (Վրաստանում՝ 47%, Ադրբեջանում՝ 43%), 16%-ը՝ շահութահարկի ու եկամտահարկի (Վրաստանում՝ 36%, Ադրբեջանում՝ 21%) վճարումների իրականացման վրա: Ավելացված արժեքի հարկի և շահութահարկի հաշվետվությունները Ադրբեջանում ներկայացվում են առցանց (on-line) էլեկտրոնային տարբերակով:

Իսկ ինչ վերաբերում է ***սահմանային առևտուր*** ենթաինդեքսի գնահատականին, հարկ է նշել, որ չնայած զգալի բարեփոխումներին, Հայաստանը իր 102-րդ տեղով դեռևս զգալիորեն զիջում է Վրաստանին, որը զբաղեցնում է 30-րդ տեղը: Դա հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ Վրաստանի համեմատ Հայաստանում ավելի շատ փաստաթղթեր, ժամանակ (օր) և դրամական միջոցներ են ծախսվում արտահանման և ներմուծման ստանդարտ գործընթացների վրա:

Հարավկովկասյան տարածաշրջանի երկրների ամփոփ ինդեքսների, ենթաինդեքսների և դրանք կազմող ցուցանիշների դինամիկան, ինչպես նաև նախկին ԽՍՀՄ, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում գործարարությամբ զբաղվելու դյուրինության համեմատական նկարագիրը ներկայացված են 3.1-3.3 աղյուսակներում:

4. Համաշխարհային տնտեսական համաժողովի «Համաշխարհային առևտրի խթանման 2009 թ. ինդեքս»

Ընդհանուր տեղեկատվություն. ***Համաշխարհային տնտեսական համաժողովը*** (այսուհետ՝ Համաժողով) 1971թ-ին հիմնադրված ոչ առևտրային անկախ միջազգային կազմակերպություն է, որն իր առջև խնդիր է դրել դառնալ առաջատարը միջազգային հանրության բազմաբնույթ գործունեության ներդաշնակության ամրապնդման ու խթանման, տարածաշրջանային և ազգային ռեսուրսների աջակցման գործում: Այդ նպատակներին հասնելու համար կազմակերպությունը հանդես է գալիս նաև խորհրդատվական նախաձեռնություններով: Կազմա-

կերպությունը լուրջ գործունեություն է ծավալում նաև համաշխարհային կրթության և առողջապահության, էներգետիկ ու տնտեսական զարգացման ոլորտներում, կոռուպցիայի դեմ պայքարում և այլ բնագավառներում: Համաժողովն ապահովում է քաղաքական, գիտական և գործարար շրջանակների առաջնորդների՝ աշխարհում իրավիճակի բարելավմանը միտված համագործակցության լայն ասպարեզ: Համաժողովի կողմից Դավոսում կազմակերպվող ամենամյա գագաթաժողովը համաշխարհային քաղաքական, գործարար և հասարակական առաջնորդների ամենաներկայացուցչական հավաքներից է: Համաժողովի անդամ են աշխարհի շուրջ 1000 առաջատար ընկերություններ և ավելի քան 200 ձեռնարկություններ: Հիմնական գրասենյակը գտնվում է Ժնևում (Շվեյցարիա):

Համաժողովը զեկույցների (Համաշխարհային մրցունակություն, Համաշխարհային տեղեկատվական տեխնոլոգիաներ, Համաշխարհային առևտրի խթանում, Համաշխարհային զբոսաշրջության խթանում և այլն) և տարբեր նախաձեռնությունների միջոցով նպատակ է հետապնդում բացահայտել աշխարհի բազմաթիվ երկրներում տնտեսական աճի խոչընդոտները և առաջարկել դրանց հաղթահարմանն ուղղված ռազմավարություններ:

«Համաշխարհային առևտրի խթանում. 2009 թ.» զեկույցը (Global Enabling Trade Report-2009)[14], որում իրականացվում է համաշխարհային առևտրի խթանման համեմատական վերլուծություն աշխարհի բազմաթիվ երկրների համար, Համաժողովը հրապարակում է երկրորդ անգամ: 2008 թ. զեկույցում ընդգրկվել էր 118 երկիր, իսկ 2009 թ-ին ավելացել է 4 երկիր (Կոտ Դիվուարը, Գամբիան, Գանան, Մալավին), և գնահատման համակարգից դուրս է մնացել 1 երկիր (Ուզբեկստանը), այսինքն՝ 2009 թ. զեկույցում ընդգրկվել են 121 երկրներ: Նշենք, որ համաշխարհային առևտրի բացվածության և ներդրումների ներգրավման առաջին տասնյակում են Սինգապուրը, Հոնկոնգը, Շվեյցարիան, Դանիան, Շվեդիան, Կանադան, Նորվեգիան, Ֆինլանդիան, Ավստրիան և Նիդեռլանդները, իսկ վերջին տասնյակում են՝ Ալժիրը, Մոնղոլիան, Տաջիկստանը, Գայանան, Բուրունդին, Նիգերիան, Զիմբաբվեն, Վենեսուելան, Կոտ Դիվուարը և Չադը:

<u>Գնահատման մեթոդաբանությունը</u>. Համաշխարհային առևտրի խթանման ինդեքսը գնահատում է երկրների սահմաններով ապրանք-

---

[14] *Տես **«Համաշխարհային առևտրի խթանում. 2009 թ.»** զեկույցը, Համաշխարհային տնտեսական համաժողով, Ժնև, Շվեյցարիա, 2009 թ.*
<http://www.weforum.org/pdf/getr09_dev/GETR09_Fullreport.pdf>:

ների ազատ հոսքի հեշտացմանը նպաստող գործոնների, քաղաքականությունների և ծառայությունների առկայությունը և արդյունավետությունը երկրներում: Ինդեքսը հաշվարկելիս դիտարկվում են առևտրի հոսքերի ազատությունը պայմանավորող գործոնները և քաղաքականությունները նկարագրող 4 ոլորտներ՝ իրենց բաղկացուցիչ 9 հիմնասյուներով՝

I. Շուկայի մատչելիությունը.

- ***տեղական և օտարերկրյա շուկաների մատչելիությունը***, որը բնութագրում է, թե օտարերկրյա ապրանքատեսակների շրջանառությունը տվյալ երկրի ներքին շուկայում որքանո՞վ է խրախուսվում և ի՞նչ ազդեցություն է ունենում արտաքին շուկաներում տեղական արտադրողների ազատ մուտքի վրա:

II. Մաքսային վարչարարությունը.

- մաքսային վարչարարության արդյունավետությունը,
- ներմուծման-արտահանման գործընթացների արդյունավետությունը,
- մաքսային վարչարարության թափանցիկությունը:

III. Տրանսպորտի և հեռահաղորդակցության ենթակառույցները.

- տրանսպորտի ենթակառույցների մատչելիությունն ու որակը,
- տրանսպորտային ծառայությունների մատչելիությունն ու որակը,
- տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների մատչելիությունն ու օգտագործումը:

IV. Գործարար միջավայրը.

- արտահանման/ներմուծման կանոնակարգումների միջավայրը,
- ֆիզիկական անվտանգությունը:

Նշված 4 ոլորտների բաղկացուցիչ մասերը կազմող 9 հիմնասյուներից յուրաքանչյուրի գծով հաշվարկվում են ենթաինդեքսներ՝ 1 - 7 բալային համակարգով, ընդ որում՝ «7» գնահատականը համապատասխանում է միջազգային առևտրում ամենաազատ, իսկ «1» գնահատականը՝ ամենասահմանափակ երկրին: Հիմնասյուների գնահատականների պարզ միջին թվաբանականի կիրառմամբ ստացվում է 4 ոլորտներից յուրաքանչյուրի ինդեքսը (ենթաինդեքսը), իսկ վերջիններիս միջինի հիման վրա՝ «Համաշխարհային առևտրի խթանման» ինդեքսը:

Համաշխարհային առևտրի խթանման ինդեքսների գնահատման ժամանակ օգտագործվում են նախորդ տարվա տվյալներն ու այլ տեղեկատվության աղբյուրներ, այսինքն՝ 2009 թ. ինդեքսների գնահատ-

ման հիմքում ընկած են 2008 թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածի տվյալները: Հաշվետվությունները պատրաստելու ժամանակ վերլուծաբանները օգտվում են տեղեկատվության բազմազան աղբյուրներից, ներառյալ արտասահմանյան և տեղական օրաթերթերը, ամսագրերը, ակադեմիական վերլուծությունները, ոչ կառավարական կազմակերպությունների, գիտահետազոտական կենտրոնների, անհատ մասնագետների հետ կապերը, ինչպես նաև այցելում են տարածաշրջան՝ իրավիճակին տեղում ծանոթանալու նպատակով:

Հայաստանի գնահատականները. 2008 թ-ին Հայաստանը այս ինդեքսի գծով աշխարհի 118 երկրների թվում գրավում էր 61-րդ տեղը (3.9 միավոր), մինչդեռ 2009թ-ին աշխարհի 121 երկրների թվում 64-րդն էր (3.81 միավոր): Այս բնագավառում որպես Հայաստանի տնտեսության դրական ոլորտներ Համաժողովը նշում է տրանսպորտի ոլորտում Ծառայությունների առևտրի գլխավոր համաձայնագրի (GATS) շրջանակում երկրի ստանձնած պարտավորությունները, օտարերկրյա աշխատուժի ներգրավման դյուրինությունը, նպատակային (թիրախային) շուկաներում մաքսային դրույքների ոչ խտրական լինելը, մաքսատուրքով չհարկվող ներմուծումների տեսակարար կշիռը և այլն: Համաշխարհային առևտրի խթանման ոլորտում որպես Հայաստանի տնտեսության թույլ կողմեր Համաժողովը առանձնացնում է մաքսային դրույքների ցրվածքը, միջազգային բեռնափոխադրումների իրականացման դժվարությունն ու մատչելիության ցածր մակարդակը, մաքսային ընթացակարգերի բեռը, արտահանման և ներմուծման ոլորտում անօրինական վճարումները, մաքսազերծման արդյունավետության հետ կապված հիմնախնդիրները և այլն: Այս ոլորտում Հայաստանի 2009 թ. և 2008 թ. ինդեքսների բաղկացուցիչ մաս կազմող 4 ոլորտների ենթաինդեքսների և 9 առանձին հիմնասյուների գնահատականների համեմատությունը, միջազգային առևտրի բնագավառում Հայաստանի զարգացումները, համեմատական առավելություններն ու թույլ կողմերը ներկայացված են աղյուսակներ 4.1 - 4.3-ում:

Հայաստանը տարածաշրջանային համապատկերում. Հարավկովկասյան տարածաշրջանի առումով նշենք, որ Վրաստանի համար Համաժողովը 2008-2009թթ. ինդեքսներ չի գնահատել: Ադրբեջանը ***համաշխարհային առևտրի խթանման*** ինդեքսի ցուցանիշով 2008 թվականին 118 երկրների թվում գրավել է 76-րդ տեղը (3.68 միավոր), իսկ 2009 թ-ին՝ 121 երկրների թվում՝ 70-րդ տեղը (3.77 միավոր): Ընդ

որում, Հայաստանը գերազանցում է Ադրբեջանին շուկայի մատչելիության, մաքսային վարչարարության, տրանսպորտի և հեռահաղորդակցության ոլորտների գնահատականներով, սակայն զիջում է գործարար միջավայրի գնահատականով:

Համաշխարհային առևտրի խթանման 2009 թ. գնահատականներով Հայաստանը նախկին ԽՍՀՄ երկրներից զիջում է Մերձբալթյան երկրներին և Մոլդովային, իսկ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներից գերազանցում է միայն Մակեդոնիային, Բուլղարիային, Բոսնիա և Հերցեգովինային: Նախկին ԽՍՀՄ, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների ինդեքսները՝ իրենց համապատասխան գնահատականներով և դրանց հաշվարկման ընթացքում առանձնացված ոլորտների ենթաինդեքսներով ներկայացված են աղյուսակներ 4.4 - 4.8-ում:

5. «Թրանսփերենսի ինտերնեյշնլ» կազմակերպության «Կոռուպցիայի ընկալման 2009 թ. ինդեքս»

Ընդհանուր տեղեկատվություն. «Թրանսփերենսի ինտերնեյշնլը» (Transparency International) կոռուպցիայի դեմ պայքարող միջազգային հասարակական կազմակերպություն է, որը, սկսած 1995թ-ից, հրապարակում է տարբեր երկրներում «Կոռուպցիայի ընկալման ինդեքսը»[15]: Վերջինս բնութագրում է տարբեր երկրների պետական հատվածում կոռուպցիայի մակարդակը և հաճախ օգտագործվում է այլ հետազոտական հաստատությունների՝ «Հերիթիջ» հիմնադրամի, Համաշխարհային բանկի միջազգային ֆինանսական կորպորացիայի, Համաշխարհային տնտեսական համաժողովի և այլ հաստատությունների կողմից՝ տարբեր երկրներում տնտեսական ազատության մակարդակը, ներքին և արտաքին մրցունակությունը, ներդրումային միջավայրը և այլ ոլորտներ բնութագրող ինդեքսների գնահատման ժամանակ: Երկրների ցանկը, որոնց համար հաշվարկվում է ինդեքսը, տարեցտարի ընդլայնվում է. եթե 1995թ. հաշվարկվել է 41 երկրների «Կոռուպցիայի ընկալման ինդեքսը», ապա 2007-2009 թթ. այդ երկրների թիվը հասել է 180-ի:

---

[15] *Տե՛ս http://www.transparency.org:*

Գնահատման մեթոդաբանությունը[16]. «Կոռուպցիայի ընկալման ինդեքսը» բաղադրյալ ինդեքս է՝ «0»-ից մինչև «10» միջակայքում, ընդ որում՝ «10»-ը համապատասխանում է կոռուպցիայից լիովին ձերբազատված երկրներին, իսկ «0»-ն՝ լիովին կոռումպացված երկրներին: Ինդեքսի կառուցման համար «Թրանսփերենսի ինտերնեյշնլը» օգտագործում է անկախ կազմակերպությունների կողմից տարբեր երկրներում գործարարների և վերլուծաբանների շրջանում իրականացված հարցումների և հետազոտությունների արդյունքները: Վերջիններս իրականացնում են հեղինակավոր միջազգային կազմակերպությունները, որոնց ընտրությունը կատարվում է «Թրանսփերենսի Ինտերնեյշնլի» կազմակերպական (steering) կոմիտեի կողմից: Ընդ որում, ընտրվող կազմակերպությունների ցանկը տարբեր տարիների կարող է տարբեր լինել: Կոնկրետ երկրի համար Կոռուպցիայի ընկալման ինդեքսը հնարավոր է լինում գնահատել միայն այն դեպքում, եթե այն ուսումնասիրում են «Թրանսփերենսի Ինտերնեյշնլի» կազմակերպական կոմիտեի կողմից ընտրված կազմակերպություններից առնվազն երեքը: Հայաստանի 2009թ. կոռուպցիայի ընկալման ինդեքսի գնահատման համար «Թրանսփերենսի ինտերնեյշնլը» որպես աղբյուր է օգտագործել 6 կազմակերպությունների կատարած 7 հետազոտությունների՝ կոռուպցիային վերաբերող գնահատականները: Մասնավորապես, վերցվել են Համաշխարհային տնտեսական համաժողովի «Համաշխարհային մրցունակության» 2008/2009 թթ. և 2009/2010 թթ. ինդեքսները, Համաշխարհային բանկի «Երկրի քաղաքականությունների և կառույցների գնահատման» 2008 թ. ինդեքսը, Ասիական զարգացման բանկի «Երկրի կատարողականի գնահատման» 2008 թ. ինդեքսը, «Բերտելսման» հիմնադրամի «Վերափոխման» 2010 թ. ինդեքսը, «Ֆրիդոմհաուզի» «Դեմոկրատիայի առաջընթացի» 2009 թ. ինդեքսը և «Գլոբալ Ինսայթի» 2009 թ. «Երկրի ռիսկերի վարկանիշերը»: Նշված ինդեքսների հիմքում ընկած են երկրների 2007 – 2009 թթ. տվյալները:

Հայաստանի գնահատականները. Հայաստանում կոռուպցիայի ընկալման ինդեքսը 2009 թ. համար գնահատվել է «2.7»: Համեմատելով նախորդ տարվա «2.9» միավորի հետ՝ կարող ենք արձանագրել, որ, ըստ «Թրանսփերենսի ինտերնեյշնլի» փորձագետների, 2009թ. կո-

---

[16] *«Թրանսփերենսի ինտերնեյշնլ» կազմակերպության կողմից հրապարակվող **«Կոռուպցիայի ընկալման 2009 թ. ինդեքսի»** մեթոդաբանության մանրամասները, ինչպես նաև Հայաստանի 2009 թ. ինդեքսի գնահատման համար օգտագործված հետազոտությունները և դրանցում Հայաստանի գնահատականները տե՛ս Հավելված 4-ում:*

ռուպցիայի մակարդակը Հայաստանում վատացել է (տե՛ս աղյուսակ 5.1): Ինդեքսի վատացումը պայմանավորված է դրա հիմքում ընկած գնահատականների փոփոխություններով: Այսպես, թեև «Ֆրիդոմհաուզի» կողմից գնահատված կոռուպցիայի մակարդակի գնահատականը բարելավվել է 0.25 միավորով, Համաշխարհային տնտեսական համաժողովի, Համաշխարհային բանկի, «Բերտելսման» հիմնադրամի կողմից հրապարակված կոռուպցիայի գնահատականները վատացել են: Արդյունքում, Հայաստանը, «Թրանսփերենսի ինտերնեյշնլի» գնահատմամբ, «Կոռուպցիայի ընկալման ինդեքսի» գծով աշխարհի 180 երկրների թվում զբաղեցնում է 120-րդ տեղը՝ նախորդ տարվա 109-րդ տեղի փոխարեն:

Հայաստանը տարածաշրջանային համապատկերում. 2009 թ. «Կոռուպցիայի ընկալման ինդեքսի» ցուցանիշով Հայաստանը զգալիորեն հետ է մնում Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի բոլոր երկրներից: Նախկին ԽՍՀՄ երկրներից Հայաստանը կոռուպցիայի գնահատականով զիջում է Մերձբալթյան երկրներին, Վրաստանին և Մոլդովային (տե՛ս աղյուսակ 5.2):

Աղյուսակ 5.1-ում ներկայացված է հարավկովկասյան երկրներում «Կոռուպցիայի ընկալման ինդեքսի» դինամիկան, իսկ աղյուսակ 5.2-ում՝ նախկին ԽՍՀՄ, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում 2009 թ. «Կոռուպցիայի ընկալման ինդեքսների» համեմատական նկարագիրը:

6. «Բերտելսման» հիմնադրամի «Տրանսֆորմացիայի (վերափոխման, անցման) 2010 թ. ինդեքսներ»

Ընդհանուր տեղեկատվություն. «Բերտելսման» հիմնադրամը (Bertelsmann Stiftung) ստեղծվել է 1977թ-ին: Հիմնադրամի գլխամասային գրասենյակները տեղակայված են Վաշինգտոնում և Բրյուսելում: Հիմնադրամի հիմնական առաքելությունն է աշխարհի տարբեր երկրներում առկա սոցիալական խնդիրներն ու մարտահրավերները բացահայտել ծագման վաղ շրջանում և մշակել համապատասխան բնութագրական լուծումներ: Հիմնադրամի ծրագրերը խմբավորված են ըստ հետևյալ վերնագրերի՝ «Օգնել մարդկանց», «Ուժեղացնել հասարակությունը» և «Զարգացնել համակարգը»: Գործունեության ավելի ուշ շրջանում՝ 80-ականների վերջից Հիմնադրամը սկսել է իրականացնել

և հրապարակել հետազոտական աշխատանքներ, կազմակերպել միջազգային համաժողովներ[17]:

Գնահատման մեթոդաբանությունը. Իր հետազոտական գործունեության շրջանակներում «Բերտելսման» հիմնադրամը զարգացող և անցումային տնտեսությամբ երկրներում իրականացնում է հարցումներ, որոնց հիման վրա գնահատում և հրապարակում է այդ երկրների տրանսֆորմացիայի (վերափոխման, անցման) երկու ինդեքսներ՝ ***«Կարգավիճակի ինդեքս» (Status Index)*** և ***«Կառավարման ինդեքս» (Management Index)***: Նշենք, որ «Բերտելսման» հիմնադրամը երկրների ***Վերափոխման ինդեքսները*** գնահատում է 2-3 տարին մեկ անգամ, և մինչ օրս Հիմնադրամը իրականացրել է ***Վերափոխման ինդեքսների*** չորս հրապարակում՝ 2003 թ., 2006թ., 2008 թ. և 2010թ. ինդեքսներ, ընդ որում ՝ 2010 թ. ինդեքսի գնահատման հիմքում ընկած են դիտարկված երկրների 2008թ. տվյալները[18]:

«Բերտելսմանի» ***Վերափոխման ինդեքսներով*** գնահատվում է ժողովրդավարության և շուկայական տնտեսության արմատավորման ունակությունը զարգացող ու անցումային երկրներում: 2010 թ. ***Վերափոխման*** ինդեքսների գնահատման ժամանակ «Բերտելսման» հիմնադրամը առաջնորդվել է հետևյալ սկզբունքներով՝

- 127 զարգացող և անցումային երկրներում գնահատել է ժողովրդավարության, շուկայական տնտեսության և քաղաքական կառավարման մակարդակները:
- Ուսումնասիրել է զարգացող և անցումային երկրները միասին:
- Կիրառել է 0-ից մինչև 10 գնահատման համակարգը, որտեղ 10-ը ցույց է տալիս ժողովրդավարության, շուկայական տնտեսության և քաղաքական կառավարման ամենաբարձր մակարդակը:
- Առանձին երկրում ժողովրդավարության, շուկայական տնտեսության և քաղաքական կառավարման մակարդակը գնահատելիս օգտագործել է 17 անկախ ցուցանիշներ, որոնք խմբավորել է 2 մեծ խմբերում՝ ***«Կարգավիճակի ինդեքսում»*** և ***«Կառավարման ինդեքսում»***:
- ***«Կարգավիճակի ինդեքսը»*** իր հերթին ներառել է 2 ենթաինդեքսներ՝ ***Ժողովրդավարության ենթաինդեքս*** և ***Շուկայական տնտեսության ենթաինդեքս***, որոնցից յուրաքանչյուրը ներառել է համապատասխանաբար 5 և 7 ցուցանիշներ: ***Կարգավիճակի ին-***

---

[17] Աղբյուրը՝ http://www.bertelsmann-stiftung.de/cps/rde/xchg/SID-A647B41D-AE9BB376/bst_engl/hs.xsl/269.htm:

[18] Աղբյուրը՝ http://www.bertelsmann-transformation-index.de/11.0.html?&L=1:

դեքսը ցույց է տալիս, թե երկիրը սոցիալ-քաղաքական պաշտպանական մեխանիզմների կիրառման միջոցով սահմանադրական ժողովրդավարության և շուկայական տնտեսության հաստատման ինչ մակարդակ է ապահովել և ինչ դիրք է գրավում միջազգային համադրության մեջ:

- ***«Կառավարման ինդեքսը»*** ներառել է 2 ենթաինդեքսներ, որոնցից առաջինը բնութագրում է այդ երկրում ***կառավարման բարդության մակարդակը***, իսկ երկրորդը գնահատում է ***կառավարման կարողությունները***: Կառավարման ինդեքսի գնահատման հիմքում ընկած են 5 ցուցանիշներ, որոնք բնութագրում են տվյալ երկրում քաղաքական կառավարման որակը:
- Ինդեքսների գնահատման ժամանակ ենթադրություն է արվել, որ ժողովրդավարության և շուկայական մեխանիզմների զարգացման գործընթացը շարունակական բնույթ ունի, ինչպես նաև ընդգծվել են հնարավոր առաջընթացներն ու անհաջողությունները: Ընդ որում, ժողովրդավարության և շուկայական տնտեսության զարգացման ուղղությունները որոշվում են նախանշված (տրենդային) ցուցանիշի միջոցով:

<u>Հայաստանի գնահատականները</u>. Հայաստանի 2010 թ. ***«Կարգավիճակի ինդեքսը»*** գնահատվել է 5.75 միավոր, համաձայն որի՝ աշխարհի 127 երկրների թվում Հայաստանը գրավել է 62-րդ տեղը, իսկ ***«Կառավարման ինդեքսը»*** գնահատվել է 4.36 միավոր և Հայաստանը գրավել է 85-րդ տեղը, մինչդեռ 2008 թ. զեկույցում Հայաստանը ***«Կարգավիճակի ինդեքսի»*** ցուցանիշով աշխարհի 125 երկրների թվում գրավում էր 41-րդ և ***«Կառավարման ինդեքսի»*** ցուցանիշով՝ 56-րդ տեղը[19]: Հայաստանի 2008 թ. և 2010 թ. ինդեքսների գնահատականների համեմատությունը ցույց է տալիս, որ 2007 – 2008 թթ. ընթացքում Հայաստանում գրանցվել է ժողովրդավարության և շուկայական տնտեսության զարգացման զգալի հետընթաց: Մասնավորապես, ըստ «Բերտելսման» հիմնադրամի, էականորեն նվազել է ընտրված առաջնորդների իշխանության և ժողովրդավարական ինստիտուտների գործառույթների արդյունավետությունը, վատացել են երկրում քաղաքականությունների իրականացմանը ճկուն և նորարարական մոտեցում

---

*[19] Ինչպես արդեն նշվել է, «Բերտելսման» հիմնադրամը երկրների **Վերափոխման ինդեքսը** գնահատում է 2-3 տարին մեկ անգամ, և 2009 թ. համար ինդեքս չի հրապարակել, այդ պատճառով Հայաստանի 2010 թ. ինդեքսի դինամիկան դիտարկվում է 2008 թ. համեմատ:*

ցուցաբերելու, քաղաքական պառակտումների ընդարձակումն ու բարդացումը կանխելու, քաղաքական խնդիրներին քաղաքացիական հասարակության մասնակցությունն ապահովելու գործընթացները և կոռուպցիայի դեմ պայքարը (տե՛ս աղյուսակ 6.1):

<u>Հայաստանը տարածաշրջանային համապատկերում.</u> Ժողովրդավարության և շուկայական տնտեսության զարգացման, ինչպես նաև կառավարման գործընթացի հետընթաց է գրանցվել նաև Վրաստանում, մինչդեռ Ադրբեջանում գրանցել է աննշան առաջընթաց: Մասնավորապես՝ Վրաստանը 2010 թ. ***«Կարգավիճակի ինդեքսով»*** գրավել է 52-րդ տեղը՝ 2008թ. 38-րդ տեղի փոխարեն, իսկ «**Կառավարման ինդեքսով»**՝ 42-րդ տեղը՝ 2008թ. 23-րդ տեղի փոխարեն: Նշված ինդեքսներից առաջինով Ադրբեջանը իր դիրքը բարելավել է 1 տեղով, իսկ ***«Կառավարման ինդեքսով»***՝ 4 տեղով (տե՛ս աղյուսակ 6.1):

Հարավկովկասյան երկրների և Հայաստանի 2010 թ. գնահատականների առավել մանրակրկիտ համեմատությունը (աղյուսակ 6.1) փաստում է, որ, ըստ «Բերտելսմանի» վերափոխման 2010 թ. ինդեքսի, ***Հայաստանը գերազանցում է հարևան երկրներին***.

- երկրի ողջ տարածքում պետության՝ ուժի կիրառման մենիշխանության մակարդակով,
- «քաղաքացիություն» հասկացության ընդհանուր ընկալմամբ և պետության՝ որպես օրինական կառույցի ճանաչմամբ,
- հիմնարար վարչարարական կառույցների առկայությամբ,
- կայուն, չափավոր և հասարակական հիմք ունեցող կուսակցությունների համակարգի առկայությամբ,
- հասարակության և քաղաքական համակարգի միջև կապ ապահովող կոոպերատիվ ասոցիացիաների և խմբերի ցանցի առկայությամբ,
- շուկայական հիմնարարների առկայությամբ,
- գների կայունության հետևողական ապահովման և համապատասխան արժութային քաղաքականությունների իրականացմամբ,
- պետական մարմինների կողմից մասնավոր սեփականության իրավունքների հստակ սահմանմամբ, դրանց ապահովմամբ և սեփականություն ձեռք բերելու կանոնակարգումների մակարդակով,
- սոցիալական ապահովության համակարգով,
- տնտեսական աճի տևականությամբ և բարձր տնտեսական ներուժով,

- միջազգային հանրության հետ համագործակցության բնագավառում որպես կառավարության վստահելի և հուսալի գործընկեր հանդես գալու կարողությամբ:

Հայաստանը զիջում է Վրաստանին.

- ազատ, արդար ընտրությունների իրականացմամբ,
- ընտրված առաջնորդների արդյունավետ կառավարման մակարդակով,
- ազատ քաղաքական կամ/և քաղաքացիական խմբեր միավորելու ազատությամբ,
- քաղաքացիների, կազմակերպությունների և ՁԼՄ-ների կարծիքի արտահայտման ազատությամբ,
- իշխանության և գործադիր ուժերի տարանջատման աստիճանով,
- դատական համակարգի անկախությամբ,
- պաշտոնական դիրքի չարաշահման համար պատժամիջոցների լիովին կիրառմամբ,
- ժողովրդավարական ինստիտուտների գործառույթների արդյունավետ իրականացմամբ,
- իշխանության մարմինների կողմից ժողովրդավարական ինստիտուտների ընդունման և աջակցման մակարդակով,
- հակամենաշնորհային միջոցառումների արդյունավետությամբ,
- կայացած բանկային համակարգի և կապիտալի շուկայի առկայությամբ,
- կրթական, ինչպես նաև գիտահետազոտական և զարգացման լուրջ ինստիտուտների առկայությամբ և դրանց գործունեության արդյունավետությամբ,
- քաղաքական կառավարման կառուցվածքային խոչընդոտների առկայությամբ,
- քաղաքացիական հասարակության ավանդույթների առկայությամբ,
- էթնիկ, կրոնական և սոցիալական բնույթի բախումների առկայությամբ,
- մեկ շնչին բաժին ընկնող ՀԱԵ մակարդակով,[20]
- քաղաքական առաջնորդների կողմից քաղաքական առաջնությունների սահմանման և իրագործման հետևողականությամբ,

---

[20] Ըստ ՀՀ կենտրոնական բանկի հաշվարկների՝ 1 շնչին բաժին ընկնող ՀԱԵ մակարդակը ինչպես 2007 թ., այնպես էլ 2008 թ. Հայաստանում ավելի բարձր է եղել, քան Վրաստանում, այսինքն՝ այս ցուցանիշի գնահատականը ճշգրտման կարիք ունի:

- բարեփոխումների արդյունավետությամբ,
- քաղաքականության իրականացման հարցում ճկուն և նորարարական մոտեցման դրսևորմամբ,
- տարբեր քաղաքականությունների վիճարկելի նպատակների և շահերի համակարգման մակարդակով,
- կոռուպցիայի դեմ պայքարի հաջողությամբ,
- ժողովրդավարության և շուկայական տնտեսության երկարաժամկետ նպատակների խնդրում համակարծության աստիճանով,
- հակաժողովրդավար վետո գործիչների գործունեության բացառման կամ սահմանափակման մակարդակով,
- էթնիկ, տարածաշրջանային, կրոնական և դասակարգային հիմք ունեցող քաղաքական պառակտումների ընդլայնումն ու բարդացումը կանխելու ունակությամբ,
- քաղաքական գործընթացներին քաղաքացիական հասարակության մասնակցության աստիճանով,
- ներքին բարեփոխումների իրականացման նպատակով միջազգային հանրության աջակցությունից օգտվելու աստիճանով:

Հայաստանը զիջում է Ադրբեջանին.

- աղքատության և անհավասարության պատճառով բնակչության մի մասի՝ հասարակությունից առանձնացվածությամբ,
- հակամենաշնորհային միջոցառումների արդյունավետությամբ,
- սոցիալական ապահովության հնարավորություններից օգտվելու հավասարության մակարդակով,
- քաղաքացիական հասարակության ավանդույթների առկայությամբ,
- էթնիկ, կրոնական և սոցիալական բնույթի բախումների առկայությամբ,
- էթնիկ, տարածաշրջանային, կրոնական և դասակարգային հիմք ունեցող քաղաքական պառակտումների ընդլայնումը և բարդացումը կանխելու ունակությամբ,
- քաղաքական գործընթացներին քաղաքացիական հասարակության մասնակցության աստիճանով:

Հայաստանի 2010 թ. գնահատականների և նախկին ԽՍՀՄ, հատկապես, Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայի երկրների ժողովրդավարության, շուկայական տնտեսության և քաղաքական կառավարման մակարդակի գնահատականների համեմատությունը ցույց է տալիս, որ

Հայաստանը դեռևս զգալի անելիքներ ունի այդ ոլորտներում (տե՛ս աղյուսակ 6.2-6.4):

7. «Ֆրիդոմհաուզի» «Ազատությունը աշխարհում 2010 թ. ինդեքս»

<u>Ընդհանուր տեղեկատվություն.</u> **«Ֆրիդոմհաուզը» (Freedom House)** ԱՄՆ վարչակազմի աջակցությունը վայելող անկախ հետազոտական կազմակերպություն է, որը հիմնադրվելով 1941 թ-ին՝ հիմնականում աջակցում է ժողովրդավարական փոփոխություններին, հետևում է աշխարհի քաղաքական գործընթացներին և պաշտպանում է ժողովրդավարությունն ու մարդու իրավունքները: «Ֆրիդոմհաուզը», սկսած 1978թ-ից, հրապարակում է «Ազատությունը աշխարհում» (Freedom in the World) տարեկան հետազոտությունը[21], որում ներկայացվում է աշխարհի բազմաթիվ երկրներում (2010թ-ին՝ 194 երկրում) քաղաքական իրավունքների և քաղաքացիական ազատությունների համեմատական գնահատականը: Հայաստանի, ինչպես նաև Վրաստանի և Ադրբեջանի համար այս ինդեքսը գնահատվում է սկսած 1992թ-ից:

<u>Գնահատման մեթոդաբանությունը</u>. «Ֆրիդոմհաուզի» կողմից «Քաղաքական իրավունքների» և «Քաղաքացիական ազատությունների» ինդեքսները գնահատվում են առանձին-առանձին, այնուհետև հաշվարկվում է մեկ միասնական (միջին) ինդեքս՝ «Ազատությունը աշխարհում»: Կիրառվում է «1»-ից մինչև «7» գնահատման համակարգ, ընդ որում՝ «1 - 2.5» գնահատական ստացած երկրները համարվում են ազատ, «3 - 5»-ը՝ մասնակի ազատ և «5.5 - 7»-ը՝ ոչ ազատ երկրներ:

«Ազատությունը աշխարհում» ինդեքսի գնահատման ժամանակ օգտագործվում են նախորդ տարվա տվյալներն ու այլ տեղեկատվության աղբյուրները, այսինքն՝ 2010թ. ինդեքսի գնահատման հիմքում 2009թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածի համընդգրկուն իրադարձություններն են: Հաշվետվությունները պատրաստելու ժամանակ վերլուծաբանները օգտվում են տեղեկատվության բազմազան աղբյուրներից, ներառյալ արտասահմանյան և տեղական օրաթերթերը, ամսագրերը, ակադեմիական վերլուծությունները, հասարակական կազմակերպությունների, գիտահետազոտական

[21] *Տե՛ս Freedom in the World 2010 Survey Release//Freedom House, 2010. <http://www.freedomhouse.org/template.cfm?page=505>:*

կենտրոնների, անհատ մասնագետների հետ կապերը, ինչպես նաև այցելում են տարածաշրջան՝ իրավիճակին տեղում ծանոթանալու նպատակով:

Հայաստանի գնահատականները. Հայաստանի «Քաղաքական իրավունքների» 2010թ. ինդեքսը կազմել է «6», «Քաղաքացիական ազատությունների» ինդեքսը՝ «4», իսկ միասնական (միջին) ինդեքսը՝ «5», այսինքն՝ Հայաստանը այս առումով դիտարկվում է որպես «մասնակի ազատ» երկիր (տե՛ս աղյուսակ 7.1): Ընդ որում, նախորդ տարվա համեմատ ինչպես «Քաղաքական իրավունքների», այնպես էլ «Քաղաքացիական ազատությունների» ինդեքսի գնահատականը Հայաստանում չի փոփոխվել (տե՛ս աղյուսակ 7.2):

Հայաստանը տարածաշրջանային համապատկերում. Քաղաքական իրավունքների և քաղաքացիական ազատությունների բարեփոխումների ընթացքի 2010 թ. գնահատականով Հայաստանը զիջում է Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի բոլոր երկրներին, իսկ նախկին ԽՍՀՄ երկրներից զիջում է Մերձբալթյան երկրներին, Ուկրաինային, Մոլդովային և Վրաստանին:

Նախկին ԽՍՀՄ, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների քաղաքական իրավունքների ու քաղաքացիական ազատությունների 2010թ. գնահատականները և 1992-2010թթ. Հայաստանի ու հարավկովկասյան մյուս երկրների գնահատականները ներկայացված են աղյուսակներ 7.1-7.2-ում:

8. «Ֆրիդոմհաուզի» «ժողովրդավարության առաջընթացի 2009 թ. ինդեքս»

Ընդհանուր տեղեկատվություն. «Ֆրիդոմհաուզը» հրապարակում է նաև «Ազգերը անցումային փուլում» (Nations in Transit) տարեկան հետազոտությունը[22], որն ընդգրկուն, համեմատական և բազմաչափ վերլուծություն է՝ Եվրոպայի և Եվրասիայի նախկին կոմունիստական 29 պետությունների մասին, ներկայացնում է ժողովրդավարության առաջընթացի ինդեքսը այդ երկրներում[23]:

---

[22] *Տե՛ս «Ազգերը անցումային փուլում 2009 թ.» զեկույցը, «Ֆրիդոմհաուզ», 2009 թ. <http://www.freedomhouse.hu/index.php?option=com_content&view=article&id=242:nations-in-transit-2009&catid=30&Itemid=92>*

[23] *Տե՛ս http://www.freedomhouse.org/template.cfm?page=17:*

Գնահատման մեթոդաբանությունը. Դա համախառն ինդեքս է և իրենից ներկայացնում է հետևյալ 7 ենթագործոնների՝ ընտրությունների գործընթացի, քաղաքացիական հասարակության, լրատվամիջոցների անկախության, ազգային ժողովրդավարական կառավարման (governance), տեղական ժողովրդավարական կառավարման, դատական համակարգի ու դրա անկախության և կոռուպցիայի մակարդակի վարկանիշերի միջինը: Կիրառվում է «1»-ից մինչև «7» գնահատման սանդղակ, ընդ որում՝ «1»-ը ժողովրդավարական զարգացումների ամենաբարձր, իսկ «7»-ը՝ ամենացածր մակարդակն է:

Հարկ է նշել, որ դիտարկվող երկրներում բարեփոխումների՝ նախորդ տարիների վերլուծության ժամանակ «Ֆրիդոմհաուզը» օգտագործում էր երկու ագրեգացված գնահատականներ՝ ***«Ժողովրդավարացում» (Ընտրությունների գործընթացի, Քաղաքացիական հասարակության, Լրատվամիջոցների անկախության, Ազգային ժողովրդավարական կառավարման*** և ***Տեղական ժողովրդավարական կառավարման*** ենթագնահատականների միջինը) և ***«Իրավունքի նորմեր»*** (***Կոռուպցիայի և Դատական համակարգ ու անկախություն*** ենթագնահատականների միջինը): Սակայն, սկսած 2004 թ-ից, «Ազգերն անցումային փուլում» հրապարակման մեջ «Ֆրիդոմհաուզը» ներկայացնում է ժողովրդավարացման գործընթացի նոր, համախառն գնահատական, որը բոլոր յոթ առանձին ենթագնահատականների միջինն է[24]: Հիմնվելով այդ նոր գնահատականի վրա՝ «Ֆրիդոմհաուզը» սահմանում է երկրների ռեժիմների հետևյալ տիպերը. «1 - 2» գնահատական ունեցող երկրներում ռեժիմը բնութագրվում է որպես «համախմբված ժողովրդավարություն», «3»-ի դեպքում՝ «մասնակի կամ կիսահամախմբված ժողովրդավարություն», «4»-ի դեպքում՝ «անցումային կառավարություն կամ խառը (հիբրիդ) ռեժիմ», «5»-ի դեպքում՝ «կիսահամախմբված միահեծան ռեժիմ», իսկ «6-7»-ի դեպքում՝ «համախմբված միահեծան ռեժիմ»:

2009թ. գնահատականներն արտացոլում են 2008թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում տեղի ունեցած իրադարձությունները:

Հայաստանի գնահատականները. Հայաստանում ժողովրդավարության առաջընթացի համախառն ինդեքսը 2009թ. կազմել է «5.39» միավոր, այսինքն, ըստ վերոնշյալ դասակարգման, Հայաստանը դասվում է «կիսահամախմբված միահեծան ռեժիմ» ունեցող երկրների

[24] *Տե՛ս **«Ազգերը անցումային փուլում 2004 թ.»** զեկույցը, «Ֆրիդոմհաուզ», 2004 թ.:*

շարքը և 29 երկրների թվում գրավում է 21-րդ տեղը: Նկատենք, որ Հայաստանում ժողովրդավարական առաջընթացի համախառն գնահատականը նախորդ տարվա համեմատ վատացել է 0.18 միավորով, որը պայմանավորված է երկրում ընտրությունների գործընթացի, քաղաքացիական հասարակության զարգացումների, լրատվամիջոցների անկախության, ազգային ժողովրդավարական կառավարման և դատական համակարգի անկախության գնահատականների վատացմամբ: 2009թ. գնահատականներից բարելավվել է միայն կոռուպցիայի մակարդակի գնահատականը՝ 0.25 միավորով, իսկ տեղական ժողովրդավարական կառավարման մակարդակի գնահատականը մնացել է անփոփոխ: Այսպիսով, Հայաստանի գնահատականներից ամենաբարձրը քաղաքացիական հասարակության զարգացումների գնահատականն է («3.75»), որին զգալիորեն զիջում են մյուսները՝ տեղական ժողովրդավարական կառավարման մակարդակի, դատական համակարգի անկախության և կոռուպցիայի մակարդակի գնահատականները («5.50»), ազգային ժողովրդավարական կառավարման մակարդակի և ընտրությունների գործընթացի գնահատականները («5.75»): Հայաստանում ամենացածր գնահատականը տրվել է լրատվամիջոցների անկախությանը («6.00»)[25] (տե՛ս աղյուսակ 8.1):

Հայաստանը տարածաշրջանային համապատկերում. 2008թ. իրադարձությունները, որոնք ընկած են 2009 թ. ժողովրդավարական զարգացումների համախառն գնահատականի հիմքում, «Ֆրիդոմհաուզի» կողմից դիտարկվող 29 երկրներից 18-ում հանգեցրել են ժողովրդավարացման գործընթացների վատացմանը: Այդ երկրների թվում են Վրաստանը և Ադրբեջանը: Ինչպես նշում են «Ազգերը անցումային փուլում» հետազոտության հեղինակները, 2008 թ. շատ բարդ տարի էր ժողովրդավարական զարգացումների տեսանկյունից, և այդ միտումը նկատվում է արդեն երեք տարի անընդմեջ:

Աղյուսակ 8.1-ում ներկայացված են նախկին ԽՍՀՄ, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում ժողովրդավարության զարգացումների 2009 թ., իսկ աղյուսակ 8.2-ում՝ 1999 - 2009 թթ. գնահատականները՝ ըստ «Ֆրիդոմհաուզի» «Ազգերը անցումային փուլում» հաշվետվության:

---

[25] *Աղբյուրը՝ http://www.freedomhouse.hu/images/nit2009/armenia.pdf:*

Գլուխ 2. Հայաստանի «Երկրի ռիսկի» և «Սուվերեն ռիսկի» վարկանիշերը

Օտարերկրյա ներդրողները իրենց ներդրումային ռիսկը արդյունավետ գնահատելու և հստակ պատկերացնելու համար կարևոր տեղ են հատկացնում միջազգային հեղինակավոր վարկանշային կազմակերպությունների («Մուդիզ», «Ֆիթչ», «Ստանդարտ ընդ Փուրզ» և այլն) կողմից այդ երկրին տրված սուվերեն վարկանիշերին:

Երկրի սուվերեն վարկանիշը ցույց է տալիս երկրի՝ հուսալի ներդրումային միջավայր ապահովելու ունակությունը: Սուվերեն վարկանիշի գնահատման ժամանակ վարկանշող կազմակերպությունները հաշվի են առնում տվյալ երկրում առկա տարբեր ռիսկերը, այդ թվում՝ քաղաքական զարգացումների, երկրի դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների համեմատական խոցելիության հետ կապված ռիսկերը, արտարժույթի փոխարկելիության և փոխանցման հետ կապված ռիսկերը և այլն: Կառավարությունները սովորաբար դիմում են վարկանիշ ստանալու համար, որպեսզի իրենց երկիրը հայտնվի «միջազգային ֆինանսական քարտեզում»: Ներկայիս միջազգայնացված շուկաներում սուվերեն վարկանիշը ներկայացնում է «վարկային անձնագիր», որն ապահովում է տվյալ երկրի ներգրավումը միջազգային ներդրումներում, օրինակ, այն շուկաներում, որտեղ տվյալ երկիր-էմիտենտը քիչ է հայտնի: Շուկաներ մուտքի ընդլայնումը սովորաբար հանգեցնում է ֆինանսավորման ծախքերի կրճատման, հատկապես բարձր վարկանիշեր ունեցող երկրի համար: Միջազգային վարկանշային կազմակերպությունների շնորհած վարկանիշերի հուսալիությունը հնարավորություն է ընձեռում երկրների կառավարություններին հաճախ դուրս գալու կապիտալի շուկաներ և միջոցներ ներգրավելու ավելի ձեռնտու պայմաններով, ինչպես նաև տեղաբաշխելու խոշոր թողարկումներ՝ ավելի երկար ժամկետներով: Այսպիսով, սուվերեն վարկանիշերը կապող օղակ են ներդրող և ներդրում ստացող երկրների միջև: Այլ կերպ ասած, դրանք, մի կողմից, օգնում են տվյալ երկրին և նրա տնտեսավարող սուբյեկտներին ճանաչելի դառնալ միջազգային ֆինանսական հանրությանը և ձեռնտու պայմաններով միջոցներ ներգրավելով՝ մեծացնել իրենց պարտքային պարտավորությունների իրացվելիությունը, իսկ մյուս կողմից, օգնում են ներդրողներին՝ արդյունավետորեն գնահատել ներդրումային ռիսկը տվյալ երկրում:

Միջազգային կապիտալի շուկայում կիրառվում է վարկանիշերի «ներդրումային մակարդակ» հասկացությունը, որը ոչ թե շնորհվում է վարկանշային կազմակերպությունների կողմից, այլ պարզապես ձևավորվում է միջազգային շուկայում՝ այդ կազմակերպությունների կողմից շնորհված վարկանիշերի մակարդակին համապատասխան: Վարկանիշի «ներդրումային մակարդակը» բնորոշում է տվյալ երկրին կամ ընկերությանը (պարտավորություններ թողարկողին) շնորհված վարկանիշի բարձր որակը կամ վճարունակության բարձր մակարդակը: Միջազգային վարկանշային կազմակերպությունների կողմից ինչպես երկրներին, այնպես էլ առանձին ընկերություններին տրված վարկանիշը միջազգային շուկայում համարվում է «ներդրումային մակարդակ» ունեցող, եթե սահմանվում է “BBB-/Baa3” և բարձր (տե՛ս աղյուսակ 10.8): Եթե վարկանիշը ցածր է “BBB-/Baa3” մակարդակից, միջազգային շուկայի մասնակիցները այն համարում են «ոչ ներդրումային» և, հետևաբար, շուկայի առավել պահպանողական ներդրողները, ինչպես օրինակ՝ կենսաթոշակային հիմնադրամները, ներդրումներ չեն իրականացնում “BBB-/Baa3”-ից ցածր վարկանիշ ստացած երկրների կամ ընկերությունների արժեթղթերում:

Հայաստանի սուվերեն ռիսկը գնահատում են միջազգային հեղինակավոր կազմակերպություններից երկուսը՝ «Ֆիթչը» (2006 թ. հունիսի 25-ից) և «Մուդիզը» (2006 թ. հուլիսի 24-ից), ուստի նախ համառոտ ներկայացնենք այդ կազմակերպությունների կողմից շնորհվող սուվերեն վարկանիշերի տեսակները, այդ վարկանիշերի գնահատման մեթոդաբանությունը, վարկանիշերի գնահատման ընթացակարգը, այնուհետև պարզաբանենք Հայաստանին տրված վարկանիշերի հիմնավորումները:

9. «Ֆիթչ» միջազգային վարկանշային կազմակերպության կողմից Հայաստանին շնորհված սուվերեն ռիսկի վարկանիշերը

Ընդհանուր տեղեկատվություն. «Ֆիթչի» սուվերեն վարկանշման խումբը (Sovereign Rating Group) քանակական և որակական վերլուծությունների հիման վրա իրականացնում է ավելի քան 107 երկրների վճարունակության վերլուծություններ, տալիս է մեկնաբանություններ այդ երկրների կարևորագույն քաղաքական և տնտեսական զարգացումների մասին և սուվերեն թողարկողներին (կառավարություններին) շնորհում է արտարժույթով և ազգային արժույթով պարտավորությու-

ներ թողարկողի վարկանիշեր: Այդ վարկանիշերն արտացոլում են սուվերեն թողարկողի՝ իր առկա և ապագա պարտքային պարտավորությունները ամբողջությամբ և ժամանակին մարելու ունակությունն ու պատրաստակամությունը: Այսպիսով, պարտքային պարտավորություններ թողարկողի վարկանիշը թողարկողի կողմից «պարտավորությունների չկատարման (դեֆոլտի) հավանականության» կողմնորոշիչ վարկանիշն է:

Գնահատման մեթոդաբանությունը[26]. «Ֆիթչը» սուվերեն թողարկողներին շնորհում է երկու տեսակի վարկանիշեր՝

- Արտարժույթով երկարաժամկետ պարտավորություններ թողարկողի վարկանիշ, որը մատնանշում է արտարժույթով թողարկված (և վճարման ենթակա) պարտքային պարտավորությունների չկատարման հավանականությունը:
- Ազգային արժույթով երկարաժամկետ պարտավորություններ թողարկողի վարկանիշ, որը ներկայացնում է ազգային արժույթով թողարկված պարտքային պարտավորությունների վճարունակության ռիսկի գնահատականը:

«Ֆիթչ» վարկանշային կազմակերպությունը շնորհում է արտարժույթով և ազգային արժույթով երկարաժամկետ պարտավորություններ թողարկողի հետևյալ վարկանիշերը՝

AAA	Վճարունակության ամենաբարձր մակարդակը. մատնանշում է վարկային ռիսկերի գծով սպասումների ամենացածր մակարդակը: Շնորհվում է միայն ֆինանսական պարտավորությունները ժամանակին մարելու բացառիկ բարձր ունակություն ունեցող էմիտենտներին: Այս ունակության վրա անկանխատեսելի հանգամանքների բացասական ազդեցության հավանականությունը շատ ցածր է:
AA	Շատ բարձր վճարունակություն. մատնանշում է վարկային ռիսկերի գծով սպասումների շատ ցածր մակարդակ և էմիտենտի՝ ֆինանսական պարտավորությունները ժամանակին մարելու շատ բարձր ունակություն: Այս ունակության վրա անկանխատեսելի հանգամանքների բացասական ազդեցության հավանականությունը զգալի չէ:
A	Բարձր վճարունակություն. մատնանշում է վարկային ռիսկերի գծով սպասումների ցածր մակարդակ: Էմիտենտի՝ ֆինանսական պարտավորությունները ժամանակին մարելու ունակությունը գնահատվում է բարձր: Այնուամենայնիվ, այս ունակության վրա ավելի շատ կարող են բացասական ազդեցություն ունենալ անկանխատեսելի հանգամանքները կամ տնտեսական կոնյունկտուրան, քան ավելի բարձր վարկանիշերի դեպքում:

[26] *Տե՛ս http://www.fitchratings.com/creditdesk/public/ratings_defintions/index.cfm:*

BBB	Լավ վճարունակություն. մատնանշում է վարկային ռիսկերի գծով սպասումների ցածր մակարդակ: Էմիտենտի՝ ֆինանսական պարտավորությունները ժամանակին մարելու ունակությունը գնահատվում է համարժեքորեն, սակայն անկանխատեսելի հանգամանքները կամ տնտեսական կոնյունկտուրայի բացասական փոփոխությունները, մեծ հավանականությամբ, կարող են նվազեցնել այդ ունակությունը: Այս վարկանիշը ներդրումային մակարդակի վարկանիշերից ամենացածրն է:
BB	Սպեկուլյատիվ վարկանիշ է. մատնանշում է, որ կա վարկային ռիսկերի զարգացման հնարավորություն, հատկապես ժամանակի ընթացքում տեղի ունեցող բացասական տնտեսական փոփոխությունների հետևանքով: Սակայն, սրա հետ միաժամանակ, էմիտենտը կարող է ունենալ ֆինանսական միջոցներ ներգրավելու և դրանց հաշվին իր պարտավորությունները մարելու հնարավորություն:
B	Զգալի չափով սպեկուլյատիվ վարկանիշ է. մատնանշում է էական վարկային ռիսկերի առկայություն, սակայն, սրա հետ միաժամանակ, դեռևս կա սահմանափակ «անվտանգության բարձիկ»: Էմիտենտը կարող է ունենալ ֆինանսական միջոցներ ներգրավելու և դրանց հաշվին իր պարտավորությունները մարելու հնարավորություն:
CCC	Պարտավորությունների չկատարումը իրապես հնարավոր է. ֆինանսական պարտավորությունները կատարելու ունակությունը կախված է կայուն և նպաստավոր գործարար կամ տնտեսական կոնյունկտուրայից:
CC	Պարտավորությունների չկատարումը հավանական է:
C	Պարտավորությունների չկատարումը անխուսափելի է:

Բացի արտարժույթով և ազգային արժույթով երկարաժամկետ պարտավորություններ թողարկողի վարկանիշից, «Ֆիթչը» սուվերեն թողարկողին շնորհում է նաև արտարժույթով կարճաժամկետ պարտավորությունների վարկանիշ, որը տրվում է մինչև 13 ամիս ժամկետայնություն ունեցող արտարժույթով թողարկված պարտքային պարտավորությունների համար: Սովորաբար, ազգային արժույթով արտահայտված որոշ կարճաժամկետ պարտքային պարտավորություններին, ինչպես օրինակ, գանձապետական պարտատոմսերին, տրվում է ազգային արժույթով երկարաժամկետ պարտավորությունների թողարկման վարկանիշ:

«Ֆիթչ» վարկանշային կազմակերպությունը շնորհում է արտարժույթով կարճաժամկետ պարտավորություններ թողարկողի հետևյալ վարկանիշերը՝

F1	Վճարունակության ամենաբարձր մակարդակն է. արտացոլում է ֆինանսական պարտավորությունները ժամանակին կատարելու ամենաբարձր ունակությունը: Կարող է նշված լինի «+» նշանով, որը ցույց է տալիս բացառիկ բարձր վճարունակություն:
F2	Վճարունակության բարձր մակարդակն է. արտացոլում է ֆինանսական պարտավորությունները ժամանակին կատարելու բավարար ունակությունը, սակայն «անվտանգության բարձիկը» այնքան մեծ չէ, ինչպես ավելի բարձր վարկանիշերի դեպքում:
F3	Վճարունակության համարժեք մակարդակն է. արտացոլում է ֆինանսական պարտավորությունները ժամանակին կատարելու ունակությունը, սակայն բացասական ազդեցությունները կարճաժամկետում կարող են հանգեցնել վարկանիշի իջեցման մինչև ոչ ներդրումային մակարդակի:
B	Սպեկուլյատիվ վարկանիշ է. արտացոլում է ֆինանսական պարտավորությունները ժամանակին կատարելու նվազագույն ունակությունը, կարճաժամկետում ֆինանսական և տնտեսական կոնյունկտուրայի բացասական փոփոխությունների նկատմամբ խոցելիությունը:
C	Դեֆոլտի բարձր ռիսկ. պարտավորությունների չկատարումը իրապես հնարավոր է: Այս վարկանիշը ցույց է տալիս, որ ֆինանսական պարտավորությունները ժամանակին կատարելու ունակությունը լիովին կախված է կայուն և բարենպաստ գործարար միջավայրից և տնտեսական կոնյունկտուրայից:
D	Այս վարկանիշը տրվում է այն էմիտենտին կամ երկրին, որը հայտարարել է իր բոլոր ֆինանսական պարտավորությունների դեֆոլտ:

Նկատենք, որ վարկանիշերը կարող են ունենալ «+» կամ «-» նշան, որի նպատակն է սահմանել այդ վարկանիշի տեղը հիմնական վարկանիշերի սանդղակում: Այդպիսի նշաններ չեն ունենում «AAA» մակարդակի և «CCC»-ից ցածր մակարդակ ունեցող երկարաժամկետ վարկանիշերը: Կարճաժամկետ վարկանիշերից միայն «F1»-ն է ունենում «+» կամ «-» նշան:

Արտարժույթով երկարաժամկետ և կարճաժամկետ պարտավորություններ թողարկողի վարկանիշերի մակարդակները սերտորեն կապված են, այն է՝ արտարժույթով կարճաժամկետ պարտավորություններ թողարկողի վարկանիշը պայմանավորված է դրա երկարաժամկետ վարկանիշի մակարդակով (տե՛ս աղյուսակ 9.1):

Արտարժույթով երկարաժամկետ և կարճաժամկետ, ազգային արժույթով՝ երկարաժամկետ պարտավորություններ թողարկողի վարկանիշերի հրապարակման հետ միասին «Ֆիթչը» հրապարակում է նաև դրանց «հեռանկարային» գնահատականները, որոնք կարող են լինել

«դրական», «կայուն» կամ «բացասական»: Հեռանկարային գնահատականները ցույց են տալիս վարկանիշի ուղղությունը, որը սպասվում է 1-2 տարիների ընթացքում: Հեռանկարի «դրական» կամ «բացասական» լինելը դեռևս չի նշանակում, որ վարկանիշի փոփոխությունը անխուսափելի է: Նմանապես, «կայուն» հեռանկար ունեցող վարկանիշերը կարող են բարձրացվել կամ իջեցվել ավելի շուտ, քան հեռանկարը կփոխվի «դրականի» կամ «բացասականի»՝ այդպիսի փոփոխության համար պայմանների առկայության դեպքում: Որոշ դեպքերում, երբ հստակ չի լինում վարկանիշի փոփոխության հիմնական միտումը, վարկանիշի հեռանկարը սահմանվում է որպես «զարգացող»:

Հաջորդը, որը «Ֆիթչ» կազմակերպությունը սահմանում է սուվերեն վարկանիշերի հետ միասին, երկրի վարկանիշի վերին սահմանաչափն է: Երկրի վարկանիշի վերին սահմանաչափը իրականում վարկանիշ չէ, այլ վերլուծությունների արդյունքում ստացված գնահատական, որը մատնանշում է այն առավելագույն գնահատականը, որ կարող է տրվել երկրի տնտեսավարող սուբյեկտներին և այդ երկրում իրականացվող գործարքներին՝ վարկանշման դիմելու դեպքում: Այդ պատճառով էլ երկրի վարկանիշի վերին սահմանաչափը հեռանկարային ուղղություն չի ունենում: Երկրի ***վարկանիշի վերին սահմանաչափը*** որոշվում է տվյալ երկրում արժութային վերահսկողության կիրառման, այսինքն՝ ներքին արժույթը արտարժույթի փոխարկելու և այն ոչ ռեզիդենտներին փոխանցելու մասնավոր հատվածի հնարավորությունը խոչընդոտելու կամ արգելելու հավանականությունը գնահատելու միջոցով: Երկրների վարկանիշի վերին սահմանաչափը գնահատում է «Ֆիթչի» Սուվերեն վարկանշման կոմիտեն, որը ռիսկի գնահատման պարզ մոդելի միջոցով փորձում է համադրել և վերլուծել այն ծախսերն ու օգուտները, ինչպես նաև այն շարժառիթները, որոնցով առաջնորդվում են իշխանությունները, երբ որոշում են կայացնում կիրառել մասնավոր հատվածի արտաքին պարտքը սպասարկելուն խոչընդոտող արժութային կամ կապիտալի սահմանափակումներ (մոդելի նկարագիրը ներկայացված է աղյուսակ 9.2-ում): ***«Ֆիթչի»*** մեթոդաբանություններն այն կարծիքին են, որ որքան ազատականացված է տնտեսությունը միջազգային առևտրի և կապիտալ հոսքերի առումով, այնքան մեծ են արժութային սահմանափակումներ կիրառելու դեպքում տնտեսության ծախքերը: Հետևաբար, որքան բաց է տնտեսությունը, այնքան քիչ է հավանական, որ պետական հատվածի պարտքային պարտավորությունների վճարունակության խնդիրների (սուվերեն դեֆոլտի) ժամանակ իշխանությունները կկիրառեն մասնավոր հատվածի պարտքի հետաձգում

(մորատորիում), այսինքն՝ կապիտալի արտահոսքը կսահմանափակեն խիստ արժութային միջոցառումներով: Այսպիսով, երկրի վարկանիշի վերին սահմանաչափի մոդելի միջոցով ներկայումս բարձր վարկանիշ են ստանում այն երկրները, որոնք վարում են միջազգային առևտրի և կապիտալի ազատականացված ռեժիմ, չեն կիրառում առևտրի և կապիտալ հոսքերի սահմանափակումներ, տնտեսությունում վերջին մի քանի տարիների ընթացքում չի գրանցվել ***հիպեր*** կամ ***խրոնիկ*** գնաճ, վարում են ճկուն փոխարժեքի ռեժիմ և ունեն ամուր բանկային և կորպորատիվ հատվածներ:

Տնտեսական քաղաքականության վիճարկելի (arbitrary) որոշումների ռիսկը մոդելում հաշվի առնելու համար դրանում ներառվել են նաև տվյալ երկրում կառավարման ու ինստիտուցիոնալ զարգացման մակարդակը բնութագրող գործոններ: Ի լրումն նշենք, որ «Ֆիթչի» մեթոդաբանները մեծ տեղ են տալիս նաև այնպիսի միջազգային կազմակերպություններին և համաձայնագրերին անդամակցմանը (ինչպիսիք են օրինակ, Առևտրի համաշխարհային կազմակերպությունը, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը (ՏՀՁԿ), Եվրոմիությունը), որոնք չեն խրախուսում միջազգային առևտրի և կապիտալ հոսքերի նկատմամբ վերահսկողության կիրառումը:

Բացի սուվերեն թողարկողներից, «Ֆիթչը» վարկանիշ է շնորհում նաև տվյալ երկրի ձեռնարկություններին, բանկերին և կառուցվածքային գործարքների (structured transactions) գծով: Վերջիններս կարող են սահմանվել երկրի ***սուվերեն (երկարաժամկետ պարտք թողարկողի)*** վարկանիշից բարձր, եթե դրանց վարկունակությունը գնահատվել է բավականին բարձր՝ սուվերեն պարտքի ճգնաժամին դիմակայելու տեսանկյունից: Առանձին ձեռնարկություններ կամ ֆինանսական հաստատություններ, որոնք պաշտպանված են փոխանցումների ռիսկից, այսինքն՝ արտահանումից ստանում են զգալի հասույթներ, ունեն զգալի արտաքին ակտիվներ, արտասահմանյան արտադրություն և/կամ այնպիսի օտարերկրյա գլխամասային ձեռնարկություններ կամ ռազմավարական գործընկերներ, որոնք պատրաստ են և ի վիճակի են դրանց ապահովելու անհրաժեշտ ֆինանսական օժանդակությամբ, կարող են «Ֆիթչ» կազմակերպությունից ստանալ երկրի ***վարկանիշի վերին սահմանաչափի*** մակարդակից և ***սուվերեն*** վարկանիշից բարձր վարկանիշ:

Երբ երկրի վարկանիշի վերին սահմանաչափը ավելի բարձր է գնահատված, քան երկրի ***սուվերեն*** վարկանիշը, ինչպես օրինակ՝ Հայաս-

տանի դեպքում[27], դա չի նշանակում, թե երկրի մասնավոր հատվածը ամբողջությամբ վերցրած ավելի ***«լավ»*** վարկանիշ ունի, քան այդ երկրի կառավարությունը: Դա, ավելի շուտ, ցույց է տալիս, որ որոշ, հատկապես ուժեղ ձեռնարկություններ, ի վիճակի են դիմակայելու սուվերեն պարտքի ճգնաժամի ցնցումներին, կարող են սպասարկել իրենց արտաքին պարտքային պարտավորությունները, և դրա իրականացումը չի խոչընդոտվի կապիտալի վերահսկողության կամ պաշտոնական արգելանքի (մորատորիումի) կիրառմամբ:

Սուվերեն վարկանիշերի որոշման, սուվերեն ռիսկի գնահատման վերլուծությունը սուվերեն էմիտենտի՝ իր պարտքային պարտավորությունները մարելու պատրաստակամության և ունակության վերաբերյալ քանակական և որակական դատողությունների համադրումն է: Բացի այդ, նկատի ունենալով պետության և պետական հատվածի դերը ազգային տնտեսություններում, սուվերեն էմիտենտի գործունեությունը և քաղաքական գործողությունները էական ազդեցություն են ունենում ընդհանուր տնտեսական ցուցանիշների վրա: Այդ պատճառով էլ «Ֆիթչը» սուվերեն վարկանիշերի վերլուծության ժամանակ ուսումնասիրում է գործոնների ավելի ընդգրկուն շրջանակ, քան սուվերեն էմիտենտի ֆինանսական կայունությունը գնահատելիս: Մասնավորապես, սուվերեն էմիտենտի վճարունակության վերլուծության և վարկանիշի որոշման ժամանակ «Ֆիթչը» ուշադրություն է դարձնում հետևյալ գործոններին.

- մակրոտնտեսական ցուցանիշներին և դրանց հեռանկարներին,
- տնտեսության կառուցվածքային բնութագրերին, որոնք տնտեսությանը դարձնում են այս կամ այն չափ խոցելի ցնցումների նկատմամբ, ինչպես նաև քաղաքական ռիսկերին ու պետական կառավարման գործոններին,
- պետական ֆինանսների վիճակին, ներառյալ պետական պարտքի կառուցվածքին և այն սպասարկելու հնարավորությանը, ինչպես նաև բյուջեի ֆինանսավորմանը,
- ֆինանսական հատվածի և բանկային համակարգի հուսալիությանը՝ հատկապես, մակրոտնտեսական կայունության և սուվերեն էմիտենտի պայմանական պարտավորությունների տեսանկյունից,

---

[27] Փաստորեն, ներկայումս Հայաստանի ձեռնարկությունները և Հայաստանում կնքվող արտարժութային գործարքները «Ֆիթչ» կազմակերպության կողմից վարկանշվելու դեպքում կարող են ստանալ ավելի բարձր վարկանիշ՝ «BB», քան Հայաստանի ներկայիս սուվերեն վարկանիշն է՝ «BB մինուս»:

- արտաքին ֆինանսների վիճակին՝ հատուկ ուշադրություն դարձնելով արտաքին առևտրի հաշվեկշիռների պահպանման հնարավորություններին, ընթացիկ հաշվի ֆինանսավորմանը և կապիտալի հոսքերին, ինչպես նաև արտաքին պարտքի (պետական և մասնավոր) մակարդակին և կառուցվածքին:

Հաջորդ փուլում, «Ֆիթչը» իր վերլուծությունները և հավաքագրված կամ հաշվարկված ցուցանիշները մուտք է անում ***սուվերեն վարկանիշների շնորհման մոդելի*** մեջ, որը հաշվարկում է արտարժույթով երկարաժամկետ վարկանիշերին համապատասխան միավորներ: Այս մոդելը ապահովում է վարկանիշերի համադրելիությունը ըստ տարածաշրջանների և ժամանակի տարբեր պահերին:

Վերջին փուլում մոդելի արդյունքները և կից վերլուծությունները ներկայացվում են «Ֆիթչի» սուվերեն վարկանիշերը շնորհող ***կոմիտեին,*** որը, հիմք ընդունելով ներկայացված արդյունքները և քննարկելով սուվերեն վճարունակության վրա ազդող այլ որակական գործոններ, որոշում է տվյալ երկրի սուվերեն վարկանիշի վերջնական մակարդակը:

Նկատենք, որ ***«Ֆիթչ»*** միջազգային վարկանշային կազմակերպությունը պարբերաբար վերանայում և փոփոխում է երկրների վարկունակության տարբեր ասպեկտների վերլուծության և գնահատման իր մեթոդաբանությունն ու չափանիշները:

<u>Հայաստանի գնահատականները</u>. «Ֆիթչ» միջազգային վարկանշային կազմակերպությունը ***<u>2006 թ. հունիսի 25-ին</u>*** Հայաստանին շնորհեց արտարժույթով և ազգային արժույթով երկարաժամկետ պարտավորություններ թողարկողի *«BB միմուս»* վարկանիշ՝ ***«կայուն»*** հեռանկարով: Արտարժույթով և ազգային արժույթով կարճաժամկետ պարտավորություններ թողարկողի համար սահմանվեց ***«B»*** վարկանիշ՝ ***«կայուն»*** հեռանկարով, իսկ որպես երկրի ***վարկանիշի վերին սահմանաչափ*** սահմանվեց ***«BB»*** մակարդակը: Հարկ է նշել, որ «Ֆիթչի» կողմից տրված սուվերեն ***«BB միմուս»*** ելակետային վարկանիշը համարվում էր վճարունակության ռիսկի միջին մակարդակ ունեցող երկրի «սպեկուլյատիվ մակարդակի» վարկանիշ, որը բավականին բարձր էր առաջին անգամ տրված վարկանիշի համար[28]: Այնուհետև, ***<u>2006 թ.</u>***

---

[28] ***«Միջազգային վարկային վերլուծություններ - Հայաստան»***, *«Ֆիթչ» վարկանշային կազմակերպության զեկույց, Լոնդոն, 5 հունիսի, 2006 թ.:*

<u>օգոստոսի 17-ին</u> «Ֆիթչը», կապված մեթոդաբանության փոփոխությունների հետ, բարձրացրեց Հայաստանի ***վարկանիշի վերին սահմանաչափը***՝ սահմանելով ***«BB պլյուս»***[29]: ***<u>2007 թ. մայիսի 1-ին</u>*** «Ֆիթչ» վարկանշային գործակալությունը Հայաստանի սուվերեն վարկանիշի երթական վերանայման արդյունքում բարձրացրեց Հայաստանի երկարաժամկետ և կարճաժամկետ վարկանիշերի հեռանկարը՝ ***«կայուն»***-ից դարձնելով ***«դրական»***[30], որից հետո՝ ***<u>2008 թ. հուլիսի 3-ին</u>*** «Ֆիթչը» մեկ մակարդակով բարձրացրեց նաև Հայաստանի սուվերեն՝ արտարժույթով և ազգային արժույթով երկարաժամկետ թողարկողի վարկանիշը՝ սահմանելով ***«BB»***, իսկ սուվերեն վարկանիշի հեռանկարը սահմանվեց ***«կայուն»***[31]: ***<u>2009 թ. օգոստոսի 13-ին</u>*** «Ֆիթչ» վարկանշային գործակալությունը, Հայաստանի սուվերեն վարկանիշի վերանայման արդյունքում գրանցելով համաշխարհային ֆինանսական ճգնաժամից Հայաստանի տնտեսության խոցելիության ռիսկեր, մեկ մակարդակով իջեցրեց ինչպես Հայաստանի սուվերեն՝ արտարժույթով և ազգային արժույթով երկարաժամկետ պարտավորություններ թողարկողի վարկանիշը՝ սահմանելով ***«BB մինուս»***՝ ***«կայուն»*** հեռանկարով, այնպես էլ երկրի ***վարկանիշի վերին սահմանաչափը***՝ սահմանելով ***«BB»***: Արտարժույթով և ազգային արժույթով կարճաժամկետ պարտավորություններ թողարկողի վարկանիշը մնաց անփոփոխ՝ ***«B»***[32]**:** «Ֆիթչ» վարկանշային գործակալության կողմից Հայաստանին շնորհված սուվերեն վարկանիշերի մակարդակների, երկրի ***վարկանիշի վերին սահմանաչափի*** գնահատականների և վարկանիշերի հեռանկարների փոփոխությունները ներկայացված են աղյուսակ 9.3-ում:

2009 թ. օգոստոսի 13-ին Հայաստանի մասին հրապարակած զեկույցում «Ֆիթչը», հանգամանորեն վերլուծելով Հայաստանի տնտեսական և քաղաքական իրավիճակը, վեր է հանել ներկա փուլում դրա ուժեղ և թույլ կողմերը, մատնանշել այն ռիսկային գործոնները, որոնք կարող են միջինժամկետ կամ երկարաժամկետ հեռանկարում ազդել

---

[29] ***«Ֆիթչը» վերանայել է Հայաստանի սուվերեն վարկանիշի հեռանկարը՝ «դրական»***, *«Ֆիթչ» վարկանշային կազմակերպության մամլո հաղորդագրություն, Լոնդոն, 1 մայիսի, 2007թ.:*

[30] ***«Միջազգային վարկային վերլուծություններ - Հայաստան»,*** *«Ֆիթչ» վարկանշային կազմակերպության զեկույց, Լոնդոն, 1 մայիսի, 2007 թ.:*

[31] ***«Միջազգային վարկային վերլուծություններ - Հայաստան»***, *«Ֆիթչ» վարկանշային կազմակերպության զեկույց, Լոնդոն, 7 հուլիսի, 2008 թ.:*

[32] ***«Միջազգային վարկային վերլուծություններ - Հայաստան»,*** *«Ֆիթչ» վարկանշային կազմակերպության զեկույց, Լոնդոն, 18 օգոստոսի, 2009 թ.:*

Հայաստանի տնտեսության, հետևաբար նաև՝ սուվերեն վարկանիշի վրա: Որպես Հայաստանի տնտեսության ուժեղ կողմեր՝ «Ֆիթչը» նշել է պետական պարտքի ցածր մակարդակը, պետական պարտքի նպաստավոր կառուցվածքը, առանցքային տնտեսական քաղաքականություններ իրականացնող հաստատությունների բարձր որակը, օտարերկրյա բազմակողմանի և երկկողմանի գործընկերների ֆինանսական աջակցությունը Հայաստանին, համեմատաբար նպաստավոր գործարար միջավայրը, ՀՆԱ-ում համախառն և զուտ արտաքին պարտքի գործակիցների ցածր մակարդակը, արտաքին իրացվելիության համեմատաբար բարենպաստ մակարդակը, ՀՆԱ-ում և եկամուտների ընդհանուր ծավալում կառավարության համախառն և զուտ պետական պարտքի գործակիցների համեմատաբար ցածր մակարդակը, 2009 թ. հարկաբյուջետային իրացվելիության բարձր մակարդակը: Որպես տնտեսության հիմնախնդիրներ՝ «Ֆիթչը» նշում է ՀՆԱ-ի տատանողականության և տնտեսական անկման բարձր մակարդակը, տնտեսության փոքր չափը և բազմազանեցման սահմանափակումը, համեմատաբար ցածր եկամուտների մակարդակը և մեծ կախվածությունը այլ երկրներից եկող ոչ առևտրային բնույթի դրամական փոխանցումներից, պետբյուջեի պակասուրդի և, հատկապես, ընթացիկ հաշվի խոշոր պակասուրդի արտաքին ֆինանսավորման շարունակական անհրաժեշտությունը, արտաքին ֆինանսավորման կարիքները բավարարելու համար միջազգային կապիտալի շուկաների մատչելիության սահմանափակ մակարդակը, հետևաբար, կախվածությունը պաշտոնական բազմակողմանի ու երկկողմանի վարկատուներից, ՀՆԱ-ում հարկային եկամուտների ցածր տեսակարար կշիռը և պետական եկամուտների հավաքագրման վարչարարության անբավարար մակարդակը, տնտեսության դոլարայնացման բարձր մակարդակը, որը թուլացնում է երկրի ֆինանսական կայունությունը, թույլ և փոքր ֆինանսական հատվածը, կոռուպցիայի ընկալման բարձր մակարդակը և աշխարհաքաղաքական հիմնախնդիրները (աղյուսակ 9.4):

Հայաստանը տարածաշրջանային համապատկերում. «Ֆիթչը» նախկին ԽՍՀՄ երկրներից սուվերեն վարկանիշեր է տալիս միայն 10 երկրի, որոնց թվում Հայաստանը՝ իր վարկանիշի մակարդակով գերազանցում է Վրաստանին, Ուկրաինային և Մոլդովային: Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներից Հայաստանի սուվերեն վարկանիշը համապատասխանում է միայն Սերբիայի վարկանիշին, իսկ մյուս բոլոր երկրներն իրենց վարկանիշով գերազանցում են Հայաստանին (աղյուսակ 9.5):

Ի դեպ, նշենք, որ համաշխարհային տնտեսական ճգնաժամի պայմաններում «Ֆիթչը» վարում է «խիստ զգուշավոր» քաղաքականություն և «ագրեսիվորեն» վերանայում և իջեցնում է իր կողմից վարկանշվող երկրների սուվերեն վարկանիշերը, դրանց հեռանկարները և երկրի ***վարկանիշի վերին սահմանաչափի*** գնահատականները: Այսպես, «Ֆիթչի» սուվերեն վարկանշման խումբը, վերլուծելով նախկին ԽՍՀՄ և Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայի երկրների վրա համաշխարհային տնտեսական ճգնաժամի ազդեցության զարգացումները, 2008 թ. օգոստոսից մինչև 2009 թ. նոյեմբեր ժամանակահատվածում 3 մակարդակով իջեցրել է Լիտվայի, 2 մակարդակով՝ Լատվիայի, Ռուսաստանի և Ուկրաինայի, 1-ական մակարդակով՝ էստոնիայի, Ղազախստանի և Հայաստանի սուվերեն վարկանիշերը: Ընդ որում, ներկայումս Մերձբալթյան երկրների, Ռուսաստանի, Ղազախստանի և Ուկրաինայի սուվերեն վարկանիշերի հեռանկարը «բացասական» է, որը ցույց է տալիս, որ այդ երկրների սուվերեն վարկանիշերը կարող են ավելի վատանալ: Անփոփոխ են մնացել Ադրբեջանի, Վրաստանի և Մոլդովայի վարկանիշերը:

Այդ նույն ժամանակահատվածում «Ֆիթչի» սուվերեն խումբը իջեցրել է նաև Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներից Հունգարիայի և Ռումինիայի սուվերեն վարկանիշերը՝ 2 մակարդակով և Բուլղարիայինը՝ 1 մակարդակով: Ընդ որում, ներկայումս սուվերեն վարկանիշի «բացասական» հեռանկար ունեն Հունգարիան, Բուլղարիան, Ռումինիան, Խորվաթիան, Մակեդոնիան և Սերբիան:

2009 թ. նոյեմբերի 11-ի դրությամբ նախկին ԽՍՀՄ և Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայի երկրների սուվերեն վարկանիշերը, երկրի ***<u>վարկանիշի վերին սահմանաչափերը</u>*** և դրանց հեռանկարային գնահատականները, ինչպես նաև դրանց՝ 2008 թ. օգոստոս - 2009 թ. նոյեմբեր ամիսների ընթացքում «Ֆիթչի» կողմից իրականացրած փոփոխությունները ներկայացված են աղյուսակներ 9.5 - 9.6-ում:

10. «Մուդիզ» միջազգային վարկանշային կազմակերպության կողմից Հայաստանին շնորհված սուվերեն ռիսկի վարկանիշերը

<u>Ընդհանուր տեղեկատվություն</u>. «Մուդիզ» գործակալությունը գործում է 1909 թվականից: Այն շնորհում է տարբեր բնույթի վարկանիշեր և հրապարակում է անկախ եզրակացություններ էմիտենտների վար-

կունակության և նրանց կողմից թողարկվող արժեթղթերի վարկային որակի մասին: «Մուդիզը» շնորհում է բանկերի, կորպորացիաների, ապահովագրական ընկերությունների, հավատարմագրային կառավարման հիմնադրամների, տարածաշրջանային և տեղային վարչակազմերի, երկրների կառավարությունների (սուվերեն), միջազգային կառույցների պարտքային պարտավորությունների վարկանիշեր:

Ներկայումս «Մուդիզը» 109 երկրների կառավարությունների շնորհում է Կառավարության պարտքային պարտավորությունների վարկանիշեր, որոնք ցույց են տալիս կառավարության կողմից ազգային արժույթով կամ արտարժույթով երկարաժամկետ կամ կարճաժամկետ պարտավորությունների չկատարման ռիսկի գնահատականները: Այս վարկանիշերը սահմանելիս ոչ միայն հաշվի է առնվում պարտքային պարտավորությունները ժամանակին մարելու կառավարության ունակությունը, այլև պատրաստակամությունը:

Գնահատման մեթոդաբանությունը[33]. «Մուդիզ» վարկանշային գործակալությունը վերոնշյալ բնութագրեր ունեցող երկրներին շնորհում է արտարժույթով և ազգային արժույթով երկարաժամկետ պարտավորությունների հետևյալ վարկանիշերը.

Aaa	Տնտեսական, ֆինանսական և ինստիտուցիոնալ կայունության բացառիկ բնութագրեր, հետևաբար միջազգային կապիտալի շուկայից ֆինանսական միջոցներ ներգրավելու մեծ հնարավորություն: Ենթադրվում է, որ ոչ մի ցնցում չի կարող խաթարել էմիտենտի վճարունակությունը: Պարտքային պարտավորությունները համարվում են նվազագույն վարկային ռիսկով ամենաբարձր որակի պարտավորություններ:
Aa	Տնտեսական, ֆինանսական և ինստիտուցիոնալ կայունության շատ բարձր մակարդակ: Էմիտենտի վճարունակությունը միջինժամկետում ոչ մի էական մտահոգություն չի առաջացնում: Պարտքային պարտավորությունները համարվում են շատ ցածր վարկային ռիսկով բարձր որակի պարտավորություններ:
A	Տնտեսական, ֆինանսական և ինստիտուցիոնալ կայունության բարձր մակարդակ: Էմիտենտի վճարունակությունը միջինժամկետում որևէ էական մտահոգություն չի առաջացնում: Պարտքային պարտավորությունները դիտարկվում են որպես միջին կատեգորիայի և ցածր վարկային ռիսկի ենթակա պարտավորություններ:

33 Տե՛ս http://www.moodys.com/moodys/cust/AboutMoodys/AboutMoodys.aspx?topic=intro &redir_url=/cust/AboutMoodys/staticRedirect:

Baa	Պետական ֆինանսների ոլորտում լուրջ ցնցումների պայմաններում կառավարությունը ի վիճակի կլինի շարունակել համաձայնեցված տնտեսական քաղաքականության իրականացումը և կարճաժամկետ հեռանկարում կխուսափի պարտքի մարման հետ կապված ցանկացած խնդիրներից: Պարտքային պարտավորությունները ենթակա են չափավոր ռիսկի: Դրանք դիտարկվում են որպես միջին կատեգորիայի պարտավորություններ և, հետևաբար, կարող են ունենալ որոշակի սպեկուլյատիվ բնութագրեր:
Ba	Պարտքի մարման հետ կապված ակնհայտ և անմիջական վտանգի բացակայություն և տնտեսական, ֆինանսական կամ քաղաքական հնարավոր ծանր ցնցումների տեսանկյունից հարմարեցման (ադապտացման) իրական ունակություն: Պարտքային պարտավորությունները ունեն սպեկուլյատիվ գործիքների բնութագրեր և ենթակա են էական վարկային ռիսկի:
B	Էմիտենտը գտնվում է դեֆոլտի եզրին, որի հայտարարման համար բավական է միայն մեկ ցնցում, և/կամ առկա է լուրջ մտավախություն, որ էմիտենտը պատրաստ է մարելու իր պարտքը: Պարտքային պարտավորությունները դիտարկվում են որպես սպեկուլյատիվ և ենթակա են բարձր վարկային ռիսկի:
Caa	Պարտքային պարտավորությունները համարվում են շատ ցածր որակի պարտավորություններ և ենթակա են շատ բարձր վարկային ռիսկի:
Ca	Պարտքային պարտավորությունները համարվում են բարձր կարգի սպեկուլյատիվ և, հավանաբար, գտնվում են դեֆոլտի վիճակում կամ մոտ են դեֆոլտին: Ամեն դեպքում, պարտքի հիմնական գումարը և դրա տոկոսագումարները մարելու ինչ-որ հավանականություն կա:
C	Պարտքային պարտավորությունները համարվում են ամենացածր վարկանիշ ունեցող պարտավորություններ և, սովորաբար, գտնվում են դեֆոլտի վիճակում: Պարտքի հիմնական գումարը և դրա տոկոսագումարները մարելու հավանականությունը փոքր է:

Վերոնշյալ ընդհանուր վարկանշային կատեգորիաներից յուրաքանչյուրն ունի թվային մոդիֆիկատորներ՝ «1», «2» և «3», որոնք ցույց են տալիս պարտքային պարտավորության դիրքը տվյալ վարկանիշի շրջանակում, ընդ որում՝ «1»-ը ցույց է տալիս, որ պարտավորությունը տվյալ վարկանշային կատեգորիայի վերին, «2»-ը՝ միջին և «3»-ը՝ ստորին մասում է:

«Մուդիզ» գործակալությունը արտարժույթով կարճաժամկետ (մինչև 13 ամիս ժամկետայնություն ունեցող, եթե այլ ժամկետ նշված չէ) ֆինանսական պարտավորությունները մարելու էմիտենտի ունակությունը գնահատելու ժամանակ կիրառում է հետևյալ նշանակումները.

P-1	Prime-1 (Prime- առաջնակարգ) վարկանիշ ունեցող էմիտենտները (կամ աջակցող հաստատությունները) ունեն իրենց կարճաժամկետ պարտքային պարտավորությունները մարելու շատ բարձր ունակություն:
P-2	Prime-2 վարկանիշ ունեցող էմիտենտները (կամ աջակցող հաստատությունները) ունեն իրենց կարճաժամկետ պարտքային պարտավորությունները մարելու մեծ ունակություն:
P-3	Prime-3 վարկանիշ ունեցող էմիտենտները (կամ աջակցող հաստատությունները) ունեն իրենց կարճաժամկետ պարտքային պարտավորությունները մարելու ընդունելի ունակություն:
NP	Not Prime (ոչ առաջնակարգ) վարկանիշ ունեցող էմիտենտները (կամ աջակցող հաստատությունները) չեն համապատասխանում Prime կատեգորիային:

Արտարժույթով երկարաժամկետ և կարճաժամկետ պարտավորություններ թողարկողի վարկանիշերի մակարդակները սերտորեն կապված են, այն է՝ արտարժույթով կարճաժամկետ պարտավորություններ թողարկողի վարկանիշը պայմանավորված է դրա՝ երկարաժամկետ վարկանիշի մակարդակով (տե՛ս աղյուսակ 10.1):

Կառավարության պարտքային պարտավորությունների վարկանիշերի հետ միասին, «Մուդիզը» հրապարակում է միջինժամկետում այդ վարկանիշերի հնարավոր փոփոխությունների ***«հեռանկարային»*** գնահատականները, որոնք լինում են ***«դրական»***, ***«կայուն»***, ***«բացասական»*** կամ ***«զարգացող»*** (որևէ դեպքով պայմանավորված):

«Մուդիզը», երկարաժամկետ և կարճաժամկետ սուվերեն վարկանիշերի հետ միասին, տվյալ երկրի համար սահմանում է ***արտարժույթով և ազգային արժույթով պարտավորությունների վարկանիշի վերին սահմանաչափեր***, որոնք ցույց են տալիս տվյալ երկրի տնտեսավարող սուբյեկտների պարտքային պարտավորությունները կատարելու ունակության վրա կառավարության հնարավոր ազդեցության (միջամտության) ռիսկի գնահատականը: Ընդ որում, ***արտարժույթով պարտքային պարտավորությունների վարկանիշի վերին սահմանաչափերը*** արտացոլում են տրանսֆերտի ռիսկը, այսինքն՝ կառավարության կողմից տնտեսավարող սուբյեկտների՝ արտարժույթով արտահայտված պարտավորությունների մարման և ավանդի վերադարձելիության սահմանափակումներ կիրառելու ռիսկը, իսկ ***ազգային արժույթով պարտքային պարտավորությունների վարկանիշի վերին սահմանաչափերը*** արտացոլում են ազգային վճարային համակարգի գործունեության խաթարման կամ փլուզման ռիսկը, ինչպես նաև բանկային ճգնաժամի հավանականության դեպքում ֆինանսական քաղաքականություն իրականացնող մարմինների կողմից բանկերին աջակցելու ունակությունը:

Ազգային արժույթով և արտարժույթով պարտքային պարտավորությունների ***վարկանիշի վերին սահմանաչափերը***, ներառելով երկրի տնտեսական, ֆինանսական և կառուցվածքային չափանիշները, ցույց են տալիս վարկանիշի այն առավելագույն մակարդակը, որը կարող է ստանալ տվյալ երկրում գործող տնտեսավարող սուբյեկտը (էմիտենտը):

Ընդ որում, որքան փոքր է տվյալ երկրում մորատորիում (ֆինանսական պարտավորությունների վճարումների հետաձգում) հրապարակելու ռիսկը, այնքան կառավարության արտարժութային պարտավորությունների սուվերեն վարկանիշի համեմատ բարձր է դրան համապատասխանող ***վարկանիշի վերին սահմանաչափը***:

Սուվերեն վարկանիշերի որոշման, սուվերեն ռիսկի գնահատման նպատակով «Մուդիզի» փորձագետները վերլուծությունը իրականացնում են երեք փուլով:

Առաջին փուլում գնահատվում է ***երկրի տնտեսական ճկունությունը***, այսինքն՝ ուսումնասիրվում է տվյալ երկրի՝ «շոկերի կլանման» ունակությունը: Դա իրականացվում է երկու առանցքային գործոնների վերլուծության միջոցով:

Առաջին գործոնը ***երկրի տնտեսական կայունությունն է***՝ արտահայտված մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի ցուցանիշով, որը, ըստ «Մուդիզի» փորձագետների, տնտեսության կայունությունը, հետևաբար նաև՝ շոկերի կլանման ունակությունը արտացոլող կարևորագույն ցուցանիշ է:

Երկրորդ գործոնը ***երկրի ինստիտուցիոնալ կայունությունն*** է: Ընդ որում, այստեղ առանցքային է այն հարցը, թե արդյո՞ք երկրի ինստիտուցիոնալ համակարգի և կառավարման որակը (սեփականության իրավունքի պաշտպանության, թափանցիկության, կառավարության գործողությունների արդյունավետության և կանխատեսելիության, քաղաքական քայլերի հիմնական նպատակների համաձայնեցվածության աստիճանի առումով) նպաստում է պայմանագրային պարտավորությունների կատարմանը:

Այս երկու ցուցանիշների վերլուծությունների միավորման արդյունքում գնահատում են երկրի **տնտեսական ճկունության աստիճանը** և որոշում տվյալ երկրի մոտավոր դիրքը վարկանշային սանդղակում՝ դրա վերին, միջին կամ ստորին մասում (տե՛ս աղյուսակ 10.2):

Երկրորդ փուլում գնահատվում է ***պետության ֆինանսական հուսալիությունը***, այսինքն՝ ուշադրություն է դարձվում պարտքային ցուցա-

նիշներին: Պետության ֆինանսական հուսալիությունը ևս գնահատվում է երկու՝ երրորդ և չորրորդ գործոնների զուգակցմամբ:

Երրորդ գործոնը վերաբերում է ***կառավարության ֆինանսական կայունությանը***: Որոշում են ոչ միայն երկրի պարտքի ծավալը (և պարտքի բեռի «տանելիության կամ ծանրության» աստիճանը), այլև գնահատում են ռեսուրսներ հավաքագրելու՝ հարկերն ավելացնելու, ծախսերը կրճատելու, ակտիվները վաճառելու, արտարժույթ ձեռք բերելու պետության ունակությունը:

Չորրորդ գործոնը ***իրավիճակային***, այսինքն՝ պարտքի մարումը վտանգող ուղղակի և ակնհայտ սպառնալիքների ծագման ***ռիսկերի նկատմամբ զգայունությունն*** է: Այս գործոնի վերլուծության նպատակն է որոշել, թե հանկարծակի ծագած աննպաստ տնտեսական, ֆինանսական կամ քաղաքական դեպքերը որքանով կծանրացնեն երկրի պարտքային իրավիճակը:

Նշված երկու ցուցանիշների վերլուծությունների միավորման արդյունքում գնահատվում է երկրի ***ֆինանսական հուսալիության աստիճանը*** և ճշգրտվում տվյալ երկրի դիրքը վարկանիշերի սանդղակում:

Երրորդ փուլում տնտեսության ճկունության և ֆինանսական հուսալիության մակարդակների համադրության միջոցով որոշվում է տվյալ երկրի վարկանիշերի տիրույթը: Այնուհետև փորձագետների վերլուծությունների ողջ փաթեթը ներկայացվում է «Մուդիզի» Վարկանշման կոմիտեին, որն էլ, համադրելով տվյալ երկրի և նմանատիպ բնութագրեր ունեցող մեկ այլ երկրի արդյունքները, ինչպես նաև հաշվի առնելով նախկինում թերի ուսումնասիրված լրացուցիչ գործոնները, սահմանում է տվյալ երկրի վերջնական վարկանիշերը (տե՛ս աղյուսակներ 10.2-10.3):

<u>Հայաստանի գնահատականները</u>. 2006 թ. հուլիսի 24-ին «Մուդիզի» կողմից Հայաստանին տրվել է և մինչ օրս չի փոխվել արտարժույթով և ազգային արժույթով երկարաժամկետ և կարճաժամկետ պարտավորությունների թողարկման ***«Ba2»*** սուվերեն վարկանիշ՝ ***«կայուն»*** հեռանկարով, որը, ինչպես և «Ֆիթչի» կողմից տրված ***«BB մինուս»*** ելակետային սուվերեն վարկանիշը, համարվում է վճարունակության ռիսկի միջին մակարդակ ունեցող երկրի «ոչ ներդրումային մակարդակի» վարկանիշ: Բացի այդ, ավելացնենք, որ «Մուդիզի» կողմից Հայաստանին տրվել են նաև օտարերկրյա ներդրողներին ուղղորդող՝ երկրի ***վարկանիշի վերին*** այլ ***սահմանաչափեր***, ինչպես օրինակ՝ ***«Baa3»*** սահմանաչափ՝ արտարժույթով երկարաժամկետ պետական պարտատոմսերի թողարկման համար, ***«A3»*** սահմանաչափ՝ երկրի

ներսում դեբիտորների հանդեպ ազգային արժույթով ունեցած պարտավորությունների համար և ***«Baa1»*** սահմանաչափ՝ ազգային արժույթով բանկային ավանդների համար: Այս երեք վերին սահմանաչափերն էլ համարվում են «ներդրումային մակարդակ» ունեցող գնահատականներ և ցույց են տալիս վարկանիշերի այն առավելագույն մակարդակը, որ կարող են երկրի ձեռնարկությունները ստանալ «Մուդիզի» կողմից վարկանշվելու դեպքում: «Ներդրումային մակարդակին» չի համապատասխանում արտարժույթով երկարաժամկետ բանկային ավանդների ***«Ba3»*** վերին սահմանաչափը[34]:

Ինչպես և արտարժույթով սուվերեն վարկանիշերի դեպքում, «Մուդիզի» կողմից տրված արտարժույթով երկարաժամկետ պարտավորությունների կամ բանկային ավանդների ***վարկանիշերի վերին սահմանաչափերը նույնպես սերտորեն կապված են*** դրանց կարճաժամկետ գնահատականների հետ: Այդ գնահատականների կապը ներկայացված է աղյուսակ 10.1-ում, համաձայն որի՝ արտարժույթով կարճաժամկետ պարտավորությունների թողարկման Հայաստանի ***վարկանիշի վերին սահմանաչափը*** գնահատվել է ***«P-3»***, ինչը նշանակում է՝ Հայաստանն ունի արտարժույթով կարճաժամկետ պարտավորությունները մարելու «ընդունելի» ունակություն: Արտարժույթով կարճաժամկետ բանկային ավանդների ***վարկանիշի վերին սահմանաչափը*** գնահատվել է ***«NP»*** (Not Prime): Դա նշանակում է, որ Հայաստանի՝ արտարժույթով կարճաժամկետ ավանդային պարտավորությունները մարելու ունակությունը չի համապատասխանում նույնիսկ «ընդունելի» մակարդակին:

«Մուդիզի» կողմից տրված սուվերեն վարկանիշերը և երկրի ***վարկանիշի վերին սահմանաչափի*** գնահատականները հիմնված են Հայաստանի տնտեսության մանրակրկիտ վերլուծության վրա, որի արդյունքները հրապարակվել են 2009 թ. դեկտեմբերի 13-ին[35]: Այս վերլուծության արդյունքում «Մուդիզը» որպես ***Հայաստանի տնտեսության ուժեղ կողմեր է*** նշել պետական պարտքի, այդ թվում՝ արտաքին պարտքի ցածր և արտոնյալ մակարդակը՝ ներկայիս համաշխարհային ճգնաժամի պայմաններում, բազմակողմանի վարկատուների հետ կայուն հարաբերությունները և նրանցից արտոնյալ վարկեր ներգրավելու հնարավորությունն ու ցանկությունը, արտաքին իրացվելիության

---

[34] *Տե՛ս **«Մուդիզը Հայաստանին շնորհել է Ba2 վարկանիշ»,** «Մուդիզ» ներդրումային ծառայության մամլո հաղորդագրություն, Լոնդոն, 24 հուլիսի, 2006 թ.:*

[35] *Տե՛ս **«Կարծիք Հայաստանի վարկունակության մասին»,** «Մուդիզ» ներդրումային ծառայություն, Լոնդոն, 13 դեկտեմբերի, 2009 թ.:*

ապահովման գործում հայկական սփյուռքի ներկայացուցիչների աջակցությունը և բարձր տնտեսական աճին նպաստող կառուցվածքային բարեփոխումները շարունակելու իշխանությունների պատրաստակամությունը: ***Որպես Հայաստանի տնտեսության թույլ կողմեր*** նշվել են՝ տնտեսության փոքր չափը, միջին եկամտի ցածր մակարդակը, տնտեսության բազմազանեցման սահմանափակությունը, տնտեսության կախվածությունը հանքահումքային ապրանքների միջազգային գներից և հիմնականում Ռուսաստանից եկող ոչ առևտրային բնույթի փոխանցումներից, թերզարգացած բանկային համակարգը, տնտեսության դոլարայնացման բարձր մակարդակը, հարկային թույլ վարչարարությամբ պայմանավորված՝ համեմատաբար ցածր հարկային եկամուտները, քաղաքական գործիչների և գործարար վերնախավի տարանջատման գործում սահմանափակ առաջընթացը, կոռուպցիայի բարձր մակարդակը, ենթաօպտիմալ գործարար միջավայրը և աշխարհաքաղաքական խնդիրները (տե՛ս աղյուսակ 9.4):

Նկատենք, որ Հայաստանի սուվերեն վարկանիշի հիմքում ընկած 4 առանձին գործոններից ***տնտեսական կայունությունը*** և ***ինստիտուցիոնալ կայունությունը*** գնահատվել են «շատ ցածր», հետևաբար այս երկու գործոնների միավորման արդյունքում ***երկրի տնտեսական ծկունությունը*** նույնպես գնահատվել է ***«շատ ցածր»***: Կառավարության ֆինանսական կայունությունը գնահատվել է «բարձր» և իրավիճակային ռիսկերի նկատմամբ զգայունությունը՝ «չափավոր», հետևաբար այս երկու գործոնների միավորման արդյունքում ***ֆինանսական հուսալիության աստիճանը*** գնահատվել է ***«չափավոր»***: Այս գնահատականների համաձայն Հայաստանին շնորհվող վարկանիշի տիրույթը Ba2-B1 է, որի պարագայում Հայաստանին շնորհվել է վարկանիշի տիրույթի բարձրագույն արժեքը:

<u>Հայաստանը տարածաշրջանային համապատկերում</u>. «Մուդիզը» նախկին ԽՍՀՄ երկրներից սուվերեն վարկանիշեր է տալիս միայն 10 երկրի, որոնց թվում Հայաստանը՝ իր սուվերեն վարկանիշի մակարդակով և ***վարկանիշի վերին սահմանաչափով*** գերազանցում է Ուկրաինային, Բելառուսին և Թուրքմենստանին: Վրաստանը «Մուդիզի» կողմից դեռևս չի վարկանշվում, իսկ Ադրբեջանին շնորհված «Ba1» վարկանիշը մեկ աստիճանով բարձր է Հայաստանի սուվերեն վարկանիշից: Ինչ վերաբերում է երկրի ***վարկանիշի վերին սահմանաչափին***, ապա ազգային արժույթով պարտատոմսերի թողարկման և ազգային արժույթով բանկային ավանդների վարկանիշերի վերին սահմանաչափերի մակարդակները Հայաստանում և Ադրբեջանում նույնն են:

Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներից Հայաստանի սուվերեն վարկանիշը և երկրի **վարկանիշի վերին սահմանաչափի** գնահատականները բարձր են Մոնտենեգրոյի, Ալբանիայի, Բոսնիա և Հերցեգովինայի վարկանիշերից (տե՛ս աղյուսակ10.4,10.5):

Ինչպես և «Ֆիթչը», «Մուդիզը» նույնպես համաշխարհային տնտեսական ճգնաժամի պայմաններում իջեցրել է իր կողմից վարկանշվող երկրներից մեծ մասի սուվերեն վարկանիշերը կամ դրանց հեռանկարները, ինչպես նաև ***վարկանիշի վերին սահմանաչափերի*** գնահատականները: «Մուդիզը» 2008 թ. օգոստոսից մինչև 2009 թ. նոյեմբեր ժամանակահատվածում 4 մակարդակով իջեցրել է Լատվիայի, 2 մակարդակով՝ Լիտվայի և 1 մակարդակով՝ Ուկրաինայի սուվերեն վարկանիշը: Մոլդովային «Մուդիզը» այլևս չի վարկանշում՝ իրեն անհրաժեշտ ծածկույթով վիճակագրական տվյալներ չտրամադրելու պատճառով: Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներից «Մուդիզը» 2 մակարդակով իջեցրել է Հունգարիայի և 1 մակարդակով՝ Մոնտենեգրոյի սուվերեն վարկանիշը (տե՛ս աղյուսակ 10.6-10.7):

Մերձբալթյան երկրների, Ղազախստանի, Ուկրաինայի, Հունգարիայի և Մոնտենեգրոյի սուվերեն վարկանիշերի հեռանկարները ներկայումս «բացասական» են (տե՛ս աղյուսակ 10.4-10.7):

2009 թ. նոյեմբերի 11-ի դրությամբ նախկին ԽՍՀՄ, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների սուվերեն վարկանիշերը, ***դրանց վերին սահմանաչափի*** գնահատականներն ու հեռանկարները, ինչպես նաև 2008 թ. օգոստոս - 2009 թ. նոյեմբեր ամիսների ընթացքում դրանց՝ «Մուդիզի» կողմից կատարված փոփոխությունները ներկայացված են աղյուսակներ 10.4-10.7-ում:

Տարբեր միջազգային վարկանշային կազմակերպությունների կողմից շնորհված սուվերեն վարկանիշերի մակարդակը և երկրի ***վարկանիշի վերին սահմանաչափի*** գնահատականները ավելի հստակ պատկերացնելու նպատակով ներկայացնում ենք այդ վարկանիշերի և գնահատականների համադրելիությունը (տե՛ս աղյուսակ 10.8):

11. Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության «Երկրի ռիսկի դասակարգման 2009 թ. գնահատական»

Ընդհանուր տեղեկատվություն. Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը (ՏՀԶԿ) ստեղծվել է 1961թ-ին՝ Եվրոպական տնտեսական համագործակցության կազմակերպության

բազայի վրա, որը, Մարշալի պլանի համաձայն, զբաղվում էր հետպատերազմյան Եվրոպայի վերականգնմանը նպատակաուղղված՝ ամերիկյան և կանադական օգնությունների բաշխման հարցերով[36]: Ներկայումս ՏՀԶԿ-ն միավորում է 30 երկրներ և իրենից ներկայացնում է համաժողով, որի շրջանակներում անդամ երկրների կառավարությունները հնարավորություն են ունենում քննարկելու, մշակելու և կատարելագործելու իրենց տնտեսական և սոցիալական քաղաքականությունները: ՏՀԶԿ-ի շրջանակներում նրանք փորձում են գտնել իրենց երկրներին վերաբերող ընդհանուր խնդիրների լուծումներ և մշակել փոխհամաձայնեցված ներքին ու արտաքին քաղաքականություններ: Բացի այդ, ՏՀԶԿ-ի Քարտուղարության առանձին բաժինները զբաղվում են տվյալների հավաքագրմամբ, հետևում են երկրների զարգացման միտումներին, վերլուծում և կանխատեսում են տնտեսական գործընթացները, հետազոտում են սոցիալական տեղաշարժերը, առևտրային կապերի կառուցվածքը և այլն:

Հետազոտական աշխատանքների շրջանակներում ՏՀԶԿ-ն երկրները դասակարգում է ըստ ռիսկայնության, որի արդյունքները հրապարակվում և օգտագործվում են երկրների կողմից արտահանման վարկավորման[37] համաձայնագրերով իրականացվող գործարքների համար նվազագույն ռիսկի հավելավճար[38] որոշելու ժամանակ:

Գնահատման մեթոդաբանությունը. Երկրների դասակարգման նպատակով նախ իրականացվում է երկրի վարկային ռիսկի քանակական գնահատում՝ Երկրի ռիսկի դասակարգման մոդելի (Country Risk Classification Method (CRAM) օգնությամբ, որի մանրամասները կոնֆիդենցիալ են և չեն հրապարակվում: Մոդելում օգտագործվում են ինչպես ԱՄՀ և Համաշխարհային բանկի ամենաթարմ տվյալները երկրների ֆինանսատնտեսական վիճակի, այնպես էլ ՏՀԶԿ կոնսենսուսի մասնակից Արտահանման վարկային գործակալությունների ցուցանիշները՝ երկրի կողմից վճարումների իրականացման պատմության մա-

---

[36] Տե՛ս www.oecd.org:

[37] Արտահանման վարկը իրենից ներկայացնում է ապահովագրական վկայագիր, երաշխիք կամ ֆինանսական համաձայնագիր, որը օտարերկրյա գնորդին ապահովում է ապրանքների/ծառայությունների արտահանման առաքմամբ՝ որոշակի ժամկետով վճարման հետաձգմամբ: Արտահանման վարկը կարող է ընդունել մատակարարի վարկի կամ սպառողական վարկի ձև, երբ արտահանողի բանկը կամ այլ ֆինանսական կազմակերպություն փոխառություն են տրամադրում գնորդին (կամ նրա բանկին):

[38] Համաձայնագրի վարկատու կողմը, բացի վարկի տոկոսավճարներից, գանձում է հավելավճար, որը ծածկում է արտահանման վարկի չվճարման ռիսկը (վարկային ռիսկը) և արտահանման վարկավորման հետ կապված երկարաժամկետ գործառնական ծախքերն ու վնասները:

սին: Երկրորդ, երկրի ռիսկը գնահատող փորձագետների կողմից իրականացվում է երկրի ռիսկի որակական գնահատում, այսինքն՝ գնահատվում են քաղաքական և այնպիսի ոչ քանակական ռիսկեր, որոնք չեն ներառվել երկրի ռիսկի գնահատման վերոնշյալ մոդելում: Որակական գնահատականի հիման վրա քանակական գնահատականները ճշգրտվում են, և հրապարակվում է վերջնական դասակարգումը:

Երկրները դասակարգվում են 8 ռիսկային կատեգորիաների, որտեղ ամենաբարձր քաղաքական և վարկի չվճարման ռիսկ ունեցող երկրները դասվում են 7-րդ կատեգորիային, իսկ ամենացածր ռիսկի մակարդակ ունեցողները՝ 1-ին կատեգորիային: Բարձր եկամուտ (ներկայումս՝ 1 շնչի հաշվով նվազագույնը 9,656 ԱՄՆ դոլար) ունեցող առանձին խումբ երկրներ դասվում են «զրո» ռիսկային կատեգորիային: Վերջիններիս արտահանման վարկեր տրամադրելիս նկատի են ունենում, որ քաղաքական ռիսկը բացակայում է և, հետևաբար, ձեռնարկատիրական ռիսկերն ապահովված են շուկայական մեխանիզմներով, այսինքն՝ գործում են առանց կառավարության որևէ աջակցության: Սկզբունքորեն, եթե երկրում արտակարգ իրադարձություններ, զարգացումներ տեղի չեն ունեցել, ՏՀՋԿ-ը երկրները դասակարգում է տարեկան մեկ անգամ:

Հայաստանի գնահատականները. Հայաստանը, ըստ ՏՀՋԿ-ի մեթոդաբանության, 1999-2005 թթ. դասվել է ռիսկայնության «7»-րդ, այսինքն՝ ամենաբարձր քաղաքական և վարկի չվերադարձման ռիսկ ունեցող երկրների կատեգորիային: 2006թ-ից Հայաստանում արտահանման վարկի չվերադարձման ռիսկի գնահատականը բարելավվել է 1 կատեգորիայով, և 2006-2009թթ. Հայաստանը դասվել է «6»-րդ կատեգորիային: Բացի Հայաստանից, 2009 թ-ին արտահանման վարկի չվերադարձման ռիսկի «6»-րդ կատեգորիային են դասվել նաև 32 այլ երկրներ, որով պայմանավորված՝ կարող ենք ասել, որի աշխարհի 210 երկրների թվում Հայաստանը այս ինդեքսի ցուցանիշով 131-164 տեղում է:

Հայաստանը տարածաշրջանային համապատկերում. Ըստ արտահանման վարկի չվերադարձման ռիսկի ցուցանիշի՝ նախկին ԽՍՀՄ երկրներից Հայաստանին գերազանցում են Մերձբալթյան երկրները, Ռուսաստանը, Ղազախստանը և Ադրբեջանը, իսկ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներից Հայաստանը գերազանցում է միայն Սերբիային, Բոսնիա և Հերցեգովինային: Նկատենք, որ 2008 թ. համեմատ բարձրացել է արտահանման վարկերի չվերադարձման ռիսկայնությունը նախկին ԽՍՀՄ երկրներից՝ Մերձբալթյան երկրներում, Ռու-

սաստանում, Ղազախստանում և Ուկրաինայում, իսկ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներից՝ Խորվաթիայում, Ռումինիայում, Բուլղարիայում (տե՛ս աղյուսակ 11.1):

ՏՀՋԿ-ի կողմից նախկին ԽՍՀՄ, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների ռիսկայնության դասակարգման 1999-2009 թթ. դինամիկան ներկայացված է աղյուսակ 11.1- ում:

12. «Եվրոմանի» ամսագրի «Երկրի ռիսկայնության 2009 թ. վարկանիշը»

Ընդհանուր տեղեկատվություն. «Եվրոմանի» (Euromoney) ֆինանսական ամսագիրը ստեղծվել է 1969 թ-ին: Իր հիմնադրման օրվանից համարվում է համաշխարհային կապիտալի շուկաների հիմնական զարգացումների մասին մանրակրկիտ և արդիական տեղեկատվություն ապահովող հանրահայտ ամսագրերից մեկը: «Եվրոմանի» ամսագիրը իրականացնում է նաև հետազոտական-վերլուծական գործունեություն և դրա շրջանակներում տարեկան երկու անգամ՝ կիսամյակային պարբերականությամբ գնահատում և հրապարակում է տարբեր երկրների ռիսկայնության վարկանիշերը:

2009 թ. սեպտեմբերի 17-ին «Եվրոմանի» ամսագիրը հրապարակել է իր հերթական կիսամյակային վերլուծությունը 186 երկրների ռիսկայնության վերաբերյալ[39]: Ցածր ռիսկայնություն ունեցող երկրների թվում իրենց ավանդական առաջատարի դիրքերը շարունակում են պահպանել Նորվեգիան, Լյուքսեմբուրգը, Շվեյցարիան ու Սկանդինավյան երկրները:

Գնահատման մեթոդաբանությունը. Երկրի ռիսկայնության գնահատականի հաշվարկը հիմնվում է 9 խումբ ցուցանիշների վրա, որոնց տրվում են անհատական կշիռներ.

- ***Քաղաքական ռիսկ (25%)***. ապրանքների և ծառայությունների դիմաց վճարումների, վարկերի, առևտրի հետ կապված ֆինանսավորման, եկամուտների և կապիտալի՝ տնտեսավարող սուբյեկտի գրանցման երկիր վերադարձի (repatriation) նկատմամբ

[39] ***«Աշխարհը փոփոխության մեջ»***, *«Եվրոմանի» ամսագիր, 2009 թ. սեպտեմբեր, էջ 116-123:*

կիրառվող սահմանափակումների ռիսկ, որը գնահատվում է վերլուծաբանների կողմից յուրաքանչյուր երկրին 0-10 սանդղակով տրված գնահատականների հիման վրա:

- ***Տնտեսական վիճակ (25%)***. գնահատվում է «Եվրոմանիի» տնտեսական կանխատեսումների և մեկ շնչի հաշվով համախառն ազգային եկամտի ցուցանիշների հիման վրա:
- ***Պարտքի ցուցանիշներ (10%)***. հաշվարկվում է հետևյալ ցուցանիշների հիման վրա՝ ա) պարտքի ընդհանուր պաշարը ՀՆԱ-ում, բ) պարտքի սպասարկում/արտահանում, գ) ընթացիկ հաշվի հաշվեկշիռը ՀՆԱ-ում: Այն զարգացող երկրները, որոնք պարտքի վերաբերյալ տեղեկատվություն չեն հրապարակում, ստանում են 0 գնահատական:
- ***Հետաձգված կամ չսպասարկված պարտք (10%)***. հաշվարկվում է հետաձգված պարտքի և պարտքի ընդհանուր պաշարի հարաբերակցության ցուցանիշի հիման վրա: ՏՀՁԿ (OECD) երկրները, որոնք այդ ցուցանիշների վերաբերյալ հաշվետվություններ չեն հրապարակում, ամեն դեպքում ստանում են 10 գնահատական, իսկ զարգացող երկրները, տվյալների չհրապարակման դեպքում, ստանում են «զրո» գնահատական:
- ***Երկրի վարկանիշ (10%).*** հիմք են ընդունվում «Մուդիզ», «Ստանդարտ ընդ Փուրզ» և «Ֆիթչ» կազմակերպությունների հրապարակած վարկանիշերը, բացակայության դեպքում երկիրը ստանում է 0 գնահատական:
- ***Բանկային ֆինանսավորման մատչելիություն (5%)***. հաշվարկվում է որպես բաշխված մասնավոր, երկարաժամկետ, չերաշխավորված վարկերի տեսակարար կշիռ ՀՆԱ-ում:
- ***Կարճաժամկետ ֆինանսավորման մատչելիություն (5%).*** գնահատականի հաշվարկման հիմքում դրվում են ՏՀՁԿ Փոխզիջումային համաձայնագրի (Consensus Agreement) անդամ երկրների, ինչպես նաև ԱՄՆ էքսիմ բանկի (Exim Bank) և Միացյալ Թագավորության Ատրադիուս (Atradius UK) կազմակերպության հրապարակած տվյալները երկրների՝ կարճաժամկետ ֆինանսական միջոցներ ներգրավելու հնարավորությունների մասին:
- ***Կապիտալի շուկաների մատչելիություն (5%)***. պարտքային և վարկային սինդիկատների ղեկավարների գնահատականներն են յուրաքանչյուր երկրի՝ միջազգային շուկաներ մուտքի հնարավորությունների վերաբերյալ:

- ***Ֆորֆեյթինգ***[40] ***(5%).*** ցույց է տալիս ֆորֆեյթինգի միջին առավելագույն ժամկետայնությունը: Երկրները, որտեղ ֆորֆեյթինգ չկա, ստանում են 0 գնահատական:

<u>Հայաստանի գնահատականները.</u> Հայաստանի ռիսկայնության գնահատականը 2009թ. սեպտեմբերի դրությամբ կազմել է 49.17 միավոր (տե՛ս աղյուսակ 12.1), որով զբաղեցրել է 82-րդ տեղը աշխարհի 186 երկրների շարքում: Հիշեցնենք, որ նախկին՝ 2009 թ. մարտի հրապարակման արդյունքներով Հայաստանը 83-րդ տեղում էր (45.77 միավոր), 2008 թ. սեպտեմբերին՝ 85-րդ (45.12 միավոր) և 2008 թ. մարտին՝ 93-րդ (42.31 միավոր) (տե՛ս աղյուսակ 12.3):

Երկրի ռիսկայնության նվազեցմանը, այսինքն՝ 2009 թ. սեպտեմբերի գնահատականի բարելավմանը զգալի նպաստել են քաղաքական իրավիճակը և ֆորֆեյթինգի միջին ժամկետայնությունը բնութագրող ցուցանիշները: Գրանցվել է նաև կարճաժամկետ ֆինանսավորման և կապիտալի շուկաների մատչելիության ցուցանիշների աննշան դրական փոփոխություն: Հատկանշական է, որ 2009 թ. մարտ-սեպտեմբերին Հայաստանում վատացել է միայն մեկ՝ տնտեսական իրավիճակը բնութագրող ցուցանիշը (տե՛ս աղյուսակ 12.3):

«Եվրոմանի» ամսագրի 2005թ. սեպտեմբերի հրապարակման շրջանակներում երկրների ռիսկայնության 13 տարիների դինամիկայի ուսումնասիրությունը փաստում է, որ 1993-2005 թթ. ընթացքում Հայաստանում «երկրի ռիսկայնության» ցուցանիշը զգալի նվազել է («Եվրոմանիի» գնահատականն այդ ընթացքում բարձրացել է ավելի քան 77.17%-ով): 2005 թ. սեպտեմբերից մինչև 2009 թ. սեպտեմբեր Հայաստանի ռիսկայնությունը նվազել է 37.0%-ով, արդյունքում՝ 1993-2009 թթ. գրանցվել է Հայաստանի ռիսկի ավելի քան 2 անգամ անկում (տե՛ս աղյուսակ 12.3, 12.4)[41]:

---

[40] Ֆորֆեյթինգը տարժամկետ վաճառքի ժամանակ կնքվող գործարք է, որի դեպքում բանկը (ֆորֆեյթորը) ապրանքի առաքումից անմիջապես հետո արտահանողից գնում է ներմուծողի պարտամուրհակը (տրատտա) և արտահանողին անմիջապես վճարում է ապրանքի արժեքը՝ հանած արտահանման և ֆորֆեյթինգային վարկերի արժեքների տարբերությունը: Ֆորֆեյթորի վարձավճարը սովորաբար կազմում է 1-1.5%: Ֆորֆեյթորը ներմուծողից պահանջում է բանկային երաշխիք կամ, լրացուցիչ վճարի դիմաց, ինքն է ստանձնում ներմուծողի չվճարման ռիսկը: Ֆորֆեյթինգային գործարքը, փաստորեն, արտահանողին ազատում է բոլոր տեսակի ռիսկերից, ներմուծողին հնարավորություն է տալիս գնելու ապրանքներ, որոնց դիմաց ներմուծողը պարտավոր չէ անմիջապես և ամբողջությամբ վճարել: Ներմուծողի պարտավորությունը բանկի համար դառնում է պարտքային գործիք, որը բանկը կարող է պարտամուրհակի տեսքով վաճառել երկրորդային շուկայում: Ֆորֆեյթինգը լայն կիրառություն ունի միջազգային առևտրային գործարքներում:

[41] Աղբյուրը՝ http://www.euromoney.com/poll/10683/PollsAndAwards/Country-Risk.html:

Այսուհանդերձ, անդրադառնանք «Եվրոմանի» ամսագրի փորձագետների կողմից մատնանշված՝ Հայաստանի ռիսկայնության առավել խոցելի տարրերին.

- ***Քաղաքական ռիսկը***, որը կապված է երկրի չվճարումների և վճարային հաշվեկշռի «Կապիտալ» հաշվի սահմանափակումների վերաբերյալ քաղաքական սպասումների անորոշությունների հետ, թեև վերջին տարվա ընթացքում նվազել է, սակայն ունի կարևոր նշանակություն և պետք է մշտապես լինի ուշադրության կենտրոնում:
- ***Տնտեսական ռիսկի*** ցուցանիշը չնայած 2008թ. սեպտեմբեր - 2009 թ. սեպտեմբեր ժամանակահատվածում բարելավվել է, սակայն, քանի որ համաշխարհային տնտեսական ճգնաժամի պատճառով Հայաստանի տնտեսական անկումը 2009 թվականին բավականին խորն էր՝ 14.4%, «Եվրոմանիի» 2010 թ. մարտի հրապարակման մեջ Հայաստանի տնտեսական ռիսկի ցուցանիշը զգալիորեն կվատանա: Հետևաբար, տնտեսական անկման հնարավորինս արագ հաղթահարումը կարևոր է ձեռք բերված գնահատականը պահպանելու և կայուն առաջընթաց ապահովելու համար:
- Համաշխարհային տնտեսական ճգնաժամի ազդեցությանը դիմակայելու համար արտաքին փոխառությունների շարունակական ներգրավման պարագայում (2009 - 2010 թթ. ընթացքում) Հայաստանի, ինչպես նաև այլ երկրների ***պարտքի ցուցանիշները*** կվատթարանան: Հետևաբար, հարկ է լուրջ ուշադրություն դարձնել երկրի արտաքին պարտքի կայունության ապահովման խնդրին:
- ***Երկրի սուվերեն*** վարկանիշը սերտորեն կապված է վերոնշյալ բոլոր ցուցանիշների հետ, հետևաբար դրանց բարելավումը կարտահայտվի վարկանշային կազմակերպությունների կողմից տրված սուվերեն վարկանիշերում:
- Հայաստանի տնտեսության թույլ օղակներն են մնում ***բանկային և կարճաժամկետ ֆինանսավորման մատչելիության*** հիմնախնդիրները: Եթե առաջինը կապված է բանկային համակարգի և ֆինանսական շուկաների զարգացման, ինչպես նաև ֆինանսական միջոցների առկայության հետ, ապա երկրորդը, ըստ սահմանման, կապված է արտահանման վարկավորման և համապատասխան երաշխիքային ծածկույթի առկայության հետ, իսկ սա

էլ, իր հերթին, պայմանավորված է համապատասխան միջազգային կազմակերպությունների կողմից Հայաստանի վարկանշման և դրան համապատասխան՝ տնտեսավարող սուբյեկտներին վարկավորման երաշխիքային ծածկույթի տրամադրման հետ:

- ***Կապիտալի միջազգային շուկաները*** շարունակում են անմատչելի մնալ Հայաստանի համար: Այս առումով, Հայաստանը հետ է մնում իր տարածաշրջանային հարևաններից, ինչը մասամբ վկայում է երկրի ցածր վարկունակության, մյուս կողմից՝ համեմատաբար խոշոր ներդրումային ծրագրերի բացակայության մասին:
- Հայաստանի ռիսկայնության գնահատականի վրա բացասաբար անդրադարձող տարրերից մեկը ***ֆորֆեյթինգային ծառայությունների*** շատ ցածր մակարդակն է, ինչը պայմանավորված է թույլ զարգացած ֆինանսական շուկաներով ու ֆինանսական միջնորդության թերի գործիքակազմով:

Հայաստանը տարածաշրջանային համապատկերում. Չնայած Հայաստանը զգալի առաջընթաց է ապահովել երկրի ռիսկայնության նվազման հարցում, այնուամենայնիվ երկրի ռիսկայնությունը մեր երկրի համար շարունակում է էական խոչընդոտ մնալ օտարերկրյա ներդրումների ներգրավման տեսանկյունից: Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների շարքում իր ռիսկի ցածր մակարդակով Հայաստանը գերազանցում է Ալբանիային, Սերբիային, Մոնտենեգրոյին, Բոսնիա և Հերցեգովինային, Մակեդոնիային, իսկ նախկին ԽՍՀՄ երկրների շարքում գերազանցում է Ուկրաինային, Վրաստանին, Բելառուսին, Էստոնիային, Մոլդովային և միջինասիական հանրապետություններին (բացառությամբ Ղազախստանի) (տե՛ս աղյուսակ 12.1): 1993 - 2005 թվականների ընթացքում երկրի ռիսկի նվազման ցուցանիշով Հայաստանը տարածաշրջանի երկրներից զիջում է միայն Խորվաթիային (126.54%) ու Ադրբեջանին (105.01%), իսկ 2005 – 2009 թթ. ընթացքում երկրի ռիսկի նվազման ցուցանիշով զիջում է միայն Ղրղզստանին (41.67%) ու Վրաստանին (38.91%) (տե՛ս աղյուսակ 12.4): Այսպիսով՝ ԱՊՀ երկրների թվում Հայաստանը զիջում է միայն այնպիսի երկրների, որոնք համաշխարհային տնտեսության մեջ առանձնանում են իրենց հումքային պաշարների առատությամբ և հատկապես նավթամթերքների արտահանմամբ: Դրանք են՝ Ռուսաստանը, Ղազախստանը և Ադրբեջանը:

«Եվրոմանի» ամսագրի՝ 2009 թ. սեպտեմբերի համարում հրապարակված նախկին ԽՍՀՄ, այդ թվում՝ Հայաստանի և Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայի երկրների ռիսկայնության և այն պայմանավորող գործոնների համեմատական նկարագիրը ներկայացված է աղյուսակներ 12.1-12.4-ում:

13. «Գլոբալ Ինսայթ» հետազոտական կազմակերպության՝ Հայաստանի սուվերեն ռիսկի 2009 թ. վարկանիշը

Ընդհանուր տեղեկատվություն. «Գլոբալ Ինսայթը» (IHS Global Insight) իր հիմնադրման պահից՝ 2001 թ-ից հանդիսանում է տնտեսական, ֆինանսական և քաղաքական բնույթի հետազոտություններ իրականացնող ամերիկյան ամենահայտնի կազմակերպություններից մեկը[42]: «Գլոբալ Ինսայթի» գործունեության շրջանակները ներառում են 200-ից ավելի երկրներ: Այս կազմակերպության վերլուծություններից օգտվում են բազմաթիվ հաճախորդներ՝ տարբեր բնույթի ծրագրերի իրականացման վերաբերյալ որոշումներ կայացնելիս[43]:

Իր հետազոտական աշխատանքների թվում «Գլոբալ Ինսայթը» իրականացնում է 193 երկրների սուվերեն ռիսկի, այսինքն՝ վարկանիշերի գնահատում: Այդ ծառայությունը ներառում է մակրոտնտեսական կանխատեսումներ, երկրների տնտեսության վերլուծություններ, ռիսկերի գնահատումներ, որոնց իրականացման համար օգտագործվում է տնտեսական, ֆինանսական և քաղաքական տեղեկատվության ընդարձակ բազա: Սուվերեն ռիսկի ծառայությունը «Գլոբալ Ինսայթի» «Երկրների խորացված վերլուծություն և կանխատեսում» ծառայության մի մասն է, որի գործունեության արդյունքները մատչելի են միայն այդ կազմակերպության հաճախորդներին:

Գնահատման մեթոդաբանությունը. Սուվերեն վարկանիշերի հիմքում դրվում է յուրաքանչյուր երկրի իրացվելիության և վճարունակու-

---

[42] Տե՛ս http://www.ihsglobalinsight.com/ProductsServices/ProductDetail1053.htm :

[43] «Գլոբալ Ինսայթի» կազմի մեջ մտնում են աշխարհի առաջատար տեղեկատվական ընկերություններից Data Resources, Inc. (DRI)-ը, Wharton Econometric Forecasting Associates-ը (WEFA), PlanEcon-ը (ապահովում է տեղեկատվություն Արևելյան Եվրոպայի և նախկին ԽՍՀՄ երկրների մասին), CIEMEX-ը (ապահովում է տեղեկատվություն Մեքսիկայի մասին), World Markets Research Centre-ը (WMRC), SupplierBusiness Limited-ը՝ տարբեր երկրներում հետազոտություններ իրականացնող և տեղեկատվություն ապահովող աշխարհի առաջատար ընկերությունը: «Գլոբալ Ինսայթը» բաժնեմասեր ունի Best Independent Research LLC-ում (BIR), որը ամերիկյան 5 հետազոտական ընկերությունների կոնսորցիում է: 2008 թ. հոկտեմբերին «Գլոբալ Ինսայթը» ձեռք է բերվել IHS-ի (www.IHS.com) կողմից և ներկայումս անվանվում է IHS Global Insight:

թյան առանցքային գործակիցների հանգամանալից ուսումնասիրումը: Գնահատման ժամանակ վարկանիշի մեջ ներառում են նաև ընթացիկ իրավիճակի և յուրաքանչյուր երկրի տնտեսության և քաղաքական իրավիճակի հեռանկարի գնահատականները: Դրանց թվում են նաև հասարակական տրամադրությունները և քաղաքականություն իրականացնողների վերաբերմունքը արտաքին վարկատուների նկատմամբ: Այս վերջին գործոնները առավել բնութագրական են Աֆրիկայի, Լատինական Ամերիկայի, Ասիայի՝ թույլ և պակաս կայուն, նոր ձևավորվող շուկաներով տնտեսություններին:

Երկրի սուվերեն ռիսկը որոշելիս իրականացվում են հետևյալ քայլերը.

- ***Պարտքի վիճակագրության հավաքագրում, ֆինանսական գործակիցների հաշվարկում և դրանց ներկայացում*** - Ծառայությունը մանրամասն ներկայացնում է յուրաքանչյուր երկրի հաշվեկշռային և պարտքին վերաբերող վիճակագրությունը, ներառյալ՝ արտաքին իրացվելիության և վճարունակության հիմնական գործակիցների դինամիկան՝ սկսած 1999 թ-ից, ինչպես նաև ներկայացնում է հետագա չորս տարիներին այդ ցուցանիշների վերաբերյալ կանխատեսումները:
- ***Սուվերեն ռիսկերի աղյուսակի կազմում*** - Աղյուսակում տրվում են երկրի ֆինանսական, տնտեսական և քաղաքական այն ասպեկտների մանրամասնեցված, քանակական գնահատականները, որոնք կարող են հնարավոր ազդեցություն ունենալ նրա ֆինանսական պարտավորությունները կատարելու ունակության և ցանկության վրա:
- ***Սուվերեն ռիսկի հաշվետվության ներկայացում*** - Հաշվետվության մեջ տրվում են երկրի ընդհանուր սուվերեն վարկանիշի հիմքում ընկած ռիսկերին առնչվող ասպեկտների և դրանց կարևորության մեկնաբանությունն ու վերլուծությունը:
- ***Սուվերեն ռիսկի երկու առանձին վարկանիշների գնահատում և հրապարակում*** - Յուրաքանչյուր երկրի համար գնահատվում է կարճաժամկետ վարկանիշ և միջինից մինչև երկարաժամկետ հատվածի վարկանիշ:
- ***Համեմատական վարկանիշների ներկայացում*** - «Գլոբալ Ինսայթի» կողմից հրապարակվող սուվերեն վարկանիշը «ընդհանրացված (consensus) վարկանիշ» է, որը ստացվում է 3 այլ վարկանշային կազմակերպությունների՝ «Ստանդարտ ընդ Փուրզի», «Մուդիզի» և «Ֆիթչի» հրապարակած վարկանիշերի հետ «Գլոբալ Ինսայթի» գնահատականների համադրումից:

Հայաստանի գնահատականները. «Գլոբալ Ինսայթը» երկրների, այդ թվում նաև Հայաստանի սուվերեն ռիսկի վարկանիշը վերանայում է եռամսյակային պարբերականությամբ: Քանի որ նախորդ տարիների վարկանիշերը և այդ վարկանիշերի գնահատման մանրամասնեցված մեթոդաբանությունը դրանց կոնֆիդենցիալության պատճառով հնարավոր չի եղել ուսումնասիրել, ուստի ներկայացնենք 2008 թ. տարեկան և 2009 թ. առաջին և երկրորդ եռամսյակների վերլուծությունների արդյունքում Հայաստանին տրված սուվերեն վարկանիշերի զարգացումները և դրանց հիմքում դրված՝ փորձագետների ենթադրությունները:

Ըստ 2008 թ. արդյունքների՝ Հայաստանի միջինժամկետ սուվերեն վարկանիշը «55» էր, իսկ վարկանիշի հեռանկարը՝ «կայուն»: Կարճաժամկետ սուվերեն վարկանիշը «25» էր, և այդ վարկանիշի հեռանկարը՝ «կայուն»:

2009 թ. առաջին եռամսյակի վերանայման արդյունքներով[44] «Գլոբալ Ինսայթը» իջեցրեց Հայաստանի միջինժամկետ սուվերեն վարկանիշի մակարդակը՝ իր գնահատականով էլ ավելի խորացնելով Հայաստանի վարկանիշի սպեկուլյատիվ մակարդակը՝ «55»-ից հասցնելով «60»-ի (ըստ սովորական սանդղակի՝ B մինուս), ինչը ահազանգ էր վճարունակության շատ բարձր ռիսկի մասին: Սակայն, նկատի ունենալով, որ սուվերենի ֆինանսական կայունությունն ապահովվում է արտաքին՝ միջազգային ֆինանսական կառույցների օժանդակությամբ, և սուվերենի կողմից ներգրավվող վարկային միջոցների մեծ մասի արտոնյալ բնույթը նպաստում է, որ պարտքի սպասարկման ծախքերը մնան կառավարելի, «Գլոբալ Ինսայթի» փորձագետները չփոխեցին միջինժամկետ սուվերեն վարկանիշի հեռանկարը և թողեցին «կայուն»: Հայաստանի կարճաժամկետ ռիսկի վարկանիշը «25»-ից հասցվեց «30»-ի, իսկ վարկանիշի հեռանկարը գնահատվեց «բացասական»՝ մատնանշելով ֆինանսական ցնցումների ավելացման պատճառով սուվերենի անմիջական իրացվելիության վրա ավելացող ճնշումները: Այս առումով, «Գլոբալ Ինսայթի» փորձագետները նշեցին, որ արտերկրից դրամական փոխանցումների (ներդրումների, տրանս-

---

[44] ***«Գլոբալ Ինսայթը իջեցրել է Հայաստանի սուվերեն վարկանիշը՝ արտարժութային ներհոսքը վտանգվել է»***, *Վենլա Սիպիլա, Համաշխարհային շուկաների հետազոտական կենտրոն/Գլոբալ Ինսայթ, 24 մարտի 2009 թ. <http://www.gab-ibn.com/IMG/pdf/Ar11-_IHS_Global_Insight_Downgrades_Armenia_s_Sovereign_Rating_As_Foreign_Currency_Inflows_Threatened.pdf>:*

ֆերտների) ներհոսքի կտրուկ սառեցման պատճառով Հայաստանի տնտեսական հեռանկարները և նրա ֆինանսական կայունությունը խաթարված են, և իրացվելիության ռիսկերը մնում են բարձր: Տնտեսության ֆինանսական վիճակը խոցելի է հատկապես Ռուսաստանի տնտեսական աճի կտրուկ վատացման հեռանկարների առումով, քանի որ Հայաստանի տնտեսությունը մեծապես կախված է Ռուսաստանում արտագնա աշխատողների փոխանցումներից:

2009 թ. երկրորդ եռամսյակի վերանայման[45] արդյունքներով՝ Հայաստանի միջինժամկետ սուվերեն վարկանիշի հեռանկարը «կայունից» փոխեց «բացասականի»՝ հիմնավորելով, որ տնտեսությունում նկատվում է իրացվելիության ճնշումների ինտենսիվացում: Ընդ որում, միջինժամկետ սուվերեն վարկանիշի մակարդակը չի փոխվել. մնացել է «60» (ըստ ստանդարտ սանդղակի՝ B մինուս)՝ ընդգծելով Հայաստանի կառավարությանը վարկավորելու ռիսկի շատ բարձր մակարդակը: Կարճաժամկետ սուվերեն վարկանիշը նվազեցվել է երկու մակարդակով՝ «30»-ից՝ «40», իսկ վարկանիշի հեռանկարը մնացել է «բացասական»՝ մատնանշելով, որ արտարժութային ներհոսքի շարունակական կրճատումը տնտեսությունում առաջացնում է իրացվելիության սակավության ճնշումներ:

Որպես Հայաստանի տնտեսության ***ուժեղ կողմեր*** «Գլոբալ Ինսայթի» փորձագետները նշում են միջազգային ֆինանսական կառույցների աջակցությունը և սուվերենի կողմից ներգրավվող վարկային միջոցների արտոնյալ բնույթը, իսկ որպես ***թույլ կողմեր***՝ արտարժութային ներհոսքի շարունակական կրճատումը և տնտեսությունում իրացվելիության հիմնախնդիրները, սուվերենի արտաքին ֆինանսավորման հետ կապված ճնշումների ինտենսիվացումը, օտարերկրյա ներդրումների և տրանսֆերտների ներհոսքի դանդաղումը, որը հանգեցնում է հիմնախնդիրների ինչպես ընթացիկ հաշվի, այնպես էլ բյուջեի պակասուրդի ֆինանսավորման առումով, Հայաստանի տնտեսության զգալի կախվածությունը Ռուսաստանից՝ արտագնա աշխատուժի եկամուտների մասով և կախվածությունը պաշտոնական բազմակողմանի և երկկողմանի վարկատուներից:

---

[45] *«Գլոբալ Ինսայթը վերանայել է Հայաստանի սուվերեն վարկանիշի հեռանկարը և գանահատել «բացասական»՝ իրացվելիության հետ կապված ճնշումների ինտենսիվացման պատճառով», Վենլա Սիպիլա, Համաշխարհային շուկաների հետազոտական կենտրոն/Գլոբալ Ինսայթ, 15 հունիսի 2009 թ. <* http://www.gab-ibn.com/IMG/pdf/Ar4-_IHS_Global_Insight_Revises_Armenian_Sovereign_Outlook_To_Negative_As_Liquidity_Pressures_Keep_Intensifying.pdf *>:*

Հայաստանը տարածաշրջանային համապատկերում. Նախկին ԽՍՀՄ մյուս երկրների, ինչպես նաև Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների վարկանիշերի կոնֆիդենցիալության պատճառով հնարավոր չի եղել ուսումնասիրել Հայաստանը տարածաշրջանային համապատկերում:

Գլուխ 3. Միջազգային ֆինանսական կառույցների միջոցներից օգտվելու վարկանիշեր

14. Համաշխարհային բանկի Միջազգային զարգացման ընկերակցության «Երկրի քաղաքականությունների և ինստիտուցիոնալ կարողությունների գնահատման 2008 թ. վարկանիշը»

Ընդհանուր տեղեկատվություն. Համաշխարհային բանկի Միջազգային զարգացման ընկերակցությունը (IDA) (այսուհետ՝ Ընկերակցություն) արտոնյալ պայմաններով[46] ֆինանսավորում է աշխարհի 75 երկրների, այդ թվում՝ Հայաստանին: Ընկերակցության ֆինանսական միջոցները ձևավորվում են դոնոր կառավարությունների տրամադրած միջոցների հաշվին և, սովորաբար, ավելի քիչ են լինում, քան այդ երկրների ֆինանսավորման պահանջներն են: Ուստի, Ընկերակցությունը իր միջոցները տրամադրում է այդ երկրներում իրականացվող քաղաքականությունների և կառույցների գնահատման հիման վրա, որպեսզի ռեսուրսները կենտրոնացնի այն երկրներում և ոլորտներում, որտեղ դրանք ամենից ավելի կնպաստեն աղքատության կրճատմանը:

Կան երկու չափանիշներ, որոնց հիման վրա որոշվում է՝ արդյո՞ք այդ երկիրը կարող է օգտվել Ընկերակցության արտոնյալ միջոցներից, թե՝ ոչ: Դրանցից առաջինը բնակչության մեկ շնչին բաժին ընկնող համախառն ազգային եկամտի (ՀԱԵ) մակարդակն է, որը 2010 թ. ֆիսկալ տարվա համար սահմանվել է 1,135 ԱՄՆ դոլար: Ընկերակցության արտոնյալ միջոցներից կարողանում են օգտվել այն երկրները, որտեղ բնակչության մեկ շնչին բաժին ընկնող ՀԱԵ-ն չի գերազանցում այդ սահմանաչափը: Երկրորդ չափանիշը միջազգային կապիտալի շուկաներ այդ երկրների մուտքի անհնարինությունն է և, հետևաբար, երկրի զարգացման ծրագրերի ֆինանսավորման համար արտոնյալ ռեսուրսների կարիքը:

Հայաստանը Ընկերակցությանը անդամակցում է 1993թ. օգոստոսի 25-ից և այս ընթացքում Ընկերակցությունից ներգրավել է շուրջ 1150 մլն ԱՄՆ դոլարի ֆինանսական միջոցներ: Եվ, չնայած Հայաստանում բնակչության մեկ շնչին բաժին ընկնող ՀԱԵ-ն գերազանցում է Ընկե-

---

[46] Արտոնյալ պայմաններ ասելով՝ նկատի են առնվում վարկի հիմնական գումարի մարման զգալի արտոնյալ ժամանակաշրջանը, վարկի տրամադրման երկար ժամկետայնությունը և շատ ցածր տոկոսադրույքը:

րակցության կողմից սահմանված մակարդակը, այնուամենայնիվ Հայաստանը դեռևս խնդիրներ ունի միջազգային կապիտալի շուկաներից փոխառություններ ներգրավելու առումով: Դրանով պայմանավորված՝ ներկայումս Հայաստանը դեռևս ընդգրկված է Ընկերակցության միջոցներից օգտվող երկրների թվում: Նկատենք, որ նախկին ԽՍՀՄ երկրներից Ընկերակցության միջոցներից օգտվում են նաև Ադրբեջանը, Վրաստանը, Մոլդովան, Ղրղզստանը, Տաջիկստանը և Ուզբեկստանը, իսկ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներից՝ միայն Բոսնիա և Հերցեգովինան:

Գնահատման մեթոդաբանությունը. Ընկերակցության ռեսուրսների տրամադրման համար հիմնական գործոն է հանդիսանում այդ երկրներից յուրաքանչյուրում տնտեսական աճի խթանմանը և աղքատության կրճատմանը ուղղված քաղաքականությունների կատարողականը: Այդ կատարողականի գնահատման համար Ընկերակցությունը մշակել է երկրի քաղաքականությունների և ինստիտուցիոնալ կարողությունների գնահատման համակարգ (Country Policy and Institutional Assessment (CPIA)), որը ռեսուրսների տրամադրման ժամանակ ներկայացվում է որպես «Ընկերակցության ռեսուրսների տրամադրման ինդեքս» (IDA Resource Allocation Index (IRAI)): Այս ինդեքսը և պորտֆելի կատարողականը միասին ձևավորում են Ընկերակցության կողմից հրապարակվող «Երկրի կատարողականի վարկանիշը» (Country Performance Rating (CPR)): Ի լրումն «Երկրի կատարողականի վարկանիշի», Ընկերակցության ռեսուրսների տրամադրման ժամանակ հաշվի են առնում երկրի բնակչության թիվը և մեկ շնչին բաժին ընկնող եկամուտը: Այն երկիրը, որը ստացել է քաղաքականությունների կատարողականի բարձր վարկանիշ, բնակչության մեկ շնչի հաշվով Ընկերակցությունից ստանում է ավելի շատ փոխառու միջոցներ: Ընդորում, վարկանիշերը հաշվարկվում են՝ հիմնվելով երկրում իրականացվող փաստացի քաղաքականության, այլ ոչ թե խոստումների կամ մտադրությունների վրա:

Երկրի քաղաքականությունների և ինստիտուցիոնալ կարողությունների գնահատման համակարգով երկրները վարկանշվում են ըստ 16 չափանիշների, որոնք ներառվում են 4 խմբերում (կլաստերներում)՝

Ա. Տնտեսական կառավարում (ներառում է 3 չափանիշներ):

Բ. Կառուցվածքային քաղաքականություններ (ներառում է 3 չափանիշներ):

Գ. Հասարակական հավասարության և սոցիալական ներգրավվածության քաղաքականություններ (ներառում է 5 չափանիշներ):

Դ. Պետական հատվածի կառավարում և կառույցներ (ներառում է 5 չափանիշներ):

Դիտարկման համար վերցվում են այնպիսի չափանիշներ, որոնք կառավարության հսկողության շրջանակներում են, այլ ոչ թե այն արդյունքները, որոնք կրում են կառավարության հսկողությունից դուրս գտնվող տարրերի ազդեցությունը, ինչպես, օրինակ, տնտեսական աճը: Այդ չափանիշներից յուրաքանչյուրի գնահատման համար Համաշխարհային բանկը պատրաստել է ուղեցույց, որպեսզի գնահատող փորձագետները հստակ պատկերացնեն յուրաքանչյուր չափանիշի սահմանումը և դրա վարկանիշի մակարդակի մանրամասն բնութագիրը: Բացի ուղեցույցից, վարկանիշի գնահատման ժամանակ կիրառում են նաև տվյալ երկրին վերաբերող տարբեր ուսումնասիրությունների արդյունքներ և դատողություններ:

Վարկանիշի որոշման համար կիրառվում է 1 - 6 միջակայքը, որտեղ «1» գնահատականը ցույց է տալիս կատարողականի «շատ ցածր», «2»-ը՝ «ցածր», «3»-ը՝ «միջինից ցածր», «4»-ը՝ միջինից բարձր, «5»-ը՝ «բարձր», իսկ «6»-ը՝ «շատ բարձր» մակարդակները:

Գնահատվող չափանիշների կառուցվածքը Համաշխարհային բանկի փորձագետները յուրաքանչյուր տարի վերանայում և թարմացնում են՝ դրանցում արտացոլելով նախորդ տարիների փորձը և զարգացման տեսության նոր մոտեցումները: Սակայն, նկատենք, որ 2007թ. և 2008թ. ինդեքսների գնահատման չափանիշների կառուցվածքում փոփոխություններ չեն եղել:

Ինչպես արդեն նշվել է, «Ընկերակցության ռեսուրսների տրամադրման ինդեքսը» (IRAI), որը ստացվում է երկրի քաղաքականությունների և կառույցների գնահատման արդյունքում, առաջին անգամ հրապարակվել է 2006 թ-ին, որի հիմքում դրվել է 2005 թ. տվյալների բազան: «Ընկերակցության ռեսուրսների տրամադրման 2008 թ. ինդեքսը» Ընկերակցությունը հրապարակել է 2009 թ. հունիսին, սակայն դրա հիմքում 2007թ. փաստացի տվյալներն են:

Համաձայն մեթոդաբանության՝ երկրի քաղաքականությունների կատարողականի և կառույցների ամփոփ ինդեքսը «Տնտեսական կառավարում», «Կառուցվածքային քաղաքականություններ», «Հասարակական հավասարություն և սոցիալական ներգրավվածության քաղաքականություններ» և «Պետական հատվածի կառավարում և կառույցներ» չորս խմբերի միջինն է: Ընդ որում, բոլոր խմբերում ներառվող չափանիշներին տրվում են հավասար կշիռներ: Ընկերակցության կողմից

հրապարակվող «Երկրի կատարողականի վարկանիշը» (CPR) հաշվարկվում է հետևյալ կերպ. (24%-ը՝ Ա, Բ, Գ խմբերի միջինի) + (68%-ը՝ Դ խմբի միջինի) + (8%-ը՝ Պորտֆելային վարկանիշի): Պորտֆելային վարկանիշի բացակայության դեպքում հաշվարկվում է հետևյալ կերպ. (32%-ը՝ Ա, Բ, Գ խմբերի միջինի) + (68%-ը՝ Դ խմբի միջինի):

Վերջին փուլում որոշվում է տվյալ երկրին Ընկերակցության միջոցների տրամադրման չափը, որը ֆունկցիա է «Երկրի կատարողականի վարկանիշից» (այդ ցուցանիշը բարձրացվում է 5 աստիճան), երկրի բնակչության թվաքանակից (ցուցանիշը բարձրացվում է 1 աստիճան) և մեկ շնչին բաժին ընկնող ՀԱԵ-ից (ցուցանիշը բարձրացվում է մինուս 0.125 աստիճան):

Հայաստանի գնահատականները. «Ընկերակցության ռեսուրսների տրամադրման» 2008 թ. վարկանիշի գնահատման ժամանակ Համաշխարհային բանկը որպես Հայաստանի տնտեսության ուժեղ կողմեր է նշել պետական պարտքի քաղաքականությունը, մակրոտնտեսական կառավարումը, հարկաբյուջետային քաղաքականությունը: Որպես Հայաստանի տնտեսության հիմնախնդիրներ՝ Համաշխարհային բանկը նշել է ***շրջակա միջավայրի պահպանությունը***, ***պետական հատվածում թափանցիկությունը, պատասխանատու գործելակերպն ու կոռուպցիան***, ***սեփականության իրավունքների պաշտպանվածությունը և օրենքի վրա հիմնված պետական կառավարումը***, ***պետական եկամուտների հավաքագրման արդյունավետությունը***.

2008 թ. ինդեքսով Հայաստանը աշխարհի 75 երկրների թվում, ինչպես և նախորդ տարի, գրավում է 2-րդ տեղը, թեև աղյուսակ 14.1-ում նկատելի է, որ Հայաստանի «Երկրի կատարողականի վարկանիշը» 0.2 միավորով վատացել է 2007 թ. ինդեքսի համեմատ: Մասնավորապես, թեև 2007 թ. ինդեքսի համեմատ բարելավվել են ֆինանսական հատվածի քաղաքականությունը, բյուջետային և ֆինանսական կառավարման որակը, պետական վարչարարության որակը, սակայն, միաժամանակ վատացել են շրջակա միջավայրի պահպանությունը, պետական եկամուտների հավաքագրման արդյունավետությունը, պետական հատվածում թափանցիկությունը, պատասխանատու գործելակերպը և կոռուպցիան:

Հայաստանը տարածաշրջանային համապատկերում. Ընկերակցության ռեսուրսների տրամադրման 2008 ինդեքսները վկայում են, որ Ընկերակցության միջոցներից օգտվելու իրավունք ունեցող 75 երկրների թվում քաղաքականությունների կատարողականի և կառույցների

կարողունակության տեսանկյունից 2007 թ. տվյալներով ամենաբարձր արդյունքներն ունի Վրաստանը, իսկ Ադրբեջանը 11-րդ տեղում է[47]:

Հայաստանի համար Համաշխարհային բանկի կողմից գնահատված «Ընկերակցության ռեսուրսների տրամադրման» 2005-2008 թթ. ինդեքսների դինամիկան ներկայացված է աղյուսակ 14.1-ում, իսկ Ընկերակցության միջոցներից օգտվող նախկին ԽՍՀՄ, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների «Ընկերակցության ռեսուրսների տրամադրման» 2008 թ. ինդեքսները՝ աղյուսակ 14.2-ում:

15. Ասիական զարգացման բանկի «Երկրի կատարողականի գնահատման 2008 թ. վարկանիշը»

Ընդհանուր տեղեկատվություն. Ասիական զարգացման բանկը ***(ADB)*** իր անդամ 26 երկրներին Ասիական զարգացման հիմնադրամից արտոնյալ ֆինանսական միջոցներ հատկացնելու ժամանակ նույնպես հաշվի է առնում, թե երկրի քաղաքականությունները և ինստիտուցիոնալ կառուցվածքը որքանով են աջակցում կայուն աճին, աղքատության կրճատմանը, և որքանով են արդյունավետ օգտագործվում զարգացման համար տրամադրվող աջակցությունները: Ասիական զարգացման հիմնադրամը Ասիական զարգացման բանկի արտոնյալ վարկավորման մեխանիզմն է, որից օգտվում են ասիական տարածաշրջանի ամենաաղքատ և թույլ զարգացած երկրները: Նախկին ԽՍՀՄ երկրներից Հիմնադրամի միջոցներից օգտվում են Հայաստանը, Վրաստանը, Ղրղզստանը, Տաջիկստանը և Ուզբեկստանը:

Գնահատման մեթոդաբանությունը. Այդ երկրներում իրականացվող քաղաքականություններին և կառույցներին յուրաքանչյուր տարի վարկանիշ տալու նպատակով Ասիական զարգացման բանկը կիրառում է «Երկրի կատարողականի (զարգացման ցուցանիշների) գնահատման» (Country Performance Assessment (CPA)) համակարգ, որում օգտագործում է Համաշխարհային բանկի Միջազգային զարգացման ընկերակցության միջոցների հատկացման ժամանակ կիրառվող «Երկրի քաղաքականությունների և ինստիտուցիոնալ կարողությունների գնահատման» (CPIA) հարցաթերթիկը, այսինքն՝ հարցում-ուսումնասիրության վրա հիմնված ընդհանուր մեթոդաբանությունը: Այս հարցաշա-

[47] *Աղբյուրը՝ http://siteresources.worldbank.org/IDA/Resources/73153-1181752621336/IRAI2008table2.pdf:*

րում ամփոփված են յուրաքանչյուր չափանիշի բոլոր գնահատականների սահմանումները:

Չնայած Համաշխարհային բանկը և Ասիական զարգացման բանկը իրենց գնահատումներում օգտագործում են նույն հարցաթերթիկը, այնուամենայնիվ դրանց կողմից երկրների զարգացման ցուցանիշներին տրված գնահատականները տարբերվում են: Դա պայմանավորված է հետևյալով՝

- գնահատման հիմքում դրված տեղեկատվության վերջնաժամկետները տարբեր են,
- գնահատականների ամփոփման ժամանակ չափանիշների առանձին խմբերին (կլաստերներին) տրվում են տարբեր կշիռներ,
- «Երկրի քաղաքականությունների և ինստիտուցիոնալ կարողությունների գնահատման» հարցաթերթիկը հնարավորություն է տալիս անելու մասնագիտական բնույթի տարբեր դատողություններ:

Ասիական զարգացման բանկի «Երկրի կատարողականի գնահատման» վարկանիշը առաջին անգամ հրապարակվել է 2005 թ., որի հիմքում 2004 թ. տվյալների բազան է: «Երկրի կատարողականի գնահատման» 2008 թ. վարկանիշը Ասիական զարգացման բանկը հրապարակել է 2009 թ. մայիսին, և այդ ինդեքսի հիմքում 2007 թ. փաստացի տվյալներն են:

Ինչպես և Ընկերակցության դեպքում, Ասիական զարգացման բանկն իր արտոնյալ միջոցների հատկացման ժամանակ, բացի երկրում իրականացվող քաղաքականությունների և կառույցների որակի գնահատման արդյունքներից, հաշվի է առնում երկրի բնակչության թիվը և բնակչության 1 շնչին բաժին ընկնող եկամտի մակարդակը: Բացի այդ, օգտագործվում են գնահատման նույն 16 չափանիշները, որոնք ընդգրկվում են 4 առանձին խմբերում (տե՛ս աղյուսակ 15.1), թեև վարկանիշի գնահատման ժամանակ առաջին երեք խմբերի («Տնտեսական կառավարում», «Կառուցվածքային քաղաքականություններ», «Սոցիալական ներգրավվածություն և հասարակական հավասարություն») միջինին տրվում է 35% (Ընկերակցության դեպքում՝ 24%), «Պետական կառավարում» խմբին՝ 50% (Ընկերակցության դեպքում՝ 68%), իսկ պորտֆելի իրականացմանը՝ 15% (Ընկերակցության դեպքում՝ 8%) կշիռներ: Ընդ որում, երկու դեպքում էլ մեծ կշիռ է տրվում երկրում պետական կառավարմանը, քանի որ այն որոշիչ է երկրի հաջող զարգացման և հանրային ռեսուրսների արդյունավետ օգտագործ-

ման առումով: Այս վարկանիշերի որոշման սանդղակը նույնպես 1-6 միջակայքում է. «1» գնահատականը ցույց է տալիս երկրի կատարողականի «շատ ցածր», «2»-ը՝ «ցածր», «3»-ը՝ «միջինից ցածր», «4»-ը՝ միջինից բարձր, «5»-ը՝ «բարձր», իսկ «6»-ը՝ «շատ բարձր» մակարդակները:

Ի տարբերություն Ընկերակցության վարկանիշերի, Ասիական զարգացման բանկի փորձագետները գնահատում են նաև «Երկրի կատարողականի բաղադրյալ վարկանիշը», որի գնահատման միջակայքը 1-36 է և հաշվարկվում է հետևյալ կերպ. (առաջին երեք խմբերի միջինի 0.7 աստիճանը) x («Պետական հատվածի կառավարում» խմբի 1 աստիճանը) x (Պորտֆելային վարկանիշի 0.3 աստիճանը): Այս վարկանիշը հետագա հաշվարկներում օգտագործվում է Ասիական զարգացման հիմնադրամի ռեսուրսների հատկացման չափը որոշելիս[48]:

Վերջին փուլում որոշվում է տվյալ երկրին Ասիական զարգացման հիմնադրամի միջոցների տրամադրման չափը, որը ֆունկցիա է «Երկրի կատարողականի վարկանիշից» (այդ ցուցանիշը բարձրացվում է 2.0 աստիճան), երկրի բնակչության թվաքանակից (ցուցանիշը բարձրացվում է 0.60 աստիճան) և մեկ շնչին բաժին ընկնող ՀԱԵ-ից (ցուցանիշը բարձրացվում է մինուս 0.25 աստիճան)[49]:

Վերցվում է այս ցուցանիշի հակադարձ մեծությունը՝ նորմավորման գործակիցը, որը բազմապատկելով «Բնակչության թվաքանակի և 1 շնչին բաժին ընկնող եկամուտ» գործոնի գնահատականով և «Երկրի կատարողականի բաղադրյալ վարկանիշի» քառակուսով, ստանում են այն մասնաբաժինը, որ Ասիական զարգացման հիմնադրամը կարող է հատկացնել երկրին:

<u>Հայաստանի գնահատականները</u>. «Երկրի կատարողականի գնահատման 2008 թ. վարկանիշի» որոշման ժամանակ Ասիական զարգացման բանկը որպես Հայաստանի տնտեսության ուժեղ կողմեր նշել է պետական պարտքի քաղաքականությունը, մակրոտնտեսական կառավարումը, հարկաբյուջետային քաղաքականությունը: Որպես Հայաստանի տնտեսության հիմնախնդիրներ Ասիական զարգացման բանկը նշել է ֆինանսական հատվածի քաղաքականությունը և կառույցների որակը, պետական եկամուտների հավաքագրման արդյունավետությունը և պետական հատվածում թափանցիկությունը, պատասխանատու գործելակերպը և կոռուպցիան:

---

[48] Աղբյուրը՝ http://www.adb.org/Documents/Reports/Country-Performance-Assessment-Exercise/IN111-09.pdf, էջ 7:
[49] Նույն տեղում, էջ 8:

2008 թ. վարկանիշով Հայաստանը, Հիմնադրամի միջոցներից օգտվելու իրավունք ունեցող 26 երկրների թվում, գրավում է 4-րդ տեղը՝ նախորդ տարվա 3-րդ տեղի փոխարեն: Ըստ աղյուսակ 15.1-ի տվյալների, Հայաստանի «Երկրի կատարողականի գնահատման վարկանիշը» 2.0 միավորով վատացել է 2007 թ. վարկանիշի համեմատ: Մասնավորապես, 2007 թ. վարկանիշի համեմատ թեև բարելավվել է բյուջետային և ֆինանսական կառավարման որակը, սակայն, միաժամանակ վատացել են մակրոտնտեսական կառավարումը (որի հիմքում դրվում է գնաճի ցուցանիշը), հարկաբյուջետային, առևտրի և ֆինանսական հատվածի քաղաքականությունները, պետական եկամուտների հավաքագրման արդյունավետությունը և տվյալ երկրում Ասիական զարգացման բանկի ծրագրերի փաթեթի իրականացումը:

Հայաստանը տարածաշրջանային համապատկերում. Ասիական զարգացման հիմնադրամի ռեսուրսների տրամադրման 2008 թ. վարկանիշերը վկայում են, որ Հիմնադրամի միջոցներից օգտվելու իրավունք ունեցող 26 երկրների թվում քաղաքականությունների կատարողականի և կառույցների կարողունակության տեսանկյունից ամենաբարձր արդյունքներն ունի Վրաստանը, իսկ Ադրբեջանը չի ներառվել այս երկրների թվում[50]:

Հայաստանի համար Ասիական զարգացման բանկի կողմից գնահատված «Երկրի կատարողականի գնահատման» 2005-2008 թթ. վարկանիշերի դինամիկան ներկայացված է աղյուսակ 15.1-ում, իսկ Հիմնադրամի միջոցներից օգտվող նախկին ԽՍՀՄ երկրների «Երկրի կատարողականի գնահատման» 2008 թ. վարկանիշերը՝ աղյուսակ 15.2-ում:

16. Զարգացման և վերակառուցման եվրոպական բանկի «Կառուցվածքային և ինստիտուցիոնալ բարեփոխումների 2009 թ. ինդեքս»

Ընդհանուր տեղեկատվություն. Զարգացման և վերակառուցման եվրոպական բանկը (EBRD) (այսուհետ՝ Եվրոբանկ) *ստեղծվել է 1991 թվականին և շուրջ 20 տարի օգնում է Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի, ինչպես նաև նախկին ԽՍՀՄ երկրներին անցնելու նոր տնտեսավարման մեխանիզմների և*

[50] *Աղբյուրը՝ http://www.adb.org/Documents/Reports/Country-Performance-Assessment-Exercise/IN111-09.pdf, էջ 12:*

զարգացնելու մասնավոր ու ձեռնարկատիրական նախաձեռնությունները[51]: Այդ երկրներում Եվրոբանկի համեմատական ռազմավարությունների և նրա կողմից ֆինանսավորվող ծրագրերի հանգամանալից ուսումնասիրությունը ցույց են տալիս, որ Եվրոբանկը, որպես կոմերցիոն կառույց, ներդրումներ իրականացնելիս պարտադիր հաշվի է առնում տվյալ երկրում մակրոտնտեսական և քաղաքական կայունությունը, զարգացած և հուսալի ֆինանսական համակարգի կամ որոշ երկրներում՝ բարձր ֆինանսական եկամտաբերություն ունեցող տնտեսության ճյուղերի առկայությունը:

Որպես բանկ, իր գործունեության արդյունավետությունը գնահատելու նպատակով, Եվրոբանկը վերլուծում է 27 անդամ երկրների անցումային տնտեսություններում շուկայական բարեփոխումների դինամիկ գործընթացը և իր ամենամյա «Անցումային» հաշվետվություններում հրապարակում է այդ երկրների կառուցվածքային և ինստիտուցիոնալ առաջընթացի կամ, այլ կերպ ասած, «բարեփոխումների» ինդեքսը:

2009 թ. նոյեմբերի 2-ին հրապարակած «Անցումային հաշվետվություն 2009. Անցումային փուլը ճգնաժամի մեջ» («Transition Report 2009: Transition in Crisis?) հետազոտությունում նույնպես, ներկայացնելով Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի, նախկին ԽՍՀՄ երկրների 27 անցումային տնտեսություններում, ինչպես նաև Մոնղոլիայում և Թուրքիայում համաշխարհային ճգնաժամի ուղղակի ազդեցությունները շուկայական բարեփոխումների ընթացքի վրա, Եվրոբանկը գնահատել է այդ երկրների կառուցվածքային և ինստիտուցիոնալ բարեփոխումների 2009 թ. ինդեքսը:

<u>Գնահատման մեթոդաբանությունը</u>[52]. Իր անդամ երկրներում բարեփոխումների ընթացքը գնահատելու նպատակով Եվրոբանկը դիտարկում է շուկայական տնտեսության չորս հիմնական ոլորտներ՝ ա) շուկաները ու առևտուրը, բ) ձեռնարկությունները, գ) ենթակառույցները, դ) ֆինանսական հաստատությունները: Մասնավորապես՝ դիտարկվում և ամփոփվում են վերոնշյալ ոլորտների 9 առանձին ցուցանիշներ, որոնց չափման սանդղակի միջակայքը սահմանվում է 1-ից մինչև 4.33,

---

[51] *Տե՛ս www.ebrd.org:*

[52] *Եվրոբանկի «կառուցվածքային և ինստիտուցիոնալ բարեփոխումների» ինդեքսի անցումային ցուցանիշները մանրամասն ներկայացված են Հավելված 5-ում:*

որտեղ 1-ը ցույց է տալիս, որ այդ երկրում գրեթե ոչինչ չի փոխվել պլանային տնտեսության համեմատ, իսկ 4.33-ը ներկայացնում է զարգացած շուկայական տնտեսության ստանդարտը[53], ընդ որում, 2009 թ. ինդեքսի հիմքում 2008 թ. տվյալներն են:

Հայաստանի գնահատականները. Ըստ Եվրոբանկի բարեփոխումների ինդեքսի՝ Հայաստանը համապատասխանում է զարգացած շուկայական տնտեսության չափանիշներին գների ազատականացման, արտաքին առևտրի և արժութային քաղաքականությունների ոլորտում իրականացված բարեփոխումներով: Այդ ամենի հետ մեկտեղ, Հայաստանի տնտեսության թույլ կողմերն են՝ մրցակցային քաղաքականությունը, ձեռնարկությունների բարեփոխումների, արժեթղթերի շուկայի և ոչ բանկ ֆինանսական հաստատությունների բարեփոխումների ոլորտը: Ըստ Եվրոբանկի փորձագետների, Հայաստանը դեռևս զգալի անելիքներ ունի բանկային հատվածի և ենթակառույցների, հատկապես՝ երկաթուղու, ճանապարհների և ջրամատակարարման բարելավման բնագավառում (աղյուսակներ 16.1, 16.4):

Հայաստանը տարածաշրջանային համապատկերում. Կառուցվածքային և ինստիտուցիոնալ բարեփոխումների առաջընթացով Հայաստանը նախկին ԽՍՀՄ երկրներից զիջում է միայն Մերձբալթյան երկրներին, այսինքն՝ առաջատար է ԱՊՀ երկրների թվում և հարավկովկասյան տարածաշրջանում (աղյուսակ 16.2), իսկ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներից գերազանցում է Ալբանիային, Սերբիային, Մոնտենեգրոյին, Բոսնիա և Հերցեգովինային (տե՛ս աղյուսակ 16.3):

Ըստ Եվրոբանկի բարեփոխումների 2009թ. ինդեքսի՝ Հայաստանում և Ադրբեջանում կառուցվածքային և ինստիտուցիոնալ բարեփոխումների գնահատականը (ինդեքսը) 2008 թ. համեմատ փոփոխություններ չի կրել, սակայն Վրաստանում բարելավվել է ենթակառույցների, մասնավորապես՝ ջրամատակարարման ենթաինդեքսը:

Նախկին ԽՍՀՄ, ինչպես նաև Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների «Կառուցվածքային և ինստիտուցիոնալ բարեփոխումների ինդեքսները» ներկայացված են 16.1-16.4 աղյուսակներում:

[53] *Աղբյուրը՝ http://www.ebrd.com/country/sector/econo/stats/cameth.pdf:*

Գլուխ 4. Մարդկային ներուժի զարգացման ինդեքս

17. Միացյալ ազգերի կազմակերպության «Մարդկային ներուժի զարգացման 2009 թ. ինդեքս»

<u>Ընդհանուր տեղեկատվություն</u>. Երկրի զարգացման մակարդակը գնահատելիս հաճախ հիմնվում են բարեկեցության միջին մակարդակը բնութագրող տարբեր ցուցանիշների վրա և, սովորաբար, որպես այդպիսի ցուցանիշ դիտարկվում է բնակչության մեկ շնչին բաժին ընկնող եկամուտը: Մինչդեռ, եկամուտների աճի հետ մեկտեղ հարկ է նկատի ունենալ եկամուտների աճի որակը, գնահատել, թե ստեղծված եկամուտը որքանո՞վ է մատչելի բնակչության սոցիալապես անապահով խավերին, ի՞նչ համամասնություններով է բաշխվում, ընդհանուր առմամբ ինչպիսի՞ն է երկրի մարդկային ռեսուրսների շարժը:

Այս հարցերից ելնելով՝ Միացյալ ազգերի կազմակերպության զարգացման ծրագիրը (UNDP) 1990 թվականից ՄԱԿ-ի «Մարդկային զարգացման» ամենամյա զեկույցում[54] հրապարակում է երկրների տնտեսական զարգացման մակարդակը գնահատող ավելի ընդգրկուն ցուցանիշ՝ «մարդկային ներուժի զարգացման ինդեքսը»:

«Մարդկային ներուժի զարգացման ինդեքսի» 2009 թ. ամենամյա ամփոփումը Միացյալ ազգերի կազմակերպության փորձագետների կողմից ներկայացվել է 2009 թ. հոկտեմբերի 27-ին: Այդ ինդեքսի հիմքում 2007 թ. նախաճգնաժամային տվյալներն են:

«Մարդկային ներուժի զարգացման ինդեքսը» չափում է երկրի՝ մարդկային ներուժի զարգացման միջին առաջընթացը և միավորում է երեք ցուցանիշներ՝ բնակչության մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն, մարդու առողջությունն ու կյանքի սպասվող միջին տևողությունը, ինչպես նաև բնակչության կրթական մակարդակը: Այլ կերպ ասած, «Մարդկային ներուժի զարգացման ինդեքսը» ներկայացնում է մարդկային զարգացման հետևյալ երեք հարթությունների բաղադրյալ գնահատականը. ապրել երկար և առողջ կյանքով (չափվում է կյանքի տևողությամբ), լինել կրթված (չափվում է գրագիտությամբ) և ունենալ պատշաճ կենսամակարդակ (չափվում է գնողունակության համարժեքությամբ, եկամտի մակարդակով): Այս ինդեքսը չի կարող դիտարկվել որպես մարդկային զարգացման բոլոր կողմերը գնահատող ցուցանիշ:

---

[54] *Աղբյուրը՝ http://hdr.undp.org/en/media/HDR_2009_EN_Complete.pdf:*

Այն, օրինակ, չի ներառում այնպիսի կարևոր ցուցանիշներ, ինչպիսիք են սեռային կամ եկամտի անհավասարությունը կամ շատ ավելի դժվար գնահատվող այնպիսի արժեքներ, ինչպիսիք են մարդու իրավունքների և քաղաքական ազատությունների պաշտպանվածությունը: Այս ինդեքսը միայն հնարավորություն է տալիս մարդկային առաջընթացը, ինչպես նաև եկամտի ու բարեկեցության բարդ հարաբերությունները դիտարկել առավել համակողմանի:

Գնահատման մեթոդաբանությունը. Մարդկային ներուժի զարգացման ինդեքսը երեք առանձին ենթաինդեքսների ամփոփ գնահատականն է: Դրանք են՝ ***կյանքի տևողության ենթաինդեքսը***, ***կրթության ենթաինդեքսը*** և ***ՀՆԱ-ի ենթաինդեքսը***:

Կյանքի տևողության ենթաինդեքսը որոշվում է հետևյալ բանաձևով՝ (Vi-Vmin)/(Vmax-Vmin), որտեղ Vi-ն տվյալ երկրում կյանքի միջին տևողությունն է՝ արտահայտված տարիներով[55]: Vmax-ը և Vmin-ը սահմանված են համապատասխանաբար 80 տարի և 25 տարի:

Կրթության ենթաինդեքսի գնահատականը արտացոլում է երկրում չափահասների գրագիտության և համախառն (դպրոցական, բակալավրիատի և մագիստրատուրայի (և ավելի բարձր) մակարդակի) գրագիտության աստիճանները: Այդ նպատակով հաշվարկվում են երկու առանձին գնահատականներ: Առաջինը չափահասների գրագիտության գնահատականն է, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝ (Vi-Vmin)/(Vmax-Vmin), որտեղ Vi-ը տվյալ երկրում գրագետ չափահասների տոկոսն է դրանց ընդհանուր թվում[56]: Vmax-ը և Vmin-ը սահմանված են համապատասխանաբար 100% և 0%: Երկրորդը ամփոփ կամ համախառն գրագիտության գնահատականն է, որը հաշվարկում են նույն բանաձևով, որտեղ Vi-ը տվյալ երկրում կրթական բոլոր մակարդակներում և հետազոտական աշխատանքներում ներգրավված անձանց տեսակարար կշիռն է ընդհանուր բնակչության մեջ[57]: Չափահասների գրագիտության և համախառն գրագիտության գնահատականների հանրագումարի հիման վրա հաշվարկվում է կրթության ենթաինդեքսը, ընդ որում՝ վերցվում է չափահասների գնահատականի 2/3-ը, իսկ համախառն գրագիտության գնահատականի՝ 1/3-ը:

---

[55] Երկրում կյանքի միջին տևողության ցուցանիշի աղբյուր է ծառայել ՄԱԿ-ի 2009 թ. վիճակագրությունը:

[56] Երկրում չափահասների գրագիտության ցուցանիշի աղբյուր են ծառայել UNESCO-ի վիճակագրության ինստիտուտի 2003 թ. և 2009 թ. տվյալները:

[57] Երկրում բնակչության մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի ցուցանիշի աղբյուր են ծառայել Համաշխարհային բանկի տվյալները՝ հաշվարկված 2007 թ. համար:

ՀՆԱ-ի ենթաինդեքսը հաշվարկվում է՝ օգտագործելով բնակչության մեկ շնչին բաժին ընկնող ճշգրտված ՀՆԱ-ի (ըստ գնողունակության համարժեքության, ԱՄՆ դոլար) ցուցանիշը: Եկամուտները ճշգրտվում են, որովհետև մարդկային զարգացման պատշաճ մակարդակի հասնելու համար չի պահանջվում ունենալ անսահմանափակ եկամուտ: Հետևաբար, օգտագործվում է եկամտի լոգարիթմը և հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝ (Vi-Vmin)/(Vmax-Vmin), որտեղ Vi-ը տվյալ երկրում բնակչության մեկ շնչին բաժին ընկնող ճշգրտված ՀՆԱ-ի փաստացի ցուցանիշն է: Vmax-ը և Vmin-ը սահմանված են համապատասխանաբար 40000 ԱՄՆ դոլար և 100 ԱՄՆ դոլար:

Վերջում, «Կյանքի տևողության», «Կրթության» և «ՀՆԱ»-ի ենթաինդեքսների պարզ միջին թվաբանականի հիման վրա գնահատվում է երկրի ամփոփ «Մարդկային ներուժի զարգացման ինդեքսը»:

«Մարդկային ներուժի զարգացման ինդեքս 2009»-ում երկրները, ըստ ամփոփ ինդեքսի մակարդակի, դասակարգվել են «շատ բարձր» (1.0-ից մինչև 0.9), «բարձր» (0.8-ից մինչև 0.9), «միջին» (0.5-ից մինչև 0.8) և «ցածր» (0.5-ից ցածր) մակարդակ ունեցող երկրների:

Հայաստանի գնահատականները. Հայաստանի «Մարդկային ներուժի զարգացման ինդեքսը» գնահատվել է 0.798 միավոր, որը նախորդ տարվա ցուցանիշը գերազանցում է 0.023 կետով: Հետևաբար, ըստ այդ ինդեքսի, Հայաստանի դիրքը, նախորդ տարվա համեմատ, մեկ աստիճանով բարձրացել է, և աշխարհի 182 երկրների շարքում զբաղեցնում է 84-րդ տեղը: Հայաստանի ինդեքսի բարձր մակարդակը ապահովող ցուցանիշներն են՝ 99.5% բնակչության գրագիտությունը և 73.6 տարի կյանքի միջին տևողությունը, թեև նախորդ տարվա համեմատ աճը պայմանավորված է եղել բնակչության մեկ շնչին բաժին ընկնող եկամտի աճով, որը 2007 թ. կազմել է 5693 ԱՄՆ դոլար (ըստ գնողունակության համարժեքության): Կյանքի տևողության 2009 թ. ենթաինդեքսը Հայաստանում կազմել է 0.810, չափահասների գրագիտության գնահատականը՝ 0.995, համախառն գրագիտության գնահատականը՝ 0.746, կրթության ենթաինդեքսը՝ 0.909 և ՀՆԱ ենթաինդեքսը՝ 0.675:

«Մարդկային ներուժի զարգացման ինդեքսի» բաղադրիչներից միայն եկամուտն ու կրթական մակարդակն են ինչ-որ չափով արձագանքում քաղաքականությունների կարճաժամկետ փոփոխություններին: Այդ պատճառով էլ, կարևոր է ուսումնասիրել այդ ինդեքսի դինամիկան (միտումը) ժամանակի ընթացքում: 1990 - 2007 թթ. ընթացքում Հայաստանի «Մարդկային ներուժի զարգացման ինդեքսը» յուրա-

քանչյուր տարի աճել է 0.51%-ով՝ 0.731-ից մինչև 0.798[58] (տե՛ս աղյուսակ 17.2): Ըստ ամփոփ ինդեքսի մակարդակի՝ Հայաստանը դասվել է մարդկային ներուժի զարգացման **«միջին մակարդակ»** ունեցող երկրների թվին. ընդամենը մեկ կետ չի բավականացրել «մարդկային ներուժի բարձր զարգացում» ունեցող երկրների շարքը դասվելու համար:

Հայաստանը տարածաշրջանային համապատկերում. Հայաստանը մարդկային ներուժի զարգացման մակարդակով 2009 թ-ին հարավկովկասյան տարածաշրջանում առաջատար է: Այդ ցուցակում Վրաստանը 89-րդ տեղում է, իսկ Ադրբեջանը՝ 86-րդն է: Հայաստանի և հարևան երկրների հիմնական ցուցանիշները, որ, ըստ «Մարդկային ներուժի զարգացման ինդեքս 2009»-ի, տրված են ստորև ներկայացված աղյուսակում, վկայում են, որ թեև Թուրքիայում, Ադրբեջանում և Իրանում մեկ շնչի հաշվով եկամուտներն ավելի բարձր են, քան Հայաստանում, նրանք, այդուհանդերձ, զգալիորեն զիջում են Հայաստանին մարդկային ներուժի զարգացման մակարդակով, մասնավորապես՝ մարդու կյանքի միջին տևողությամբ և, հատկապես՝ բնակչության կրթական մակարդակով:

Մարդկային ներուժի զարգացման ինդեքս 2009

Տեղ	Երկիր	Կյանքի տևողություն (տարի)	Կրթական մակարդակ, %	Միջին եկամուտ (ԱՄՆ դոլար)
79	Թուրքիա	71.7	88.7	12,995
84	Հայաստան	73.6	99.5	5,693
86	Ադրբեջան	70	99.5	7,581
88	Իրան	71.2	82.3	10,955
89	Վրաստան	71.6	100.0	4,662

2009 թ. արդյունքներով՝ ամենաբարձր «մարդկային ներուժի զարգացման ինդեքս» ունեցող, այսինքն՝ ամենաբարեկեցիկ երկրների թվում են Նորվեգիան, Ավստրալիան, Իսլանդիան, Կանադան և Իռլանդիան: Ոչ բարեկեցիկ երկրների շարքում են Նիգերիան, Աֆղանստանը և Սիեռա Լիոնեն: Աֆղանստանում կյանքի միջին տևողությունը 43.6 տարի է, Նիգերիայում՝ 50 տարի: Համեմատության համար՝ Ճապոնիայում այդ ցուցանիշը հասնում է 82.7-ի, իսկ Նորվեգիայում՝ 80-ի: Մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի ամենաբարձր արդյունքն ունի 35 հազար

[58] *Աղբյուրը՝ http://hdrstats.undp.org/en/countries/country_fact_sheets/cty_fs_ARM.html:*

բնակչությամբ Լիխտենշտեյնը՝ 74,500 ԱՄՆ դոլար: Այս երկրում 15 բանկ կա և մեծահարուստների ակտիվները կառավարող 100 ընկերություն: Ամենաաղքատ բնակչությունն ունի Կոնգոյի Ժողովրդական Հանրապետությունը. այստեղ մեկ շնչին բաժին ընկնող տարեկան եկամուտը չի գերազանցում 260 ԱՄՆ դոլարը:

Նախկին ԽՍՀՄ, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների ինդեքսները և դրանց բաղադրիչների գնահատականները ներկայացված են աղյուսակ 17.1-ում:

Գլուխ 5. Համաշխարհային մրցունակության ինդեքս

18. Համաշխարհային տնտեսական համաժողովի «Համաշխարհային մրցունակության 2009 - 2010 թթ. ինդեքս»

Ընդհանուր տեղեկատվություն [59]. «Համաշխարհային մրցունակություն» զեկույցը, որը Համաժողովը հրապարակում է սկսած 1979 թվականից, մրցունակության վերաբերյալ ամենաընդգրկուն տվյալների շտեմարանն է, որում տնտեսությունների բազմաչափ ուսումնասիրությունների հիման վրա վերլուծական համեմատություն է անցկացվում տարբեր երկրների տնտեսական մրցունակության և աճի վրա ներազդող գործոնների միջև: Զեկույցը բացառիկ հնարավորություն է ընձեռում առավել խորությամբ դիտարկելու յուրաքանչյուր երկրի տնտեսության առանձնահատկությունները: Ընդ որում, այդ զեկույցում ներառվող երկրների թիվը տարեցտարի աճում է: Այսպես օրինակ, եթե 1979 թ. հրապարակման մեջ ներառվել էր ընդամենը 16 երկիր, 2004 թվականին այդ զեկույցը վերաբերում էր 104, իսկ 2009 թ.՝ արդեն 133 երկրների: Հայաստանն առաջին անգամ ներգրավվել է Համաժողովի «Համաշխարհային մրցունակություն» զեկույցում 2005 թ-ին:

«Համաշխարհային մրցունակություն» զեկույցը պատրաստվում է աշխարհի առաջատար գիտնականների, ինչպես նաև զեկույցում ներառված երկրներում Համաժողովի գործընկեր (հետազոտական) ինստիտուտների հետ համագործակցության շնորհիվ: Հայաստանում Համաժողովի գործընկեր կազմակերպությունը «Տնտեսություն և արժեքներ» (Economy&Values) հետազոտական կենտրոնն է[60]:

Համաժողովը 2009թ. սեպտեմբերի 8-ին հրապարակել է «Համաշխարհային մրցունակության 2009/2010 ինդեքս» զեկույցը, որում փորձ է արվել ամփոփել մրցունակության թե՛ մակրո, թե՛ միկրո որոշիչների գնահատականները: Զեկույցում մրցունակությունը սահմանվում է որպես տնտեսության արտադրողականության, հետևաբար նաև բարեկեցության մակարդակը որոշող ինստիտուտների, քաղաքականությունների և գործոնների բազմություն: Սակայն, նկատի ունենալով, որ արտադրողականության մակարդակով է մեծապես պայմանավորված նաև

---

[59] *Համաշխարհային տնտեսական համաժողովի մասին ընդհանուր տեղեկատվությունը տե՛ս ենթագլուխ 4-ում:*

[60] *Տե՛ս www.ev.am:*

տնտեսության համախառն աճի տեմպը որոշող ներդրումներից հատույցի աճը, առավել մրցունակ է համարվում այն երկիրը, որի միջին և երկարաժամկետ տնտեսական աճի մակարդակները ավելի բարձր են[61]:

Գնահատման մեթոդաբանությունը [62]. Երկրների մրցունակության մակարդակը գնահատելու նպատակով Համաժողովի փորձագետները դիտարկում են յուրաքանչյուր երկրի տնտեսության ***տասներկու հիմնասյուների*** (հաստատությունների, ենթակառույցների, մակրոտնտեսական կայունության, առողջապահության և տարրական կրթության, բարձրագույն կրթության և վերապատրաստումների, ապրանքային շուկայի արդյունավետության, աշխատուժի շուկայի արդյունավետության, ֆինանսական շուկայի զարգացածության, տեխնոլոգիական պատրաստվածության, շուկայի չափի, գործարարության զարգացածության և նորամուծությունների) մեջ ներառվող շուրջ 110 առանձին ցուցանիշներ: Այդ ցուցանիշների չափման սանդղակի միջակայքը սահմանվել է 1 - 7, որտեղ «7» գնահատականը համապատասխանում է ամենամրցունակ, իսկ «1»-ը՝ ոչ մրցունակ երկրի վիճակին: Գնահատման ժամանակ Համաժողովը օգտվում է հանրությանը մատչելի վիճակագրական տվյալներից, ինչպես նաև երկրներում մասնավոր ընկերությունների ղեկավարների հարցումներից: «Համաշխարհային մրցունակության 2009/2010 ինդեքսի» գնահատման ժամանակ Հայաստանում հարցմանը մասնակցել է 78 ընկերություն:

Հայաստանի գնահատականները. «Համաշխարհային մրցունակություն 2009/2010» զեկույցում Հայաստանը աշխարհի 133 երկրների շարքում զբաղեցրել է 97-րդ տեղը, որը նախորդ տարվա համեմատ չի փոխվել: Սակայն կարևոր առաջընթացն այն է, որ Հայաստանն անցել է զարգացման որակական նոր՝ 2-րդ փուլ, որում փոխվում է մրցունակության խթանիչների դերը, այսինքն՝ մեծանում է արդյունավետության և նորարարական ունակությունների վրա ազդող գործոնների կարևորությունը:

Մրցունակության 12 հիմնասյուներից էական բարելավում է գրանցվել մակրոտնտեսական կայունության (նախորդ տարվա 83-րդ տեղի փոխարեն ներկայումս զբաղեցնում է 53-րդ տեղը), ֆինանսական շուկայի զարգացածության (նախորդ տարվա 107-րդ տեղի փոխարեն՝ 97-

---

[61] *Աղբյուրը՝ **«Համաշխարհային մրցունակության 2009-2010 թթ. զեկույց**», Համաշխարհային տնտեսական համաժողով, Ժնև, 2009թ., էջ 4:*

[62] *Համաշխարհային տնտեսական համաժողովի **«Համաշխարհային մրցունակության 2009-2010 թթ. ինդեքսի»** մեթոդաբանության մանրամասները տե՛ս Հավելված 6-ում:*

րդ տեղը), ենթակառույցների բարելավման (նախորդ տարվա 90-րդ տեղի փոխարեն՝ 81-րդ տեղը), գործարարության զարգացածության (նախորդ տարվա 90-րդ տեղի փոխարեն՝ 81-րդ տեղը) և տեխնոլոգիական պատրաստվածության (նախորդ տարվա 112-րդ տեղի փոխարեն՝ 105-րդ տեղը) ոլորտներում (տե՛ս աղյուսակ 18.1): «Մակրոտնտեսական կայունություն» հիմնասյան գնահատականի էական բարելավումը պայմանավորված է եղել 2008 թ. ՀՆԱ-ում պետբյուջեի պակասուրդի ցածր տեսակարար կշռով, վարկավորման և ավանդների միջին տոկոսադրույքների սպրեդի կրճատմամբ և պետական պարտք/ՀՆԱ գործակցի բարելավմամբ:

Մրցունակության 12 հիմնասյուներից ամենամեծ հետընթացը Հայաստանում գրանցվել է ապրանքային շուկայի արդյունավետության (նախորդ տարվա 110-րդ տեղի փոխարեն ներկայումս զբաղեցնում է 116-րդ տեղը) ոլորտում՝ բիզնես հիմնելու գործընթացների քանակի և ծախսված ժամանակի, ինչպես նաև արտաքին առևտրի մաքսային բեռի ծանրության պատճառով: Նվազել են նաև երեք այլ հիմնասյուների գնահատականները՝ ***բարձրագույն կրթություն և վերապատրաստում, աշխատուժի շուկայի արդյունավետություն և նորամուծություններ*** ոլորտներում (տե՛ս աղյուսակ 18.1):

Ըստ 12 հիմնասյուներում ներառված շուրջ 110 ցուցանիշների Հայաստանի տեղը աշխարհի 133 երկրների թվում, ինչպես նաև դրանց բարելավման կամ վատացման դինամիկան ներկայացված են աղյուսակ 18.2-ում, որը հնարավորություն է տալիս հասկանալու Հայաստանի մրցունակության հիմնասյուների գնահատականների բարելավումը կամ վատացումը պայմանավորող գործոնները:

Համաժողովի «Համաշխարհային մրցունակություն 2009/2010» զեկույցում առանձնացվել են Հայաստանի մրցակցային առավելություններն ու թույլ կողմերը[63], որոնք ներկայացված են աղյուսակ 18.4-ում: Նշված թույլ կողմերի բարելավումը հատկապես կարևորվում է Հայաստանի զարգացման նոր՝ արդյունավետության վրա հիմնված փուլի անցնելու տեսանկյունից, որում պահանջվում են ջանքերի ավելի մեծ կենտրոնացվածություն և առավել բարձր կարգի ունակություններ:

<u>Հայաստանը տարածաշրջանային համապատկերում</u>. Ինչ վերաբերում է հարավկովկասյան տարածաշրջանի երկրներին, ապա մրցունակության ցուցանիշով երկու երկրներն էլ գերազանցում են Հայաստանին: Ադրբեջանը մրցունակության ցուցանիշով զբաղեցնում է 51-րդ

---

[63] *Տե՛ս **«Համաշխարհային մրցունակության 2009-2010 թթ. զեկույց»**, Համաշխարհային տնտեսական համաժողով, Ժնև, 2009թ., էջ 73:*

տեղը՝ աշխարհի 133 երկրների թվում և նախորդ տարվա համեմատ 18 մակարդակով առաջընթաց է արձանագրել, իսկ Վրաստանի ցուցանիշը մնացել է անփոփոխ, և երկիրը զբաղեցնում է 90-րդ տեղը (տե՛ս աղյուսակ 18.3): Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներից միայն Բոսնիա և Հերցեգովինան է իր 109-րդ տեղով զիջում Հայաստանին, իսկ նախկին ԽՍՀՄ երկրներից՝ Տաջիկստանն ու Ղրղզստանը[64]:

«Համաշխարհային մրցունակություն 2009/2010» զեկույցում մրցունակ երկրների առաջին տասնյակում են Շվեյցարիան, ԱՄՆ-ն, Սինգապուրը, Շվեդիան, Դանիան, Ֆինլանդիան, Գերմանիան, Ճապոնիան, Կանադան և Նիդեռլանդները, իսկ վերջին տասնյակում՝ Պարագվայը, Նեպալը, Թիմոր-Լեստեն, Մավրիտանիան, Բուրկինա Ֆասոն, Մոզամբիկը, Մալին, Չադը, Զիմբաբվեն և Բուրունդին:

Հայաստանի համաշխարհային մրցունակության 2009-2010 թթ. ինդեքսը և առանձին հիմնասյուների ենթաինդեքսները, դրանց 2007-2010 թթ. դինամիկան, Հայաստանի մրցակցային առավելությունները ու թույլ կողմերը, ինչպես նաև հարավկովկասյան տարածաշրջանի երկրների ինդեքսների համեմատական բնութագիրը ներկայացված են աղյուսակներ 18.1-18.4-ում:

[64] *Տե՛ս **«Համաշխարհային մրցունակության 2009-2010 թթ. զեկույց»**, Համաշխարհային տնտեսական համաժողով, Ժնև, 2009թ., էջ 13:*

ԱՄՓՈՓՈՒՄ

Այսպիսով, Համաշխարհային բանկի, Եվրոբանկի, Ասիական զարգացման բանկի, Միացյալ ազգերի կազմակերպության, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության, Համաշխարհային տնտեսական համաժողովի, «Ֆիթչ» և «Մուդիզ» վարկանշային կազմակերպությունների, «Հերիթիջ» հիմնադրամի, «Ֆրեյզեր» և «Կատո» ինստիտուտների, «Ֆրիդոմհաուզի», «Թրանսփերենսի ինտերնեյշնլի», «Բերտելսման» հիմնադրամի, «Գլոբալ Ինսայթ» հետազոտական կազմակերպության և «Եվրոմանի» ամսագրի կողմից հրապարակված 18 գնահատականների (ինդեքսների, վարկանիշերի) վերլուծությունը վկայում է, որ Հայաստանը զգալի առաջընթաց է ապահովել տնտեսության մի շարք ոլորտներում: Այդ ոլորտներից են՝ մակրոտնտեսական, մասնավորապես՝ դրամավարկային, հարկաբյուջետային, պետական պարտքի սպասարկման, արտաքին առևտրի քաղաքականությունները, գործարար միջավայրը և գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը: Միջազգային կառույցները բարձր են գնահատում ինչպես Հայաստանում առանցքային տնտեսական քաղաքականություններ իրականացնող կառույցների որակը («Ֆիթչ», Համաշխարհային բանկ, Ասիական զարգացման բանկ և Եվրոբանկ), այնպես էլ միջազգային համագործակցության ոլորտում ՀՀ Կառավարության վստահելիությունը և միջազգային հանրության աջակցությունը Հայաստանին: Դիտարկված բոլոր միջազգային կառույցներն էլ կարևորում են ՀՀ պետական կառավարման մարմինների՝ բարձր տնտեսական աճին նպաստող կառուցվածքային բարեփոխումները շարունակելու պատրաստակամությունը:

Միաժամանակ, միջազգային համապատկերում Հայաստանի տնտեսության թույլ կողմերի առանձնացումն ու համակարգումը հնարավորություն են տվել վեր հանելու և ամփոփ աղյուսակի տեսքով (տե՛ս աղյուսակ 19) ներկայացնելու Հայաստանի տնտեսության զարգացման առաջնահերթությունները՝ ըստ միջազգային կառույցների և օտարերկրյա հետազոտական կազմակերպությունների գնահատականների: Դրանց թվում են բարեփոխումների այնպիսի բարդ ուղղություններ, ինչպիսիք են՝ կառուցվածքային, հատկապես տնտեսության բազմազանեցմանը, մեծ ավելացված արժեք պարունակող ապրանքների և ծառայությունների արտահանման հնարավորությունների ընդլայնմանը, բարձր արտադրողական և ինովացիոն օտարերկրյա ներդրումների ներգրավմանը, ֆինանսական շուկաների կատարելագործ-

մանը ուղղված քաղաքականությունները, հարկային և մաքսային վարչարարության արդիականացումը, գործարարության կարգավորման բեռի թուլացումը, պետական հատվածում թափանցիկության և պատասխանատու գործելակերպի ապահովումը, կոռուպցիայի հաղթահարումը, հակամենաշնորհային միջոցառումների արդյունավետությունը, դատական համակարգի անկախության, ժողովրդավարական ինստիտուտների գործունեության և քաղաքացիական ազատությունների ապահովումը: Այս բոլոր խնդիրները ներառված են ՀՀ Կառավարության զարգացման ծրագրերում: Ներկայումս առաջին պլան է մղվում դրանց հետևողականության ապահովումն ու արդյունավետության բարձրացումը, քանի որ, ըստ «Համաշխարհային տնտեսական մրցունակություն 2009/2010» զեկույցի, Հայաստանի երկարաժամկետ զարգացման և ազգային տնտեսության մրցունակության բարձրացման հիմքում այսուհետ դրվելու են արդյունավետության խթանիչները, այսինքն՝ բարձրագույն կրթությունն ու վերապատրաստումները, գիտահետազոտական ներուժը, ապրանքային և աշխատուժի շուկաների արդյունավետությունը, ֆինանսական շուկաների խորությունը, տեխնոլոգիական պատրաստվածությունը և այլն:

Միջազգային կառույցների և օտարերկրյա հետազոտական կազմակերպությունների՝ Հայաստանին տրված գնահատականները (ինդեքսների, վարկանիշերի) ժամանակագրական տեսանկյունից ուսումնասիրելիս նկատվում է, որ որոշ ոլորտներում դրսևորվել են շարունակական բարելավման միտումներ, մյուսներում՝ վատացումներ: Տնտեսական ազատության ինդեքսների գնահատականները հիմնականում բարելավվել են կամ մնացել են անփոփոխ: Վատացել է «Թրանսփերենսի ինտերնեյշնլի» «Կոռուպցիայի ընկալման» և «Բերտելսման» հիմնադրամի «Ժողովրդավարության և շուկայական տնտեսության կարգավիճակի» և «Կառավարման» ինդեքսները: Երկրի ռիսկի, այդ թվում՝ սուվերեն ռիսկի տեսանկյունից բարելավվել են Տնտեսական զարգացման և համագործակցության կազմակերպության և «Եվրոմանի» ամսագրի գնահատականները, «Մուդիզ» կազմակերպության կողմից տրված վարկանիշը մնացել է անփոփոխ, իսկ «Ֆիթչի» և «Գլոբալ Ինսայթի» վարկանիշերը 2009 թ-ին վատացել են՝ պայմանավորված Հայաստանի վրա համաշխարհային տնտեսական ճգնաժամի ազդեցությամբ: Երկրում իրականացվող քաղաքականությունների կատարողականի և կառույցների որակի տեսանկյունից շարունակական բարելավվել է Եվրոբանկի ինդեքսը, սակայն Համաշխարհային բանկի և Ասիական զարգացման բանկի գնահատականները

վատացել են: Միացյալ ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի կողմից Հայաստանի համար գնահատված **Մարդկային ներուժի զարգացման ինդեքսը** 2000 թ-ից դրսևորում է բարելավման միտում: Իսկ ինչ վերաբերում է Հայաստանի տնտեսության **Համաշխարհային մրցունակության ինդեքսին**, ապա դրա 2009/2010 թ. գնահատականը նախորդ տարվա համեմատ մնացել է անփոփոխ, իսկ 2007/2008 թթ. գնահատականի համեմատ վատացել է՝ պայմանավորված «ապրանքային շուկայի արդյունավետություն» և «նորամուծություններ» ոլորտների գնահատականների կտրուկ վատացմամբ:

Հայաստանի տնտեսության ուժեղ և թույլ կողմերի ամփոփ ներկայացման արդյունքում նկատվեց միջազգային տարբեր կառույցների կողմից այս կամ այն գործոնի գնահատման ժամանակ դրսևորվող հակասականությունը: Այսպես, օրինակ, «Սեփականության իրավունքների պաշտպանվածություն» գործոնը Համաշխարհային բանկի Միջազգային զարգացման ընկերակցությունը և «Հերիթիջ» հիմնադրամը գնահատում են որպես Հայաստանի տնտեսության «թույլ կողմ», իսկ «Բերտելսման» հիմնադրամը համարում է «ուժեղ կողմ»: Նույնը վերաբերում է «Կապիտալ հոսքերի նկատմամբ վերահսկողություն» գործոնին, որը Համաշխարհային տնտեսական համաժողովը իր զեկույցներում դիտարկում է որպես Հայաստանի տնտեսության «թույլ կողմ», իսկ «Ֆրեյզեր» և «Կատո» ինստիտուտները՝ որպես տնտեսության «ուժեղ կողմ»: Այստեղ տարբեր գնահատականները արդյունք են տարբեր մեթոդաբանությունների: Այսպես, օրինակ՝ «Կապիտալ հոսքերի նկատմամբ վերահսկողության» գործոնը գնահատելիս «Ֆրեյզեր» և «Կատո» ինստիտուտները հիմք են ընդունել ԱՄՀ-ի «Արժութային կարգավորումների և արժութային սահմանափակումների մասին տարեկան հաշվետվությունը», իսկ Համաշխարհային տնտեսական համաժողովը իր գնահատականը ստացել է Հայաստանում գործող 78 ընկերությունների հարցումների, այսինքն՝ նրանց ընկալումների միջոցով: Այս դեպքում, թերևս կարևորվում են պետական կառավարման մարմինների քաղաքականությունների թափանցիկության ապահովման և հանրության տնտեսագիտական կրթության խորացման հարցերը:

Միջազգային կառույցների և օտարերկրյա կազմակերպությունների գնահատականների (ինդեքսների, վարկանիշերի) մեթոդաբանությունների և յուրաքանչյուր գնահատականի (ինդեքսի, վարկանիշի) կառուցվածքի ուսումնասիրությունը հնարավորություն տվեց առանձնացնելու այն կազմակերպությունները և դրանց կողմից հրապարակվող

ինդեքսները, որոնց անհրաժեշտ է առանձնահատուկ ուշադրություն դարձնել՝ Հայաստանի դիրքը համաշխարհային և տարածաշրջանային համապատկերում բարելավելու համար: Դա վերաբերում է Համաշխարհային տնտեսական համաժողովի «Համաշխարհային մրցունակություն» և Համաշխարհային բանկի «Գործարարությամբ զբաղվելու դյուրինություն» ինդեքսներին, որոնց գնահատականները ներառվում են «Հերիթիջ» հիմնադրամի «Տնտեսական ազատություն», «Ֆրեյզեր» և «Կատո» ինստիտուտների «Տնտեսական ազատությունն աշխարհում» և «Թրանսփերենսի ինտերնեյշնլի» «Կոռուպցիայի ընկալում» ինդեքսներում: Երկրի ռիսկի, հատկապես՝ սուվերեն ռիսկի գնահատականներից խիստ կարևորվում են «Ֆիթչ» և «Մուդիզ» միջազգային կազմակերպությունների վարկանիշերը, որոնք ներառվում են «Գլոբալ Ինսայթի» և «Եվրոմանի» ամսագրի կողմից հրապարակվող «Երկրի ռիսկի» վարկանիշերում: Անհրաժեշտության դեպքում, արտոնյալ ֆինանսական միջոցներ ներգրավելու տեսանկյունից կարևորվում են Համաշխարհային բանկի և Ասիական զարգացման բանկի գնահատականները, որոնք «Թրանսփերենսի ինտերնեյշնլի» «Կոռուպցիայի ընկալման» ինդեքսի տարրերն են և հաշվի են առնվում սուվերեն վարկանիշերի գնահատման ժամանակ: Հայաստանի սուվերեն վարկանիշերի գնահատման ժամանակ կարևորություն է տրվում նաև Եվրոբանկի կառուցվածքային և ինստիտուցիոնալ բարեփոխումների ինդեքսին:

Հայաստանի դիրքը համաշխարհային և տարածաշրջանային համապատկերում բարելավելու և Հայաստանում իրականացվող բարեփոխումների մասին տեղեկատվությունը այդ կառույցներին ժամանակին և ճշգրիտ բովանդակությամբ հասցնելու նպատակով կարևորվում է գնահատող միջազգային կառույցների հետ պետական կառավարման մարմինների շարունակական համագործակցությունը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՑԱՆԿ

1) **Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք**, ընդունված 1998 թ. մայիսի 5-ին, «Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ, Երևան, 1998 թ.:
2) **Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրք**, ընդունված 2004թ. նոյեմբերի 9-ին, «Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ, Երևան, 2004 թ.:
3) **«Հայաստանի տնտեսական ազատության ինդեքսը»**, ՀՀ ԿԲ բանբեր, 2004 թ. 2-րդ եռամսյակ, էջ 118-135:
4) **The link between Economic Opportunity & Prosperity: The 2010 Index of Economic Freedom/ Heritage Foundation,** Washington D.C., USA, January 2010
5) **World Development Indicators** (WDI) 2009 by World Bank, Washington D.C., USA, April 2009
6) **Worldwide Governance Indicators** (WGI) 1996-2008 by World Bank, Washington D.C., USA,June 2009
7) **International Financial Statistics Yearbook**, 2009, IMF, Statistics Dept., Washington D.C., USA, August, 2009
8) **Government Finance Statistics Yearbook**, 2008, IMF. Statistics Dept., Washington D.C., USA, March, 2009
9) **World Trade Profiles, 2006**, World Trade Organization and International Trade Centre UNCTAD/WTO, Geneva, Switzerland, 2007
10) **Annual Report on Exchange Arrangements and Exchange Restrictions 2007**, International Monetary Fund, Washington D.C., USA, 2007
11) **Rethinking Bank Regulation: Till Angels Govern** by James R. Barth, Gerard Caprio, and Ross Levine, Cambridge: Cambridge University Press; UK, 2006
12) **Bank Regulation and Supervision** by James R. Barth, Gerard Caprio, Jr., and Ross Levine, Cambridge: Cambridge University Press; UK, 2006
13) **Tax and legal Alert, Armenia,** Issue 04/2009, PricewaterhouseCoopers Armenia, Yerevan, Armenia, 29 July 2009
14) **The Financial Development of Japan, Korea, and Taiwan: Growth, Repression, and Liberalization** by H.T. Patrick and Y.C. Park, eds., New York, Oxford University Press, USA, 1994
15) **Building a Modern Financial System: The Indonesian Experience** by D.C. Cole and B.F. Slade, Cambridge: Cambridge University Press, UK, 1996
16) **The Military Balance 2006** by Christopher Langton, International Institute for Strategic Studies (IISS), Routledge: London, England, May, 2006
17) **Doing Business 2010: Reforming through Difficult Times,** World Bank/IFC, Washington D.C., USA, 2009
18) **The Global Enabling Trade Report** 2009, World Economic Forum, Geneva, Switzerland, 2009
19) **Annual Report on the 2008 Country Performance Assessment Exercise,** Asian Development Bank, Manila, Philippines, May 2009
20) **Bertelsmann Transformation Index 2010 / Manual for Country Assessments**, Bertelsmann Group for Policy Research, Munich, Germany, 2010

21) **Freedom in the World 2010 Survey Release**, Freedom House, Rowman & Littlefield Publishers Inc, Maryland, USA, 2010
22) **Nations in Transit 2009: Democratization from Central Europe to Eurasia**, Freedom House, Rowman & Littlefield Publishers Inc, Maryland, USA, Nov. 2009
23) **Nations in Transit 2004: Democratization in East Central Europe and Eurasia**, Freedom House, Rowman & Littlefield Publishers Inc, Maryland, USA, 2004
24) **International Credit Analysis, Armenia**, Fitch Ratings, Sovereigns, London, UK, 5 June, 2006
25) **Fitch Revises Armenia's Outlook to Positive**, Fitch Ratings, London, UK, 1 May, 2007.
26) **International Credit Analysis, Armenia,** Fitch Ratings, Sovereigns, London, UK, 1 May, 2007
27) **International Credit Analysis, Armenia**, Fitch Ratings, Sovereigns, London, UK, 7 July, 2008
28) **Credit Analysis, Armenia**, Fitch Ratings, Sovereigns, London, UK, 18 August, 2009
29) **A Guide to Moody's Sovereign Ratings**, **Rating Methodology**, London, UK, Dec. 2008
30) **Credit Opinion Armenia,** Moody's Investors Service, London, UK, December 2009
31) **A Word in Flux, Country Risk**, Euromoney, Volume 40, Number 485, Euromoney Institutional Investor Plc., London, UK, Sept. 2009
32) **IHS Global Insight Downgrades Armenia's Sovereign Rating As Foreign Currency Inflows Threatened** by Venla Sipila, World Markets Research Centre, Global Insight, Lexington, MA, USA, 24 March 2009
33) **HS Global Insight Revises Armenian Sovereign Outlook To Negative As Liquidity Pressures Keep Intensifying** by Venla Sipila, World Markets Research Centre, Global Insight, Lexington, MA, USA, 15 June 2009
34) **Country Risk Classification of the Participants to the Arrangement on Officially Supportes Export Credits 1999-2009,** OECD, Paris, France, 2009
35) **Transition Report 2009: Transition in Crisis?**, EBRD, London, UK, 2009
36) **The Global Competitiveness Report 2008-2009,** World Economic Forum, printed and bound in Geneva, Switzerland by SRO-Kundig, 2008
37) **The Global Competitiveness Report 2009-2010,** World Economic Forum, printed and bound in geneva, Switzerland by SRO-Kundig, 2009

Ինտերնետային կայքեր

1) http://www.govindicators.org/
2) http://www.heritage.org
3) http://www.heritage.org/index/excel/2010/Index2010_Data.xls
4) http://www.fraserinstitute.org/aboutus/whoweare/
5) http://www.cato.org/about.php
6) http://www.cato.org/pubs/efw/

7) http://www.freetheworld.com/2009/reports/world/EFW2009_app.pdf
8) http://www.freetheworld.com/2004/TradeSectorMethodology.pdf
9) http://www.armstat.am/file/article/sv_05_08a_112.pdf
10) http://www.armstat.am/file/article/sv_05_08a_22.pdf
11) http://www.armstat.am/file/article/sv_12_07a_15.pdf
12) http://www.armstat.am/file/article/sv_05_09a_112.pdf
13) http://www.armstat.am/file/article/sv_05_09a_22.pdf
14) http://www.armstat.am/file/article/sv_12_08a_15.pdf
15) http://www.pwc.com/en_AM/am/publications/assets/issue04-2009.pdf
16) http://www.prsgroup.com/ICRG.aspx
17) http://www.doingbusiness.org
18) http://www.doingbusiness.org/ExploreEconomies/?economyid=10
19) http://www.wri-irg.org/co/rtba/index.html
20) https://www.cia.gov/library/publications/the-world-factbook/fields/print_2024.html
21) http://www.transparency.org
22) http://transparency.org/policy_research/surveys_indices/cpi/2009/cpi_2009_table
23) http://transparency.org/content/download/47733/762810/CPI_2009_methodology_long_en.pdf
24) http://www.adb.org/Documents/Reports/Country-Performance-Assessment-Exercise/IN111-09.pdf
25) http://www.worldbank.org/wbi/governance/govdata/
26) http://siteresources.worldbank.org/IDA/Resources/73153-1181752621336/IRAI2008table1.xls
27) http://siteresources.worldbank.org/IDA/Resources/73153-1181752621336/IRAI2008table2.pdf
28) http://www.weforum.org/documents/gcr0809/index.html
29) http://www.weforum.org/documents/GCR09/index.html
30) http://www.weforum.org/pdf/getr09_dev/GETR09_Fullreport.pdf
31) http://www.bertelsmann-stiftung.de/cps/rde/xchg/SID-A647B41D-AE9BB376/bst_engl/hs.xsl/269.htm
32) http://www.bertelsmann-transformation-index.de/11.0.html?&L=1
33) http://bti2003.bertelsmann-transformation-index.de/33.0.html?&L=1,
34) http://bti2006.bertelsmann-transformation-index.de/fileadmin/pdf/BTI_2006_Scores.xls
35) http://www.bertelsmann-transformation-index.de/fileadmin/pdf/Anlagen_BTI_2008/Detailed_Results_BTI2008.xls
36) http://www.bertelsmann-transformation-index.de/fileadmin/pdf/Anlagen_BTI_2010/Detailed_Scores_BTI_2010.xls
37) http://www.freedomhouse.hu/images/nit2009/tables.pdf
38) http://www.freedomhouse.org/template.cfm?page=505
39) http://www.freedomhouse.org/uploads/fiw09/FIW09_OverviewEssay_Final.pdf
40) http://www.freedomhouse.hu/index.php?option=com_content&view=article&id=242:nations-in-transit-2009&catid=30&Itemid=92)

41) http://www.freedomhouse.hu/images/nit2009/armenia.pdf
42) http://www.fitchratings.com
43) http://www.fitchratings.com/creditdesk/public/ratings_defintions/index.cfm
44) http://www.moodys.com
45) http://www.moodys.com/moodys/cust/AboutMoodys/AboutMoodys.aspx?topic=intro&redir_url=/cust/AboutMoodys/staticRedirect.asp
46) http://www.euromoney.com/poll/10683/PollsAndAwards/Country-Risk.html
47) http://www.euromoney.com/Article/1000460/Article.html
48) http://www.euromoney.com/Article/1000449/Article.html
49) http://www.globalinsight.com
50) http://www.ihsglobalinsight.com/ProductsServices/ProductDetail1053.htm
51) http://www.gab-ibn.com/IMG/pdf/Ar11-_IHS_Global_Insight_Dow66ngrades_Armenia_s_Sovereign_Rating_As_Foreign_Currency_Inflows_Threatened.pdf
52) http://www.gab-ibn.com/IMG/pdf/Ar4-_IHS_Global_Insight_Revises_Armenian_Sovereign_Outlook_To_Negative_As_Liquidity_Pressures_Keep_Intensifying.pdf
53) http://www.oecd.org
54) http://www.oecd.org/dataoecd/47/29/3782900.pdf
55) http://www.oecd.org/dataoecd/9/12/35483246.pdf
56) http://www.merchantinternational.com
57) htttp/:www.merchantinternational.com/grey_area_dynamics.php
58) http://www.ebrd.org
59) http://www.ebrd.com/country/sector/econo/stats/cameth.pdf
60) http://www.ebrd.com/country/sector/econo/stats/tic.xls
61) http://www.ebrd.com/country/sector/econo/stats/tis.xls
62) http://hdrstats.undp.org/en/countries/country_fact_sheets/cty_fs_ARM.html
63) http://hdr.undp.org/en/media/HDR_2009_EN_Complete.pdf
64) http://www.ev.am:

Հավելվածներ և աղյուսակներ

«Հերիթիջ» հիմնադրամի «Տնտեսական ազատության 2010 թ. ինդեքսի» առանձին գործոնների գնահատման մեթոդաբանությունը

1. Գործարարության ազատությունը

Գործարարության ազատությունը տվյալ երկրում գործարարություն սկսելու, իրականացնելու և փակելու քանակական գնահատականն է, որն արտացոլում է գործարարության կարգավորման ընդհանուր բեռը և կարգավորման ոլորտում կառավարության արդյունավետությունը:[65]

Գործարարության ազատություն գործոնի գնահատականը բաղկացած է հավասար կշիռ ունեցող 10 ենթագործոններից, որոնք վերցվում են Համաշխարհային բանկի «Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը» հետազոտությունից: Այդ ենթագործոններն են՝

- գործարարություն սկսելը (գործընթացներ, քանակ),
- գործարարություն սկսելը (ժամանակ, օր),
- գործարարություն սկսելը (ծախք, տոկոս՝ մեկ շնչին բաժին ընկնող եկամտից),
- գործարարություն սկսելը (նվազագույն կապիտալը, տոկոս՝ մեկ շնչին բաժին ընկնող եկամտից),
- լիցենզիաներ (թույլտվություններ) ստանալը (գործընթացներ, քանակ),
- լիցենզիաներ (թույլտվություններ) ստանալը (ժամանակ, օր),
- լիցենզիաներ (թույլտվություններ) ստանալը (ծախք, տոկոս՝ մեկ շնչին բաժին ընկնող եկամտից),
- գործարարության փակումը (ժամանակ, օր),
- գործարարության փակումը (ծախք, տոկոս՝ մեկ շնչին բաժին ընկնող եկամտից),
- գործարարության փակումը (վերականգնման չափը, ամերիկյան ցենտ):

Այս ենթագործոններից յուրաքանչյուրի գնահատականը բերվում է 0-100 սանդղակի՝ հետևյալ բանաձևով.

---

[1] *Ըստ Համաշխարհային բանկի հրապարակած «Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը 2010» հետազոտության գնահատականների:*

$$\mathbf{FactorScore_i = 50 \times factor_{average} / factor_i},$$

որտեղ՝ $factor_{avarage}$-ը 183 երկրների միջին գնահատականն է, իսկ $factor_i$-ն՝ տվյալ երկրի գնահատականը՝ վերցված Համաշխարհային բանկի հետազոտությունից: Օրինակ, աշխարհում թույլտվությունների ձեռքբերման անհրաժեշտ գործընթացների միջին քանակը 18.1 է: Հայաստանում թույլտվությունների ձեռքբերման անհրաժեշտ գործընթացները 20-ն են, ինչը նշանակում է, որ այս ենթագործոնի առնչությամբ Հայաստանի և աշխարհի միջին գնահատականների գործակիցը կազմում է 0.91: Գործակիցը բազմապատկելով 50-ով՝ ստանում ենք այս ենթագործոնի գնահատականը՝ 45.3:

Նման ձևով գնահատվում են մյուս 9 ենթագործոնները, ապա հաշվարկվում է դրանց միջին գնահատականը: Արդյունքը երկրում գործարարության ազատության գնահատականն է:

2. Առևտրի ազատությունը

Առևտրի ազատությունը ապրանքների և ծառայությունների ներմուծման և արտահանման վրա ազդող մաքսային դրույքի և ոչ մաքսային խոչընդոտների բացակայության բաղադրյալ գնահատականն է[2]:

Առևտրի ազատությունը գործոնի գնահատականը բաղկացած է երկու ենթագործոններից՝

- առևտրի ծավալներով կշռված միջին մաքսային դրույքից,
- ոչ մաքսային խոչընդոտներից:

Ներմուծվող տարբեր ապրանքների և ծառայությունների համար սահմանվում են տարբեր մաքսային դրույքներ: Միջին կշռված մաքսային դրույքը քանակական ցուցանիշ է և գնահատվում է հետևյալ բանաձևով՝

$$\mathbf{Trade\ Freedom_i = (((Tariff_{max} - Tariff_i) / (Tariff_{max} - Tariff_{min})) * 100) - NTB_i},$$

*որտեղ որպես առավելագույն և նվազագույն մաքսային դրույքներ վերցվում են 50 և 0 տոկոսները, իսկ ոչ մաքսային խոչընդոտների (NTB) առկայության դեպքում 5, 10, 15 կամ 20 միավորով նվազեցվում է երկրի **առևտրի ազատության** գնահատականը:*

Ոչ մաքսային խոչընդոտների (NTB) առկայության դեպքում երկրի ***առևտրի ազատության*** գնահատականը նվազեցվում է՝

---

[2] *Ըստ Համաշխարհային բանկի հրապարակած «Համաշխարհային զարգացման ցուցանիշներ 2009» (World Development Indicators 2009) հետազոտության գնահատականների:*

- 20 միավորով, երբ երկրում ոչ մաքսային խոչընդոտները տարածվում են գրեթե բոլոր ապրանքների և ծառայությունների վրա և/կամ խոչընդոտում են միջազգային առևտրի ծավալների զգալի մասին,
- 15 միավորով, երբ երկրում ոչ մաքսային խոչընդոտները տարածվում են մեծ քանակությամբ ապրանքների և ծառայությունների վրա և/կամ խոչընդոտում են հնարավոր միջազգային առևտրի ծավալների մեծ մասին,
- 10 միավորով, երբ երկրում ոչ մաքսային խոչընդոտները պաշտպանում են որոշակի ապրանքների և ծառայությունների արտադրությունը և/կամ խոչընդոտում են միջազգային առևտրի որոշ մասին,
- 5 միավորով, երբ ոչ մաքսային խոչընդոտները տարածված չեն, պաշտպանում են շատ քիչ թվով ապրանքներ և ծառայություններ և/կամ միջազգային առևտրի վրա ունեն շատ սահմանափակ ազդեցություն,
- 0 միավորով, երբ երկրում չեն կիրառվում միջազգային առևտուրը սահմանափակող ոչ մաքսային խոչընդոտներ:

Որպես ոչ մաքսային խոչընդոտներ «Հերիթիջ» հիմնադրամը դիտարկում է՝

- ***Քանակական սահմանափակումներ*** **-** ներմուծման քվոտաները, արտահանման սահմանափակումները, արտահանման կամավոր խոչընդոտները, ներմուծման/արտահանման էմբարգոները և այլն:
- ***Գնային սահմանափակումներ*** **–** հակագնագցման տուրքերը, փոխհատուցող միջոցառումները, սահմանային հարկերի կարգավորումները և այլն:
- ***Կարգավորման ոլորտի սահմանափակումներ*** **-** լիցենզավորումը, վերջնական արտադրանքում ներքին կիսաֆաբրիկատների օգտագործման պահանջը, սանիտարական և ֆիտոսանիտարական չափորոշիչները, փաթեթավորման, պիտակավորման, առևտրային նշանի, գովազդման կարգավորումները և այլն:
- ***Ներդրումների սահմանափակումներ*** **-** արժութային և այլ ֆինանսական կարգավորումներն ու սահմանափակումները:
- ***Մաքսային խոչընդոտներ*** **–** նախապես ավանդադրման պահանջը, մաքսային արժեքի որոշման, մաքսային դասակարգման և մաքսազերծման գործընթացները:
- ***Կառավարության ուղղակի միջամտություն*** **–** լրահատկացումները և այլ բնույթի աջակցությունը, կառավարության ինդուստրիալ

քաղաքականությունը և տարածաշրջանային զարգացման միջոցառումները, կառավարության կողմից ֆինանսավորվող հետազոտություններն ու այլ տեխնոլոգիական քաղաքականությունները, ազգային հարկերը և սոցիալական ապահովագրությունը, մրցակցային, ներգաղթային և պետական գնումների քաղաքականությունները, պետական առևտուրը, պետական մենաշնորհները և բացառիկ ֆրանչայզները:

3. Հարկաբյուջետային ազատությունը

Հարկաբյուջետային ազատությունը չափում է գործարարության հարկային բեռը, որը ներառում է ինչպես ուղղակի հարկերի, այսինքն՝ եկամտահարկի և շահութահարկի բեռի, այնպես էլ ՀՆԱ-ում հարկային եկամուտների տեսակարար կշռի ցուցանիշը[3]: ***Հարկաբյուջետային ազատություն*** գործոնը բաղկացած է երեք հավասար կշիռ ունեցող քանակական ենթագործոններից՝

- եկամտահարկի առավելագույն դրույքաչափից,
- շահութահարկի առավելագույն դրույքաչափից,
- ՀՆԱ-ում հարկային եկամուտների տեսակարար կշռից:

Հարկաբյուջետային ազատություն գործոնի ցուցանիշները բերվում են 0-100 սանդղակի հետևյալ բանաձևով՝

$$\textbf{Fiscal Freedom}_{ij} = 100 - \alpha x\ (\textbf{Factor}_{ij})^2$$

որտեղ $Factor_{ij}$ -ն երկրի ցուցանիշն է այս կամ այն ենթագործոնի գծով, իսկ α գործակիցը կազմում է 0.03:

Օրինակ, Հայաստանի ***«Տնտեսական ազատության 2010 թ. ինդեքսի»*** գնահատման համար վերցվել են եկամտահարկի և շահութահարկի 20% դրույքաչափերը, համաձայն որոնց՝ դրանցից յուրաքանչյուրի գնահատականը ստացվում է 88: 2009 թ. հարկային եկամուտները կազմել են ՀՆԱ-ի 16.5%-ը, ինչի շնորհիվ այս ենթագործոնի գնահատականը կազմել է 91.8, իսկ երեք ենթագործոնների միջինը, այսինքն՝ ***Հարկաբյուջետային ազատություն*** գործոնի գնահատականը Հայաստանի համար կազմել է 89.3:

---

[3] Ըստ Արժույթի միջազգային հիմնադրամի 2009 թ. հաշվետվությունների (IMF Staff Country Report, "Selected Issues and Statistical Appendix," and Staff Country Report, "Article IV Consultation," 2009) և տվյալ երկրի կառավարության պաշտոնական հրապարակումների:

4. Կառավարության չափը (ծախսերը)

Այս գործոնը դիտարկում է կառավարության ծախսերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում: **Կառավարության ծախսերը**՝ ներառյալ սպառումն ու տրանսֆերտները, հաշվի են առնվում ընդհանուր գնահատականով[4]:

Կառավարության ծախսերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում բերվում է 0-100 սանդղակի՝ հետևյալ բանաձևով.

$$GE_i = 100 - \alpha \times (Expenditures_i)^2$$

որտեղ $Expenditures_i$ -ն տվյալ երկրի կառավարության ծախսերի տեսակարար կշիռն է ՀՆԱ-ում, իսկ α գործակիցը կազմում է 0.03:

Սովորաբար կառավարության ծախսերում ներառում են ինչպես պետական, այնպես էլ տեղական ինքնակառավարման մարմինների ծախսերը, սակայն երբ կառավարության համախմբված ծախսերի մասին տվյալները բացակայում են, վերցնում են կենտրոնական կառավարության ծախսերը:

Հայաստանի Կառավարության ծախսերը ՀՆԱ-ում 2009 թ. կազմել են 17.4%, համաձայն որի **Կառավարության չափը** գործոնի գնահատականը կազմել է 90.9:

5. Դրամավարկային ազատությունը

Այս գործոնի գնահատականը միավորում է երկրում գների կայունության կարգավորման մակարդակների գնահատականները[5]: Ելնելով դրանից՝ **Դրամավարկային ազատություն** գործոնը հիմնվում է հետևյալ երկու ենթագործոնների վրա՝

- վերջին երեք տարիների գնաճի միջին ցուցանիշների (հունվար-դեկտեմբերը նախորդ տարվա հունվար-դեկտեմբերի համեմատությամբ) կշռված միջինը,
- գների կարգավորման մակարդակը:

---

[4] Ըստ Արժույթի միջազգային հիմնադրամի 2009 թ. հաշվետվությունների (IMF Staff Country Report, "Selected Issues and Statistical Appendix," and Staff Country Report, "Article IV Consultation," 2009) և տվյալ երկրի կառավարության պաշտոնական հրապարակումների են:

[5] Ըստ Արժույթի միջազգային հիմնադրամի Միջազգային ֆինանսական վիճակագրության (IMF, International Financial Statistics Online), «Համաշխարհային տնտեսության հեռանկարներ. ճգնաժամ և վերականգնում» 2009 թ. ապրիլի հաշվետվության (IMF, World Economic Outlook Crisis and Recovery April 2009), ինչպես նաև տվյալ երկրի կառավարության պաշտոնական հրապարակումների:

Այն հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\textbf{Weighted Avg. Inflation}_i = \theta_1 \text{ x } \textbf{Inflation}_{it} + \theta_2 \text{ x } \textbf{Inflation}_{it-1} + \theta_3 \text{ x } \textbf{Inflation}_{it-2}$$

$$\textbf{Monetary Freedom}_i = 100 - \alpha \sqrt{\textbf{ x Weighted Avg. Inflation}_i} - \textbf{PC penalty}_i$$

որտեղ՝ θ_1, θ_2 և θ_3 գործակիցները մշակում են «Հերիթիջ» հիմնադրամի փորձագետները, որոնցով կշռվում են վերջին երեք տարիների գնաճի միջին ցուցանիշները (վերջին տարվա կշիռը կազմում է 0.665, երկրորդ տարվանը՝ 0.245, առաջինինը՝ 0.090 (կշիռների գումարային արժեքը կազմում է 1)):

$PC\ penalty_i$-ն տվյալ երկրում գների կարգավորման մակարդակի գնահատականն է, որը ստանում է 0-20 արժեք:

α-ն փոխարկման գործակիցն է, որը հավասար է 6.333:

Վերոնշյալ մեթոդաբանությամբ հաշվարկվել են Հայաստանի ***Դրամավարկային ազատության*** առաջին ենթագործոնի 2009 և 2010 թթ. գնահատականները: Ընդ որում, 2009 թ. միջին կշռված գնաճի գնահատականը հաշվարկելու համար հիմք են ընդունվել 2005-2007 թթ. իսկ 2010 թ. համար՝ 2006-2008 թթ. գնաճի միջին ցուցանիշները:

Հայաստանի համար գների կարգավորման մակարդակը (PC penalty), ըստ «Հերիթիջի» փորձագետների, գնահատվել է 10 միավոր: Վերջինս գնահատելիս նրանք հաշվի են առել այն հանգամանքը, որ Կառավարության տրամադրած լրահատկացումներն ու գնային կարգավորումները իրենց ազդեցությունն են ունեցել տնտեսության այնպիսի ոլորտների գնագոյացման վրա, ինչպիսիք են՝ հանրային տրանսպորտը, էլեկտրաէներգիայի ու գազի մատակարարումը:

2009 թ. համար Հայաստանի ***Դրամավարկային ազատություն*** գործոնի հաշվարկը կատարվել է հետևյալ կերպ.

Միջին կշռված գնաճը = 0.665 * 4.4 + 0.245 * 2.9 + 0.090 * 0.6 = 3.7

Դրամավարկային ազատություն գործոնը = 100 – 6.333 * (3.7^(1/2)) – 10 = 77.8:

2010 թ. համար Հայաստանի ***Դրամավարկային ազատություն*** գործոնի հաշվարկը կատարվել է հետևյալ կերպ.

Միջին կշռված գնաճը = 0.665 * 9.0 + 0.245 * 4.4 + 0.090 * 2.9 = 7.3

Դրամավարկային ազատություն գործոնը = 100 – 6.333 * (7.3^(1/2)) – 10 = 72.9:

6. Ներդրումների ազատությունը

Տնտեսապես ազատ երկրում չպետք է լինեն ներդրումային կապիտալի սահմանափակումներ: Իրականում շատ երկրներում են կիրառվում ներդրումների հետ կապված սահմանափակումներ: Որոշ երկրներ ունեն օտարերկրյա և ներքին ներդրումների կանոններ, որոշ երկրներ սահմանափակում են արտարժույթի օգտագործումը, դրանց մի մասը կիրառում է վճարումների, տրանսֆերտների և կապիտալի գործարքների սահմանափակումներ, կամ տնտեսության առանձին ճյուղեր փակ են օտարերկրյա ներդրումների համար և այլն: Ավելին, աշխատուժի շուկայի կարգավորումները, կոռուպցիան, բյուրոկրատական քաշքշուկները, թույլ ենթակառույցները և քաղաքական ու անվտանգության պայմանները նույնպես կարող են ազդել ներդրողների ազատության վրա:

Այս գործոնը գնահատում է ներդրումների հետ կապված տարբեր բնույթի սահմանափակումները[6], որոնցից՝ ստորև ներկայացված տեսակների դիմաց նշված միավորների չափով, նվազեցվում է ներդրումների ազատության կատարյալ ռեժիմ ունեցող երկրի 100 միավոր գնահատականը:

Օտարերկրյա ներդրումների նկատմամբ ազգային ռեժիմի կիրառում

Օտարերկրյա ներդրումների նկատմամբ նվազ նպաստավոր ռեժիմի կիրառում	25 միավորով նվազեցում
Օտարերկրյա ներդրումների նկատմամբ մասամբ նվազ նպաստավոր ռեժիմի կիրառում	15 միավորով նվազեցում
Օտարերկրյա ներդրումների նկատմամբ աննշան նվազ նպաստավոր ռեժիմի կիրառում	5 միավորով նվազեցում

Օտարերկրյա ներդրումների հետ կապված օրենսդրություն

Չկա թափանցիկություն, և կան լուրջ բյուրոկրատական քաշքշուկներ	20 միավորով նվազեցում
Քաղաքականության իրագործումը անարդյունավետ է և առկա է բյուրոկրատիա	10 միավորով նվազեցում
Ներդրումների հետ կապված որոշ օրենքներ և դեպքեր թափանցիկ չեն կամ իրականացվում են անարդյունավետ	5 միավորով նվազեցում

[6] Կապիտալի հոսքերի և ուղղակի ներդրումների մասին տվյալների աղբյուրը տվյալ երկրի կառավարության պաշտոնական հրապարակումներն են, ԱՄՆ առևտրի ներկայացուցչության գրասենյակի «Ազգային առևտրի գնահատման հաշվետվությունը արտաքին առևտրի խոչընդոտների մասին» (Office of the U.S. Trade Representative, 2009 National Trade Estimate Report on Foreign Trade Barriers) և այլն:

Հողի սեփականության սահմանափակումներ

Անշարժ գույքի ցանկացած առքը սահմանափակված է	15 միավորով նվազեցում
Անշարժ գույքի առքը օտարերկրացու կողմից արգելված է	10 միավորով նվազեցում
Անշարժ գույքի առքի գծով կան որոշ սահմանափակումներ	5 միավորով նվազեցում

Տնտեսության ճյուղերում ներդրումների սահմանափակումներ

Սահմանափակումներ բազմաթիվ ճյուղերում	15 միավորով նվազեցում
Սահմանափակումներ մի շարք ճյուղերում	10 միավորով նվազեցում
Սահմանափակումներ մեկ կամ երկու ճյուղերում	5 միավորով նվազեցում

Ներդրումների բռնագրավում առանց արդարացի փոխհատուցման

Տարածված է առանց դրամական միջոցների վերադարձի պահանջ ներկայացնելու իրավունքի	15 միավորով նվազեցում
Տարածված է դրամական միջոցների վերադարձի պահանջ ներկայացնելու որոշ իրավունքով	10 միավորով նվազեցում
Տարածված չէ, սակայն դեպքեր լինում են	5 միավորով նվազեցում

Արժութային սահմանափակումներ

Արտարժույթը մատչելի չէ ոչ օտարերկրացիների, ոչ էլ տեղացիների համար	15 միավորով նվազեցում
Արտարժույթը մատչելի է, սակայն գործում են լուրջ խոչընդոտներ	10 միավորով նվազեցում
Արտարժույթը մատչելի է, սակայն գործում են մի քանի սահմանափակումներ	5 միավորով նվազեցում

Կապիտալի հաշվի գործարքների հետ կապված սահմանափակումներ

Շահույթի՝ տնտեսավարող սուբյեկտի գրանցման երկիր վերադարձ չի թույլատրվում, բոլոր գործարքների իրականացման համար պահանջվում է կառավարության հավանությունը	15 միավորով նվազեցում
Կապիտալի ներհոսքի և արտահոսքի համար պահանջվում է պետական կառավարման մարմինների հավանություն, և այդ ոլորտում գործում են սահմանափակումներ	10 միավորով նվազեցում
Ոչ առևտրային բնույթի դրամական փոխանցումների մեծ մասը իրականացվում է որոշակի սահմանափակումներով	5 միավորով նվազեցում

Գնահատականը մինչև 20 միավորով կարող է նվազեցվել անվտանգության հիմնախնդիրների առկայության, տարրական ներդրումային ենթակառույցների բացակայության կամ ներդրումային գործընթացի վրա անուղղակիորեն ազդող և այդ գործընթացը բարդացնող քաղաքականությունների համար:

7. Ֆինանսական ազատությունը

Ֆինանսական ազատությունը բանկային համակարգի անվտանգության, ինչպես նաև կառավարության հսկողությունից նրա անկախության գնահատականն է[7]: Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում կառավարության բաժնեմասնակցությունը նվազեցնում է մրցակցությունը և, հիմնականում, պակասեցնում է մատչելի ծառայությունների մակարդակը:

Այս գործոնը գնահատելիս հաշվի են առնում կառավարության կողմից ֆինանսական հատվածի կարգավորումների, բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում պետության միջամտության չափը, տեղացիների և օտարերկրացիների կողմից ֆինանսական ծառայություններ մատուցող ընկերություններ բացելու և այդ ծառայությունները մատուցելու դժվարությունը, վարկերի տեղաբաշխման գործում կառավարության ազդեցությունը: Այս ենթագործոնների վերլուծության միջոցով հնարավոր է նկարագրել երկրում ֆինանսական միջավայրը և այն գնահատել 0-100 սանդղակով՝ հետևյալ չափանիշներին համապատասխան.

100 - <u>Կառավարության ազդեցությունն աննշան է:</u> Անկախ կենտրոնական բանկի կողմից ֆինանսական հաստատությունների վերահսկումն ու կարգավորումը նպատակ ունի ապահովելու նրանց կողմից պայմանագրային պարտավորությունների կատարումը և խարդախությունների կանխումը: Վարկային միջոցները բաշխվում են շուկայական մեխանիզմներով: Կառավարությունը բաժնեմասնակցություն չունի ֆինանսական հաստատություններում: Ֆինանսական հաստատությունները կարող են մատուցել բոլոր տեսակի ֆինանսական ծառայություններ: Բանկերը մրցակցային պայմաններում ազատորեն թողարկում են արժեթղթեր, տրամադրում են վարկեր, ընդունում են ավանդներ և իրա-

---

[7] Ըստ Արժույթի միջազգային հիմնադրամի 2009 թ. հաշվետվությունների (IMF Staff Country Report, "Selected Issues and Statistical Appendix," and Staff Country Report, "Article IV Consultation," 2009), կառավարության պաշտոնական հրապարակումների և Համաշխարհային բանկի հրապարակած «Համաշխարհային զարգացման ցուցանիշներ 2009» (World Development Indicators 2009) հետազոտության գնահատականների:

կանացնում արտարժութային գործառնություններ: Օտարերկրյա ֆինանսական հաստատությունները գործում են ազատ և նույն կանոնակարգման դաշտում, ինչ որ տեղական հաստատությունները:

90 – <u>Կառավարության ազդեցությունը նվազագույն է:</u> Նույնը, ինչ որ նախորդ մասում՝ հետևյալ բացառություններով. անկախ կենտրոնական բանկի կողմից ֆինանսական հաստատությունների վերահսկողությունն ու կարգավորումը նվազագույնի է հասցված, սակայն ընդգրկում է ավելի լայն շրջանակ, քան նրանց կողմից պայմանագրային պարտավորությունների կատարումը և խարդախությունների կանխումը:

80 - <u>Կառավարության ազդեցությունը փոքր է:</u> Նույնը, ինչ որ նախորդ մասում՝ հետևյալ բացառություններով. անկախ կենտրոնական բանկի կողմից ֆինանսական հաստատությունների վերահսկողությունն ու կարգավորումը պարզ է և թափանցիկ, սակայն ընդգրկում է ավելի լայն շրջանակ, քան նրանց կողմից պայմանագրային պարտավորությունների կատարումը և խարդախությունների կանխումը: Ֆինանսական հաստատությունների ընդհանուր ակտիվներում կառավարության մասնաբաժինը փոքր է: Ֆինանսական հաստատությունների կողմից ծառայությունների մատուցումն իրականացվում է գրեթե առանց սահմանափակումների:

70 - <u>Կառավարության ազդեցությունը սահմանափակ է:</u> Նույնը, ինչ որ նախորդ մասում՝ հետևյալ բացառություններով. վարկերի տեղաբաշխման ժամանակ աննշան զգացվում է կառավարության ազդեցությունը, և վարկերի մասնավոր տեղաբաշխման առնչությամբ սահմանափակումներ գրեթե չկան: Օտարերկրյա ֆինանսական հաստատությունների համար գործում են մի քանի սահմանափակումներ:

60 - <u>Կառավարության ազդեցությունը զգալի է:</u> Նույնը, ինչ որ նախորդ մասում՝ հետևյալ բացառություններով. կենտրոնական բանկը լիովին անկախ չէ, և նրա կողմից ֆինանսական հաստատությունների վերահսկողությունն ու կարգավորումը ինչ-որ չափով ճնշող է, իսկ ֆինանսական հաստատությունների պայմանագրային պարտավորությունների կատարումը հարկադրելու և խարդախությունները կանխելու կենտրոնական բանկի ունակությունը անբավարար է: Կառավարությունն ակտիվ փայամասնակցություն և հսկողություն ունի ֆինանսական հաստատություններում, և ֆինանսական համակարգի ընդհանուր ակտիվների զգալի մասը պատկանում է կառավարությանը: Ֆինանսական ծառայությունների մատուցման հետ կապված կան որոշ սահմանափակումներ:

50 - <u>Կառավարության ազդեցությունն էական է:</u> Նույնը, ինչ որ նախորդ մասում՝ հետևյալ բացառություններով. վարկերի տեղաբաշխման ժամանակ կառավարությունն ունենում է զգալի ազդեցություն, և զգալիորեն խոչընդոտվում է վարկերի մասնավոր տեղաբաշխումը: Ֆինանսական ծառայությունների մատուցման հետ կապված կան զգալի սահմանափակումներ: Օտարերկրյա ֆինանսական հաստատությունների համար գործում են որոշ սահմանափակումներ:

40 - <u>Կառավարության ազդեցությունը մեծ է:</u> Նույնը, ինչ որ նախորդ մասում՝ հետևյալ բացառություններով. կենտրոնական բանկի գործունեությունը ենթարկվում է կառավարության ազդեցությանը, կենտրոնական բանկի կողմից ֆինանսական հաստատությունների վերահսկողությունն ու կարգավորումը մեծ լարում ու աշխատանք է պահանջում, և ֆինանսական հաստատությունների պայմանագրային պարտավորությունների կատարումը հարկադրելու և խարդախությունը կանխելու կենտրոնական բանկի ունակությունը թույլ է: Կառավարությունն ակտիվ փայամասնակցություն և հսկողություն ունի ֆինանսական հաստատություններում, և ֆինանսական համակարգի ընդհանուր ակտիվների մեծ մասը պատկանում է կառավարությանը:

30 - <u>Կառավարության ազդեցությունը շատ մեծ է:</u> Նույնը, ինչ որ նախորդ մասում՝ հետևյալ բացառություններով. վարկերի տեղաբաշխման ժամանակ կառավարությունն ունենում է մեծ ազդեցություն: Կառավարությունը տնօրինում և վերահսկում է ֆինանսական հաստատությունների մեծ մասը կամ գերիշխող դիրք ունի: Ֆինանսական հաստատությունների գործունեությունը ենթարկվում է լուրջ սահմանափակումների, և բանկերի ստեղծումը հանդիպում է լուրջ խոչընդոտների: Օտարերկրյա ֆինանսական հաստատությունների համար գործում են զգալի սահմանափակումներ:

20 - <u>Կառավարության ազդեցությունը դժվարությամբ է հաղթահարվում</u>: Նույնը, ինչ որ նախորդ մասում՝ հետևյալ բացառություններով. կենտրոնական բանկն անկախ չէ, և ֆինանսական հաստատությունների վերահսկողությունն ու կարգավորումը ճնշող է: Օտարերկրյա ֆինանսական հաստատությունների գործունեությունը չի խրախուսվում կամ մեծապես խոչընդոտվում է:

10 - <u>Գրեթե ճնշող:</u> Նույնը, ինչ որ նախորդ մասում՝ հետևյալ բացառություններով. վարկերի տեղաբաշխումը վերահսկվում է կառավարության կողմից: Բանկերի ստեղծումը սահմանափակված է: Օտարերկրյա ֆինանսական հաստատությունների գործունեությունն արգելվում է:

0 - <u>Ճնշող:</u> Նույնը, ինչ որ նախորդ մասում՝ հետևյալ բացառություններով. վերահսկողությունը և կարգավորումն ուղղված են մասնավոր ֆինանսական հաստատությունների գործունեության խոչընդոտմանը: Մասնավոր ֆինանսական հաստատությունների գործունեությունն արգելված է:

8. Սեփականության իրավունքի ազատությունը

Սեփականության իրավունքի գործոնը գնահատում է պետության կողմից դե յուրե և դե ֆակտո հստակորեն պաշտպանվող մասնավոր սեփականություն ձեռք բերելու անհատների ունակությունը: Այս գործոնը չափում է երկրի օրենքներով մասնավոր սեփականության պաշտպանվածության և կառավարության կողմից այդ օրենքների պարտադիր կատարումն ապահովելու աստիճանը: Այս գործոնը գնահատում է նաև մասնավոր սեփականության բռնագրավման հավանականությունը և վերլուծում դատական համակարգի անկախությունը, արդարադատության համակարգում կոռուպցիայի առկայությունը, ինչպես նաև անհատների ու գործարարների կողմից պայմանագրերի կիրարկումը պարտադրելու ունակությունը: Որքան հստակ է սեփականության օրենքով պաշտպանվածությունը, և ցածր է սեփականության բռնագրավման հնարավորությունը, այնքան բարձր է տվյալ երկրի գնահատականը[8]:

Յուրաքանչյուր երկրում ***<u>սեփականության իրավունքի ազատությունը</u>*** գնահատվում է համաձայն հետևյալ չափանիշների.

100 - Մասնավոր սեփականությունը երաշխավորված է կառավարության կողմից: Դատական համակարգը հարկադրում է պայմանագրերի կատարումը արդյունավետորեն և արագ: Արդարադատության համակարգը պատժում է նրանց, ովքեր անօրինաբար բռնագանձել են մասնավոր սեփականությունը: Չկան կոռուպցիայի կամ բռնագրավման դեպքեր:

90 - Մասնավոր սեփականությունը երաշխավորված է կառավարության կողմից: Դատական համակարգը հարկադրում է պայմանագրերի արդյունավետորեն կատարումը: Արդարադատության համակարգը պատժում է նրանց, ովքեր անօրինաբար բռնագանձել են մասնավոր

---

[8] Ըստ Մասնավոր սեփականության ալիանսի (Property Rights Alliance) կողմից գնահատված 2009 թ. Մասնավոր սեփականության պաշտպանվածության միջազգային ինդեքսի (տե՛ս www.internationalpropertyrightsindex.org):

սեփականությունը: Կոռուպցիայի դեպքեր գրեթե չեն եղել, և բռնագրավումը մեծապես անհավանական է:

80 - Մասնավոր սեփականությունը երաշխավորված է կառավարության կողմից: Դատական համակարգը հարկադրում է պայմանագրերի արդյունավետորեն կատարումը, սակայն որոշ ուշացումով: Կոռուպցիան նվազագույն մակարդակի է, և բռնագրավումը մեծապես անհավանական է:

70 - Մասնավոր սեփականությունը երաշխավորված է կառավարության կողմից: Դատական համակարգն ուշացնում և դանդաղեցնում է պայմանագրերի կատարման հարկադրումը: Կոռուպցիան հնարավոր է, սակայն հազվադեպ, և բռնագրավումն անհավանական է:

60 - Մասնավոր սեփականության իրավունքի կիրարկումը դանդաղում է և իրականացվում է ուշացումով: Կոռուպցիան հավանական է, սակայն հազվադեպ: Արդարադատությունը կարող է ենթարկվել կառավարության այլ ճյուղերի ազդեցությանը: Բռնագրավումն անհավանական է:

50 - Դատական համակարգն անարդյունավետ է և գործում է ուշացումներով: Հնարավոր է կոռուպցիայի առկայություն: Արդարադատությունը կարող է ենթարկվել կառավարության այլ ճյուղերի ազդեցությանը: Բռնագրավումը հավանական է, բայց հազվադեպ:

40 - Դատական համակարգը խիստ անարդյունավետ է և գործում է այնպիսի երկար ձգձգումներով, որ դա խանգարում է դատական համակարգի կիրառումը: Կոռուպցիան առկա է: Արդարադատությունը ենթարկվում է կառավարության այլ ճյուղերի ազդեցությանը: Բռնագրավումը հավանական է:

30 - Մասնավոր սեփականությունը թույլ է պաշտպանված: Դատական համակարգը խիստ անարդյունավետ է: Կոռուպցիան տարածված է: Արդարադատությունը մեծապես ենթարկվում է կառավարության այլ ճյուղերի ազդեցությանը: Բռնագրավումը հավանական է:

20 - Մասնավոր սեփականությունը թույլ է պաշտպանված: Դատական համակարգն այնքան անարդյունավետ է և կոռումպացված, որ արտադատարանական լուծումներն ու արբիտրաժը տարածված բնույթ են կրում: Սեփականության իրավունքը դժվարությամբ է պաշտպանվում: Դատական համակարգում կոռուպցիան, ինչպես նաև բռնագրավման դեպքերը տարածված են:

10 - Մասնավոր սեփականությունը հազվադեպ է պաշտպանվում, և գրեթե ողջ սեփականությունը պատկանում է պետությանը: Երկիրն այնպիսի քաոսի մեջ է (օրինակ, շարունակական պատերազմի պատ-

ճառով), որ գրեթե անհնար է պաշտպանել սեփականության իրավունքը: Դատական համակարգը այնքան կոռումպացված է, որ մասնավոր սեփականությունն արդյունավետորեն չի պաշտպանվում: Բռնագրավման դեպքերը տարածված են:

0 - Մասնավոր սեփականությունը հայտարարված է օրենքից դուրս, և ամբողջ սեփականությունը պատկանում է պետությանը: Մարդիկ դատական հայց ներկայացնելու և դատարանին դիմելու իրավունք չունեն: Կոռուպցիան արմատավորված է:

9. Կոռուպցիայից ազատությունը

Կոռուպցիան քայքայում է տնտեսական ազատությունը՝ տնտեսական հարաբերություններում մտցնելով անպաշտպանվածություն և անորոշություն: Այս գործոնի գնահատականը հիմնականում բխում է Թրանսփերենսի ինտերնեյշնլի ***«Կոռուպցիայի ընկալման ինդեքս 2008»***-ից, որը գնահատել է կոռուպցիայի մակարդակը աշխարհի 179 երկրներում[9]:

Քանի որ Թրանսփերենսի ինտերնեյշնլի ***«Կոռուպցիայի ընկալման ինդեքսի»*** գնահատման համակարգը 0-10 միավոր է, 0-100 սանդղակի բերելու և իրենց հետազոտությունում օգտագործելու համար «Հերիթիջի» փորձագետները դա բազմապատկում են 10-ով: Հայաստանում ***«Կոռուպցիայի ընկալման ինդեքսը»*** Թրանսփերենսի ինտերնեյշնլի կողմից գնահատվել է 2.9 (ըստ 0-10 գնահատման միջակայքի), իսկ «Հերիթիջ» հիմնադրամի ***«Տնտեսական ազատության ինդեքսում» կոռուպցիայից ազատություն*** գործոնը գնահատվել է 29 (ըստ 0-100 գնահատման միջակայքի): Որքան երկրում բարձր է կոռուպցիայի մակարդակը, այնքան ցածր է ընդհանուր տնտեսական ազատությունը և «Հերիթիջ» հիմնադրամի կողմից տրված երկրի գնահատականը:

10. Աշխատանքի ազատությունը

Այս գործոնը երկրի աշխատուժի շուկայի օրենսդրական և կարգավորման դաշտի տարբեր ասպեկտների քանակական գնահատականն է: Ներառում է հավասար կշիռ ունեցող 6 քանակական ենթագործոններ, որոնք են՝

---

[9] *Տե՛ս www.transparency.org:*

- նվազագույն աշխատավարձի հարաբերությունը մեկ աշխատողի հաշվով միջին ավելացված արժեքին,
- լրացուցիչ աշխատողներ վարձելու դժվարությունը,
- աշխատանքի ժամային կոշտությունը,
- «ավելորդ» աշխատողներին ազատելու դժվարությունը,
- աշխատանքից ազատելու մասին օրենսդրորեն պահանջվող ծանուցման ժամկետը,
- աշխատանքային պայմանագիրը խզելու դեպքում աշխատողին վճարվելիք անհրաժեշտ գումարը:

Այս ենթագործոնների գնահատման համար հիմք են ընդունվել Համաշխարհային բանկի ***«Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը - 2010»*** հետազոտության տվյալները[10]: **Աշխատանքի ազատություն** գործոնի գնահատականը ստանալու համար 6 ենթագործոններն առանձին-առանձին փոխարկում են 0-100 սանդղակի՝ հետևյալ բանաձևով.

$$\mathbf{FactorScore_i = 50 \times factor_{average} / factor_i},$$

*որտեղ այդ ենթագործոնի հետ կապված աշխարհի 183 երկրների գնահատականների միջինը բաժանվում է տվյալ երկրի գնահատականի վրա, ապա բազմապատկվում 50-ով: Այնուհետև ստացված 6 ենթագործոնների գնահատականների միջինի հիման վրա ստացվում է տվյալ երկրի **աշխատանքի ազատություն** ենթագործոնի գնահատականը:*

[10] *Տե՛ս www.doingbusiness.org:*

Ֆրեյզեր և Կատո ինստիտուտների հրապարակած «Տնտեսական ազատությունն աշխարհում 2009 թ. ինդեքսի» առանձին ենթագործոնների գնահատման մեթոդաբանությունը

1. Կառավարության չափը. ծախսերը, հարկումը և ձեռներեցությունը

Երկրի կառավարության չափը որոշվում է չորս ենթագործոններով, որոնք են՝

1.1. ***Կառավարության սպառման ծախսերը համախառն սպառման մեջ*** - Այս ենթագործոնի գնահատականը (ենթաինդեքսը) որոշվում է հետևյալ բանաձևով՝ (Vmax-Vi)/(Vmax-Vmin)*10, որտեղ Vi-ն տվյալ երկրի կառավարության փաստացի սպառման տեսակարար կշիռն է համախառն սպառման մեջ[1]: Vmax-ը և Vmin-ը սահմանված են համապատասխանաբար 40% և 6%, որոնք 1990 բազիսային տարվա այս ենթագործոնի առավելագույն և նվազագույն արժեքներն են: Այն երկրները, որոնց կառավարության սպառումը համախառն սպառման մեջ բարձր է, այսինքն՝ մոտ է 40%-ին, ստանում են ցածր՝ 0-ին մոտ գնահատական: Այն երկրները, որոնց կառավարության սպառումն համախառն սպառման մեջ ցածր է, այսինքն՝ մոտ է 6%-ին, ստանում են բարձր՝ 10-ին մոտ գնահատական:

1.2. ***Տրանսֆերտներն ու լրահատկացումները ՀՆԱ-ում*** - Այս ենթաինդեքսը նույնպես որոշվում է (Vmax-Vi)/(Vmax-Vmin)*10 բանաձևով, որտեղ Vi-ն տվյալ երկրի ՀՆԱ-ում կառավարության տրանսֆերտների և լրահատկացումների փաստացի գործակիցն է[2]: Vmax-ը և Vmin-ը 1990 բազիսային տարվա այս ենթագործոնի առավելագույն և նվազագույն արժեքներն են, որոնք կազմել են համապատասխանաբար 37.2% և 0.5%: Եթե որևէ երկրի կառավարության տրանսֆերտների և լրահատկացում-

---

[1] *Ըստ Համաշխարհային բանկի հրապարակած ցուցանիշների (World Development Indicators) և ԱՄՀ կողմից հրապարակվող Միջազգային ֆինանսական վիճակագրության (IFS):*

[2] *Ըստ Համաշխարհային բանկի հրապարակած ցուցանիշների (World Development Indicators), ԱՄՀ կողմից հրապարակվող Միջազգային ֆինանսական վիճակագրության (IFS) և Միջամերիկյան զարգացման բանկի «Economic and Social Progress in Latin America, 1994» հրապարակման:*

ների տեսակարար կշիռը մոտ է 1990 բազիսային տարում ամենամեծ տեսակարար կշիռ ունեցող երկրի գործակցին, ապա գնահատվող երկրի ենթաինդեքսը լինում է 0-ին մոտ:

1.3. ***Պետական ձեռնարկությունների և պետական ներդրումների տեսակարար կշիռն ընդհանուր ներդրումների մեջ*** - Այս ենթաինդեքսը կառուցվել է պետական մասնակցությամբ ձեռնարկությունների թվաքանակի, կառուցվածքի և թողարկվող արտադրանքի մասին տեղեկատվության և համախառն ներդրումներում պետական ներդրումների տեսակարար կշռի տվյալների հիման վրա՝ ըստ ստորև բերված աղյուսակի[3]:

Գնահատական	Չափանիշներ
10	Երկրում կան քիչ թվով պետական ձեռնարկություններ: Պետական ներդրումները չեն գերազանցում ընդհանուր ներդրումների 15%-ը:
8	Երկրում կան քիչ թվով պետական ձեռնարկություններ: Այդ ձեռնարկությունները գործում են մասշտաբից հատույց ունեցող այնպիսի ճյուղերում (օրինակ, էներգիայի արտադրության), որոնք կարող են նվազեցնել մրցակցության արդյունավետությունը: Պետական ներդրումները կազմում են ընդհանուր ներդրումների 15-20%-ը:
7	Երկրում կան քիչ թվով պետական ձեռնարկություններ, որոնք գործում են միայն տնտեսության մի քանի ճյուղերում, օրինակ, էներգետիկայի և նմանատիպ ճյուղերում: Պետական ներդրումները կազմում են ընդհանուր ներդրումների 20-25%-ը:
6	Երկրում կան պետական ձեռնարկություններ, որոնք գործում են էներգետիկայի, տրանսպորտի և հաղորդակցության ճյուղերում: Պետական ներդրումները կազմում են ընդհանուր ներդրումների 25-30%-ը:
4	Երկրում կան զգալի թվով պետական ձեռնարկություններ, որոնք գործում են տնտեսության շատ ճյուղերում՝ ներառյալ մշակող արդյունաբերության մեջ: Պետական ներդրումները կազմում են ընդհանուր ներդրումների 30-40%-ը:
2	Երկրում կան բազմաթիվ պետական ձեռնարկություններ, որոնք գործում են տնտեսության շատ ճյուղերում՝ ներառյալ մանրածախ առևտրում: Պետական ներդրումները կազմում են ընդհանուր ներդրումների 40-50%-ը:
0	Երկրում գերակշռում են պետական ձեռնարկությունները: Պետական ներդրումները գերազանցում են ընդհանուր ներդրումների 50%-ը:

[3] Ըստ ԱՄՀ կողմից հրապարակվող «Կառավարության ֆինանսների վիճակագրություն» (GFS) տարեգրքի և Միջազգային ֆինանսական վիճակագրության (IFS), Համաշխարհային բանկի հրապարակած ցուցանիշների (World Development Indicators), Կառավարման զարգացման միջազգային ինստիտուտի կողմից թողարկվող «Համաշխարհային մրցունակության 2007 թ. տարեգրքի» և Միջամերիկյան զարգացման բանկի «Economic and Social Progress in Latin America, 1994» հրապարակման:

1.4. ***Եկամտահարկի առավելագույն սահմանային դրույքաչափը և հարկման վերին սահմանը*** - Այս ենթաինդեքսը հաշվարկելու համար գնահատում են ինչպես եկամտահարկի ամենաբարձր սահմանային դրույքաչափը և հարկման վերին սահմանը, այնպես էլ եկամտահարկի և սոցապահովագրության վճարների ամենաբարձր սահմանային դրույքաչափերի գումարը[4]: Այն երկրները, որտեղ հարկման ենթակա եկամտի վերին սահմանն ավելի ցածր է և հարկում են ավելի բարձր դրույքով, ստանում են ցածր գնահատական՝ ըստ ներքոնշյալ մատրիցի: Եկամտի հարկման վերին սահմանին վերաբերող ազգային արժույթով արտահայտված տվյալները ազգային արժույթից փոխարկվել են ԱՄՆ դոլարի՝ օգտագործելով 1982-1984 թթ. ժամանակահատվածի սկզբի դրությամբ փոխարժեքներն ու ԱՄՆ սպառողական գների ինդեքսը:

Առավելագույն սահմանային հարկավորման դրույքաչափը (%)	**Եկամտահարկի հարկման վերին սահմանը (1982-1984 թթ., ԱՄՆ դոլար)**			
	< 25000 ԱՄՆ դոլարից	25000-50000 ԱՄՆ դոլար	50000-150000 ԱՄՆ դոլար	> 150000 ԱՄՆ դոլարից
< 20	10	10	10	10
21-25	9	9	10	10
26-30	8	8	9	9
31-35	7	7	8	9
36-40	5	6	7	8
41-45	4	5	6	7
46-50	3	4	5	5
51-55	2	3	4	4
56-60	1	2	3	3
61-65	0	1	2	2
66-70	0	0	1	1
> 70	0	0	0	0

2. Իրավական կառուցվածքը և սեփականության իրավունքի պաշտպանվածությունը

Երկրի իրավական կառուցվածքը և սեփականության իրավունքի պաշտպանվածությունը որոշվում են յոթ ենթագործոններով, որոնք են՝

[4] *Ըստ «Pricewaterhouse Coopers, Individual Taxes: A Worldwide Summary» հրապարակման: <http://www.pwc.com/extweb/pwcpublications.nsf/docid/9B2B76032544964C8525717E00606CBD>:*

2.1. ***Արդարադատության (դատական համակարգի) անկախությունը,*** այսինքն՝ արդարադատությունն անկախ է և կառավարության կամ այլ կողմերի վեճերին միջամտելու առարկա չէ: Այս ենթաինդեքսի գնահատականը վերցվել է Համաշխարհային տնտեսական համաժողովի «Համաշխարհային մրցունակության 2008-2009 թթ. հաշվետվությունից»[5]: Այս ցուցանիշը Համաշխարհային տնտեսական համաժողովը ստացել է անկախ հարցումների միջոցով: Հարցվողները պատասխանել են հետևյալ հարցին՝ «Արդյո՞ք արդարադատությունն անկախ է կառավարության անդամների, քաղաքացիների կամ ընկերությունների քաղաքական ազդեցություններից»:

Համաշխարհային տնտեսական համաժողովի «Համաշխարհային մրցունակություն» հաշվետվությունում երկրները գնահատելիս կիրառվում է 1-7 գնահատման համակարգ, ընդ որում, 7-ը ամենամրցունակ երկրի գնահատականն է: Հետևաբար, «Համաշխարհային մրցունակություն» հաշվետվությունից վերցրած բոլոր փոփոխականները իրենց սկզբնական 1-7 գնահատման համակարգից փոխարկվել են 0-10 գնահատման համակարգի՝ օգտագործելով հետևյալ բանաձևը. EFWI = ((GCRI - 1)/6) * 10, որտեղ GCRi-ն՝ «Համաշխարհային մրցունակություն» հաշվետվությունում տրված ինդեքսն է:

2.2. ***Անաչառ դատարանները*** - Այս ենթագործոնի գնահատականը նույնպես վերցվել է Համաշխարհային տնտեսական համաժողովի «Համաշխարհային մրցունակություն 2008-2009» հաշվետվությունից[6], որը ստացվել է անկախ հարցումների միջոցով: Հարցվողները պատասխանել են հետևյալ հարցին՝ «Արդյո՞ք Ձեր երկրում մասնավոր գործարարների համար գործում է վստահելի օրենսդրական համակարգ, որի միջոցով նրանք կարող են վիճարկել կառավարության գործողությունների կամ որոշումների իրավունակությունը»:

2.3. ***Մասնավոր սեփականության պաշտպանվածության աստիճանը*** - Այս ենթագործոնի գնահատականը վերցվել է Համաշխարհային տնտեսական համաժողովի «Համաշխարհային մրցունակության 2008 - 2009 թթ. հաշվետվությունից»[7], որը ստացվել է անկախ հարցումների արդյունքում: Հարցվողները պատասխանել են հետևյալ հարցին՝ «Արդյո՞ք Ձեր երկրում

---

[5] *Աղբյուրը՝ http://www.weforum.org /en/initiatives/gcp/index.htm, կետ 1.05, էջ 368:*
[6] *Աղբյուրը՝ http://www.weforum.org /en/initiatives/gcp/index.htm, կետ 1.09, էջ 372:*
[7] *Աղբյուրը՝ http://www.weforum.org /en/initiatives/gcp/index.htm, կետ 1.01, էջ 364:*

մասնավոր սեփականությունը, այդ թվում նաև ֆինանսական ակտիվները, հստակեցված և լավ պաշտպանված են»:

2.4. ***Զինվորական միջամտությունն օրենքի ուժերին և քաղաքական գործընթացներին*** - Այս ենթաինդեքսի համար հիմք է ծառայել «Քաղաքական ռիսկի գործոն խմբի» կողմից «Երկրի ռիսկի միջազգային ուղեցույց» հրապարակման մեջ տրված «Զինված ուժերը քաղաքականության մեջ» ենթաինդեքսը[8]:

2.5. ***Իրավական համակարգի ամբողջականությունը*** - Այս ենթաինդեքսի համար հիմք է ծառայել «Քաղաքական ռիսկի գործոն խմբի» կողմից «Երկրի ռիսկի միջազգային ուղեցույց» հրապարակման մեջ տրված «Օրենք և կարգուկանոն» ենթաինդեքսը: Ենթաինդեքսը բաղկացած է երկու տարրերից, որոնցից մեկը գնահատում է երկրում օրենսդրական համակարգի ամրությունն ու անաչառությունը, իսկ երկրորդը՝ օրենքի դրույթների համատարած կիրարկման, այսինքն՝ երկրում տիրող կարգուկանոնի վիճակը:

2.6. ***Պայմանագրերի հարկադիր կատարումը*** - Այս ենթաինդեքսի համար հիմք են ծառայել Համաշխարհային բանկի «Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը-2009» հետազոտության գնահատականները՝ պահանջների հետ կապված առևտրային վեճերի լուծման վրա ծախսվող ժամանակի և ծախսի վերաբերյալ[9]: Հաշվարկման ժամանակ ենթադրվում է, որ պահանջը (պարտքը) կազմում է 1 շնչին բաժին ընկնող տարեկան եկամտի 200%-ը, և հայցվորը գործել է պայմանագրի դրույթներին համապատասխան, հետևաբար դատարանը որոշում է կայացրել նրա օգտին: Կառուցվում են գնահատականներ 0-10 միջակայքում՝ ա) կապված ժամանակի ծախսի հետ, որի հաշվարկման համար հիմք է ընդունվում տվյալ դատական գործը գրանցելուց մինչև պահանջի մարումն ընկած օրացուցային օրերի թիվը, բ) կապված մինչև պահանջի մարումը կատարված ծախսի հետ, որը հաշվարկվում է որպես տոկոս պահանջի (պարտքի) մեծությունից: Այս երկու գնահատականների միջինացման արդյունքում ստացվում է ենթագործոնի գնահատա-

---

[8] Տե՛ս Political Risk Component G (Military in Politics), International Country Risk Guide, http://www.prsgroup.com/ICRG.aspx և Համաշխարհային բանկի թողարկած Կառավարման ցուցանիշները (Governance Indicators), http://www.worldbank.org/wbi/governance/govdata/:

[9] Տե՛ս www.doingbusiness.org ինտերնետային կայքը:

կանը, որի հիման վրա 0-10 միջակայքում ենթաինդեքս ստանալու համար կիրառվում է հետևյալ բանաձևը՝ (Vmax-Vi)/(Vmax-Vmin)*10, որտեղ Vi-ն ժամանակային կամ գումարային ծախքի արժեքն է տվյալ երկրում: Vmax-ը սահմանված է 725 օր և 82.3% (1.5 ստանդարտ շեղում միջինից բարձր), իսկ Vmin-ը՝ համապատասխանաբար 62 օր (1.5 ստանդարտ շեղում միջինից ցածր) և 0%:

2.7. ***Անշարժ գույքի վաճառքի հետ կապված կանոնակարգիչ սահմանափակումներ*** - Այս ենթաինդեքսի համար հիմք են հանդիսացել Համաշխարհային բանկի «Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը - 2009» հետազոտության գնահատականները՝ սեփականության գրանցման վրա ծախսվող օրերի և ծախսի վերաբերյալ[10]: Կառուցվում են 0-10 գնահատականներ՝ ա) կապված ժամանակի ծախսի հետ, որի հաշվարկման համար հիմք է ընդունվում սեփականության գրանցման համար անհրաժեշտ օրացուցային օրերի թիվը, բ) սեփականության գրանցման համար կատարված ծախսը, որը հաշվարկվում է որպես տոկոս սեփականության արժեքից: Այս երկու գնահատականների միջինացման արդյունքում ստացվում է ենթագործոնի գնահատականը, որի հիման վրա 0-10 միջակայքում ենթաինդեքս ստանալու համար կիրառվում է հետևյալ բանաձևը՝ (Vmax-Vi)/(Vmax-Vmin)*10, որտեղ Vi-ն ժամանակային կամ գումարային ծախքի արժեքն է տվյալ երկրում: Vmax-ը սահմանված է 265 օր և 15% (1.5 ստանդարտ շեղում միջինից բարձր), իսկ Vmin-ը՝ համապատասխանաբար 0 օր և 0%:

3. «Առողջ փողի» մատչելիությունը

Երկրում «առողջ փողի» մատչելիությունը որոշվում է չորս ենթագործոններով, որոնք են՝

3.1. ***Փողի առաջարկի աճը*** - Այս ենթագործոնը գնահատվում է M1 («նեղ փողի» զանգված) ագրեգատով: Գնահատականը հաշվարկվում է (Vmax-Vi)/(Vmax-Vmin)*10 բանաձևով, որտեղ Vi-ն վերջին 5 տարիներին փողի առաջարկի միջին տարեկան աճի և վերջին 10 տարիներին իրական ՀՆԱ աճի տարբերությունն է: Vmin-ի և Vmax-ի արժեքները վերցված են համապատասխա-

[10] *Տե՛ս www.doingbusiness.org ինտերնետային կայքը:*

նաբար 0% և 50%: Հետևաբար, եթե վերջին 5 տարիներին (2003-2007 թթ.) փողի առաջարկի ճշգրտված աճի տեմպը կազմել է 0%, դա նշանակում է, որ փողի աճը հավասար է իրական ՀՆԱ երկարաժամկետ աճին, և երկիրը ստանում է 10 գնահատական: Իսկ եթե փողի առաջարկի ճշգրտված աճի տեմպը կազմել է 50% և ավելի, ապա երկիրը ստանում է 0-ին մոտ գնահատական[11]:

3.2. ***Գնաճի տատանողականությունը*** - Այս ենթագործոնի գնահատման համար որպես գնաճի չափ հիմնականում օգտագործվում է ՀՆԱ դեֆլյատորը, սակայն եթե դեֆլյատորների ցուցանիշները բացակայում են, օգտագործվում են սպառողական գների ինդեքսները (ՍԳԻ): Հաշվարկն իրականացվում է (Vmax-Vi)/(Vmax-Vmin)*10 բանաձևով, որտեղ Vi-ն վերջին 5 տարիներին (2003-2007 թթ.) տարեկան գնաճի ստանդարտ շեղումն է: Vmin-ի և Vmax-ի արժեքները վերցված են համապատասխանաբար 0% և 25%: Հաշվարկման այս եղանակով բարձր գնահատական է տրվում այն երկրին, որն ունի տարեկան գնաճի ամենացածր տատանողականությունը: Ամենաբարձր 10 գնահատական տրվում է այն երկրին, որտեղ վերջին 5 տարիներին գնաճի տեմպը տատանողականություն չի ունեցել:

3.3. ***Վերջին տարվա գնաճը*** – Այս ենթագործոնի գնահատման համար որպես գնաճի չափ հիմնականում օգտագործվում է ՀՆԱ դեֆլյատորը, սակայն եթե դեֆլյատորների ցուցանիշները բացակայում են, օգտագործում են ՍԳԻ-ները: Հաշվարկն իրականացվում է (Vmax-Vi)/(Vmax-Vmin)*10 բանաձևով, որտեղ Vi-ն վերջին տարվա, այս դեպքում 2007 թ. տարեկան գնաճն է[11]: Vmin-ի և Vmax-ի արժեքները վերցված են համապատասխանաբար 0% և 50%: Ամենաբարձր 10 գնահատական տրվում է այն երկրին, որտեղ հասել են գների կատարյալ կայունության:

3.4. ***Տվյալ երկրում և արտասահմանում արտարժույթով բանկային հաշիվներ ունենալու ազատությունը*** - Երբ արտարժույթով բանկային հաշիվները թույլատրվում են առանց ներքին և օտարերկրյա սահմանափակումների, երկրին տրվում է 10 գնահատական, իսկ երբ այդ հաշիվները մատչելի չեն՝ տրվում է 0 գնահատական: Եթե թույլատրվում է արտարժույթով բան-

---

[11] Ըստ Համաշխարհային բանկի հրապարակած ցուցանիշների (World Development Indicators) և ԱՄՀ կողմից հրապարակվող Միջազգային ֆինանսական վիճակագրության (IFS):

կային հաշիվներ ունենալ երկրում գործող բանկերում, բայց ոչ արտերկրում (կամ հակառակը), երկրին տրվում է 5 գնահատական[13]:

4. Միջազգային առևտրի ազատությունը

Երկրում միջազգային առևտրի ազատությունը որոշվում է հինգ ենթագործոններով, որոնք են՝

4.1. ***Միջազգային առևտրի հարկումը***, այդ թվում՝

4.1.1. ***Միջազգային առևտրի հարկումից ստացվող եկամուտների տեսակարար կշիռն արտահանման և ներմուծման ընդհանուր ծավալներում*** **-** Այս ենթաինդեքսի հաշվարկն իրականացվում է (Vmax-Vi)/(Vmax-Vmin)*10 բանաձևով, որտեղ Vi-ն միջազգային առևտրի հարկումից տվյալ երկրի՝ 2007 թ. ստացած եկամուտների տեսակարար կշիռն է արտահանման և ներմուծման ընդհանուր ծավալներում[14]: Vmin-ի և Vmax-ի արժեքները վերցված են համապատասխանաբար 0% և 15%, քանի որ դիտարկումները ցույց են տվել, որ, բացառությամբ երկու - երեք ծայրահեղ դեպքերի, արտաքին առևտրի հարկումից եկամուտները կազմում են երկրների արտաքին առևտրի 0-15%-ը: Ամենաբարձր 10 գնահատական տրվում է այն երկրին, որտեղ չկան առանձին հարկեր արտաքին առևտրի վրա:

4.1.2. ***Միջին մաքսային դրույքը*** - Այս ենթաինդեքսի հաշվարկը նույնպես իրականացվում է (Vmax-Vi)/(Vmax-Vmin)*10 բանաձևով, որտեղ Vi-ն երկրի միջին մաքսային դրույքն է 2007 թ.[15]: Vmin-ի և Vmax-ի արժեքները վերցված են համապատասխանաբար 0% և 50%, քանի որ դիտարկումները ցույց են տվել, որ, բացառությամբ երկու-երեք ծայրահեղ դեպքերի, ուսումնասիրված երկրների միջին մաքսային դրույքները տատանվում են 0-50% միջակայքում: Ամենաբարձր 10 գնահատական տրվում է այն երկրին, որտեղ չեն կիրառվում մաքսային դրույքներ:

---

[13] Աղբյուրը՝ ԱՄՀ կողմից հրապարակվող «Արժութային կարգավորումների և արժութային սահմանափակումների մասին» 2007 թ. տարեկան հաշվետվություն» (AREAER):

[14] Ըստ ԱՄՀ կողմից հրապարակվող Կառավարության ֆինանսների վիճակագրության (GFS) տարեգրքի և Միջազգային ֆինանսական վիճակագրության (IFS):

[15] Ըստ Առևտրի համաշխարհային կազմակերպության՝ 2006 թ. հրապարակած «Համաշխարհային մաքսային դրույքների մասին» նյութի:

4.1.3. ***Մաքսային դրույքների փոփոխականությունը*** – Մեկ միասնական մաքսային դրույքի համեմատ բազմաբնույթ մաքսային դրույքները առևտրի, հետևաբար նաև տնտեսական ազատության վրա ունենում են սահմանափակող ազդեցություն: Հետևաբար, այն երկրներին, որոնց մաքսային դրույքների փոփոխականությունը մեծ է, տրվում է ցածր գնահատական: Հաշվարկը կրկին իրականացվում է (Vmax-Vi)/(Vmax-Vmin)*10 բանաձևով, որտեղ Vi-ն երկրի մաքսային դրույքների ստանդարտ շեղումն է[16]: Vmin-ի և Vmax-ի արժեքները վերցված են համապատասխանաբար 0% և 25%, քանի որ դիտարկումները ցույց են տվել, որ, բացառությամբ փոքր թվով ծայրահեղ դեպքերի, ուսումնասիրված երկրների մաքսային դրույքները տատանվում են 0-25% միջակայքում: Ամենաբարձր 10 գնահատական տրվում է այն երկրին, որտեղ կիրառվում են միասնական (uniform) մաքսային դրույքներ:

4.2. ***Առևտրի կարգավորիչ սահմանափակումները,*** այդ թվում՝

4.2.1. ***Առևտրի ոչ մաքսային արգելքները*** - Այս ենթաինդեքսի գնահատականը վերցվել է Համաշխարհային տնտեսական համաժողովի «Համաշխարհային մրցունակության 2008-2009 թթ. հաշվետվությունից»: Ցուցանիշը Համաշխարհային տնտեսական համաժողովը ստացել է անկախ հարցման արդյունքում՝ «Արդյո՞ք Ձեր երկրում մաքսային և ոչ մաքսային խոչընդոտներն էապես կրճատում են ներմուծվող ապրանքների մրցունակությունը տեղական շուկայում»[17]: Համաշխարհային տնտեսական համաժողովի ***«Համաշխարհային մրցունակություն»*** հաշվետվության ինդեքսների փոխարկման մասին տե՛ս այս հավելվածի 2.1 կետում:

4.2.2. ***Ներմուծման և արտահանման իրականացման ծախսը*** - Այս ենթաինդեքսի գնահատման համար հիմք է հանդիսացել Համաշխարհային բանկի «Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը - 2009» հետազոտությունը,

---

[16] Ըստ Առևտրի համաշխարհային կազմակերպության՝ 2006 թ. հրապարակած «Համաշխարհային մաքսային դրույքների մասին» նյութի:

[17] Ըստ «Համաշխարհային մրցունակության 2008-2009 թթ. հաշվետվության» տվյալների (Համաշխարհային տնտեսական համաժողով, Ներվի, 2009 թ., կետ 6.09, էջ 430):

որից վերցվել են ցուցանիշներ այն մասին, թե որքան ժամանակ են ծախսում ներմուծողներն ու արտահանողները չոր ապրանքի (պայթունավտանգ կամ ռազմական տարրեր չպարունակող) 20 ֆուտանոց (ոտնաչափ) կոնտեյների մաքսազերծման համար անհրաժեշտ փաստաթղթերն ու ստորագրությունները ստանալու վրա[18]: Այն երկրներին, որտեղ արտահանման ու ներմուծման գործընթացը երկար է, տրվել է ցածր գնահատական: Հաշվարկն իրականացվել է (Vmax-Vi)/(Vmax-Vmin)*10 բանաձևով, որտեղ Vi-ն օրերի քանակն է, որը պահանջվում է ներմուծելու կամ արտահանելու համար: Vmax-ի արժեքներն արտահանման և ներմուծման համար կազմում են համապատասխանաբար 62 և 80 օր (որպես առավելագույն արժեք վերցվել է երկրների համապատասխան ցուցանիշների շարքի միջինից 1.5 ստանդարտ շեղում բարձր ցուցանիշը): Vmin-ի արժեքները արտահանման և ներմուծման համար կազմում են 2 և 0 օր:

4.3. ***Առևտրի հատվածի փաստացի չափը կանխատեսելի չափի համեմատ*** – Յուրաքանչյուր երկրի առևտրի հատվածի կանխատեսելի չափը որոշվում է առևտրի բացվածության ցուցանիշի ռեգրեսիոն վերլուծության միջոցով՝ որպես փոփոխականներ օգտագործելով բնակչության թիվը, երկրի աշխարհագրական չափերը և հեռավորությունը ամենաբարձր ՀՆԱ ունեցող տարածաշրջանից[19]: Այնուհետև այդ երկրի առևտրի հատվածի փաստացի չափը (երկրի բացվածությունը, այսինքն՝ արտահանման և ներմուծման ծավալների հանրագումարը ՀՆԱ-ում) համեմատվում է կանխատեսելի չափի հետ: Եթե երկրի առևտրի փաստացի չափն ավելի մեծ է, քան կանխատեսելին, թիվը դրական է, իսկ եթե փաստացի չափը փոքր է կանխատեսված չափից, թիվը բացասական է: Բացասական թվի տոկոսային փոփոխությունը ճշգրտվում է այնպես, որ այն դառնա սիմետրիկ դրական թվերի տոկոսային փոփոխությանը: Հաշվարկն իրականացվում է (Vmax-Vi)/(Vmax-Vmin)*10 բանաձևով, որտեղ Vi-ն երկրի առևտրի հատվածի փաստացի չափն է: Vmin-ի և Vmax-ի արժեքները վերցված են համապատաս-

[18] *Տե՛ս http://www.doingbusiness.org ինտերնետային կայքը:*

[19] *Ըստ Համաշխարհային բանկի հրապարակած ցուցանիշների (World Development Indicators) և ԱՄՀ կողմից հրապարակվող Միջազգային ֆինանսական վիճակագրության (IFS):*

խանաբար միևուս 50% և 100% (միևուս 50%-ը սիմետրիկ է դրական 100%-ին): Հաշվարկման այս մեխանիզմով ամենաբարձր 10 գնահատական տրվում է այն երկրին, որն ունի ավելի լայն առևտրի հատված, քան կանխատեսված էր՝ ելնելով այդ երկրի բնակչության թվից, աշխարհագրական չափերից և տեղից[20]:

4.4. ***Պաշտոնական փոխարժեքը «սև շուկայի» փոխարժեքի համեմատ*** - Ենթաինդեքսի հաշվարկն իրականացվում է (Vmax-Vi)/(Vmax-Vmin)*10 բանաձևով, որտեղ Vi-ն երկրի «սև շուկայի» փոխարժեքի պրեմիումն է, որը ցույց է տալիս, թե որքանով է «սև շուկայի» փոխարժեքը գերազանցում պաշտոնական փոխարժեքը[21]: Vmin-ի և Vmax-ի արժեքները վերցված են համապատասխանաբար 0% և 50%: Հաշվարկման այս մեխանիզմով ամենաբարձր 10 գնահատական տրվում է այն երկրին, որում «սև շուկայի» փոխարժեք գոյություն չունի, այսինքն՝ ներքին արժութային շուկայում ազգային արժույթը լրիվ փոխարկելի է՝ առանց սահմանափակումների: Եթե գործում են արժութային սահմանափակումներ, առկա է «սև շուկա», և եթե այդ շուկայի փոխարժեքի պրեմիումն աճում է մինչև 50%, երկրի գնահատականը կարող է իջնել մինչև 0:

4.5. ***Միջազգային կապիտալի շուկայի սահմանափակումները,*** այդ թվում՝

4.5.1. ***Օտարերկրյա բաժնեմասերի/ներդրումների սահմանափակումը*** - Այս ենթաինդեքսի գնահատականը վերցվել է Համաշխարհային տնտեսական համաժողովի «Համաշխարհային մրցունակության 2008-2009 թթ. հաշվետվությունից»: Ցուցանիշը Համաշխարհային տնտեսական համաժողովը ստացել է հետևյալ հարցման արդյունքում՝ «Արդյո՞ք Ձեր երկրում օտարերկրյա ընկերությունների տնօրինումը հազվադեպ է, սահմանափակված է փոքրամասնության բաժնեմասով և հաճախ արգելված է առանցքային ճյուղերում, թե՞ գերակշռում է ու խրախուսվում»[22]: Համաշխարհային տնտեսական համաժո-

---

[20] *Գնահատման մանրամասները տե՛ս http://www.freetheworld.com/2004/TradeSectorMethodology.pdf ինտերնետային կայքում:*

[21] *Ըստ Համաշխարհային բանկի հրապարակած ցուցանիշների (World Development Indicators) և ԱՄՀ կողմից հրապարակվող Միջազգային ֆինանսական վիճակագրության (IFS):*

[22] *Ըստ «Համաշխարհային մրցունակության 2008-2009 թթ. հաշվետվության» տվյալների (Համաշխարհային տնտեսական համաժողով, Ժնև, 2009 թ., կետ 6.11, էջ 432):*

ղովի «Համաշխարհային մրցունակություն» հաշվետվության ինդեքսների փոխարկման մասին տե՛ս այս հավելվածի 2.1 կետում:

4.5.2. ***Երկրի վճարային հաշվեկշռի կապիտալ հաշվի գործարքները իրականացնելու՝ երկրի քաղաքացիների ազատության սահմանափակումը*** - Այս ենթաինդեքսի գնահատականը հիմնված է ԱՄՀ-ի «Արժութային կարգավորումների և արժութային սահմանափակումների մասին տարեկան հաշվետվությունում» նշված 13 տեսակի կապիտալ հաշվի գործարքների կարգավորումների վրա[23]: Հաշվարկն իրականացվում է (Vmax-Vi)/(Vmax-Vmin)*10 բանաձևով, որտեղ Vi-ն երկրում կիրառվող կապիտալ հաշվի գործարքների սահմանափակումների թիվն է: Vmin-ի և Vmax-ի արժեքները վերցված են համապատասխանաբար 0 և 13: Հաշվարկման այս մեխանիզմով ամենաբարձր 10 գնահատական տրվում է այն երկրին, որում չի կիրառվում կապիտալի վերահսկողության որևէ տեսակ:

5. Վարկային շուկայի, աշխատուժի շուկայի և գործարարության կարգավորումը

Երկրում վարկային շուկայի, աշխատուժի շուկայի և գործարարության կարգավորման մակարդակը գնահատվում է երեք ենթագործոններով, որոնք են՝

5.1. ***Վարկային շուկայի կարգավորումը,*** այդ թվում՝

5.1.1. ***Բանկերի մասնավոր սեփականությունը, այսինքն՝ մասնավոր բանկերի կողմից ներգրավված ավանդների տեսակարար կշիռը բանկային համակարգի ընդհանուր ավանդներում*** [24] **-** Այս ենթաինդեքսի համար կառուցվել

---

[23] *Ըստ ԱՄՀ «Արժութային կարգավորումների և արժութային սահմանափակումների մասին» 2007 թ. տարեկան հաշվետվության:*

[24] *Ըստ James R. Barth, Gerard Caprio, and Ross Levine, Rethinking Bank Regulation: Till Angels Govern (2006). «Եվրոմանի» ամսագրի հրապարակումների՝ The Telrate Bank Register (տարբեր հրապարակումներ). Համաշխարհային բանկի Adjustment in Africa: Reforms, Results, and the Road Ahead (1994). Price Waterhouse, Doing Business In … հրապարակումների սերիայի. H.T. Patrick and Y.C. Park, eds., The Financial Develop-*

են գնահատման միջակայքեր: Երբ մասնավոր բանկերի կողմից ներգրավված ավանդները կազմում են ընդհանուր բանկային համակարգի ավանդների 95-100%-ը, այդ երկրին տրվում է 10 գնահատական: Երբ մասնավոր բանկերի կողմից ներգրավված ավանդները կազմում են ընդհանուր բանկային համակարգի ավանդների 75-95%-ը, երկրին տրվում է 8 գնահատական: Իսկ երբ մասնավոր բանկերի կողմից ներգրավված ավանդները կազմում են ընդհանուր բանկային համակարգի ավանդների 40-75%-ը, երկրին տրվում է 5 գնահատական: Երբ մասնավոր բանկերի կողմից ներգրավված ավանդները կազմում են ընդհանուր բանկային համակարգի ավանդների 10-40%-ը, երկրին տրվում է 2 գնահատական: 0 գնահատական է սահմանվում այն երկրների համար, որոնց մասնավոր բանկերի կողմից ներգրավված ավանդների տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ կազմում է 10% և ցածր:

5.1.2. ***Տեղական բանկերի մրցակցությունը օտարերկրյա բանկերի հետ*** - Եթե երկիրը հավանություն է տվել օտարերկրյա բանկերի ստեղծման խնդրանքով բոլոր դիմումներին կամ դրանց մեծ մասին, և եթե օտարերկրյա բանկերը բանկային համակարգի ընդհանուր ակտիվներում ունեն մեծ մասնաբաժին, ապա այդ երկրին շնորհվում է բարձր գնահատական՝ համաձայն աղյուսակի.[25]

	Օտարերկրյա բանկերի լիցենզիաների մերժում/դիմում հարաբերակցությունը			
Ընդհանուր բանկային ակտիվներում օտարերկրյա բանկերի ակտիվների տեսակարար կշիռը		0%	0%-49%	50%-100%
	80%-100%	10	8	5
	40%-79%	9	7	4
	0%-39%	8	6	3

ment of Japan, Korea, and Taiwan: Growth, Repression, and Liberalization (1994). D.C. Cole and B.F. Slade, Building a Modern Financial System: The Indonesian Experience (1996). information supplied by member institutes of the Economic Freedom Network.

[25] Ըստ James R. Barth, Gerard Caprio, Jr., and Ross Levine, Bank Regulation and Supervision (տարբեր հրապարակումներ), <http://go.worldbank.org/SNUSW978P0>; James R. Barth, Gerard Caprio, and Ross Levine, Rethinking Bank Regulation: Till Angels Govern (2006):

5.1.3. ***Մասնավոր հատվածին տրամադրվող վարկերը*** - Այս գործոնի բարձր արժեքները տնտեսական ազատության բարձր մակարդակի վկայությունն են: Ենթահնդեքսը հաշվարկվել է (Vmax-Vi)/(Vmax-Vmin)*10 բանաձևով, որտեղ Vi-ն երկրի մասնավոր հատվածում տեղաբաշխված տեղական վարկերի տեսակարար կշիռն է վարկերի ընդհանուր ծավալում[26]: Vmax-ը՝ ցուցանիշի առավելագույն, իսկ Vmin-ը նվազագույն արժեքներն են 1990 բազիսային տարում: Vmin-ի և Vmax-ի արժեքները վերցված են համապատասխանաբար 10% և 99.9%: Հաշվարկման այս մեխանիզմով ամենաբարձր 10 գնահատական տրվում է այն երկրին, որտեղ մասնավոր հատվածին տրամադրված տեղական վարկերի տեսակարար կշիռը մոտ է բազիսային տարվա առավելագույն ցուցանիշին (99.9%): Երկրի գնահատականը 0-ին մոտ կլինի, եթե մասնավոր հատվածին տրամադրված տեղական վարկերի տեսակարար կշիռը մոտ է բազիսային տարվա նվազագույն ցուցանիշին (10%):

5.1.4. ***Տոկոսադրույքների կարգավորումները և/կամ բացասական իրական տոկոսադրույքները*** - Գնահատման միջակայքեր կառուցելու համար օգտագործվել են վարկային շուկաների վերահսկողության և կարգավորումների վերաբերյալ տվյալները[27]: Շուկայական մեխանիզմներով ձևավորվող տոկոսադրույքներ, կայուն դրամավարկային քաղաքականություն, ավանդային ու վարկային դրական իրական տոկոսադրույքներ ունեցող երկրները ստացել են բարձր գնահատական: Երբ տոկոսադրույքները ձևավորվել են շուկայում, և դրանց իրական մակարդակները դրական են, երկրներին շնորհվել է 10 գնահատական: Երբ տոկոսադրույքները ձևավորվել են շուկայում, սակայն դրանց իրական մակարդակները որոշ դեպքերում բացասական են (5%-ից պակաս), կամ ավանդային և վարկային տոկոսադրույքների միջև տարբերությունը (սպրեդը) մեծ է (8% և ավելի), երկրնե-

---

[26] Ըստ ԱՄՀ կողմից հրապարակվող Միջազգային ֆինանսական վիճակագրության (IFS):

[27] Ըստ Համաշխարհային բանկի հրապարակած ցուցանիշների (World Development Indicators) և ԱՄՀ կողմից հրապարակվող Միջազգային ֆինանսական վիճակագրության (IFS) տվյալների:

րին շնորհվել է 8 գնահատական: Երբ ավանդային կամ վարկային իրական տոկոսադրույքները հիմնականում բացասական են՝ միանիշ թվով, կամ նրանց միջև տարբերությունը (սպրեդը) կարգավորվել է պետության կողմից, երկրներին շնորհվել է 6 գնահատական: Երբ ավանդային և վարկային իրական տոկոսադրույքները սահմանվել են կառավարության կողմից, և իրական տոկոսադրույքները հաճախ բացասական են՝ միանիշ թվով, երկրներին շնորհվել է 4 գնահատական: Երբ ավանդային կամ վարկային իրական տոկոսադրույքները հիմնականում բացասական են՝ երկնիշ թվով, երկրներին շնորհվել է 2 գնահատական: 0 գնահատական շնորհվում է միայն այն դեպքում, երբ ավանդային կամ վարկային տոկոսադրույքները սահմանվում են կառավարության կողմից, և դրանց իրական մակարդակները հիմնականում բացասական են՝ երկնիշ թվով, կամ հիպերգնաճը, փաստորեն, վերացրել է վարկային շուկան:

5.2. ***Աշխատուժի շուկայի կարգավորումը***, այդ թվում՝

5.2.1. ***Նվազագույն աշխատավարձի ազդեցությունը*** - Այս գործոնը հիմնվել է Համաշխարհային բանկի «Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը-2009» հետազոտության վրա, որտեղից վերցվել են տվյալներ այդ երկրում սահմանված նվազագույն աշխատավարձի և մեկ աշխատողի հաշվով միջին ավելացված արժեքի հարաբերության մասին[28]: Այն երկրները, որտեղ այս գործակիցը մեծ է, տրվել է ցածր գնահատական: Հաշվարկն իրականացվել է (Vmax-Vi)/(Vmax-Vmin)*10 բանաձևով, որտեղ Vi-ն երկրում սահմանված նվազագույն աշխատավարձի հարաբերությունն է մեկ աշխատողի հաշվով ավելացրած արժեքին[29]: Vmin-ի և Vmax-ի արժեքները վերցված են համապատասխանաբար 0% և 79% (որպես առավելագույն արժեք (տվյալ դեպքում՝ 79%) վերցվել է երկրների համապատասխան ցուցանիշների շարքի մի-

[28] *Տե՛ս http://www.doingbusiness.org ինտերնետային կայքը:*

[29] *Ըստ Համաշխարհային բանկի հրապարակած ցուցանիշների (World Development Indicators) և ԱՄՀ կողմից հրապարակվող Միջազգային ֆինանսական վիճակագրության (IFS) տվյալների:*

ջինից 1.5 ստանդարտ շեղում բարձր ցուցանիշը): Հաշվարկման այս մեխանիզմով ամենաբարձր 10 գնահատական տրվել է այն երկրին, որտեղ չի սահմանվել նվազագույն աշխատավարձի մակարդակ:

5.2.2. ***Աշխատանքի ընդունման և աշխատանքից ազատման գործընթացների կարգավորումը*** - Այս ենթաինդեքսի գնահատականը վերցվել է Համաշխարհային տնտեսական համաժողովի «Համաշխարհային մրցունակության 2008-2009 թթ. հաշվետվությունից», որը ստացվում է հետևյալ հարցման արդյունքում՝ «Ձեր երկրում աշխատանքի ընդունումը կամ ազատումը խոչընդոտվո՞ւմ է կարգավորումներով, թե՝ ոչ»[30]:

5.2.3. ***Կենտրոնացված կոլեկտիվ համաձայնագրերի հիման վրա աշխատավարձ ստացող աշխատուժի տեսակարար կշիռը*** - Այս ենթաինդեքսի գնահատականը նույնպես վերցվել է Համաշխարհային տնտեսական համաժողովի «Համաշխարհային մրցունակության 2008-2009 թվականների հաշվետվությունից»: Գնահատականը ստացվել է հետևյալ հարցման արդյունքում՝ «Ձեր երկրում աշխատավարձերը սահմանվում են կենտրոնացված կերպով, թե՞ դրանք որոշվում են ընկերությունների կողմից ինքնուրույն»[31]:

5.2.4. ***Աշխատանքի ընդունման պարտադիր ծախքը*** - Այս գործոնը հիմնված է Համաշխարհային բանկի «Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը - 2009» հետազոտության տվյալների վրա, որտեղից վերցվում են աշխատանքի ընդունման հետ կապված ոչ աշխատավարձային ծախսերը (սոցապ վճարները, օրենսդրորեն սահմանված կենսաթոշակի, հիվանդության, առողջության ստուգման, հղիության և ծննդաբերության, արձակուրդների և նմանատիպ այլ վճարումները): Ենթաինդեքսը 0-10 միջակայքի բերելու համար կիրառվում է (Vmax-Vi)/(Vmax-Vmin)*10 բանաձևը, որտեղ Vi-ն տվյալ երկրում աշխատանքի ընդունման հետ կապված ոչ աշխատավարձային ծախսերն են՝ հաշվարկված որպես

---

[30] Ըստ «Համաշխարհային մրցունակության 2008-2009 թթ. հաշվետվության» տվյալների (Համաշխարհային տնտեսական համաժողով, Ժնև, 2009 թ., կետ 7.05, էջ 442):

[31] Նույն տեղում, կետ 7.02, էջ 439):

տոկոս աշխատավարձից[32]: Vmin-ի և Vmax-ի արժեքները վերցված են համապատասխանաբար 0% և 33% (որպես առավելագույն արժեք (տվյալ դեպքում 33%) վերցվել է երկրների համապատասխան տվյալների շարքի միջինից 1.5 ստանդարտ շեղում բարձր ցուցանիշը):

5.2.5. ***Աշխատանքից ազատման պարտադիր ծախքը*** - Այս գործոնը հիմնված է Համաշխարհային բանկի «Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը - 2009» հետազոտության տվյալների վրա, որտեղից վերցվում են աշխատանքից ազատման ծախսերը (աշխատանքային պայմանագրի լուծման մասին նախապես ծանուցման, արձակման նպաստների, վերջնահաշվարկի վճարները և այլն): Ենթաինդեքսը 0-10 միջակայքի բերելու համար կիրառվում է (Vmax-Vi)/(Vmax-Vmin)*10 բանաձևը, որտեղ Vi-ն տվյալ երկրում աշխատանքից ազատման ծախքն է՝ հաշվարկված հասանելիք աշխատավարձի շաբաթներով[32]: Vmin-ի և Vmax-ի արժեքները վերցված են համապատասխանաբար 0 շաբաթ և 108 շաբաթ (որպես առավելագույն արժեք (տվյալ դեպքում 108 շաբաթ) վերցվել է երկրների համապատասխան տվյալների շարքի միջինից 1.5 ստանդարտ շեղում բարձր ցուցանիշը):

5.2.6. ***Զորակոչի օգտագործումը ռազմական անձնակազմ ձևավորելու համար*** - Գնահատման միջակայքեր կառուցելու համար օգտագործվել են զինվորական զորակոչի կիրառման և ժամկետի մասին տվյալները[34]: Զորակոչային երկար ժամկետ սահմանած երկրները ստացել են ցածր գնահատականներ: 10 գնահատական տրվել է այն երկրներին, որոնք չեն կիրառում զորակոչի պրակտիկան: Եթե զորակոչի տևողության ժամկետը սահմանված է մինչև 6 ամիս, երկրները ստանում են 5 գնահատական: 6-12 ամիս ժամկետով զորակոչի դեպքում տրվում է 3 գնահատական, 12-18 ամիս ժամկետով զորակոչի դեպքում՝ 1 գնահատական: 18 ամսից ավելի զո-

---

[32] Տե՛ս www.doingbusiness.org ինտերնետային կայքը:

[34] Ըստ Ռազմավարական հետազոտությունների միջազգային ինստիտուտի «Ռազմական հաշվեկշիռ» (The Military Balance) տարբեր հրապարակումների:

րակոչի տևողություն սահմանած երկրները ստացել են 0 գնահատական:

3. ***Գործարարության կարգավորումը***, այդ թվում՝

5.3.1. ***Գների հսկողությունը, գործարարների կողմից սեփական գները սահմանելու ազատության չափը*** [35] - Որքան ավելի տարածված է գների կարգավորման կիրառումը տվյալ երկրում, այնքան գնահատականն ավելի ցածր է: Երկրին շնորհվել է 10 գնահատական, եթե որևէ գնային կարգավորում կամ շուկայական խոչընդոտ սահմանված չէ: Եթե գնային կարգավորումները սահմանափակված են մասշտաբից հատույց ունեցող ճյուղերով, որոնք կարող են նվազեցնել մրցակցության արդյունավետությունը (օրինակ, էներգիայի արտադրությունը), երկրին շնորհվել է 8 գնահատական: Եթե գնային կարգավորումները կիրառվում են միայն մի քանի (քիչ թվով) այլ ճյուղերում (օրինակ, գյուղատնտեսությունում), երկրին շնորհվել է 6 գնահատական: Եթե գնային կարգավորումը կիրառվում է էներգետիկայի, գյուղատնտեսության և մի քանի այլ պարզ ապրանքների արտադրության ճյուղերում, որոնք լայնորեն սպառվում են տնային տնտեսությունների կողմից, շնորհվել է 4 գնահատական: Եթե գնային սահմանափակումները կիրառվում են զգալի թվով արտադրանք թողարկող ճյուղերում՝ գյուղատնտեսությունում և մշակող արդյունաբերությունում, շնորհվել է 2 գնահատական: 0 գնահատական ստացել են այն երկրները, որոնցում գնային կարգավորումն օրինաչափություն է և լայնորեն կիրառվում է տնտեսության բազմաթիվ ճյուղերում:

---

[35] *Այս հաշվետվության մեջ ընդգրկված 46 երկրների (հիմնականում՝ զարգացած) գնահատականները սահմանելու համար օգտագործվել են Կառավարման զարգացման միջազգային ինստիտուտի Համաշխարհային մրցունակության տարեգրքի (World Competitiveness Jearbook) տարբեր հրապարակումները: Մյուս երկրների դասակարգման համար օգտագործվել են Price Waterhouse-ի «Doing Business In....» հրապարակումները, Համաշխարհային բանկի «Adjustment in Africa: Reforms, Results, and the Road Ahead» 1994 թ. հրապարակումը, Economist Intelligence Unit-ի «EIU Country Reports and Country Commerce» 2001 թ. հրապարակումը, ԱՄՆ արտաքին գործերի նախարարության «Country Commercial Guides and Country Reports on Economic Policy and Trade Practices» (տարբեր տարիների հրապարակումներ) և այլ աղբյուրների տվյալներ:*

5.3.2. ***Վարչարարական պահանջներ*** - Այս ենթաինդեքսի գնահատման համար հիմք է հանդիսացել Համաշխարհային տնտեսական համաժողովի «Համաշխարհային մրցունակության 2008-2009 թթ. հաշվետվությունը»: Գնահատականը ստացվել է հետևյալ հարցման արդյունքում՝ «Արդյո՞ք Ձեր երկրում կառավարության սահմանած վարչարարական պահանջների (թույլտվությունների, կանոնակարգերի, հաշվետվությունների) կատարումը դժվար է»[36]:

5.3.3. ***Բյուրոկրատիայի ծախքը*** - Այս ենթաինդեքսի գնահատման համար հիմք է հանդիսացել Համաշխարհային տնտեսական համաժողովի «Համաշխարհային մրցունակության 2008-2009 թթ. հաշվետվությունը»: Գնահատականը ստացվել է հետևյալ հարցման արդյունքում՝ «Արդյո՞ք Ձեր երկրում արտադրանքի/ծառայության որակի, էներգիայի վերաբերյալ չափորոշիչները և այլ կարգավորումները (բացառությամբ շրջակա միջավայրի պահպանությանը վերաբերող կարգավորումների) գործում են»[37]: Եթե այդ կարգավորումները թույլ են կամ առկա չեն, այդ երկրին տրվում է 1 գնահատական, իսկ եթե չափազանց խստորեն են պահպանվում, երկրին տրվում է 7 գնահատական:

5.3.4. ***Գործարարություն սկսելու դյուրինությունը*** - Այս ենթաինդեքսի գնահատման համար հիմք են հանդիսացել Համաշխարհային բանկի «Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը - 2009» հետազոտության տվյալները՝ նոր, սահմանափակ պատասխանատվությամբ գործարարություն սկսելու համար անհրաժեշտ ժամանակի և դրամական ծախսի մասին[38]: Կառուցվում են 0-10 գնահատականներ երեք տարբեր փոփոխականների գծով՝ ա) ձեռնարկատիրական գործունեությունը բացելու և գրանցելու համար անհրաժեշտ ժամանակի տևողության (օրերով), բ) ձեռնարկատիրական գործունեությունը կարգավորող մարմիններին կատարվող վճա-

---

[36] *Ըստ «Համաշխարհային մրցունակության 2008-2009 թթ. հաշվետվության» տվյալների (Համաշխարհային տնտեսական համաժողով, Ժնև, 2009 թ., կետ 1.08, էջ 371):*

[37] *Ըստ «Համաշխարհային մրցունակության 2008-2009 թթ. հաշվետվության» տվյալների (Համաշխարհային տնտեսական համաժողով, Ժնև, 2009 թ., էջ 54):*

[38] *Տե՛ս www.doingbusiness.org ինտերնետային կայքը:*

րումների (հաշվարկված որպես տոկոս՝ 1 շնչին բաժին ընկնող ՀԱԱ-ից) և գ) գործունեության համար անհրաժեշտ նվազագույն կապիտալի (հաշվարկված որպես տոկոս՝ 1 շնչին ընկնող ՀԱԱ-ից): Այս երեք գնահատականների միջինացման արդյունքում ստացվում է ենթագործոնի գնահատականը, որի հիման վրա 0-10 միջակայքում ենթաինդեքս ստանալու համար կիրառվում է հետևյալ բանաձևը՝ (Vmax-Vi)/(Vmax-Vmin)*10, որտեղ Vi-ն փոփոխականի արժեքն է տվյալ երկրում: Vmax-ը սահմանված է 104 օր, 317% և 1,017% (1.5 ստանդարտ շեղում՝ միջինից բարձր), իսկ Vmin-ը՝ համապատասխանաբար 0 օր, 0% և 0%:

Նախորդ տարիներին այս ենթաինդեքսի գնահատման համար օգտվել են Համաշխարհային տնտեսական համաժողովի հարցումների արդյունքներից այն մասին, թե՝ «Ձեր երկրում նոր գործարարություն սկսելն ընդհանուր առմամբ հե՞շտ է, թե՞ կախված է խոչընդոտներից: Ի՞նչ չափով»:

5.3.5. ***Ոչ պաշտոնական վճարները պետական պաշտոնյաներին*** - Այս ենթաինդեքսի գնահատականը վերցվել է Համաշխարհային տնտեսական համաժողովի «Համաշխարհային մրցունակության 2008-2009 թթ. հաշվետվությունից»: Գնահատականը ստացվել է հետևյալ հարցման արդյունքում՝ «Ձեր ոլորտում կիրառվո՞ւմ են արդյոք անկանոն, լրացուցիչ վճարներ՝ կապված ներմուծման և արտահանման թույլտվությունների ստացման, հանրային ծառայությունների (հեռախոս կամ էլեկտրականություն) մատուցման և հարկերի վճարման հետ, պետական պայմանագրերին (ներդրումային ծրագրերի) մասնակցելու կամ նպաստավոր դատական որոշումներ ունենալու համար: Դրանք հազվադե՞պ են, թե՝ համատարած»:

5.3.6. ***Լիցենզիաներ (թույլտվություններ) ստանալու հետ կապված ծախսերը*** - Այս ենթաինդեքսի գնահատման համար հիմք են հանդիսանում Համաշխարհային բանկի «Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը - 2009» հետազոտության տվյալները՝ ստանդարտ պահեստ կառուցելու համար ձեռնարկությունից պահանջվող տարբեր լիցենզիաների ստացման համար անհրաժեշտ ժամանակի (օրերով) և ծախսի մասին: Կառուցվում են 0-10

գնահատականներ երկու տարբեր փոփոխականների գծով՝ ա) լիցենզիա(ներ) ստանալու համար անհրաժեշտ օրացուցային օրերի թվով և բ) լիցենզիա(ներ) ստանալու համար դրամական վճարումների՝ հաշվարկված որպես տոկոս՝ 1 շնչին բաժին ընկնող ՀԱԱ-ից: Այս երկու գնահատականների միջինացման արդյունքում ստացվում է ենթագործոնի գնահատականը, որի հիման վրա 0-10 միջակայքում ենթաինդեքս ստանալու համար կիրառվում է հետևյալ բանաձևը՝ (Vmax-Vi)/(Vmax-Vmin)*10, որտեղ Vi-ն ժամանակի կամ ծախսի արժեքն է տվյալ երկրում: Vmax-ը սահմանված է 363 օր և 2,763% (1.5 ստանդարտ շեղում՝ միջինից բարձր), իսկ Vmin-ը՝ համապատասխանաբար 56 օր (1.5 ստանդարտ շեղում՝ միջինից ցածր) և 0%:

5.3.7. ***Հարկային պարտավորությունների կատարման հետ կապված ծախսերը*** - Այս ենթաինդեքսի գնահատման համար հիմք են հանդիսանում Համաշխարհային բանկի «Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը - 2009» հետազոտության տվյալները՝ մեկ տարվա ընթացքում ձեռնարկության կողմից շահութահարկի, ավելացված արժեքի կամ վաճառքի հարկերի և աշխատուժի հարկի հաշվարկման ու վճարման համար ծախսվող ժամանակի մասին[39]: Ենթաինդեքսը գնահատելու համար կիրառվում է հետևյալ բանաձևը՝ (Vmax-Vi)/(Vmax-Vmin)*10, որտեղ Vi-ն հարկային պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամանակի ծախսն է (ժամերով) տվյալ երկրում: Vmax-ը և Vmin-ը սահմանված են համապատասխանաբար 892 ժամ (շուրջ 37 օր) (1.5 ստանդարտ շեղում՝ միջինից բարձր) և 0 ժամ:

[39] *Տե՛ս www.doingbusiness.org ինտերնետային կայքը:*

Համաշխարհային բանկի հրապարակած «Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը 2010 թ. ինդեքսում» ներառվող գործարար միջավայրի տասը ոլորտների գնահատման մեթոդաբանությունը

1. Գործարարություն սկսելը (գրանցելը)

Այս ենթաինդեքսի միջոցով գնահատվում են այն գործընթացները, որոնք օրենքով պահանջվում են իրականացնել տվյալ երկրի գործարար անձանց կողմից ձեռնարկություն բացելու և գրանցելու համար[1]: Այս ենթաինդեքսը բնութագրում է ձեռնարկություն բացելու համար անհրաժեշտ բոլոր լիցենզիաների և թույլտվությունների ստացման հեշտությունը, ինչպես նաև տարբեր ծանուցումների, ստուգումների և արձանագրությունների լրացման գործընթացները տվյալ երկրում: Ենթաինդեքսի հաշվարկման հիմքում դրված են ձեռնարկատիրական գործունեության լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ գործընթացների քանակը, դրանց տևողությունը, պահանջվող ծախսը և գործունեության համար անհրաժեշտ նվազագույն կապիտալը: Ենթաինդեքսի հաշվարկման համար անհրաժեշտ տեղեկատվությունը հավաքագրվում է տվյալ երկրի գործարարության ոլորտի իրավաբանների և պետական պաշտոնյաների շրջանում իրականացվող հարցումների հիման վրա:

2. Շինարարական թույլտվությունների ստացումը

Այս ենթաինդեքսի միջոցով գնահատվում է տվյալ երկրում ձեռնարկատիրական գործունեության կարգավորման դաշտը: Այդ նպատակով դիտարկվել է 2009 թ. հունվարի դրությամբ ստանդարտ պահեստ կառուցելու համար ձեռնարկությունից պահանջվող տարբեր լիցենզիաների, թույլտվությունների և տեսչական զննման փաստաթղթերի ստացման, ինչպես նաև հայտարարագրերի լրացման և պետական մարմինների կողմից համապատասխան փաստաթղթերի (օրինակ՝ կառույցի նախագծի) ընդունման համար անհրաժեշտ ընթացակարգերի քանակը, այդ ընթացակարգերի վրա ծախսված ժամանակը և ծախսը: Ենթաինդեքսի հաշվարկման համար անհրաժեշտ տեղեկա-

[1] *Ըստ մեթոդաբանության՝ դիտարկվում են արդյունաբերական կամ առևտրի ոլորտում ձեռնարկություն բացելու (գրանցելու) համար անհրաժեշտ գործընթացները:*

տվությունը հավաքագրվում է համապատասխան ոլորտի իրավաբաններից, կենցաղային սպասարկման ոլորտի աշխատողներից, պետական պաշտոնյաներից:

3. Աշխատողների վարձումը

Այս ենթաինդեքսի հաշվարկման համար դիտարկվում է աշխատանքային հարաբերությունների կարգավորման իրավական դաշտը տվյալ երկրում: Ենթաինդեքսը հաշվարկելիս հիմք են ընդունում տվյալ երկրում աշխատանքի ընդունելու և աշխատանքից ազատելու ընթացքում գործատուների դժվարությունները (որի համար հաշվարկվում է առանձին՝ ***«Զբաղվածության խստություն» ինդեքսը***) և աշխատողների ազատման հետ կապված գործատուների ծախսերը: ***Աշխատողների վարձում*** ենթաինդեքսի հաշվարկման համար անհրաժեշտ տեղեկատվությունը հավաքագրվում է երկրների աշխատանքային օրենսգրքերի վերաբերյալ ձեռնարկություններում իրականացված հարցումների միջոցով[2]: Ճշգրտությունն ապահովելու համար օգտվում են նաև այլ աղբյուրներից:

Աշխատողների վարձում ենթաինդեքսի հաշվարկում օգտագործվող ***«Զբաղվածության խստություն ինդեքսը»*** ստանալու համար նախ՝ տվյալ երկրի համար հաշվարկում են «Վարձելու դժվարության», «Ժամերի խստության» և «Աշխատանքից ազատելու դժվարության» բաղադրիչ ենթաինդեքսները, ապա դրանց պարզ միջինը վերցնում են որպես տվյալ երկրի համար ***«Զբաղվածության խստություն»*** ինդեքս: ***«Զբաղվածության խստություն»*** ինդեքսը և դրա բաղադրիչ ենթաինդեքսները ստանում են արժեքներ «0 - 100» միջակայքից, ընդ որում՝ որքան բարձր է արժեքը, այնքան տվյալ երկրում ավելի խիստ են կարգավորող նորմերը:

Մասնավորապես, «Վարձելու դժվարության» ենթաինդեքսը գնահատում է տվյալ երկրում աշխատանքային պայմանագրերի ճկունությունը (անսահմանափակ ժամկետով, թե՞ որոշակի ժամկետով են պայմանագրեր կնքվում), ինչպես նաև նվազագույն աշխատավարձի կարգավորումները (նվազագույն աշխատավարձի և մեկ աշխատողի հաշվով միջին ավելացված արժեքի հարաբերությունը):

«Ժամերի խստության» ենթաինդեքսը գնահատում է տվյալ երկրում աշխատաժամանակը կարգավորող նորմերը. գիշերային աշխատան-

---

[2] Շատ երկրների աշխատանքային օրենսդրություններին կարելի է ծանոթանալ Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) կողմից հրապարակվող NATLEX տվյալների բազայում:

քի, շաբաթ և կիրակի օրերին աշխատելու, աշխատանքային շաբաթվա տևողության սահմանափակումները: Տվյալները հավաքագրվում են մշակող արդյունաբերության փոքր և միջին ձեռնարկություններից, որտեղ գործընթացների անընդհատությունը տնտեսապես հիմնավորված է: Այս ենթաինդեքսը գնահատում է նաև ամենամյա վճարովի արձակուրդի տևողությունը. նորմերը համարվում են ոչ խիստ, եթե ամենամյա վճարովի արձակուրդը չի գերազանցում 21 օրը:

«Աշխատանքից ազատելու դժվարության» ենթաինդեքսի գնահատման հիմքում ընկած են 8 հարցեր, որոնք վերաբերում են աշխատողներին ազատելու դեպքում գործատուների պարտավորություններին:

«Աշխատողների վարձում» ընդհանրական ինդեքսի մաս կազմող մյուս՝ ***«Աշխատանքից ազատելու ծախսերը» ինդեքսի*** հաշվարկման հիմքում ընկած են գործատուի այն բոլոր ծախսերը (բերված 1 շաբաթվա աշխատավարձի), որը նա կատարում է իր ձեռնարկությունում 20 տարվա ստաժ ունեցող աշխատողին ազատելիս:

4. Սեփականության գրանցումը

Այս ենթաինդեքսի հաշվարկման համար դիտարկվում է ձեռնարկության կողմից հող կամ շինություն ձեռք բերելիս սեփականության իրավունքի փոխանցման համար անհրաժեշտ գործընթացների ամբողջությունը: Ընդ որում, գործընթացները ներառվում են անկախ այն բանից, թե ով է իրականացնում այդ գործողությունները. վաճառողը, գնորդը, թե՞ որևէ երրորդ կողմ: Ենթաինդեքսի հաշվարկման հիմքում դրված են սեփականության գրանցման համար անհրաժեշտ ընթացակարգերի քանակը, դրանց կատարման համար անհրաժեշտ ժամանակը և ծախսերը: Ենթաինդեքսի հաշվարկման համար անհրաժեշտ տեղեկատվությունը հավաքագրվում է համապատասխան ոլորտի իրավաբաններից, ինչպես նաև սեփականության գրանցման գործակալություններից:

5. Վարկի ստացումը

Այս ենթաինդեքսի գնահատման համար դիտարկվում են տվյալ երկրում վարկառուների և վարկատուների օրինական իրավունքները և վարկավորման մասին տեղեկատվության մատչելիության աստիճանը: Այդ պատճառով ենթաինդեքսի հաշվարկման համար դիտարկվող ցուցանիշները տրոհվում են երկու խմբի:

Առաջին խումբ ցուցանիշների միջոցով գնահատվում է «Օրինական իրավունքների ամրությունը» բաղադրիչ ենթաինդեքսը, որը ցույց է տալիս, թե որքանով են գրավի և սնանկության մասին օրենքները հեշ-

տացնում վարկավորումը: Ընդ որում, տեղեկատվությունը ստացվում է ֆինանսական ոլորտի իրավաբաններից և համապատասխան օրենքներից: «Օրինական իրավունքների ամրությունը» բաղադրիչ ենթաինդեքսը ստանում է արժեքներ 0 - 10 միջակայքից, ընդ որում՝ ավելի բարձր արժեքները վկայում են, որ տվյալ երկրում գրավի և սնանկության վերաբերյալ օրենքները նպաստում են վարկավորման ընդլայնմանը:

Երկրորդ խումբ ցուցանիշների միջոցով գնահատվում է «Վարկային տեղեկատվության խորություն» բաղադրիչ ենթաինդեքսը, որը ցույց է տալիս պետական վարկային ռեգիստրի և մասնավոր վարկային բյուրոների կողմից տրամադրվող տեղեկատվության շրջանակը, մատչելիությունը և որակը: Ընդ որում, երկրորդ խմբի ցուցանիշները հավաքագրվում են երկու փուլով. նախ՝ բանկային վերահսկողության մարմինների և պետական աղբյուրների տեղեկատվության միջոցով հաստատվում է պետական վարկային ռեգիստրի և մասնավոր բյուրոների գոյությունը, այնուհետև ուսումնասիրվում են դրանց կառուցվածքը և այդ ոլորտը կարգավորող օրենքներն ու ենթաօրենսդրական ակտերը: «Վարկային տեղեկատվության խորություն» բաղադրիչ ենթաինդեքսը ստացվում է հարցումների արդյունքում և ներառում է պետական և մասնավոր վարկային ռեգիստրներին վերաբերող վեց հարցերի դրական պատասխանների թիվը: Հետևաբար, այս ենթաինդեքսը ստանում է արժեքներ 0-6 միջակայքից, և որքան բարձր է արժեքը, այնքան տեղեկատվությունն ավելի մատչելի է: Որոշակի տեղեկատվություն է հավաքվում նաև պետական և մասնավոր վարկային ռեգիստրներում ընդգրկված անձանց քանակի մասին, որի հիման վրա փորձագետները դատողություններ են անում ***«Վարկի ստացում»*** ենթաինդեքսի հաշվարկման համար (երբ անհրաժեշտ է լինում վերադասավորել նույն գնահատականն ունեցող մի քանի երկրներ):

6. Ներդրողների պաշտպանությունը

Այս ենթաինդեքսի հաշվարկման համար դիտարկվում են ներդրողների պաշտպանության երեք հարթություններ՝ գործարքների թափանցիկությունը («Թափանցիկության» բաղադրիչ ենթաինդեքս), գործադիր տնօրենի պարտավորությունների չափը («Տնօրենի պարտավորությունների աստիճանի» բաղադրիչ ենթաինդեքս) և տնօրենության կամ պաշտոնատար անձանց խախտումներ թույլ տալու դեպքում սեփականատերերի՝ դատական հայցեր ներկայացնելու հնարավորությունը

(«Սեփականատերերի դատական հայցերի դյուրինության» բաղադրիչ ենթաինդեքս): Այս երեք ենթաինդեքսների պարզ թվաբանական միջինը կազմում է ***«Ներդրողների պաշտպանության ամրության»*** ենթաինդեքսը: Վերոնշյալ բաղադրիչ ենթաինդեքսները հաշվարկելու համար սահմանված է ներդրողի պաշտպանության ստանդարտ դեպք, և ուսումնասիրվում է, թե այդ դեպքը տարբեր երկրներում իրականանալու դեպքում ինչպես կկարգավորվի օրենսդրորեն: Տվյալները հավաքագրվում են ստանդարտ ընկերության կանոնադրությունից, դեպքն ի հայտ գալու պարագայում դատավարական գործընթացի կանոնակարգումից: Ինդեքսները ստանում են արժեքներ 0-10 միջակայքից. ընդ որում՝ բարձր ցուցանիշները վկայում են թափանցիկության աստիճանի, տնօրենի պարտավորությունների, բաժնետերերի հնարավորությունների և, հետևաբար, ներդրողների պաշտպանության բարձր աստիճանի մասին:

7. Հարկերի վճարումը

Այս ենթաինդեքսի հաշվարկման համար դիտարկվում են միջին ձեռնարկության ամենամյա հարկերի ու հատկացումների (պահումների) չափը, ինչպես նաև հարկերը վճարելու հետ կապված վարչական բեռը: Հարկերը դիտարկվում են պետական բոլոր մակարդակներով և ներառում են շահութահարկը, եկամտահարկը, սոցապահովագրության վճարները, գործատուի կողմից աշխատողների համար վճարվող հարկերը, գույքահարկը, կապիտալի փոխանցման վրա դրված տուրքերը, շահաբաժինների, կապիտալից եկամուտների, ֆինանսական գործառնությունների վրա դրված հարկերը, բնապահպանական վճարները, տրանսպորտային միջոցների և ճանապարհային հարկերը[3]: ***«Հարկերի վճարումը»*** ենթաինդեքսի հաշվարկման հիմքում դրված են մեկ տարվա ընթացքում ձեռնարկության կողմից հարկերի վճարումների քանակը, դրա վրա ծախսված ժամանակը, շահութահարկի և եկամտահարկի դրույքաչափը, սոցապահովագրության, կենսաթոշակային և այլ հարկերի դրույքաչափերը, ինչպես նաև վճարվելիք հարկերի ընդհանուր գումարը՝ տոկոսով, համախառն շահույթից:

---

[3] Մեթոդաբանության մեջ այս ենթաինդեքսի հաշվարկման համար վերցվել է որոշակի մեծության երևակայական ձեռնարկություն, որը տարվա ընթացում իրականացնում է որոշակի ձեռնարկատիրական գործունեություն և գործարքների որոշակի համախումբ: Այնուհետև Համաշխարհային բանկի փորձագետները գնահատել են առանձին երկրներում այդ ձեռնարկության գործունեությունից վճարվելիք հարկերի գումարը և հարկային օրենսդրության բարդությունը:

8. Սահմանային առևտրի դյուրինությունը

Այս ենթաինդեքսը գնահատելու համար դիտարկվում են ապրանքների արտահանման և ներմուծման ժամանակ գործարքի կնքումից մինչև ապրանքների առաքումը կատարվող ընթացակարգերը, դրանց հետ կապված անհրաժեշտ ծախսերը և ժամանակը, ինչպես նաև մաքսային սահմանն անցնելու համար պահանջվող բոլոր փաստաթղթերը: Արտահանման դեպքում գործընթացները դիտարկվում են գործարանում ապրանքների փաթեթավորումից մինչև մաքսային սահմանից դուրս գալու պահը, իսկ ներմուծման դեպքում՝ առաքման վերջնակայանից մինչև ընկերության պահեստ հասցնելու պահը: ***«Սահմանային առևտրի դյուրինությունը»*** ենթաինդեքսի հաշվարկման համար անհրաժեշտ տեղեկատվությունը հավաքագրվում է բեռնափոխադրող և նավահանգստային կազմակերպություններից, մաքսային գործակալներից:

9. Պայմանագրերի կիրարկումը

Այս ենթաինդեքսի միջոցով գնահատվում է առևտրային պայմանագրերի կիրարկման դյուրինությունը: Տվյալները կառուցվում են տեղական դատարանում առևտրային վեճի լուծման գործընթացի քայլերին համապատասխան: Հատկապես ուշադրություն է դարձվում ներկայացված պահանջի դատական գործընթացի համար պահանջվող ընթացակարգերի քանակին, դրանց ընդհանուր տևողությանը և իրականացվող ծախսերին: Ի դեպ, ենթադրվում է, որ ներկայացված պահանջը կազմում է 1 շնչին բաժին ընկնող եկամտի 200%-ը: ***«Պայմանագրերի կիրարկումը»*** ենթաինդեքսի հաշվարկման համար անհրաժեշտ տեղեկատվությունը հավաքագրվում է երկրների քաղաքացիական օրենսգրքերից, դատական այլ ոլորտները կարգավորող օրենքներից, իրավաբաններից, իսկ որոշ երկրներում՝ նաև դատավորներից: Հայաստանի վերաբերյալ տեղեկատվության աղբյուր է Երևանի առաջին ատյանի դատարանը («Ընդհանուր իրավասության դատարանը»)[4]:

10. Գործարարության փակումը (լուծարումը)

Այս ենթաինդեքսը հաշվարկելու համար դիտարկվում է տեղական ընկերությունների սնանկության վարույթի համար անհրաժեշտ ժամանակը, ծախսը և փոխհատուցման չափը, այսինքն՝ սնանկության գործ-

[4] *Աղբյուրը՝ www.court.am:*

ընթացի արդյունքում մարված պարտքերի չափը: ***«Գործարարության փակումը»*** ենթաինդեքսի հաշվարկման համար անհրաժեշտ տեղեկատվությունը հավաքագրվում է տեղական լուծարային գործընթացներով զբաղվող իրավաբաններից: Այդ հարցումների արդյունքը ստուգվում և ճշգրտվում է օրենքների և այլ իրավական կարգավորող նորմերի միջոցով:

Հավելված 4

«Թրանսփերենսի ինտերնեյշնլ» կազմակերպության կողմից իրապարակվող «Կոռուպցիայի ընկալման 2009 թ. ինդեքսի» գնահատման մեթոդաբանությունը[1]

2009 թ. ***«Կոռուպցիայի ընկալման ինդեքսը»*** աշխարհի 180 երկրներում գնահատելու համար Թրանսփերենսի ինտերնեյշնլի կազմակերպական կոմիտեն ընտրել է ստորև ներկայացված 10 կազմակերպությունները, որոնք իրականացրել են 13 հետազոտություններ և հարցումներ:

	Հետազոտության անվանումը	Կազմակերպության անվանումը	Տարեթիվը
1.	Երկրի կատարողականի գնահատման վարկանիշեր (Country Performance Assessment Exercise 2008)	Ասիական զարգացման բանկ (ADB)	2008/2009
2.	Երկրի քաղաքականությունների և կառույցների գնահատում (Country Policy and Institutional Assessment-2008)	Աֆրիկյան զարգացման բանկ (AfDB)	2008/2009
3.	«Բերտելսմանի վերափոխման ինդեքս-2010» (Bertelsmann Transformation Index-2010)	«Բերտելսման» հիմնադրամ (BF)	2009
4.	Երկրի ռիսկի վարկանշում և երկրի կանխատեսում (Country Risk Service and Country Forecast)	Էկոնոմիստ Ինտելիջենս Յունիթ (EIU)	2009
5.	Ազգերն անցումային փուլում (Nations in Transit)	Ֆրիդոմհաուզ (FH)	2009
6.	Երկրի ռիսկայնության վարկանիշեր (Country Risk Ratings)	Գլոբալ Ինսայթ (GI)	2009
7.	Համաշխարհային մրցունակության տարեգիրք (IMD World Competitiveness Yearbook)	Կառավարման զարգացման միջազգային ինստիտուտ International Institut for Management Developement (IMD International)	2008
8.			2009

[1] *Աղբյուրը՝ http://transparency.org/content/download/47733/762810/CPI_2009_methodology_long_en.pdf:*

9.	Ասիական տեղեկատվական բյուլետեն (Asian Intelligence Newsletter)	Քաղաքական և տնտեսական ռիսկերի խորհրդատվական ծառայություն Political & Economic Risk Consultancy (PERC)	2008
10.			2009
11.	Երկրի քաղաքականությունների և կառույցների գնահատում (Country Policy and Institutional Assessment 2008)	Համաշխարհային բանկի միջազգային զարգացման ընկերակցություն World Bank (IDA)	2008/2009
12.	Համաշխարհային մրցունակության զեկույց (Global Competitiveness Report)	Համաշխարհային տնտեսական համաժողով World Economic Forum	2008/2009
13.			2009/2010

Հարցումներ և հետազոտություններ իրականացնող կազմակերպությունները ընտրելիս Կոմիտեն անհրաժեշտ է համարել, որ՝

- այդ կազմակերպությունը տարբեր երկրներում հետազոտություններ իրականացնի ***նույն մեթոդաբանությամբ***
- իրականացված հետազոտությունը գնահատի ***միայն կոռուպցիան՝ իր բոլոր դրսևորումներով,*** և չներառի, ասենք, քաղաքական կայունության կամ ազգայնականության դրսևորումների գնահատականները:

Կոռուպցիայի ընկալման բաղադրյալ ինդեքսի հաշվարկման համար օգտագործվող այն ենթաինդեքսները, որոնք ստացվել են հարցումների հիման վրա, և առկա են հարցման մի քանի տարվա տվյալներ, միջինացվել են երկու տարվա կտրվածքով, որպեսզի արդյունքն ավելի վստահելի լինի: Ըստ տարիների չեն միջինացվել փորձագետների գնահատումների հիման վրա հաշվարկված ենթաինդեքսները: Նշենք նաև, որ որոշ կազմակերպություններ (ADB, AfDB, BF, EIU, FH, GI, World Bank) տվյալ երկրում կոռուպցիայի ընկալումը գնահատելու նպատակով ստեղծում են տեղացի փորձագետների ցանց, որը կազմված լինելով ինչպես ռեզիդենտներից, այնպես էլ ոչ ռեզիդենտներից, այդ երկրում կոռուպցիայի ընկալումը գնահատում է միջազգային չափորոշիչների տեսանկյունից: Այդ փորձագետների կողմից երկրում կատարված հարցումների և հետազոտությունների արդյունքները քննարկում և գնահատում են նշված կազմակերպությունների հիմնական փորձագետները: Դրա հետ մեկտեղ կան կազմակերպություններ (IMD, PERC, WEF), որոնց գնահատականների հիմքում ընկած են տվյալ երկրի գործարար միջավայրի առաջատար ներկայացուցիչ ռեզիդենտների ընկալումները իրենց երկրում կոռուպցիայի երևույթի մասին:

Հայաստանի 2009 թ. կոռուպցիայի ընկալման ինդեքսի գնահատման համար որպես աղբյուր «Թրանսփերենսի ինտերնեյշնլ»-ն օգտագործել է վերոնշյալ կազմակերպություններից 7-ի հետազոտությունները: Աղյուսակում ներկայացված են այդ կազմակերպությունները և դրանց հարցադրումներն ու մոտեցումները: Վերջիններս ցույց են տալիս, որ այս կազմակերպությունները կոռուպցիան հիմնականում դիտարկում են որպես «պետական ուժի օգտագործում մասնավոր շահերի համար, այսինքն՝ պետական պաշտոնյաների կաշառում, պետական միջոցների չարաշահում»:

Կազմակերպությունը	Հարցադրումները և մոտեցումները
1. Երկրի կատարողականի գնահատման վարկանիշեր Country Performance Assessment Exercise 2008 (ADB)	Գնահատվում են երկրների տնտեսական կառավարման և կառուցվածքային քաղաքականությունները, ինստիտուցիոնալ զարգացումը և պետական կառավարման մակարդակը: Կիրառվում է 1-6 գնահատման համակարգ, որտեղ բարձր գնահատականը արտացոլում է տնտեսական և պետական կառավարման համակարգերի, ինստիտուցիոնալ զարգացման բարձր մակարդակը:
2. «Բերտելսմանի վերափոխման ինդեքս-2010» Bertelsmann Transformation Index -2010(BF)	Գնահատվում է զարգացող ու անցումային երկրներում ժողովրդավարության, շուկայական տնտեսության և քաղաքական կառավարման մակարդակը: Կիրառվում է 0-10 գնահատման համակարգ, որտեղ ամենաբարձր միավորը՝ 10-ը, արտացոլում է ժողովրդավարության և շուկայական տնտեսության արմատավորման գործընթացում այդ երկրների մեծ կարողությունը:
3. Ազգերն անցումային փուլում Nations in Transit 2009 (FH)	Գնահատվում են հակակոռուպցիոն միջոցառումների նախաձեռնողականությունը, չափից ավելի բյուրոկրատական կարգավորումներն ու կոռուպցիայի հնարավորությունները մեծացնող այլ վերահսկողությունները, հանրության կողմից կոռուպցիայի ընկալումը, քաղաքական որոշումներ կայացնողների գործարար շահերը, ֆինանսական հաշվետվելիության և ներդրողների շահերի պաշտպանվածության օրենսդրական դաշտը, կառավարող և օրենսդիր մարմինների աուդիտը, կոռուպցիայի դեմ պայքարողների պաշտպանվածությունը: Կիրառվում է 1-7 գնահատման համակարգ, որտեղ 1-ը ներկայացնում է ժողովրդավարական զարգացումների ամենաբարձր, իսկ 7-ը՝ ամենացածր մակարդակը:
4. Երկրի ռիսկայնության վարկանիշեր Country Risk Ratings 2009 (GI)	Գնահատվում է կոռումպացված պաշտոնյա հանդիպելու հավանականությունը: Կիրառվում է 1-5 գնահատման համակարգ, որտեղ 1-ը ներկայացնում է այդ երկրի խիստ բարենպաստ գործարար

	միջավայրը և կոռուպցիայի բացակայությունը, իսկ 5-ը ցույց է տալիս, որ երկիրն ունի բազմաթիվ լուրջ գործառնական խնդիրներ, որոնք խոչընդոտում և գործնականում անհնարին են դարձնում ձեռնարկատիրական գործունեությունը:
5. Երկրի քաղաքականությունների և կառույցների գնահատում Country Policy and Institutional Assessment - 2008 (WB)	Գնահատվում են պետական հատվածի թափանցիկությունը, հաշվետվելիությունը, ինչպես նաև կոռումպացվածությունը: Այս հետազոտությունը ուսումնասիրում է ոչ արդյունավետ աուդիտի առկայությունը, քաղաքական գործիչների ուղղվածությունը՝ հասարակական շահերի չարաշահումը ի նպաստ նեղ մասնավոր շահերի: Կիրառվում է 1-6 գնահատման համակարգ, որտեղ բարձր գնահատականը նշանակում է, որ պետական հատվածը ավելի թափանցիկ, հաշվետվելի և քիչ կոռումպացված է:
6. Համաշխարհային մրցունակության զեկույց 2008/2009 թթ. Global Competitiveness Report 2008/2009 (WEF)	Գնահատվում է ձեռնարկատիրական գործունեության ժամանակ ընկերությունների կողմից անօրինական վճարումներ կատարելու կամ կաշառքներ տալու հաճախականությունը տնտեսության մի քանի ոլորտներում, որոնցից են՝ արտահանում/ներմուծումը, հանրային ծառայությունները, հարկային վճարումները, պետական պայմանագրերը, փոխառությունների տրամադրումը, առանձին խմբերի գործարար շահերի օգտին օրենսդրական որոշումների կամ բարենպաստ դատական վճիռների կայացումը: Կիրառվում է 1-7 գնահատման համակարգ, որտեղ 1-ը ցույց է տալիս, որ անօրինական վճարումներ և կաշառքներ տրվում են շատ հաճախ, իսկ 7-ը՝ երբեք:
7. Համաշխարհային մրցունակության զեկույց 2009/2010 թթ. Global Competitiveness Report 2009/2010 (WEF)	

Վերոնշյալ հետազոտություններից «Թրանսփերենսի ինտերնեյշնլ»-ը Հայաստանի 2009 թ. ***«Կոռուպցիայի ընկալման ինդեքսի»*** հաշվարկման նպատակով վերցրել է կոռուպցիային վերաբերող ենթաինդեքսներն ու գնահատականները, որոնք ըստ աղբյուրների հաջորդականության ներկայացնենք ավելի հանգամանորեն:

1) Ասիական զարգացման բանկի «Երկրի կատարողականի գնահատման վարկանիշեր 2008» հետազոտությունից[2] վերցվել է ***«Թափանցիկությունը, հաշվետվելիությունը և կոռուպցիան պետական հատվածում»*** ենթաինդեքսը:

[2] *Ասիական զարգացման բանկի «Annual Report on the 2008 Country Performance Assessment Exercise» հրապարակումը, մայիս, 2009 թ., էջ 8:* <*http://www.adb.org/Documents/Reports/Country-Performance-Assessment-Exercise/IN111-09.pdf*>:

Կիրառվում է 1-6 գնահատման համակարգ, որտեղ բարձր գնահատականը նշանակում է պետական կառավարման համակարգի կատարյալ թափանցիկություն, իսկ ցածրը՝ թափանցիկության բացակայություն:	Հայաստանի 2008 թ. գնահատականը
Պետական հատվածում թափանցիկությունը, հաշվետվելիությունը և կոռուպցիան	**3.0**

2) «Բերտելսման» հիմնադրամի ***«Բերտելսմանի վերափոխման ինդեքս 2010»*** հետազոտությունից վերցվել է կոռուպցիային վերաբերող հետևյալ հարցերի գնահատականները:

Կիրառվում է 0-10 գնահատման համակարգ, որտեղ բարձր գնահատականն արտացոլում է կոռուպցիայի և պաշտոնական դիրքի չարաշահման դեմ պայքարում այդ երկրների բարձր կարողունակությունը:	Հայաստանի 2008 թ. գնահատականը[3]
3.3. Որքանո՞վ են իրենց դիրքը չարաշահած պաշտոնյաները ենթարկվում օրենսդրական կամ քաղաքական պատժամիջոցների:	**4.0**
15.3. Որքանո՞վ է կառավարությունը հաջողությամբ զսպում կամ սահմանափակում կոռուպցիան:	**3.0**

Առաջին հարցով փորձում են պարզել պետության և հասարակության առջև պետական ծառայողների և քաղաքական գործիչների հաշվետվելիության մակարդակը, և թե արդյո՞ք թույլատրվում է շահերի բախում: Փորձում են ճշտել նաև, թե քաղաքական կոռուպցիան ինչ չափով է խեղաթյուրում օրենքի պահանջի կատարումը: Հայաստանի գնահատականը ենթադրում է, որ «կոռումպացված պաշտոնատար անձինք համապատասխան ձևով չեն պատժվում օրենքի կողմից, սակայն ժամանակ առ ժամանակ այդ երևույթը գրավում է հասարակության ուշադրությունը»[4]: Վրաստանի համապատասխան գնահատականը կազմում է 6, իսկ Ադրբեջանինը՝ 4 միավոր (տե՛ս աղյուսակ 6.1):

Կոռուպցիայի դեմ պայքարի հաջողությունը միջոցների արդյունավետ օգտագործման առանցքային ցուցանիշներից է: Հետևաբար, երկրորդ հարցով փորձում են ճշտել՝ արդյո՞ք կառավարությունն իրակա-

---

[3] *«Բերտելսման» հիմնադրամի «Bertelsmann Transformation Index 2010/ Manual for Country Assessments, Bertelsmann Group for Policy Research» հրապարակումը, 2009 թ.: Տե՛ս <http://www.bertelsmann-transformation-Index.de/fileadmin/pdf/AnlagenBTI2010.xis> ինտերնետային կայքը:*

[4] *«Բերտելսման» հիմնադրամի «Bertelsmann Transformation Index 2010/ Manual for Country Assessments, Bertelsmann Group for Policy Research» հրապարակումը, 2009 թ., էջ 21:*

նացնում և մոնիթորինգի է ենթարկում հետևյալ «ամբողջականության (integrity) մեխանիզմները». պետական ծախսերի աուդիտ, մասնակցային ֆինանսավորման կարգավորում, ՁԼՄ-ներին և քաղաքացիներին տեղեկատվության մատչելիության ապահովում, պետական ծառայողների հաշվետվելիության ապահովում (ակտիվների հայտարարագրում, շահերի բախումը կանխող կանոններ, վարվելակերպի կանոններ), պետական գնումների համակարգի թափանցիկություն, կոռուպցիայի դեպքերի պատշաճ պատժում: Այս հարցի նպատակն է՝ որոշել «ամբողջականության մեխանիզմների» վրա կառավարության քաղաքականությունների ազդեցության որակը և չափը: Հայաստանի գնահատականը ենթադրում է, որ «նշված մեխանիզմների մի մասը գործում է, սակայն հաճախ դա լինում է անարդյունավետ, քանի որ դրա իրականացումը բախվում է մասնավորի շահերի հետ: Բարեփոխումներ իրականացնելու կառավարության խթանները և կարողությունները էապես խճճված են[5]: Այս ենթաինդեքսի առնչությամբ Վրաստանն էապես գերազանցում է Հայաստանին, նրա գնահատականը 7 է, մինչդեռ Ադրբեջանին տրվել է 3 գնահատական (տե՛ս աղյուսակ 6.1):

3) Ֆրիդոմհաուզի ***«Ազգերը անցումային փուլում 2009»*** հետազոտությունից վերցվել է ***«ժողովրդավարության առաջընթացը»*** ինդեքսի **«Կոռուպցիայի մակարդակը»** ենթաինդեքսը[6]:

Կիրառվում է 1-7 գնահատման համակարգ, որտեղ բարձր գնահատականն արտացոլում է կոռուպցիայի բարձր մակարդակը տվյալ երկրում:	Հայաստանի 2009 թ. գնահատականը
Կոռուպցիայի մակարդակը	**5.50**

4) Գլոբալ Ինսայթի ***«Երկրի ռիսկերի վարկանիշեր 2009»*** հետազոտությունից[7] Թրանսփերենսի ինտերնեյշնլի փորձագետները վերցրել են կոռուպցիայի մակարդակի գնահատականը, սակայն քանի որ այս հետազոտությունները հրապարակային չեն, նրանց հաշվարկած գնահատականները ներկայացվել չեն կարող[8]:
5) Համաշխարհային բանկի ***«Երկրի քաղաքականությունների և կառույցների գնահատում 2008»*** հետազոտությունից[9] վերցվել է ***«Պե-***

---

[5] ***«****Բերտելսման» հիմնադրամի «Bertelsmann Transformation Index 2010/ Manual for Country Assessments, Bertelsmann Group for Policy Research» հրապարակումը, 2009 թ., էջ 40:*
[6] *Աղբյուրը՝ http://www.freedomhouse.hu/images/nit2009/tables.pdf:*
[7] *Աղբյուրը՝ http://www.globalinsight.com:*
[8] *Գլոբալ Ինսայթի և դրա կողմից գնահատվող ոլորտների մասին տե՛ս «Երկրի ռիսկի գնահատականներ» մասում:*
[9] *Աղբյուրը՝ http://siteresources.worldbank.org/IDA/Resources/73153-1181752621336/IRAI 2008table1.xls:*

տական հատվածում թափանցիկությունը, հաշվետվելիությունը և կոռուպցիան» ենթաինդեքսը:

Կիրառվում է 1-6 գնահատման համակարգ, որտեղ բարձր գնահատականը նշանակում է, որ պետական հատվածը կատարյալ թափանցիկ է, հաշվետվելի և քիչ կոռումպացված:	Հայաստանի 2008 թ. գնահատականը
Պետական հատվածում թափանցիկությունը, հաշվետվելիությունը և կոռուպցիան	**3.0**

6-7) Համաշխարհային տնտեսական համաժողովի ***«Համաշխարհային մրցունակության զեկույց 2008/2009»*** և ***«Համաշխարհային մրցունակության զեկույց 2009/2010»*** հետազոտություններից[10] վերցվել է ընկերությունների կողմից անօրինական վճարումներ կատարելու կամ կաշառքներ տալու հաճախականության գնահատականները հետևյալ ոլորտներում.

Կիրառվում է 1-7 գնահատման համակարգ, որտեղ 1-ը ցույց է տալիս, որ անօրինական վճարումներ և կաշառքներ տրվում են շատ հաճախ, իսկ 7-ը՝ երբեք:	Հայաստանի գնահատականը	
	2008 թ.	2009 թ.
Ոլորտներ (միջին գնահատական)	**3.20**	**3.25**
1.22. Արտահանման/ներմուծման	**2.59**	**2.58**
1.23. Հանրային ծառայությունների	**4.76**	**5.04**
1.24. Հարկային վճարումների	**3.19**	**3.17**
1.25. Պետական պայմանագրերի	**2.86**	**2.91**
1.26. Դատական վճռի վրա ազդող անօրինական վճարումներ	**2.59**	**2.56**

Այս հարցերի առանձին գնահատականների պարզ թվաբանական միջինը օգտագործվել է ***«Կոռուպցիայի ընկալման ինդեքսի»*** հաշվարկում:

Տարբեր ուսումնասիրությունների արդյունքներն ամփոփելուց հետո «Թրանսփերենսի ինտերնեյշնլի» փորձագետները յուրաքանչյուր երկրի համար ստանում են առանձին միասնական ինդեքս, որից հետո կատարում են հետևյալ քայլերը:

Առաջին քայլով՝ դիտարկված երկրների կարգի հիման վրա կատարվում է գնահատականների ստանդարտացում, քանի որ տարբեր աղբյուրների գնահատականներն ունեն տարբեր սանդղակներ: Յուրաքանչյուր ենթաինդեքսի ստանդարտացման համար օգտագործվում են

[10] *Աղբյուրը՝ http://www.weforum.org/documents/gcr0809/index.html, http://www.weforum.org/documents/GCR09/index.html:*

համեմատական տոկոսային կետեր: Նախ՝ առանձնացվում են այն երկրները, որոնք ընդգրկված էին նաև նախորդ տարվա ***«Կոռուպցիայի ընկալման ինդեքսը»*** հետազոտության մեջ: Այնուհետև, ***«Կոռուպցիայի ընկալման ինդեքսի»*** նախորդ տարվա ամենամեծ արժեքը վերագրվում է առանձնացված խմբի ամենաբարձր կարգ ստացած երկրին: Եվ ապա մեծությամբ հաջորդ արժեքը վերագրվում է երկրորդ ամենամեծ կարգ ունեցող երկրին և այդպես շարունակ:

Այսպիսով, ստանդարտացման համար օգտագործվում է երկրների հերթականության մասին տեղեկատվությունը, այլ ոչ թե գնահատականների մեծությունը: Թեև այս մեթոդը կիրառելիս որոշ տեղեկատվություն կորչում է, այնուամենայնիվ այն ունի առավելություն. արդյունքում ստացվում են 0-10 միջակայքում գտնվող գնահատականներ:

Քանի որ ստացված գնահատականների պարզ թվաբանական միջինն ունենում է մեծ շեղում (բարձր գնահատականները թերագնահատված են ստացվում և հակառակը, ցածրերը՝ գերագնահատված):

<u>Երկրորդ քայլով,</u> նախքան ստացված գնահատականների միջինը հաշվելը, վերջիններս ենթարկվում են «բետտա վերափոխման» ստացված գնահատականների շեղումները նվազեցնելու նպատակով: «Բետտա վերափոխման» միջոցով յուրաքանչյուր X արժեք փոփոխվում է հետևյալ ֆունկցիայի միջոցով.

$$10 * \int_0^1 (X/10)^{\alpha-1}(1-X/10)^{\beta-1}dX$$

α-ի և β-ի ընտրությունը կատարվում է հատուկ ալգորիթմի միջոցով: 2009 թ. α-ի և β-ի արժեքները կազմել են համապատասխանաբար 1.124 և 1.142:

Որպես ***<u>վերջնական քայլ</u>*** հաշվարկվում է վերափոխման ենթարկված արժեքների միջին թվաբանականը, որը և երկրի գնահատականն է, այսինքն՝ ***«Կոռուպցիայի ընկալման ինդեքսը»***:

Բացի առանձին երկրի ***«Կոռուպցիայի ընկալման ինդեքսից»*** և օգտագործված ուսումնասիրությունների քանակից՝ «Թրանսփերենսի ինտերնեյշնլ»-ի հրապարակումներում տրվում են նաև կոռուպցիայի ընկալման ինդեքսի ստորին և վերին սահմանները՝ վստահելիության միջակայքը, որը հաշվարկվում է ստանդարտ շեղման հիման վրա: Միջակայքերը մեկնաբանելու համար պետք է հաշվի առնել, թե այդ ինդեքսի ստացման համար քանի ուսումնասիրություններ են օգտագործվել (ինչքան շատ ուսումնասիրություններ են օգտագործվել, այնքան մեծ է միջակայքի վստահելիությունը): Օրինակ, եթե երկու երկր-

ների միջակայքերը հավասար են, բայց առաջինի համար օգտագործվել է 3, երկրորդի համար 12 ուսումնասիրություն, ապա վերջինս ավելի վստահելի է: Ըստ տարիների համեմատություն անելու համար պետք է համեմատել ոչ թե երկրի կարգը նախորդ տարիների կարգի հետ, այլ գնահատականները:

Հավելված 5

Եվրոբանկի «Կառուցվածքային և ինստիտուցիոնալ բարեփոխումների ինդեքսի» անցումային ցուցանիշների նկարագիրը[1]

(ցույց է տալիս, թե գնահատականը ինչպիսի նկարագրի դեպքում է տրվում)

Գնահատական	*Գործոնը՝ «Գների ազատականացում»*
1	Գների մեծ մասը պաշտոնապես կարգավորվում է պետության կողմից
2	Որոշակի ճշումներ գների բարձրացման ուղղությամբ, ոչ շուկայական գներով պետական գնումների իրականացում՝ ապրանքատեսակների մեծ մասի համար
3	Գների ազատականացման էական առաջընթաց, թեև ոչ շուկայական գներով պետական գնումները զգալի են
4	Գների ամբողջական ազատականացում, ոչ շուկայական գներով պետական գնումներն էապես նվազել են, և կարգավորվող գները փոքրաթիվ են
4+	Զարգացած արդյունաբերական երկրներին բնորոշ չափորոշիչներ և գործունեություն. գների լիովին ազատականացում, գների կարգավորման բացակայություն՝ բացառությամբ բնակարանների վարձակալության, տրանսպորտի և բնական մենաշնորհների ոլորտներում

Գնահատական	*Գործոնը՝ «Արժութային և առևտրի ազատականացում»*
1	Ներմուծման և/կամ արտահանման խոշորամասշտաբ կարգավորում կամ արտարժույթի շատ սահմանափակ օրինական հասանելիություն
2	Ներմուծման և/կամ արտահանման կարգավորման որոշակի ազատականացում, ընդհանուր առմամբ ընթացիկ հաշվի գրեթե լրիվ փոխարկելիություն, սակայն արժութային ոչ այնքան թափանցիկ ռեժիմի առկայություն (հնարավոր է բազմակի փոխարժեքների ռեժիմ)
3	Արտահանման և ներմուծման գրեթե բոլոր տեսակի քանակական և վարչական սահմանափակումների վերացում, ընթացիկ հաշվի գրեթե լրիվ փոխարկելիություն
4	Արտահանման և ներմուծման բոլոր տեսակի քանակական և վարչական սահմանափակումների (բացառությամբ՝ գյուղատնտեսականի) և արտահանման էական մաքսատուրքերի վերացում, նախարարությունների և պետական ձեռնարկությունների կողմից աննշան ուղղակի ներգրավվածություն արտահանման և ներմուծման գործընթացներում, ոչ գյուղատնտեսական ապրանքների համար հարկային պահանջների ոչ էական տարբերակվածություն, ընթացիկ հաշվի լրիվ փոխարկելիություն
4+	Զարգացած արդյունաբերական երկրներին բնորոշ չափորոշիչներ և գործունեություն. բոլոր մաքսային արգելքների վերացում, անդամակցություն Առևտրի համաշխարհային կազմակերպությանը:

[1] *Տե՛ս http://www.ebrd.com/country/sector/econo/stats/cameth.pdf:*

Գնահատական	*Գործոնը՝ «Մրցակցային քաղաքականություն»*
1	Մրցակցային օրենսդրության և ինստիտուտների բացակայություն
2	Մրցակցային օրենսդրության և ինստիտուտների ձևավորում, մենաշնորհային ընկերությունների կողմից շուկա մտնելու սահմանափակման և ճնշման հնարավորությունների նվազեցում
3	Որոշակի խիստ միջոցառումներ՝ ուղղված շուկայական գերիշխող դիրքի չարաշահումների նվազեցմանը և մրցակցային միջավայրի խթանմանը՝ ներառյալ խոշոր կոնգլոմերատների լուծարումը, շուկա մտնելու սահմանափակումների էական վերացումը
4	Էական միջոցառումներ՝ ուղղված շուկայական գերիշխող դիրքի չարաշահումների նվազեցմանը և մրցակցային միջավայրի խթանմանը
4+	Զարգացած արդյունաբերական երկրներին բնորոշ չափորոշիչներ և գործունեություն. մրցակցային քաղաքականության արդյունավետ կիրառում, շուկա մտնելու ազատություն

Գնահատական	*Գործոնը՝ «Փոքր ձեռնարկությունների սեփականաշնորհում»*
